

Մ. Գ. ՆԵՐՍԻՍԻԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԷԶԵՐԻՑ

ՍՈՍՈՍԻՍ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

М. Г. НЕРСИСЯН

СТРАНИЦЫ
ИЗ НОВОЙ ИСТОРИИ
АРМЯНСКОГО НАРОДА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1982

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԷԶԵՐԻՑ

1412



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՓՐԵՎԱՆ 1982

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Ներսիսյան, Մ. Գ.

Ն 633 Հայ ժողովրդի նոր պատմության էջերից: Եր.: ՀՍՍՀ
ԳԱ հրատ., 1982, 405 էջ.

Ժողովածուն ընդգրկում է հեղինակի տարբեր տարիներին գրո-
ված այն հոդվածները, որոնք նվիրված են Հայ ժողովրդի նոր
պատմության կարևոր հարցերին: Նրանում տեղ են գտել
«Ս. Վ. Մովսիսյանի Հայ գինակիցներն ու բարեկամները», «1812 թ.
հայրենական պատերազմը և հայերը», «Արևելյան Հայաստանի
միացումը Ռուսաստանին», «Հայ առաջին ուսուցիչա-սոցիալիստը»,
«Չէլիձուցիների 1862 թ. ապստամբությունը», «Ժողովրդական հե-
րոս Անդրանիկը», «Արևմտահայերի գեներոլը 1915 թվականին»,
«Պրոֆ. Լևոյի պատմագիտական ժառանգությունը» և այլ հոդված-
ներ, ահնարկներ ու հրատարակումներ:

Նախատեսվում է պատմաբանների, ընթերցող լայն շրջանների
համար:

0505040000

ԳՄԴ 63.3 (22)

Ն ----- 26-82

9 (C 43) 1

703 (02)-82

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՅ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
գիտության վաստակավոր գործիչ Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը, որի ծննդյան
70-ամյակը լրացավ վերջերս, արդեն շուրջ կես դար է, որ կատարում է գիտա-
նետագրական արդյունավետ աշխատանք, հարստացնելով սովետական պատմա-
գիտությունը հայ ժողովրդի նոր պատմության հարցերին նվիրված արժեքավոր
ուսումնասիրություններով:

Մ. Ներսիսյանը ծնվել է 1910 թ. Երևանի նահանգի Աշտարակի շրջանի
Փարսի գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում, այսպե՛ս
վորել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում: 1927 թ. ընդունվել է
Երևանի պետական համալսարանի պատմաբանական ֆակուլտետը, որն
ավարտել է 1931 թ.:՝ ստանալով պատմաբանի մասնագիտություն:

Դեռևս 1930-ական թթ. սկզբներին Երիտասարդ պատմաբանը հրատարա-
կեց մի շարք աշխատություններ Հայաստանի և Անդրկովկասի հեղափոխական
շարժման պատմության վերաբերյալ: Այդ շրջանում նա լույս ընծայեց հոդված-
ներ ու գրքեր Սոսիալիստական Շահումյանի, Բախլի կոմունայի, Մայիսյան ապստամբու-
թյան, Հայաստանի 1918—1920 թթ. սոսիալական ու ֆադալական դրությունների մա-
սին և այլն: Պրոֆ Կ. Ղազարյանի հետ միասին Մ. Ներսիսյանը կազմել է «Առաջին
մասնագիտական հեղափոխական շարժումները Հայաստանում» փաստաթղթերի ծա-
վալուն ծաղղվածու, որը լույս տեսավ 1932 թ.:

Նետագա տարիներին Մ. Ներսիսյանը գրադրեց XVIII և XIX դդ. պատմու-
թյան խնդիրներով: 1939 թ. նա պաշտպանեց քեկնածուական դիսերտացիա՝ «Նա-
րոզնիկական խմբակները Անդրկովկասում 1870—1880 թթ.» քննադալ: Այդ բոս
ամենայնի հետաքրքիր գիտական ուսումնասիրությունը, որ լույս տեսավ
1940 թ., նոր և կարևոր խոսք էր սովետահայ պատմագրության մեջ: Հեղինակը,
առաջին անգամ հատուկ էնություն էնրաբեկելով հայ նարոզնիկության հարցը,
նիմնավորապես հեբեց բավական տարածում գտած այն տեսակետը, քե հեղա-
փոխական նարոզնիկությունը օտար Երևույթ է եղել Հայաստանի և Անդրկովկա-
սի համար: Հենվելով արխիվային նյութերի և այլ աղբյուրների հարուստ տվյալ-
ների վրա, Ներսիսյանը ցույց տվեց, որ 1860—1880 թթ. Անդրկովկասի հեղափո-
խական տարատիման (նարոզնիկ) մտավորականության մի մասը գործուն մաս-
նակցություն ունեցավ համառուսական հեղափոխական իրադարձություններին և
որ դեմոկրատական Երիտասարդ սերնդի հենց այդ քեի ներկայացուցիչներն էին,
որ ընդգրկվեցին հեղափոխական նարոզնիկական շարժման մեջ՝ ինչպես Քրիլի-
սիում, Ռուսոլում, այնպես էլ Մոսկվայում, Պետերբուրգում, Կիևում և Ռուսական
կայսրության մյուս քաղաքներում:

Աշխատության մեջ քերված են հետաքրքիր տվյալներ հայ նարոզնիկների
կյանքի և հեղափոխական գործունեության, նրանց հայացքների ու ծրագրերի
մասին: Նկատենք, որ վերջին ժամանակներս մի շարք հետազոտողների կողմից
կատարված արխիվային պրպուումները (օրինակ, Ա. Գ. Տերեշչենկոյի «Նարնա-

խիջանցիները հեղափոխական ճարտարական մեջ» հոդվածը, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 4), հայտնաբերելով նոր տվյալներ հայ ճարտարների վերաբերյալ, լիովին հաստատում են Մ. Ներսիսյանի առանձնակ տարիներ առաջ գրված աշխատության քեզերն ու եզրակացությունները:

Պրոֆ. Մ. Ներսիսյանի գիտական աշխատությունների մեջ զգալի տեղ են զբաղում այն ուսումնասիրությունները, որոնք նվիրված են հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման պատմության հարցերին: Պատմաբանն իր «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը քուրմական բռնապետության դեմ 1850—1870 թթ.» մենագրությունը որպես ղեկավարական դիսերտացիա հաջողությամբ պաշտպանեց դեռևս 1946 թ.: Այդ ժանրակի ճեպագրությունը, որը լույս տեսավ 1955 թ. ոչ միջ գծվարություններ հաղթահարելուց հետո, աչքի է ընկնում հարցերի խոր, բազմակողմանի բնութագրմամբ, նոր և համարձակ մտերով ու եզրահանգումներով: Իր այս աշխատության մեջ հեղինակը փաստական հարուստ նյութի հիման վրա հանգամանորեն պատկերում է արևմտահայության ծանր կացությունը XIX դարի 50—80-ական թթ., շարադրում նրա հերոսական մաքառումը, ազատագրական շարժման ընթացքը, բացահայտում այդ շարժման կապերը հարևան ժողովուրդների հակասուրբանական ընդվզումների հետ, հայ ազատագրական պայքարի սոցիալ-դասակարգային բովանդակությունը և շարժիչ ուժերը, արևմտյան պետությունների սեպեցիան, հակահայկական դիքտաշունը և այլ հարցեր: Վեճակներ են միտելով հակացիտական այլևայլ «տեսություններ», Մ. Ներսիսյանը համագրչ, անվիճելի փաստերով ցույց է տվել արևմտահայ ազատագրական շարժման ինքնաբով, ժողովրդական բնույթը, նրա գաղափարախոսության առաջադիմ և դեմոկրատական էությունը:

Առանձին ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ 1940-ական թթ. կեսերին սանդղծված այդ կապիտալ գործում տեղ չեն գտել գտնիկ քրեյալոգիզմի «օրբորոխ առաջակների» տեսակետները: Մերժելով դրանք և ցուցաբերելով գիտական օրելիություն, Ներսիսյանը նիշա դիրքերից է լուսաբանել մեր ժողովրդի պատմության այդ շրջանի շատ հանգուցային խնդիրներ, որոնց բովանդակում Ռաֆայել Պատկանյանի, Ռաֆիու, Գ. Արծրունու, Գ. Մովսեսյանի և մյուսների ստաշոյեմ դեմոկրատական գաղափարների գնահատության հարցերը: Սխալ չի լինի երբ ասենք, որ պատմաբանի այս աշխատությունը մի խիզախ քայլ է՝ ուղղված քառացած դոգմախոսի այն գտնիկ «տեսությունների» դեմ, որոնք իր ժամանակ ստեղծվել էին շոշափվող պրոբլեմի շուրջ և տակավին չէին հաղթահարվել: Ներսիսյանի մենագրությունն ամենայն իրավամբ բարձր գնահատականի արժանացավ ինչպես հանրապետական, այնպես էլ կենտրոնական մամուլում (ՀՍՍՀ ԳՍ «Տեղեկագիր». «Вопросы истории», «История СССР», «Советское востоковедение» և այլն):

Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը քուրմական բռնապետության դեմ» ղեկավարական դիսերտացիան սկիզբ դրեց արևմտահայ ազգային-ազատագրական շարժման գիտական ուսումնասիրության գործին սովետահայ պատմագրության մեջ: Այդ խնդրի շուրջն այնուհետև հանդես եկան նրա ղեկավարությամբ աշխատող մի շարք երիտասարդ գիտնականներ, ապա ուրիշ պատմաբաններ:

Նշված մենագրությունից բացի Ներսիսյանը գրել է հոդվածներ Ջեյրուսի 1862 թ. ապստամբության, արևմտահայերի կոտորածների, հայ ազատագրական

պայքարի հերոս Անդրանիկի և հարակից այլ հարցերի մասին: Նրա առաջաբանով ու խմբագրությամբ 1966 թ. լույս տեսավ «Հայերի գեոգրիկ Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի կապիտալ և շատ արժեքավոր ժողովածուն (նուսերեն), ուր ամենայն մանրամասնությամբ ցույց է տրված սպարան Արշակ Համիդի և Երիտասարդ քուրմերի՝ մասնապական կոտորածների արշուճա քաղաքականությունը արևմտահայերի նկատմամբ: Ժողովածուն, որ պարունակում է բազմաթիվ նորահայտ արխիվային փաստաթղթեր և կարևոր նյութեր, մի անհերքելի պատմական տարեգրություն է քուրմ շարդարանների անասելի ճեպագրությունների և արևմտահայության մեծ ողբերգության մասին:

Ներսիսյանի գիտական ուսումնասիրությունների մի մասը նվիրված է հայնոսական պատմական կապերի ու հարաբերությունների պրոբլեմին: Գեոս 1944 թ. լույս տեսավ «Ա. Վ. Սովոբովը և ոսո-հայկական հարաբերությունները 1770—1790-ական թթ.» աշխատությունը, որը հետագայում, որոշ լրացումներով ու փոփոխություններով, հրատարակվեց նաև ռուսերեն: 1956 և 1961 թթ. հրատարակվեց Ներսիսյանի «Ռոս-հայկական հարաբերությունների պատմությունից» երկու հատորից բաղկացած հոդվածների ժողովածուն (ռուսերեն), որտեղ բնութագրվում են հայնոսական պատմական կապերին ու քաղաքական հարաբերություններին վերաբերող մի շարք հարցեր: Այլ քեմաներին հա անդադարձով եակ հետագա տարիներին՝ գրելով մի շարք հոդվածներ, որոնցում մասնավորապես լուսաբանվում են Արևելյան Հայաստանի միացումը Թուրսստանին և այդ ակտի պատմական նշանակությունը, հայ ժողովրդի ոսոսական օրինեաացիան XVIII և XIX դդ., Գ. Վ. Կավիրովը Հայաստանում (1826), Օշականի հակառաճարող 1827 թ. օգոստոսի 17-ին, Երևանի ազատագրումը ոսոսական բանակի կողմից 1827 թ. և այլն: Ներսիսյանը զգալի գործ է կատարել եակ հայնոսական հարաբերությունների պատմության վերաբերող փաստաթղթերի հայտնաբերման ու հրատարակման ուղղությամբ:

Առանձին հետաբերություն են ներկայացնում Մ. Ներսիսյանի ուսումնասիրությունները ոսոս առաջին փառապանծ հեղափոխականների՝ ղեկարբխտների վերաբերյալ: 1958 թ. հրատարակվեց նրա «Գեկարբխտները Հայաստանում» արժեքավոր աշխատությունը, որի ոստերեն քարգմանությունը լույս տեսավ 1975 թ.: Այստեղ հեղինակը, օգտագործելով արխիվային հարուստ նյութեր, վերականգնում է Կովկաս աբսոլված ղեկարբխտների նշգրտված թիվը, ցույց է տալիս 1825 թ. հերոսների գործուն մասնակցությունը 1826—1828 թթ. ոսոսպարտական և սպա՝ 1828—1829 թթ. ոսոս-քուրմական պատերազմներին, այդ հեղափոխականների դերը Արևելյան Հայաստանը պարտական խաների ու բե-



Մ. Ս. Ներսիսյան

կերի ծանր լծից ազատագրելու գործում: Աշխատության մեջ բերված են հետաքրքիր տեղեկություններ ղեկավարիստների և հայ, վրացի ու ադրբեջանցի գործիչների կայի մասին, ինչպես նաև ցույց են տրված այն շերտ բարեկամական հասարակությունները, որոնք ստեղծվեցին կովկասյան բանակ փոխադրված ռուս հեծափոխակազմների ու լեհ ապստամբների միջև:

Աշխատելով «Ինկարիստները կովկասում» քննարկ վրա, Ներսիսյանը հայտնաբերել է արժեքավոր փաստաթղթեր տվյալ հարցի վերաբերյալ: Հիշենք, որ նա առաջինը հրատարակեց ղեկավարիստներ Ե. Լաշինովի գրառումները Հայաստանի, Գ. Իսկրիցկու և Վ. Վոլյովսկու նամակները Անդրկովկասի, Ի. Քուրցովի գեկուցագրերը ռուս-թուրքական 1828—1829 թթ. պատերազմի մասին և այլն: Հասկապես պետք է նշել Ներսիսյանի «Նոր տվյալներ ղեկավարիստների մասին» հոդվածը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 4), որ բազմաթիվ նոր տվյալների հետ մեկտեղ բերված են խիստ կարևոր տեղեկություններ Ուկրաինայում ապստամբած հայտնի Չեռնիզովյան զնդի զինվորների սոցիալական ու ազգային կազմի մասին:

Գիտական լուրջ ուսումնասիրություն է Մ. Ներսիսյանի «1812 թ. հայրենական պատերազմը և կովկասի ժողովուրդները» աշխատությունը, որը լույս տեսավ 1965 թ. ռուսերեն: Պատմական նոր փաստերի ու հարուստ նյութերի հիման վրա այս հետազոտության մեջ ցույց է տրված Անդրկովկասի և Հյուսիսային կովկասի ժողովուրդների, կովկասի լեռնակազմների, Կուրանի կազակների, կալմիկների մասնակցությունը ռուս ժողովրդի 1812 թ. համաժողովրդական հայրենական պատերազմին և բուրժ-պարսկական, ֆրանսիական ու անգլիական ղեկավար շրջանների ազդեցիվ հակառակական բազմականության ձախողումը կովկասում: Այնուհետև բերված են մանրամասն և ճշգրտված տվյալներ Նապոլեոն I-ի բանակի դեմ մարտնչած կովկասցիների, ինչպես նաև պատերազմից առժամ ռուս բնակչությանը օգնելու նպատակով երկրամասում կազմակերպված նվիրատվությունների և այլ միջոցառումների մասին: Դրանով մանրամասնորեն ցույց է տրված կովկասնայության հայրենասիրական շարժումը հոգրոս Ռուսաստանի ընդդեմ ֆրանսիական ագրեսիայի: Ասանճնապես հետաքրքիր են այն տվյալները, որոնք վերաբերում են Նոր Նախիջևանի ու Աստրախանի հայ բնակչությանը:

Պատմաբանը մի շարք արժեքավոր հոդվածներ է նվիրել հայ ժողովրդի պատության XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի սոցիալ-տնտեսական ու՝ բազմաբանյան հարցերին, հասարակական ու մշակութային գործիչներին: Դրանցից առանձնապես պետք է հիշել «Հայ կամավորները ռուս-թուրքական 1787—1791 թթ. պատերազմում», «Հայաստանի սոցիալ-տնտեսական դերությունը 1860—1880-ական թթ.», «Աբովյանի առաջին հրապարակային էլյարթ», «Առաջին նայ ռուս-պիստ-սոցիալիստը» (Դ. Գ. Ախաբումով) և այլ հոդվածներ:

Մ. Ներսիսյանի ուսումնասիրություններն աշխի են բնկնում իրենց ինքնատիպությամբ, գիտականությամբ, փաստական նոր և հարուստ նյութի մատուցմամբ, նշմարիտ ու օրիգինալ տեսակետներով: Նրա աշխատությունները նոր լույս են սփռում մեր ժողովրդի պատմության բազմաթիվ կենտոտ հարցերի վրա: Գիտահետազոտական գործունեության հետ մեկտեղ Ներսիսյանը զբաղվել է նաև մանկավարժական աշխատանքով: Տարիներ շարունակ նա հայ և ՍՍՀՄ ժողովուրդների պատմության ատարկաններից դասախոսություններ է կարդացել Երեվանի Բանֆակում, Կոմհամալսարանում, հայկական և ռուսական մանկավարժա-

կան ինստիտուտներում, Երևանի պետական համալսարանում, որտեղ մի շարք տարիներ վարել է հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչի պարտականությունները: Նրա դասախոսություններն օգնել են հարյուրավոր ուսանողներին՝ նկատել իրենց աշխարհայացքը: Ներսիսյանը ունեցել է բազմաթիվ սոսիալական, ղեկավարել է շատ երիտասարդ պատմաբանների քնննատանական և դոկտորական դիսերտացիոն աշխատանքները, մասնակցել է հայ ժողովրդի պատմության դասագրքերի և գիտամասնագիտական աշխատությունների ստեղծման գործին: Նրա համագործակցումը 1972 թ. լույս տեսավ հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (մեկ հատորով): Վերջերս այն լույս տեսավ նաև ռուսերեն:

Անվանի գիտնականը նաև ակտիվ հասարակական գործիչ է: Նա երկար տարիներ վարել է պատասխանատու պաշտոններ գիտական և ուսումնական հիմնարկներում: Ներսիսյանը եղել է հանրապետության գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտոր, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-հարուստ, վիցեպրեզիդենտ, գլխավորել է ակադեմիայի խմբագրական հրատարակչական խորհրդի աշխատանքը արպես նրա նախագահը: 1966—1977 թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնում, ավելի քան 28 տարի եղել է ակադեմիայի նախագահության անդամ: Ներսիսյանի նախաձեռնությամբ ՀՍՍՀ ԳՍ. համակարգում կազմակերպվեց արևելագիտության բաժինը, որը հետագայում դարձավ ինստիտուտ, ստեղծվեց «Պատմա-բանասիրական հանդեսը», պետական համալսարանում հիմնվեցին արևելագիտության ֆակուլտետը, հայագիտության կենտրոնը, «Երևանի համալսարանի բանբեր», «Երևանի համալսարան» պարբերականները:

Ներսիսյանը մասնակցում է Հայկական սովետական հանրագիտարանի աշխատանքներին որպես նրա գլխավոր խմբագրության անդամ և հայ ժողովրդի նոր ու նորագույն շրջանի պատմության գիտախնդիրներ խորհրդի նախագահ: Նա միաժամանակ հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի գլխավոր խմբագրության անդամ է եղել: Ներսիսյանը նաև եղել է սովետաբուլղարական համալսարանական ընկերության հայկական մասնաճյուղի նախագահը:

Մ. Գ. Ներսիսյանը ՄՄԿԿ անդամ է 1938 թ., մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, ՍՍՀՄ Գերագույն սովետի ղեկավար է եղել 1966—1979 թթ. և ՀՍՍՀ Գերագույն սովետի ղեկավար՝ 1951—1955 թթ., բանիցս ընտրվել է Հայաստանի կովկասագիտության Երևանի կազմակերպության պլենումի և Աննառնական կոմիտեի անդամ, եղել է ՀԿԿ մի շարք համագումարների պատգամավոր: Նա պարգևատրվել է լեհիերի, Աշխատանքային կարմիր դրոշմ, ժողովուրդների բարեկամության շքանշաններով և մի շարք մեդալներով, այդ թվում՝ բուլղարական «Գերագի Գիմուրով» մեդալով:

Ներսիսյանը Մ. Ներսիսյանը ՀՍՍՀ ԳՍ. նախագահության օրգան «Պատմա-բանասիրական հանդես» գլխավոր խմբագիրն է: 24 տարի անընդմեջ, հանդեսի հիմնադրման օրից (1958) մինչև այսօր խմբագրում է այդ պարբերականը և նրա շանքերը մեծ շափով նպաստել են, որ այն դառնա հայագիտական լուրջ ծանրակշիռ հանդես: Ներսիսյանը միաժամանակ ՀՍՍՀ ԳՍ. պատմության ինստիտուտի հայ-ռուսական պատմական կապերի բաժնի վարիչն է: Այստեղ նա ղեկավարությամբ պատրաստվում են մի շարք աշխատություններ՝ նվիրված հայ-ռուսական հարաբերությունների պատմության կարևոր հարցերին: Պետք է նկատ-

տել, որ Ներսիսյանն իր վարած բոլոր պաշտոններում էլ հանդես է բերել կազմակերպչական ընդունակությամբ, սկզբունքայնությամբ և ազնվությամբ:

Մ. Ներսիսյանի աննահագիստ, պրպտոզ միտքն այսօր ևս զբաղված է նոր հարցերով, նոր խնդիրներով: Բազմավաստակ գիտնականին ցանկանանք առողջություն և նորանոր հաջողություններ իր ստեղծագործական աշխատանքներում:

* * *

Մ. Գ. Ներսիսյանի ներկա հատընտիր ժողովածուն ընդգրկում է հեղինակի տարբեր առիթներին զբաղ այն հոդվածները, որոնք նվիրված են հայ ժողովրդի նոր պատմության հարցերին և հետաքրքրություն են ներկայացնում այսօրվա մեր ընթերցողի համար: Գիտական հոդվածների հետ մեկտեղ ժողովածուում տեղ են գտել նաև գիտամասնագիտական բնույթի հազորդումներ և արխիվային նյութերի հրատարակումներ: Հատուր լսյս է տեսնում պատմաբանի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ:

1981 թ.

ՀՄՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ

XVIII ԳԱՐԻ ՀԱՅ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԸ

Լուսավորական, կամ այլ կերպ ասած հակաֆեոդալական, բուրժուադեմոկրատական գաղափարախոսությունը հայ իրականության մեջ ձևավորվեց XVIII դարի երկրորդ կեսին: Այն, սակայն, հանդես եկավ ոչ թե Հայաստանում, որը XVI դարի վերջերից գտնվում էր խիստ հետամնաց սուլթանական թուրքերից և շահ-խանական Պարսկաստանի (Իրանի) բերտ ու դաժան տիրապետության տակ, այլ հնդկահայ գաղթօջախում (Մադրաս-Կալկաթա), որտեղ անհամեմատ ավելի բարենպաստ նախապայմաններ կային նոր, առաջավոր գաղափարների ծագման ու զարգացման համար:

Հայ լուսավորական շարժումը, որ սկիզբ առավ եվրոպական, մասնավորապես անգլիական առաջավոր մտքի ազդեցության տակ, ուներ քաղաքական, ազատագրական պայքարի շեշտված ուղղություն: Առաջնահերթ հարցն այդ ժամանակաշրջանում Հայաստանը օտար ղավթիչների լծից ազատագրելու և հայ պետականության վերականգնման խնդիրն էր: Այս պարագաներում հայ լուսավորիչները ոչ միայն քարոզում էին ժամանակի առաջավոր գաղափարները, հանդես գալիս ֆեոդալական կարգերի ու հարաբերությունների դեմ, այլև աշխատում էին նախապատրաստել և գլխավորել ժողովրդի ազատագրական պայքարը: XVIII դարի երկրորդ կեսի հայ լուսավորական և ազատագրական շարժման մեջ աչքի ընկան երեք ականավոր դեմքեր՝ Հովսեփ Էմին, Մովսես Բաղրամյան և Շահամիր Շահամիրյան:


Հովսեփ Էմինը (1726—1809) ծնվել է Իրանի Համադան քաղաքում: 1740-ական թթ. դեռևս պատանի հասակում, թողնելով Պարսկաստանը, նա տեղափոխվում է Հնդկաստանի Կալկաթա քաղաքը, ուր մինչ այդ բնակություն էր հաստատել հայրը, որ զբաղվում էր առևտրով: Այստեղ էմինը ընդունվում է տեղի անգլիական դպրոցը, ծանոթանում եվրոպական գրականության հետ, ուսումնասիրում հայ հին պատմիչներին և այլն: Շուտով երիտասարդ հայրենասերի մեջ ծագում է գիտություն ձեռք բերելու և օտար լծի տակ տառապող իր ժողովրդին ժառայելու գաղափարը: Էմինը ցանկություն է

հայտնում գնալ Անգլիա, սովորել զինվորական արվեստ, որպեսզի հաջողությամբ մասնակցի հայրենիքի ազատագրության գործին: Հայրը կտրականապես դեմ է արտահայտվում, սակայն որդին չի հրաժարվում իր ծրագրից:

1751 թ. էմինը անգլիական մի նավով գալտնել հեռանում է Կալիֆոռնիայից և երկարատև ու ծանր ճանապարհորդությունից հետո ժամանում Լոնդոն: Այստեղ նա հանդիպում է մեծ դժվարությունների և կրում շատ զրկանքներ: Գոյությունը պահպանելու համար ստիպված ծառայում է մանրավաճառի մոտ, դառնում դոնապան, բեռնակիր և այլն: Իր կյանքի այս շրջանի մասին էմինը անգլիացի ծանոթներից մեկին ուղղված նամակում գրել է. «Ես ծնվել եմ Համադանում (Պարսկաստան), որն այն վայրերից մեկն է, ուր իմ դժբախտ ազգը գերության մեջ է ապրում Շահ-Աբասից ի վեր: Իմ հայրը, ինչպես և մյուս հայերը, ինձ սովորեցրել է միայն կարգալ-գրել մայրենի լեզվով, անգիր անել Սաղմոսն ու երգել եկեղեցում: Բայց նա ինձ շտվորեցրեց զենք գործածել... Երբ ավերվեց մեր տունը Համադանում, ես ճանապարհվեցի Գիլան, այնտեղից Իսպահան, Իսպահանից Բասրա և այնտեղից Կալիֆոռնիա), որտեղ հայրս վաճառական էր և մտածում էր ինձ ևս վաճառական դարձնել: Սակայն ես պարզ տեսնում էի, թե ինչպես մեր ժողովուրդն արյուն-քրտինք էր թափում մի կտոր հացի համար և թե ինչպես, երբ նա մի քիչ դրամ էր հավաքում, անմիջապես կողոպտվում էր ստահող պատճառաբանություններով, երբեմն փաշաների, երբեմն խաների և երբեմն էլ նաբաբների կողմից, որովհետև ձեռքին զենք չուներ: Բայց ես տեսա, թե ինչպես եվրոպացի ժողովուրդները խելացի և ուժեղ են ու կռվում են կազմակերպված մեկ մարդու պես: Մտածեցի, որ եթե կարողանամ եվրոպացի զինվորականների նման լինել, կգնամ իմ հայրենակիցների՝ լեռնային Հայաստանի (այսինքն Գարաբաղի—Մ. Ն.) հայերի մոտ: Ես լսել էի, թե նրանք երբեք չեն նվաճվել, թե նրանք խիզախ ու քաջ մարդիկ են: Մտածում էի, որ եթե կարողանամ նրանց սովորեցնել զինվորական արվեստը, դա շատ օգտակար կլինի... Իմ այդ խորհրդածությունները հայտնեցի հորս, բայց նա երես դարձրեց ինձանից և նախատեց ինձ: Ես չէի կարող տանել այդպիսի կյանքը: Ես փախա և իմ ճանապարհածախսի փոխարեն զանազան ծանր աշխատանքներ կատարեցի ամբողջ ճանապարհորդության ընթացքում՝ Բենգալիայից մինչև Լոնդոն: Լոնդոնում մինչև փողերիս վերջանալը պ. Միդլենի ձեռնարանում սովորում էի անգլե-

րեն լեզու և գրականություն: Բայց ես ստիպված եղա թողնել ուսումս և աշխատել մի կտոր հացի համար: Օտար երկրում, առանց բարեկամների ու զրամի, շատ զրկանքներ կրեցի ու տառապեցի»²:

Լոնդոնում ապրած տարիներին Հովսեփի էմինը, շնայած ծանր զրկանքներին, շարունակում է զբաղվել ինքնակրթությամբ, կար-



Հովսեփի էմին

դում է ժամանակի անգլիական լուսավորական գրականությունը, ձեռք է բերում մի շարք ծանոթներ ու հովանավորողներ, այդ թվում և երիտասարդ հրապարակախոս Էդմոնդ Բլոքբին, որը հետագայում դարձավ քաղաքական նշանավոր գործիչ: Վերջապես 1755 թ. ազդեցիկ մարդկանց օգնությամբ նա ընդունվում է Լոնդոնի Վուլվիչի արքայական ռազմական ակադեմիան, բայց մեկ տարի հետո թողնելով ուսումը, մասնակցում է Յոթնամյա պատերազմին:

Էմինի մտահոգության առարկան միշտ մնում էր հարագատ ժողովրդի լուսավորության և ա-

զատագրության հարցը: Բնորոշ է, որ իր բարեկամներից մեկին՝ Ելիզավետա Մոնտեզյուլին 1757 թ. մայիսի 16-ին գրած նամակում նա ընդգծում էր. «Քանի ես ապրում եմ, պետք է ծառայեմ իմ հայրենիքին. և եթե ես ծնված եմ, որպեսզի ազատեմ իմ անպաշտպան ժողովրդին, ապա ոչ ոք չի կարող արգելք լինել ինձ: Աստծու կամքն է, որ պիտի կատարվի»³:

Հայաստանը օտար զավթիչների լծից ազատագրելու իր ծրագրերը իրագործելու նպատակով էմինը 1759 թ. ճանապարհ է ընկնում դեպի Հայաստան, ուր հասնում է մոտ մեկ տարի հետո: Այստեղ նա հանդիպումներ է ունենում հայ գյուղացիների, հոգևորականների ու առևտրականների հետ, ամենուրեք բարոյելով այն միտքը, որ պետք է նախապատրաստվել և զինված ապստամբությամբ թոթափել թուրք փաշաների ու պարսիկ խաների ծանր լուծը: Ծանոթանալով Հայաստանում և Անդրկովկասում ստեղծված

քաղաքական իրադրության հետ, հայ հայրենասերը շուտով համոզվում է այն բանում, որ հարազատ ժողովրդի ազատագրությունը հնարավոր է միայն Ռուսաստանի և Վրաստանի օգնությամբ: Էմինը վերագրանում է Լոնդոն և 1761 թ. վերջին ժամանում Պետերբուրգ: Այստեղ նա տեսակցություն է ունենում ռուսական սրբուհիքի մի շարք ներկայացուցիչների, ինչպես նաև այդ ժամանակ Ռուսաստանի մայրաքաղաքում գտնվող վրաց թագավոր Հերակլ II հայր Թեյմուրազի հետ, շարադրում իր ծրագիրը, որը և հավանություն է գտնում նրանց կողմից: Ստանալով համապատասխան աջակցություն, էմինը մեկնում է Աստրախան, ապա Մոզդոկ և մի շարք դժվարություններ հաղթահարելուց հետո 1763 թ. ժամանում է Քբիլխի, ուր ջերմ ընդունելություն է գտնում ինչպես Հերակլ II, այնպես էլ տեղի հայ բնակչության կողմից:

Մոտ հինգ տարի գտնվելով Անդրկովկասում, էմինը ամեն կերպ աշխատում է միավորել տեղական ուժերը և Վրաստանի օգնությամբ տապալել թուրք փաշաների ու պարսիկ խաների տիրապետությունը Հայաստանում և վերականգնել հայկական պետականությունը: Հարկ է նշել, որ նա պաշտպանում էր նաև հայ-վրացական միացյալ պետություն ստեղծելու գաղափարը: Էմինը հանդիպումներ է ունենում և կապեր հաստատում Հերակլ II, Իմերեթիայի Սոլումոն թագավորի, Ղարաբաղի մի շարք հայ մելիքների, Գանձասարի կաթողիկոսի, ինչպես նաև արևմտահայերի ու մասնավորապես Մուշ գավառի Ս. Կարապետ վանքի վանահայր արքեպիսկոպոս Հովնանի հետ: Սակայն, ներքին և արտաքին անբարենպաստ հանգամանքների հետևանքով էմինի ջանքերը հաջողություն չունեցան և նա 1768 թ. թողնելով Անդրկովկասը, վերադարձավ Հնդկաստան, ուր շարունակեց իր հասարակական-քաղաքական գործունեությունը: 1792 թ. Լոնդոնում, անգլիերեն լույս տեսան նրա շատ հետաքրքիր և արժեքավոր հուշերն ու մտորումներն առանձին գրքով⁴:

Հովնանի էմինը, ինչպես նշվեց, ոչ միայն հայ ազատագրական շարժման նշանավոր ղեկավարներից մեկն էր, այլև XVIII դարի հայ առաջին լուսավորիչը, որը հսկայական աշխատանք ծավալեց Հայաստանում, Անդրկովկասում իր ազգակիցների մեջ նոր, առաջավոր գաղափարներ տարածելու ուղղությամբ:

Հովնանի էմինը խիստ քննադատության էր ենթարկում ավատական կարգերն ու ճորտատիրությունը, ֆեոդալական դասային սրտեմբը: Այսպես, վրաց Հերակլ թագավորին ուղարկած իր նա-

մակներում և նրա հետ ունեցած զրույցների ժամանակ էմինը խորհուրդ էր տալիս բարենորոգումներ կատարել երկրում, վերացնել ճորտատիրությունը, պատժել ֆեոդալ իշխաններին, որոնք ամեն տեսակ բռնություններ են գործադրում ժողովրդի նկատմամբ:

Վճռականորեն հանդես գալով հնազանդություն և ստրկամբուտություն քարոզող տգետ ու վախկոտ հոգևորականության դեմ, էմինը խոսում էր այն մասին, թե իսկական մարդը պետք է ազատասեր լինի և մերժի բոլոր տեսակի բռնակալների լուծը, շնամանվի ձիու կամ ջորու, որպեսզի բերանը սանձ դնեն: Արևմտահայ գյուղացիների հետ ունեցած զրույցի ժամանակ (1760 թ.) էմինը ասել է նրանց. «Բանականություն ունեցող էակը չպետք է թույլ տա, որ ինքը ուրիշի ստրուկը դառնա, նա չպետք է թույլ տա, որ իր վրա բռնանան նույնիսկ կրոնակիցները: Աստված բոլորին էլ ստեղծել է հավասար, որպեսզի թե՛ հարուստը և թե՛ աղքատը կառավարվեն պատշաճ օրենքներով ու արդարությունով... Ամեն մարդ ունի արժանապատվության զգացում, առանց որի նա չի տարբերվի անասունից: Օրինակի համար այն մարդը, որ չունի պատվի զգացում, նման է կորստյան մատնված կենդանու⁵: Հայ անվանի լուսավորիչը այլ առիթներով ևս տարածում էր ազատության և իրավական հավասարության գաղափարները:

Ինչպես մյուս լուսավորիչները, էմինը ևս պատմական պրոցեսի, հասարակական կյանքի զարգացման հիմնական շարժիչ ուժը, պետության հզորացման նախապայմանը համարում էր լուսավորությունը, գիտությունը: Վրաց թագավորին գրած նամակում նա այն միտքն էր զարգացնում, թե Եվրոպայի բոլոր հաջողություններն արվեստով և գիտությամբ են պայմանավորված: Այն ազգը, որը գիտություն չունի, նա աղգություն չէ, և նրանք ուժքեր անտեսում են այս, կույր են և դժբախտ: Ռուսաստանի փառապանծ Պետրոս Մեծը, գրում էր էմինը, չէր կարող վարել հաջող պատերազմներ և չէր կարող իր երկիրն այդքան զարգացնել ու հզորացնել, եթե չգար Եվրոպա գիտություն սովորելու⁶:

Էմինը հաճախ նշում էր, թե «ինչ որ հիմնված չէ գիտության վրա, ավազի վրա է կառուցված»: Առանց գիտության ու լուսավորության, առանց զինվորական արվեստի ոչ մի երկիր չի կարող ազատ ու բարգավաճ լինել: Ուրեմն պետք է բացել դպրոցներ, պատանիներին տալ պատշաճ կրթություն:

Լավ հասկանալով, թե ինքնակալ միապետների ու ֆեոդալ իշխանների կամայականություններն ու բռնությունները մեծ

վնաս են հասցնում երկրին և ժողովրդին, էմինը եվրոպական լուսավորիչների նման պաշտպանում էր այն տեսակետը, որ հասարակական կյանքի վարդապետն զերագույն ելակետը և սկզբունքը «բնութիան օրենքը», կամ այլ կերպ ասած բնական օրենքն է: «Որևէ օրենք կամ սովորություն, որ դեմ է բնութիան օրենքին, ավերակի կ'վերածի քաղաքները, կամայացնի պետությունները և ոչ մի հետք չի թողնի բացի անապատից, և այնքան ամալի, որ կարծեք թե երբեք մարդկային բնակություն չի եղել այնտեղ»⁷: Անգլիայում հաստատված կարգերը էմինը համարում էր կատարյալ, որովհետև նրանք հիմնված են բնական օրենքների վրա: Անգլիայում, ընդգծում էր նա, կարելի է տեսնել «իմաստուն օրենքների և օգտակար կարգ ու կանոնների եվրոպական սքանչելի սիստեմը»: Եվ հայ լուսավորիչը ձգտում էր նրան, որ Հայաստանում ու վրաստանում ևս հաստատվեն եվրոպական այդ երկրի կարգերը:

Էմինը վարչութով էր խոսում արևելքում ապրող կնոջ ծանր վիճակի մասին: «Գեղեցիկ սեռի հանդեպ ասիացիների վերաբերմունքը ուրիշ ոչ մի բանի հետ չի կարելի համեմատել, քան միայն դիվային վերաբերմունքի»: Բազմակնությունը, ասում էր նա, չարքների ու կնոջ ստրկական վիճակի աղբյուրն է:

Էմինը խիստ ձևով է արտահայտվել հետադեմ հոգևորականության և երկրի ազատագրության հարցերի նկատմամբ անտարբերություն ցուցաբերող հայ բուրժուազիայի վերնախավի նկատմամբ: Նա, սակայն, ավելի չէր և իր առաջավոր, լուսավորական գաղափարները հաճախ հիմնավորում էր կրոնական փաստերով և ներքով, մի բան, որ հատուկ էր նաև XVIII դարի եվրոպական լուսավորիչների մի մասին:

Ժամանակակիցները բարձր գնահատական են տվել էմինին: Նրանցից մեկը՝ անգլուհի Ելիզավետա Մոնտեգյուն, որ անձամբ ծանոթ էր հայ հայրենասեր գործչին, գրել է, թե էմինը տեսչում է ազատություն տալ և լուսավորել իր հայրենակիցներին: Այս բոլորը իրագործելու համար նա վտանգի ենթարկեց իր կյանքը, կրեց մեծագույն տառապանքներ և նետվեց ամեն տեսակ արկածների մեջ⁸: Գրեթե նույն ձևով է արտահայտվել նաև ժամանակի հայտնի հրապարակախոս էդմոնդ Բյորքը, որը էմինի մոտիկ բարեկամներից էր և նամակագրություն ուներ նրա հետ: Էմինի մասին մեծ հարգանքով են խոսել Շահամիր Շահամիրյանը, Հովսեփ Արղուժյանը և ուրիշներ:

XVIII դարի հայ առաջին ակնավոր լուսավորիչ Հովսեփ Էմինը

նր զգալի հետքեր թողեց իր ժամանակի հայ հասարակական-քաղաքական կյանքում: Նրա գաղափարական ազդեցությունն ակնհայտ է լուսավորական շարժման այլ ներկայացուցիչների՝ Բաղրամյանի և Շահամիրյանի վրա⁹:

Հայ լուսավորական և ազատագրական շարժման մյուս ակնավոր ներկայացուցիչ Մովսես Բաղրամյանը ծնվել է Արցախում (Ղարաբաղում), սովորել Նոր Զուղայում, 1760-ական թթ. վերջերից ապրել ու գործել է Հնդկաստանի հայ գաղթօջախում, զբաղվել հրապարակախոսությամբ ու մանկավարժությամբ, պրոպագանդիչ է լուսավորական և ազատագրական պայքարի գաղափարները հայ իրականության մեջ: Բաղրամյանի հասարակական-քաղաքական հայացքները շարագրված են նրա «Նոր տեսության, որ կոչի Հորդոթակ» նշանավոր գրքում, որը լույս է տեսել 1773 թ. Մաղրասում¹⁰:

«Հորդոթակում» զգալի տեղ է տրված Հայաստանի պատմական անցյալին: Հեղինակը բավական մանրամասնությամբ խոսում է հին հայ պետականության քաղաքական հարուստ պատմության, նախորդների հերոսական գործերի, երկրի աշխարհագրության և մի քանի այլ հարցերի մասին: Կանգ առնելով Հայաստանի վիճակի վրա իր ապրած ժամանակաշրջանում, այսինքն՝ XVIII դարում, Բաղրամյանը սրտի խոր կսկիծով նշում է նրա ծանր, օրհասական վիճակը. երկիրը գտնվում է օտար նվաճողների դաժան լծի տակ, այն կողոպտված ու ամայացած է, ժողովուրդը կոտորվում է, ամենուրեք արյուն և արտասուք է հոսում: «Բոլոր երկիրս մեր հանապատ դարձավ... զի ոչ գտանի հորում վալը կամ տեղի մի՛ որ գուցե արդեոք ոչ ամայացավ... թե արք և թե մանկունք, ի մեծաց մինչև ցփոքունս կոտորեցան, իբրև զոչխար մատնեցեալ զայլոց քանսարից այնպես խողողեալ գիշտեցան, որոց արեամբ իսկ երկիրս մեր ողջուն զգածեալ և տոգորեալ շաղաղեցան»¹¹:

Ի՞նչ անել: Բաղրամյանը կոչ է անում սթափվել, ոտքի ելնել և զենքի ուժով թոթափել օտար նվաճողների լուծը, ձեռք բերել քաղաքական անկախություն և ազատություն: Մենք պետք է, ասում է նա, վերականգնենք կործանված հայկական պետությունը, ստեղծենք անկախ և ազատ «Մայր Հայաստան», ուր կհամախմբեն աշխարհով մեկ ցիրուցան եղած մեր պանդուխտ հայրենակիցները: Այս նպատակին հասնելու համար չպետք է կանգ առնել ոչ մի դժվարության ու զոհաբերության: առաջ: Գերադասելի է մեռնել քաջաբար, քան թե ապրել ստրկության և թշվառության մեջ: Լավ է

171

«մեռանիլն միանգամ քաշաբար, քան թե զկեան զայսպիսի թշվառութեամբ»:

Ազատության միակ և բանական ճանապարհը ժողովրդական ապստամբությունն է, որին պետք է մասնակցեն բոլորը: Սակայն Բաղրամյանը գտնում էր, որ ազատագրական պայքարի հիմնական ուժը երիտասարդությունն է, որ նրա վրա է դրվելու գլխավոր հույսը: Առաջնակարգ խնդիրը հետևաբար դառնալու է այն, որպեսզի պատանիները, երիտասարդները սխախտեն քնից, թմրությունից ու ծուլությունից, որպեսզի նրանք դառնան հայրենասեր, արի ու անվեհճեր: Իսկ ինչպես իրականացնել այդ Պետք է բացել դպրոցներ, տարածել կրթություն, լուսավորություն, պատասխանում էր հրապարակախոսը: Բացառիկ է մասնավորապես դպրոցների դերը, այդ պատճառով էլ դրանք պետք է բացել միշտ և ամենուրեք:

Բաղրամյանը համոզված էր, որ հայ ժողովուրդն իր ազատագրական պայքարում օգնություն կստանա վրաց Հերակլ II թագավորից, որի հետ պետք է բարեկամական կապեր հաստատել: Բնորոշ է հետևյալ հանգամանքը: Խոսելով այն մասին, թե պետք է վերականգնել հայկական պետության պատմական սահմանները, նա պարտք էր համարում ընդգծել, թե մենք միտք չունենք ոտնձգություններ կատարել հարևան երկրների նկատմամբ: Ոչ գրում էր անվանի հրապարակախոսը, մենք ցանկանում ենք ստանալ միայն մեր սեփական և հավաստի սեփականությունը, որ կորցրել ենք անկարգության և ծուլության պատճառով: Այն ինչ կորցրել ենք տգիտությամբ, պարտավոր ենք ետ ստանալ իմաստությամբ և արիությամբ: Չպետք է մտածել, թե զղնոր իմն բան ցանկամբ առնել, կամ զիշխանութիւնս այլոց կողոպտելու ակն ունիմք, քով լիցի: Վասնզի մեք ոչ այլ ինչ ցանկամք. եթե ոչ միմիայն ցանկամք հոգվո շափ ստանալ անդրեն զմեր սեփհական և հավաստի ժառանգություն՝ զոր վասն անկարգութեան և ծուլութեան մերո կորուսաբ: Զնույն՝ զոր տգիտութեամբ կորուսաբ հարկ լիցի... զիմաստութեամբ և արիութեամբ վերստին ստասցուք»¹²:

Ազատագրական պայքարի կոչ անելու հետ մեկտեղ Բաղրամյանը քարոզում էր լուսավորական գաղափարներ: Նա պետությունների զարգացման և հզորացման հիմնական պատճառը համարում էր լուսավորությունը, գիտությունը: Դրանցով է պայմանավորված եվրոպական երկրների այսօրվա զարգացած վիճակը: Քչդ գործոնները վճռական նշանակություն ունեն նաև հայ ժողո-

վրդի ազգային վերածննդի գործում: Հայաստանը կորցրեց իր անկախությունը և բնկավ օտար դավթիչների տիրապետության տակ, որովհետև վերացան կրթական կրթական օջախները, երկիրն ընկղմվեց խավարի ու տգիտության մեջ:

«Հորդորակի» հեղինակը ամեն կերպ խարազանում էր միահեծան թագավորներին: Հայ թագավորները, գրում էր նա, ունեցել են անսահմանափակ իշխանություն, որի հետևանքով եղել են բազմաթիվ կոպիտ սխալներ ու դժբախտություններ: Պետությունը կարող է լինել ուժեղ, առողջ և բարեկարգ միայն այն ժամանակ, երբ կառավարվի ոչ թե առանձին անհատների՝ միապետների, այլ ժողովրդի ներկայացուցիչներից կազմված կառավարության կողմից: Բաղրամյանը կողմնակից էր սահմանադրական կարգերի, որոնց լավագույն օրինակը նա տեսնում էր Անգլիայում:

Մովսես Բաղրամյանը դատափետում էր հայ ռեակցիոն հոգևոր հայրերին, որոնք շին խրախուսում ժողովրդի ազատագրական ողին և քարոզում են հնազանդություն ու ստրկամտություն: Իր նոր, առաջավոր հայացքների և ազատագրական շարժման գաղափարների համար նա հետապնդվեց և բանադրվեց էջմիածնի կաթողիկոս Սիմեոն Երևանցու կողմից:

XVIII դարի հայ լուսավորական և ազգային-ազատագրական շարժման պարագլուխների շարքում ուրույն տեղ է գրավում Ծահամիր Ծահամիրյանը (1723—1797), որի արմատական, դեմոկրատական հայացքները հիմք են տալիս նրան համարել իր ժամանակի կարկառուն դեմքը հայ իրականության մեջ:

Ծահամիրյանը ծնվել է Նոր Զուղայում, բայց գաղթել է Հեղկաստան և հաստատվել Մաղրաս քաղաքում: Սկզբում զբաղվել է դերձակությամբ, ապա ակնավաճառությամբ, որի շնորհիվ կուտակել է մեծ հարստություն: Լինելով գրասեր, կրթված ու զարգացած մարդ և ջերմ հայրենասեր, նա ակտիվ մասնակցություն է ունեցել հայ ազատագրական շարժման մեջ և միաժամանակ տարածել առաջավոր, լուսավորական գաղափարներ հայրենակիցների շրջանում:

Գլխավորելով Մաղրասի հայ հայրենասերների խումբը, Ծահամիրյանը ձգտել է ազատագրել Հայաստանը օտար տիրապետությունից, որի համար ծավալել է ինչպես գործնական-քաղաքական, այնպես էլ տեսական-հրապարակախոսական գործունեություն: Մշտական կապեր հաստատելով հայ ազատագրական շարժ-

ման գործիչներ Հովսեփ Արղությանի և Հովհաննես Լազարյանի, ինչպես նաև վրաց թագավոր Հերակլ II-ի հետ, նա աշխատել է վրաստանի ու Ռուսաստանի օգնությամբ վերականգնել հայկական պետականությունը: Այդ նույն նպատակով նա հրապարակել է զբոսայգիներ, որոնցում ձգտել է հիմնավորել հայ ազատագրական շարժման և ղեմավարական կարգերի ստեղծման անհրաժեշտությունը:


Առանձնապես ուշադրության արժանի են Շահամիրյանի լուսավորական, հակաֆեոդալական, բուրժուադեմոկրատական հայացքները, որոնք հիմնականում շարադրված են նրա «Որոգայթ փառաց» աշխատության մեջ¹³: Այս գիրքը հեղինակի կողմից մանրամասն մշակված մի յուրահատուկ սահմանադրություն է, որը նախատեսվում էր իրականացնել ապագա անկախ Հայաստանում: Աշխատությունն ունի նաև ներածական, որտեղ արվում են ընդհանուր բնույթի մի շարք վերին աստիճանի հետաքրքիր խորհրդածություններ:

Մարդիկ, գրում է Շահամիրյանը, ծնվում են ազատ և հավասար, հետևաբար պետք է ապրեն նաև ազատության մեջ ու հավասար իրավունքներով: Ոչ ոք իրավունք չունի բռնանալ և իշխել մյուսի վրա: «Անասուններն անգամ չեն հանդուրժում, որ իրենցից որևէ մեկը ինքնակալ և ինքնակամ հրամայող լինի, ուրեմն որքան ամոթ է, երբ մարդը, որ բանականություն ունի, թույլ է տալիս իր նման մի ուրիշ մարդու ինքնակամ հրամայել ու իշխել: Միայն ետք, շարունակում է Շահամիրյանը, կառավարում է ոչ թե իմաստուն օրենքներով, այլ քմահաճույքով ու կամայականությամբ: Միայնատությունը շատ վնաս և աղետ է բերել հայ ժողովրդին: Չմոռանանք, գրում է նա, որ «անհուն վնասն, որ եկն ի վրա աշխարհին և ազգին հայոց պատճառն ինքնակալ թագաւորութեան, ինքնակալ իշխանութեան, ինքնակամ առարմանց»: Հետևապես «մի թույլ տայք զի լիցի ոք ինքնակալ ոմն բարբարոսաբար թագավորի ի վերայ ժողովրդեան հայոց և ի երկրին մերոյ Հայաստանաց»¹⁴: Ժողովուրդը պետք է հնազանդվի միայն իր կողմից ընդունած և հաստատած բանական և արդար օրենքներին: Պետք է իշխի ու թագավորի միայն օրենքը և ոչ թե ինքնակալ միայնակ, որը հաշվի չառնելով ուրիշների խորհուրդները, ընկնում է մոլորությունների մեջ և կատարում բազում սխալներ ու բռնություններ:

Վճռականորեն մերժելով միայնատական-բռնակալական կարգերը, Շահամիրյանը գտնում էր, որ անհրաժեշտ է ստեղծել ժողովրդագրապետություն, հանրապետական կարգեր: Երկիրը պետք է կա-

ռավարի պառլամենտը («Տուն Հայոց»), որ կներկայացվեն ժողովրդի բոլոր խավերի ներկայացուցիչները: Ընտրությունները պետի լինեն հավասար և ընդհանուր, պետք է լինի անձի, խղճի ու խոսքի ազատություն. վերանալու են ամեն տեսակի դասային արտոնությունները, բոլորը հավասար են օրենքի առաջ: Բոլոր պաշտոնները ընտրովի են: Եկեղեցին պետք է բաժանվի պետությունից:

Շահամիրյանը մեծ նշանակություն էր տալիս ժողովրդական լուսավորության գործին: Նա անհրաժեշտ էր համարում սահմանել պարտադիր ուսում: Բոլոր գյուղերում և քաղաքներում պետք է հիմնվեն դպրոցներ, որոնցում իրենց կրթությունը կստանան տղաները և աղջիկները: Պետությունը ամեն կերպ պետք է հովանավորի գիտությունը, ճարտարապետությունը և արվեստի մյուս ճյուղերը: «Օգնութիւն ի տանէն Հայոց լիցի ի վերայ ամենայն արհեստավորի, հատկապես փիլիսոփայութեան, աստղաբաշխութեան, բժշկութեան, երաժշտութեան, ճարտասանութեան և այլն»¹⁵:



Շահամիր Շահամիրյան

Հավատարիմ իր ազատասիրական սկզբունքներին, Շահամիրյանը ողջունեց Հյուսիսային Ամերիկայում ծայր առած ազատագրական շարժումը՝ ընդգեմ անգլիական գաղութալուսարների: Մի իմաստուն մարդ Վաշինգտոն անունով, գրում է նա, այժմ հավաքելով շատ զորք, ձգտում է ազատության և անկախության: Ամերիկացիների ցանկությունը արդար է և բանական, որովհետև աշխարհում չկա ավելի քաղցր բան, քան ազատությունը: «Եւ այժմոյս լսեմք բոլորքում նոր աւ ոմն իմաստուն Վաշինկթոն անուամբ ի յազգեն բրիթանիացոց ծնել ի ամերիկ որում պահպանիր ի մեծի բրիտանիացոց սա հակառակել սերանց և ժողովել հասարակութեան ժողովրդոց ամերիկու զորք բազում ջանա և աշխատի գտանիլ ազատութիւն և լինիլ անհնազանդ ումեքե, թեպէտ կատարածն բանին դեռ ոչ երևացաւ թե զինչ լինելոց այլ ցանկութիւն սրտի ամերիկացոց բնական է ի բնութեանս մարդոյ քան զի ոչ զոյ ի ե-

րեսս երկրի ոչ ոք առաւել քաղցրութիւն ի թռչակս մարդոյ քան թե ազատութիւն»¹⁶:

Շահամիր Շահամիրյանը վճռականորեն հանգես էր գալիս ավատական կարգերի և մասնավորապես ճորտատիրութեան դեմ: Պետք է վերացվեն դասային արտոնութիւնները և ճորտատիրական իրավունքը, պետք է լինի իրավական հավասարութիւն բոլորի համար: Վրաց Հերակլ II թագավորին ուղղված իր նամակներում «Ռրոգայթ փոռացի» հեղինակը խորհուրդ էր տալիս նրան՝ վերացնել ճորտատիրութիւնը և սանձահարել ինքնիշխան ֆեոդալներին, կատարել բարենորոգումներ, օրինակ վերցնել Եվրոպայից և այլն: Նկատենք այստեղ, որ Շահամիրյանը մեծ հարգանքով էր խոսում վրաց ժողովրդի մասին, կոչելով նրան «վրաց բաջ աղգ»:

XVIII դարի երկրորդ կեսի հայ լուսավորական շարժումը, որի նշանավոր ներկայացուցիչներն էին Էմինը, Բաղրամյանը և Շահամիրյանը, հայ հասարակական-քաղաքական մտքի ամենափայլուն էջերից մեկն է: Իր ժամանակի այդ առաջավոր հոսանքը զգալի ազդեցություն ունեցավ հետագա շրջանի հայ ազատագրական պայքարի և հասարակական կյանքի ու մտքի զարգացման վրա:

АРМЯНСКИЕ ПРОСВЕТИТЕЛИ XVIII ВЕКА

Резюме

Армянская антифеодалная-просветительская, буржуазно-демократическая идеология возникла и сформировалась в шестидесятых-семидесятых годах XVIII века под влиянием западноевропейской, главным образом английской передовой мысли того времени. Армянские просветители выступали против феодальных порядков, против монархии и деспотизма, развернули широкую деятельность по распространению просвещения среди народа, призывали бороться за восстановление армянской государственности, за освобождение родины от ига персидских ханов и турецких пашей. Выдающимися армянскими просветителями XVIII века были Иосиф Эмин (1726—1809), Шаамир Шаамирян (1723—1797) и Мовсес Баграмян. Все они имели русскую ориентацию и являлись поборниками дружбы и политического союза армянского и грузинского народов.

Ա. Վ. ՍՈՒՎՈՐՈՎԻ ՀԱՅ ԶԻՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

(Մեծ զորավարի ծննդյան 250-ամյակի առթիվ)

Ռուս մեծ զորավար Ալեքսանդր Վասիլևիչ Սուվորովը (1730—1800) իր հարուստ կյանքի և փայլուն գործունեության ընթացքում զանազան առիթներով շփվել է հայ հասարակության և նրա քաղաքական ու եկեղեցական գործիչների հետ, զբաղվել նրանց հուզող հարցերով, այդ թվում և Հայաստանի ազատագրության ու հայկական պետության վերականգնման խնդրով¹⁷: Աշխարհահռչակ գեներալխիմուսը ունեցել է հայ ծանոթներ, գործակիցներ և բարեկամներ, ինչպես նաև ռազմի զաշտերում կոփված քաջարի հայ աշակերտներ ու զինակիցներ:

Նախ Ա. Վ. Սուվորովի հայ զինվորական աշակերտների ու զինակիցների մասին: Արխիվային և մյուս նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշանավոր զորավարի անմիջական հրամանատարությամբ տեղի ունեցած պատերազմական բազմաթիվ գործողություններին ու հաղթանակներին ակտիվ մասնակցություն են ունեցել նաև հայ սպաներ: Ավելին: Դրանցից մի քանիսը եղել են Սուվորովի հավատարիմ աշակերտները և մարտական զինակիցները:

Այս հարցի մասին պատմագիտական գրականության մեջ գոյություն ունի միայն մեկ սեղմ հիշատակություն: Հայ ժողովրդի պատմության հարցերին նվիրված նյութերի ժողովածուում, որ լույս է տեսել ավելի քան 140 տարի առաջ Մոսկվայում (կազմող՝ Ս. Ն. Գլինկա, հրատարակություն Լազարյան ճեմարանի), տեղ են գտել հետևյալ տողերը. «Հռչակավոր զորահրամանատար գեներալխիմուս իշխան Ալեքսանդր Վասիլևիչ Իտալիյսկու, կոմս Սուվորով-Ռիմնիկսկու հրամանատարությամբ մղված մարտերում և արշավանքներում հայերից մասնակցել են փոխգնդապետ Խասատովը, փոխգնդապետ Մանենը և մայոր Լալանը. այս երկուսը գեներալխիմուսի վստահելի ու սիրելի անձերն էին: Հետագայում Խասատովը քաջությամբ և վաստակով արժանացավ գեներալ-մայորի աստիճանի և պատվանշանների, իսկ Մանենը ի ցավ զո-

րաճրամանատարի և բոլոր նրան ճանաչողներին, սպանվեց Իզմայիլի գրավման ժամանակ: Այս քաջարի Մանեկը անասելի անվեհերությունով աչքի ընկավ գրոհի ժամանակ»¹⁸:


Միայն այսքանը: Բայց ուրիշ ի՞նչ տեղեկություններ կան այդ զինվորականների մասին, որտե՞ղ և ի՞նչ գործունեություն են ծավալել նրանք, արդյո՞ք նշված անուններով է սահմանափակվում հանճարեղ զորավարի հայ աշակերտների ու զինակիցների ցուցակը: Աշխատենք պատասխանել այս հարցերին:

Ա. Վ. Սուվորովի զինակիցներից ու բարեկամներից մեկը, իրոք, եղել է հայազգի Ակիմ (Եկիմ) Վասիլևիչ Խաստատովը (1756—1809 թթ.): Մտալելով ռուսական բանակում (Վլադիմիրյան հեծյալ գնդում), նա 1770-ական թվականների կեսերին արգեն կապիտան էր, իսկ հետագա տարիներին հասավ գեներալ-մայորի աստիճանին: 1780 թ. Խաստատովը ուղարկվում է Սուվորովի տրամադրության տակ, և հետաքրքիր է, որ այդ արվում է մեծ զորավարի խնդրանքով: 1780 թ. փետրվարի 27-ի նամակում՝ ուղղված իշխան Գրիգորի Պոտյոմկինի գրասենյակի պետ գեներալ Պ. Ի. Տուրչանինովին, Սուվորովը խնդրում է կապիտան Ակիմ Խաստատովին ուղարկել Աստրախան իր դիվիզիայում ծառայելու համար: Խնդիրը բավարարվում է: Խաստատովը շուտով դառնում է զորավարի մտերիմներից մեկը: Բնորոշ է, օրինակ, որ Խաստատովի և ոմն զնդապետ Պիեռի միջև տեղի ունեցած մի միջադեպի կապակցությամբ Սուվորովը 1781 թ. նոյեմբերի 19-ին հատուկ նամակ է ուղարկում գեներալ Տուրչանինովին, խնդրելով նրան օգնել ու հովանավորել կապիտան Խաստատովին¹⁹:

Ակիմ Խաստատովը աչքի ընկավ հատկապես ռուս-թուրքական երկրորդ պատերազմի տարիներին (1787—1791): Սուվորովի այդ ժամանակաշրջանի նամակներում և պաշտոնական թղթերում հաճախ է հիշվում Խաստատովի անունը: Այսպես, իշխան Գ. Ա. Պոտյոմկինին ուղարկված 1787 թ. հոկտեմբերի 1-ի զեկուցագրում խոսելով Կինբուռնի մոտ տեղի ունեցած ճակատամարտի մասին և ընդգծելով ռուս զինվորների ու սպաների ցուցաբերած սխրագործությունները, զորավարը գրում էր, որ ռուսական զենքի հաղթանակին խոշոր չափով նպաստեց նաև «իմ ազլուտանտ» քաջարի Ակիմ Խաստատովը²⁰:

Կինբուռնի մոտ ծավալված մարտերում (1787) աչքի ընկնելու համար Ա. Վ. Խաստատովը Սուվորովի միջնորդությամբ ստա-

ցավ փոխգնդապետի աստիճան: Երկու տարի հետո Ֆոկչանում ցուցաբերած արիության համար նա պարգևատրվեց Գեորգիի շորթորդ աստիճանի շքանշանով²¹: Նկարագրելով ռուսական զորքերի փայլուն հաղթանակը Ֆոկչանում (1789), ռազմական սխրագործություն կատարած սպաների ցուցակում Սուվորովը հիշատակում էր նաև Ակիմ Վասիլևիչ Խաստատովին: Փոխգնդապետ Խաստատովը նշում էր զորավարը, մարտնչել է «Ֆոկչանի մոտ և վանքի գրոհի ժամանակ, որտեղ և վիրավորվել է. Ռիմենիկի մոտ աչ թևի ծայրային գրենադերական կարեի հրամանատարն էր և առաջինն էր, որ 5000 թուրքերի կողմից ճնշման ենթարկվեց, բայց կես ժամ հետո նրանց փախուստի մատնեց»²²:



Ա. Վ. Սուվորով

Այդ նույն թվականին Ռիմենիկ գետի մոտ տեղի ունեցած մյուս մարտերի մասին Ա. Վ. Սուվորովը 1789 թ. սեպտեմբերի 11-ին իշխան Պոտյոմկինին գրում էր. «...փոխգնդապետներ Ակիմ Խաստատովը, Լեվ

Ռառոզը ամեն կողմի գործողություններին հասնելով, հատկապես ցուցաբերեցին հոգու կալունություն և քաջություն»²³: Հիշատակված փաստաթղթում խոսվում էր նաև փոխգնդապետ Խաստատովի հրամանատարությամբ գործող 2-րդ և 3-րդ գրենադերական զուսարտակներին փայլուն հաղթանակների մասին:

Ա. Խաստատովը Իզմայիլի համար մղվող մարտերի ակտիվ մասնակիցներից էր: 1790 թ. գեկտեմբերի 21-ին Գ. Ա. Պոտյոմկինին ուղղված զեկուցագրում Սուվորովը խոսելով Իզմայիլ բերդի գրավման մասին նշում էր. «Պետք է բոլոր արժանիության գնահատել ինձ մոտ գտնվող աստիճանավորներին, որոնք կատարեցին իմ բոլոր հրամանները: Հատուկ ուշադրության արժանի են փոխգնդապետներ՝ Ստարոգուբյան Կարաբինյան զնդից Ակիմ Խաստատովը, նվագորդյան հետևակային զնդից Վլադիմիր Գորչակովը, Մալոսոսիյան հեծյալ-գրենադերական զնդից Ստեպան Ծիրայլը, որոնց ուղարկել եմ ամենավտանգավոր տեղերի զորասլուներ: Հազիմահա-

րելով բոլոր դժվարություններն ուժեղ կրակոցների տակ, նրանք իմ հրամանները տեղ են հասցրել ամենայն ճշտությամբ»²⁴։

Զբերելով նոր հիշատակություններ Ա. Վ. Խաստատովի մատական սխրագործությունների մասին, նշենք միայն, որ Ա. Վ. Սուվորովի կյանքի և գործունեության հայտնի գիտակ Վ. Ալեքսեևը գրել է. «Ակիմ Խաստատովը եղել է Սուվորովի մարտական ընկեր»²⁵։

Խաստատովը, որ գիտեր մի շարք լեզուներ, 1793 թ. պաշտոնավարել է Կ. Պոլսի ռուսական դեսպանատանը, ապա նորից ընդունվել գինավորական ծառայության։ 1799 թ. սկզբին ունենալով գեներալ-մայորի աստիճան, անցել է հանգստի²⁶։

Ի ղեպ, ավելորդ չէ հիշել, որ Ա. Վ. Սուվորովի աշակերտ և մարտական զինակից, ռուսական բանակի սպա Խաստատովը նույն գեներալ-մայոր Ա. Վ. Խաստատովն էր, որի ընտանիքի մտերիմ բարեկամը դարձավ Մ. Յու. Լեյմոնտովը՝ տարիներ անց։ Ակիմ Խաստատովը ամուսնացած էր Լեյմոնտովի տատ Ելիզավետա Արսենևայի բրոջ՝ Եկատերինա Արսենևայի հետ։ Խաստատովի ընտանքի անդամները՝ կինը (Եկատերինան), տղան (Ակիմը), աղջիկները (Մարիան և Աննան), փեսաները (Պ. Վ. Շանգիրեյց, Գ. Ի. Պետրովը) և ուրիշներ սիրով են ընդունել երիտասարդ բանաստեղծին։ Լեյմոնտովը հաճախ է չլուրճակալվել Խաստատովների՝ Քերեքի ձախ ափին, Խաստատովից ոչ հեռու գտնվող կալվածքում, ապա և Պյատիգորսկիի նրանց տանը²⁷։

Ա. Վ. Սուվորովի կողմից գնահատված ու սիրված գինավորականներից էր նաև Լալանը։ Մարտին Ստեպանովիչ Լալանը (ծնվել է 1764 թ.) գործուն մասնակցություն է ունեցել ռուս-թուրքական երկրորդ պատերազմին, 1789 թ. ուներ կապիտանի աստիճան։ Ռիմնիկ զետի մոտ տեղի ունեցած մարտում աչքի ընկած սպաների թվում Ա. Վ. Սուվորովը հիշատակում է նաև Լալանին։ 1789 թ. սեպտեմբերի 11-ի իր ռազմազեկույցում զորահրամանատարը խոսելով մի քանի քաջարի սպաների մասին և նշելով այն, որ նրանք մեծ անվնասությամբ կատարել են իր հանձնարարությունները՝ «անընդհատ գտնվելով դաժան կրակի տակ», ավելացնում էր. «այս նույն ձևով ինձ օգտակար են եղել Ֆանագորյան գրենադերական գնդի կապիտան Մարտին Լալանը, իմ շտաբի օբեր-աուդիտոր Անդրեյ Սոմովը» և ուրիշներ²⁸։

Սուվորովը Լալանի անունը մտցրել է այն սպաների ցուցակում, որոնց նա ներկայացրել է պարգևատրման Ֆոկչանում և Ռիմ-

նիկում ցուցաբերած քաջության համար։ Մի քանի սպաների, այդ թվում և Լալանի մասին Ալեքսանդր Վասիլևիչը գրել է. «Երկու գեպրում էլ աչքի ընկան ճարակություն, հրամանները և կարգադրությունները հասցնելով կորպուսներին ամենավտանգավոր վայրերում, և ողու արիությամբ ու անխոնջ աշխատասիրությամբ՝ տարբեր պարագաներում»²⁹։

Մ. Լալանը աչքի ընկավ նաև Իզմայիլի բերդի համար 1790 թ. դեկտեմբերին մղված մարտերի ժամանակ։ Նկարագրելով բերդի գրոհը, Սուվորովը նշում էր, որ սեկունդ-մայոր Մարտին Լալանը և մի քանի այլ սպաներ «թշնամուն պարտության էին մատնում գերագանց քաջությամբ և արիությամբ»³⁰։

Նկատենք, որ մեղ է հասել Սուվորովի ձեռքով գրված երեք գրություն՝ ուղղված Մ. Ս. Լալանին, որոնցում վերջինիս տրվում էին մի շարք հանձնարարություններ։ Ռուս-թուրքական երկրորդ պատերազմի ժամանակ գրված այդ գրություններից մեկում (1789 թ. նոյեմբեր) կոմս Ալեքսանդր Սուվորով-Ռիմնիկսկին, որ այդ ժամանակ գտնվում էր Բեուլդում, կարգադրում էր. «Մարտին Ստեպանովիչին՝ նեղություն բաշել գնալու Յասսա Անդրեյի աղամանդակու իմ խաչով և այն կանոնավոր նորոգել։ Եվ եթե հարկ լինի, խոնարհաբար խնդրել նորին գերագնավություն Սերգեյ Լազարևիչի օգնությունը»։ Երկրորդ գրության մեջ (1790) Սուվորովը առաջարկում է Լալանին պարզել, թե ինչու՞ ավստրիական կորպուսի հրամանատար արքայազն Կոբուրգսկին իր շքախումբը Բենդերի քաղաքից ուղարկել է Կապովար քաղաքը։ Երրորդ գրության մեջ (գրված նույնպես 1790 թ.) Սուվորովը պատվիրում է Լալանին չլուրճակալել թուրքական վեզիրին, որին զորահրամանատարը սպասում էր խաղաղ բանակցությունների համար։ Լալանին մասնավորապես առաջարկվում էր վեզիրին ընդունել «բարեհամբույր կերպով և սրտաբաց։ Պարկեշտ ձևով հետաքրքրվել խաղաղության, պատերազմի և նորությունների մասին։ Հյուրասիրել սուրճ, ծխախոտ և եթե կամենա փլավ, բյաբաբ և այլն (ինչպես և խմիչքով)»³¹։

Այս գրությունների հրատարակիչ Ա. Վ. Բերնացկին համապատասխան ծանոթագրություններում նշել է, որ ռուս-թուրքական երկրորդ պատերազմի ժամանակ «Սուվորովի անմիջական տրամադրության տակ էր գտնվում նրա (Սուվորովի—Մ. Ն.) լիիրավ վստահությունը վայելող Մարտին Ստեպանովիչ Լալանը, որը հե-

տադալում դարձավ կիրասիրական գնդի գնդապետը»։ Ուշագրավ է, որ Բերնացիին կալակին համարում է «Սուվորովի զինակիցը»³²։

Ա. Վ. Սուվորովի մերձավոր զինվորականներից էր նաև Մանեկը։ Իվան Մանեկը (1763—1790) նույնպես անմիջական մասնակցություն է ունեցել ռուս-թուրքական երկրորդ պատերազմի մարտական գործողություններին։ 1787 թ. նա վարում էր Սուվորովի շտաբի օբեր-աուդիտորի, իսկ հետագայում՝ Մոնղենսկյան զրագունյան գնդի սեկունդ-մայորի պաշտոնը։ 1787 թ. հոկտեմբերին վիրավորվել է Կինբուռնի, իսկ 1788 թ. հուլիսին Օշակովի տակ տեղի ունեցած ճակատամարտերում։

1787 թ. հոկտեմբերի 8-ին Գ. Պոտյոմկինին ուղարկված զեկուցագրում Սուվորովը Կինբուռնի ճակատամարտի կապակցությամբ խնդրել է պարգևատրել ռոտմիտր Շուխանովին և «գործի ողջ ընթացքում ինձնից անբաժան գտնվող ու հրամաններս տեղ հասցնող իմ շտաբի օբեր-աուդիտոր Իվան Մանեկին»³³։ Մեկ օր անց Ալեքսանդր Վասիլևիչը գրում էր, որ թուրքերը Կինբուռնում օգտագործում էին այնպիսի գնդակներ, որոնք ծանր վերքեր էին առաջացնում, և որ «իմ օբեր-աուդիտոր Մանեկի վզից հանվել է այդպիսի մի գնդակ»³⁴։

Մանեկը հիշատակվում է նաև 1788 թ. օգոստոսի 6-ին Եկատերինա II անունով իշխան Պոտյոմկինի գրած ռազմազեկույցում։ Այստեղ ի թիվս այն սպաների, ովքեր վիրավորվել էին Օշակովի տակ, նշվում է նաև «սեկունդ-մայոր Մանեկը»³⁵։

Մանեկը սպանվեց Իլմայիլի գրոհի ժամանակ, 1790 թ. դեկտեմբերին։

Սուվորովի հայ աշակերտներից ու զինակիցներից էր նաև կապիտան Յակով Աբրահամովը (Հակոբ Աբրահամյանը)։ Ռոտմիտր, ապա կապիտան Աբրահամովը 1790-ական թվականների սկզբներին ծառայել է Ա. Վ. Սուվորովի զորաբանակի շտաբում՝ կատարելով զորավարի անմիջական մարտական հանձնարարությունները։ Ավելին։ Նա վայելել է Ալեքսանդր Վասիլևիչի համակրանքն ու վրաստահությունը, գտնվել է Սուվորովի մտերիմների շարքում։

Տարիներ անց՝ 1798 թ. Ա. Սուվորովը արքեպիսկոպոս Հովսեփ Արղուսյանի հետ ունեցած իր հանդիպումներից մեկի ժամանակ հիշել է Աբրահամովին և հետաքրքրվել նրա վիճակով։ Իմանալով այդ մասին Աբրահամովը Արղուսյանին նամակ է գրում, ուր խնդրում է իր երախտագիտությունը հայտնել զորավարին, որ չի

մոռացել իրեն։ 1798 թ. մարտի 6-ին գրված այդ նամակում Աբրահամովը պատմում է, թե երբ և ինչպես է ծառայել Սուվորովին, ինչ զրույցներ ու տեսակցություններ է ունեցել նրա հետ, թե ինչպես Ալեքսանդր Վասիլևիչը իրեն միշտ հովանավորել է և այլն³⁶։ Խոսելով Սուվորովի մասին՝ Աբրահամովը գրել է. «Ես նրան ծառայել եմ օրինավոր կերպով։ Գնացել եմ այնտեղ, ուր նա հրամայում էր։ Չեմ մտածել ոչ քնելու, ոչ հացի... մասին, դնում էի ու կատարում նրա հանձնարարությունները և վերադառնում էի նրա մոտ, և նա բազմիցս շատ նշանավոր մարդկանց ներկայությամբ համբուրել է ճակատս»³⁷։

Հնարավոր է, որ Աբրահամովը թույլ է տալիս որոշ չափազանցություն և անճշտություններ։ Մակայն ակնհայտ է, որ Յակով Աբրահամովը այն հայ սպաներից մեկն էր, ովքեր ծառայել են մեծ զորավարի անմիջական ղեկավարության տակ և մոտ հարաբերությունների մեջ են եղել նրա հետ։

Կարծում ենք, որ Ա. Վ. Սուվորովի մոտ ծառայած հայ սպաների շրջանակը չի սահմանափակվում հիշատակված անուններով։ Բանն այն է, որ XVIII դարի երկրորդ կեսի ռուս-թուրքական պատերազմներում, որոնցում մեծ դեր է խաղացել հուշակալոր զորահրամանատարը, մասնակցել են շատ հայեր։ Դրանց թվում են եղել Կասպարովը, Սումբատովը, Կազարենները, Խոջամայովը, Ուլուխանովը, Միկոտիչը, Այվազովը, Արղուսյանը, Վահանովը և շատ ուրիշներ։ Ռուսական բանակում էին դտնվում նաև հայ կամավորներ։ Հավանական է, որ Սուվորովի անմիջական հրամանատարության տակ մարտնչել են նաև այլ հայ զինվորականներ։

Ա. Վ. Սուվորովը գործարար կապեր հաստատեց մի շարք հայ հասարակական-քաղաքական գործիչների հետ հատկապես 1770-ական թթ. վերջերին, երբ տեղի ունեցավ Ղրիմի հայերի և հույների գաղթը Հարավային Ռուսաստան։

1778 թ., Եկատերինա II-ի հրահանգով, զեներալ-պորուչիկ Ա. Վ. Սուվորովը կազմակերպեց Ղրիմի հայերի գաղթը Ազովյան նահանգ, որի հետևանքով Գոնի ափին հիմնվեց նոր նախիջևանի հայկական գաղութը։ Գաղթի բավական բարդ և դժվարին գործը հաջողությամբ ավարտելու համար նա անմիջական կապերի մեջ մտավ տեղի (Ղրիմի) հայ ազգեցիկ գործիչների հետ։

Սուվորովը մշտական կապեր հաստատեց մասնավորապես վարդապետ Պյոտր Մարկոսի (Պետրոս Մարկոսյան) և քահանա

Յակովի (Հակոբի) հետ: Զորավարը ընդունում, խորհրդակցում և հանձնարարություններ էր տալիս նրանց: Սուվորովի զեկուցագրերում նրանց անունները հաճախ են հիշվում: Այսպես, օրինակ, էր 1778 թ. հուլիսի 17-ի զեկուցագրում՝ ուղղված Պոտյոմկինին, Ալեքսանդր Վասիլևիչը հայտնում էր, որ հայերի անվանի հոգեվորականներից են կաթոլիկական դավանանքի Պյոտր Մարկոսը և Յակովը, որոնք համարվում են հարդելի և պատվավոր մարդիկ³⁸: Սուվորովը 1778 թ. հուլիսի 29-ին գրում է Պոտյոմկինին, որ երեք օր առաջ նա ընդունել է հայկական պատգամավորությունը, այդ թվում վարդապետ Պյոտր Մարկոսին և քահանա Յակովին, որոնց հետ քննարկվել են գաղթի հետ կապված հարցեր³⁹: Խոսելով գաղթի կազմակերպման աշխատանքները սկսվելու մասին, Սուվորովը 1778 թ. օգոստոսի 6-ին Պ. Ի. Տուրչանինովին հայտնում էր. «Տենդերեն աշխատում ենք. սուրբ հայրերը շատ աշխատանք են թափում... Վարդապետ Պյոտր Մարկոսը այնպես ոտքի հանեց հայերին, որ զանազան տեղերից ու ամեն կողմից շարան-շարան ձգվեցին: Քահանա Յակովը բավական հաջողության հասավ կաֆացիների մեջ»⁴⁰:

Ա. Վ. Սուվորովը գործարար կապերի մեջ է եղել նաև զրիմահայեր Անանիայի և Անդրեասի հետ, որոնք, ինչպես երևում է զորավարի թղթերից, ակտիվ մասնակցություն են ունեցել հայերի գաղթը կազմակերպելու գործում: 1778 թ. սեպտեմբերի 25-ին Պոտյոմկինին ուղարկված նամակում Սուվորովը խնդրում էր հաշվի առնել այս երկու հայ հարյուրապետների վաստակը և նրանց շնորհել կապիտանի աստիճան: Ալեքսանդր Վասիլևիչը գրում էր. «Համարձակվում եմ հայ ժողովրդի պաշտոնաթող կոմպանիսկի հարյուրապետներ Անանիային և Անդրեասին, որոնք գերազանց աշխատեցին քրիստոնյաներին Ռուսաստան գաղթեցնելու գործում. ձերդ պայծառափայլության մեծահարգ հովանավորությունը հանձնարարել, և այդ օգնության համար խոնարհաբար խնդրում եմ ձերդ պայծառափայլության հավասարեցնել նրանց բանակային պաշտոնաթող կապիտանի աստիճանին»⁴¹:

Սուվորովի նամակներում և զեկուցագրերում խոսվում է նաև պողպորուշիկ հայ Պյոտր (Պետրոս) Իվանովի մասին: Վերջինս նույնպես կապված էր զորահրամանատարի հետ և նրա հանձնարարությամբ Ղրիմում եռանդուն գործունեություն է ծավալել: Հաշվի առնելով Իվանովի վաստակը, Սուվորովը հարց է բարձրացրել նրան զրամական նպաստ նշանակելու մասին⁴²:

Արխիվային նյութերը վկայում են, որ 1778 թ. աչքի է ընկել նաև զրիմահայ Պավել Արտեմովը: Քրիստոնյաներին Ղրիմից Աղովյան նահանգ վերաբնակեցման ժամանակ ցուցաբերած ծառայության և ջանքերի համար նա Սուվորովի միջնորդությամբ պրապորշչիկի աստիճան է ստացել⁴³:

Գաղթի ժամանակ Ղրիմում էին գտնվում Երուսաղեմի երկու հայ հոգևորական: Սուվորովը նրանց ևս օգտագործում է հայերի գաղթը կազմակերպելու գործում: 1778 թ. հուլիսի 25-ին նա Ղրիմից այդ մասին հայտնում էր Պոտյոմկինին: «Ի դեպ,— գրում էր Սուվորովը,— այստեղ պատահեցի Երուսաղեմի հայ հովվապետին և վարդապետին. այժմ նրանք աշխատում են մեծ օգտավետությամբ»⁴⁴:

Ըստ երևույթին, հենց այս շրջանում է, որ Սուվորովը Երուսաղեմի հայկական ս. Հակոբ վանքին ուղարկում է մի թանկարժեք նվեր և այդ կապակցությամբ Երուսաղեմի հայ պատրիարք Հովակիմ Քանաքեռցին շնորհակալական նամակ է հղում զորավարին: Նամակից երևում է, որ Սուվորովի նվերը եղել է թանկարժեք գեղարվեստական նկար՝ «Սուրբ հոգու հայտնության» տեսարանը, «նկարված հանձարեղ վարպետի արժանի ձեռքով»:

Նամակում, խորին երախտազարության և ողջունների հետ մեկտեղ ջերմ խոսքեր են ուղղված Սուվորովի հասցեին: «Քաջագուն Զորաւարիդ Ազնուագոյն ազգիդ Ռուսաց»,— այս խոսքերով է դիմել հայ պատրիարքը Սուվորովին, խնդրելով որ նա մշտապես օգնություն ցույց տա հայ ժողովրդին. «Եւ արդ՝ որովհետև միջնորդութեամբ Սրբազնասուրբ և գեղեցկանկար Պատկերի գալստեան Հոգոյն Սրբոյ բարեկամացեալ և որպէս թէ համարձակութիւն գտեալ խնդում ի մարդասիրութենէ բումմէ, զի հանապաղ յիշատակս մեր ի մէջ ազգի և ընտանեաց քոց յիշեցես ի բարին. և ի յազգէ մերմէ ուր և պատահեսցի զմարդասիրութիւն ցուցցես»:

Պատրիարքի՝ Սուվորովին գրած նամակը վերջանում է հետևյալ տողերով. «Արդ՝ որովհետև բարեպաշտութիւն քոյ միշտ փափաքի բարեաց գործոց և հանապաղ առնուս զմարդասիրութիւնս... ց եկեղեցոյ ըստ պատմելոյ վերագրեալ Գաբրիէլ վարդապետին և Արհիեպիսկոպոսին: Ուրմն կայ և մնայ քեզ արդարութեան պիտակն: Եւ դու ականկալեալ յախտենական փառաց, խնդրի զիջանիլն մեծութեանդ քոյ ի խնդիրս մեր և ձեռնութեամբ մերում, որք գտանին ի յօրհնեալ երկիրդ ձեր առնելով զբարեբարութիւնս որքան և հնարէ, համարելով ոչ որպէս [օտար] այլ որպէս բուն

համազգիս բարեկամս և սիրելիս: Եւ մեր աստ ի սուրբ տեղիսն Քրիստոսի աղօթօղեմք վասն ձեր և բարուք [Զոր]ավարութեան կենաց ձերոց»⁴⁵:

Սուվորովի հետ կապեր ուներ Ղրիմի ազդեցիկ հայերից Մարկոս Սարգսի Սերեբրյակովը (Կյուսուշլի, Արծաթագործյան), որը Սեծովյան նավատորմի հերոսներից մեկի՝ հռչակավոր ծովակալ Լազար Մարկովիչ Սերեբրյակովի (1795—1862) հայրն էր⁴⁶: Պաշտոնական մի բանի փաստաթղթերում, այդ թվում նաև ֆելդարշալ Ռոմյանցեվ-Չազունայսկու գրագրություններում Մ. Սերեբրյակովը հիշատակվում է որպես «անվանի ենիկուլյան հայ հարյուրապետ Մարգոս»⁴⁷:

Մարկոս (Մարկ) Սերեբրյակովը ունենալով ուսական կողմնորոշում և ցանկանալով թուրք-թաթարական խաների ծանր լծից ազատել Ղրիմը, ակտիվ գործունեություն ծավալեց հօգուտ Ռուսաստանի: Կամավոր ծառայության մտնելով ուսական բանակ, նա 1770-ական թթ. մասնակցեց Ղրիմում ծավալված պատերազմական գործողություններին և զգալի օգնություն ցույց տվեց Ա. Վ. Սուվորովին՝ Ղրիմի քրիստոնյաներին Ռուսաստան տեղափոխելու գործում: Այս մասին գոյություն ունի Ալեքսանդր Վասիլևիչի գրավոր վկայությունը: Կոզլով քաղաքում, 1779 թ. ապրիլի 23-ին Մ. Սերեբրյակովի անունով Սուվորովի գրած ատեստատում ասված է. «Տրված է սույնը պաշտոնաթող կոմպանենյսկի հարյուրապետ Մարկ Սերեբրյակովին առ այն, որո նա օգտագործվել է այստեղից քրիստոնյաներին Աղովյան նահանգ դուրս բերելու, ինչպես նաև սրանից առաջ դանազան բավական կարևոր գազտնի հանձնարարությունների համար, որոնք կատարել է գերագանց ջանասիրությամբ և հավատարմությամբ. դրանց համար արգարամությունը արժանի է հատուկ հարգանքի»⁴⁸:

Պետք է նշել, որ Սուվորովը, ի տարբերություն ցարական բյուրոկրատ գեներալների, զգալի հողատարություն ցուցաբերեց գաղթի դիմած հայ բնակչության նկատմամբ: Կարիքի և զրկանքների մեջ գտնվող գաղթականների վիճակը բարելավելու նպատակով նա քանիցս Ղրիմից զեկուցագրեր է ուղարկել Պետերբուրգ: Այսպես, 1778 թ. օգոստոսի 23-ին Սուվորովը գրում էր իշխան Պոտյոմկինին. «Ռուսաստանում վերաբնակեցվող հայերի կողմից ընտրված 4 պատգամավորներին, որոնք ինձնից թույլտվություն են խնդրում Սանկտ-Պետերբուրգում լինել և հարմար ժամանակ ներկայանալու ձերդ պայծառափայլությանը... իրենց հարմար

վայրերում նպաստավոր բնակեցման և այնտեղ ապրելու խնդրանքի կապակցությամբ,— խոնարհաբար խնդրում եմ պաշտպանել և ձերդ բարձր սիրամածությունը ցույց տալ նրանց»⁴⁹:

Ա. Վ. Սուվորովի հայ ծանոթների ու բարեկամների թիվը զգալի շափով ավելացավ 1780—1782 թթ., այն տարիներին, երբ նրան, ինչպես հայտնի է, հանձնարարված էր նախապատրաստել ուսական զորքերի մի նոր արշավանք դեպի արևելյան Անդրկովկաս: Այդ կապակցությամբ 1780 թ. հունվար ամսին զորավարը Պետերբուրգում հանդիպումներ ունեցավ հայ ազատագրական շարժման նշանավոր ներկայացուցիչներ Հովսեփ Արղությանի և Իվան (Հովհաննես) Լազարյանի հետ: Հայ գործիչները նրան մանրամասն տեղեկություններ հաղորդեցին Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի տնտեսական, քաղաքական դրության և երկրամասի քաղաքների, բերդերի ու ճանապարհների մասին:

Արղությանն իր օրագրում արձանագրել է. «Յունվարի 2 եռերալ Պոսոճիկ Ալեքսանդր Վասիլևիչ Սուվորովն եկն առ մեզ ի տեսութիւն. և մեր ազնիւ Աղայ Յովհաննէսն ընդ նմա ի վերայ նոյն նիւթոյն. և ի վերայ երկրացն մերոց բազում հարցմունս արար մինչև ցերկու ժամս: Եհարց և մանրամասնաբար զկացութենէ սրբբոյն Աթոռոյն մերոց էջմիածնայ և յուսադրութիւն արար յոյժ որպէս թէ նորոգելոց իցեն ի մեզ իշխանութիւն ինչ՝ որ և ի մէնջ ելեալ գնացեալ էր առ պայծառափայլ քնեազն Գրիգոր Ալեքսանդրիչ Պօտեմկինն և պատմեալ նմա զամենայն ասացեալսն մեր վասն քաղաքաց»:

Նոր տեսակցությունը տեղի է ունեցել հունվարի 13-ին: Արղությանը գրում է. «Ի սոյն ամսոյ 13, նոյն եներալ Պօսոճիկ Սուվորովն զմեզ Աղայ Յովհաննէսն կոչեալ էր առ ինքն վասն տեղեկութեան կացութեանց և վարուց, նաև որպիսութեանց մէլիքանցն մերոյ որք ի յԱրցախ աշխարհի են, որ այժմ կոչի Ղարաբաղ և կամ Սղոխախ, և մեր ասացաք զկարդն նոցին և զմիաբանութիւնն ընդ իրեարս և զտարածայնութիւնն և զպատճառն տիրելոյն նոցա ի Փանախանէն... Պատմեաց Աղայ Յովհաննէսն և մեր ուզբաշոց միաբանութիւնն և զտէրութենէ նորոգելն և ոչընչի կորուսանելն: Նաև՝ Դաւիթ բէգի դօրանալն և արիութիւնն, և յետոյ վախճանին խափանիլն: Հարցրին և զբարոյն արքային Հերակլայ և զկարողութենէ նորին. և զոր ինչ ասացաք զմեցին»⁵⁰:

Վերջինս, այսինքն՝ կենդանի մնալու ցանկությունը և այլն:

Սուվորովի և Մուստաֆայի միջև կատարված խոսակցությունը, որի մասին հարկ է դրել հետևյալը, ցույց է տալիս, որ Մուստաֆան իր անհատական կյանքի և իր հայրենիքի հանդեպ հարգանքներ է ցուցնում, որոնք չեն կարողացել լիարժեք կերպով արտահայտվել իր ժամանակում:

Սուվորովի և Մուստաֆայի միջև կատարված խոսակցությունը, որի մասին հարկ է դրել հետևյալը, ցույց է տալիս, որ Մուստաֆան իր անհատական կյանքի և իր հայրենիքի հանդեպ հարգանքներ է ցուցնում, որոնք չեն կարողացել լիարժեք կերպով արտահայտվել իր ժամանակում:

Հայ մեղիքների նամակը Ա. Վ. Սուվորովին

Հունվարի 10-ին Լազարյանը Սուվորովին ներկայացնում է մի զինկուցագիր, ուր խոսվում է Հայաստանի քաղաքական վիճակի մասին և արվում առաջարկներ՝ երկիրը պարսկական ու թուրքական տիրապետությունից ազատագրելու և հայկական պետականությունը վերականգնելու համար⁵¹: Ուշագրավ է այն փաստը, որ այդ նույն օրերին ռուսական արքունիք է ներկայացվում Հայաստանի պատմական քարտեզը, որի տակ դրված է Ա. Վ. Սուվորովի ստորագրությունը⁵²: Ըստ երևույթին, այդ քարտեզը զորավարին հանձնել են Արղուիսյանը և Լազարյանը: Ի դեպ, քարտեզի հետ կապված այս փաստը, Սուվորովի ունեցած զրույցները Արղուիսյանի ու Լազարյանի հետ, ինչպես նաև մի շարք այլ հանգամանքներ վկայում են այն մասին, որ մեծ զորավարը եղել է Հայաստանի ազատագրության և հայկական պետության վերականգնման ջերմ կողմնակիցը:

Իրեն հանձնարարված խնդիրը լուծելու նպատակով Ա. Վ. Սուվորովը 1780 թ. փետրվարին ժամանեց Աստրախան, ուր մնաց երկու տարուց ավելի: Այստեղ նա ձեռք բերեց նոր հայ ծանոթներ ու բարեկամներ: Գրանց թվում պետք է հիշատակել Բոգդան Խասատովին (Ալիմ Խասատովի եղբայրը), Ալեքսանդր Մելիքովին, Նիկիտա Յակովլևին, Ղուկաս Պետրովին և ուրիշներին, որոնք կատարելով զորավարի կարևոր հանձնարարությունները, դարձան նրա հավատարիմ զորակիցներն ու բարեկամները⁵³: Իր մի շարք զինկուցագրերում Սուվորովը բարձր գնահատական է տալիս նրանց՝ իրեն մատուցած ծառայությունների համար: Բնորոշ է, որ զորավարի թղթերում Բոգդան Խասատովը հաճախ որակվում է որպես «իմ բարեկամը» («мой приятель»), իսկ Ալեքսանդր Մելիքովը՝ որպես ազնվաբարո մարդ («человек порядочного поведения»), որ արժանի է վստահության⁵⁴: Գնահատելով զանազանից հայ Նիկիտա Յակովլևի զործունեությունը հօգուտ Ռուսաստանի, Սուվորովը առանձին խնամք է տարել նրա նկատմամբ, պարգևատրել է նրան և միաժամանակ խնդրել Գ. Պոտյոմկինին՝ իր «բարձր հովանավորության» տակ վերցնել Յակովլևին⁵⁵:

1780—1781 թթ. գտնվելով Աստրախանում, Սուվորովը քաղաքական կապեր է հաստատել Ղարաբաղի հայ մելիքների հետ: Վերջիններիս և զորավարի միջև տեղի է ունեցել նամակագրություն: Արխիվային նյութերում պահպանվում է մելիք Աղամի և մելիք Քեզլարի 1781 թ. սեպտեմբերի 2-ի նամակը՝ ուղղված Սուվորովին, որ սկսվում է հետևյալ տողերով. «Ամենապայծառ ազնիվ և բարխնա-

մող ղենառալ պառուտչիկ գավալեր Ալեքսանդր Վասիլեվիչին: Մեք ներքոյ անվաննալքըս Ղարաբաղու հայոց թագաւորաց ազնիւ զինվորած մնացեալ ժառանգք մելիքներբա, քոյ մեծ և բարի հանբան լսեցիմք, որ բազումք զորօք շնորհեալ ես երկիրն մեր գալն և ի գալըստեան քոյ շատ բարոք եմք կամենում և ապայ մինչև այժմոս ոչինչ գալըստեան քոյին հալալ չի մացանք և մահմեդական ազգն ավելի թշնամացելայ մեր քրիստոնէից վերայ. ոչինչ տեղաց շունիմք օգնականութիւն, միայն ապաւինել առաջ աստուած և յետոյ Ամենայայժառ և Ամենիշխան ինքնակալ ողորմած թագաւորոյն էլ զրով ողորմութիւն ենք խնդրած, որ մեր ազգին օգնութիւն հասնելուն մեզ բաական գինւորք առաքի, և ի քոյ մեծառատ ողորմութիւնն մեր ազգիցս անպակաս արասցէս վասն մերոցս նեղութեան մետ առնելով մեր խնդրվածկն յետևելով կատարեալ մեզ օգնութիւն շնորհեալ»⁵⁶:

Սուվորովի հետ նամակագրութիւն են ունեցել նաև մելիք Զումշուզը, լուգբաշի Պետրոսը և ուրիշներ: Այդ մասին է վկայում տարիներ հետո նրանց գրած նամակը Աստրախանի նահանգապետ Գուրովիչին, որտեղ, ի միջի այլոց, ասված է. «781 և 782 թվականներին պարոն գեներալ Սուվորովը և գեներալ Պոտյոմկինը բավական նամակագրութիւն ունեցան մեզ հետ»⁵⁷: Դժբախտաբար դեռ չեն հայտնաբերված Սուվորովի նամակները ուղղված մելիքներին:

Ռուս-թուրքական 1787—1791 թթ. պատերազմի շրջանում, երբ ռուսական բանակը հաղթական կռիվներ էր մղում Մոլդավիայում և Վալախիայում, Սուվորովը նորից հանգիպումներ ունեցավ Հովսեփ Արղուիսյանի հետ, որը գործող բանակ էր եկել Իշխան Գ. Պոտյոմկինի հրավերով: Զորավարին այստեղ գործակցեց նաև «արքայադստանի ղեկավար» Ստեփան Դավիսյանը: Նա վարում էր թարգմանչի պաշտոն և կատարում զանազան հանձնարարություններ: Ալեքսանդր Վասիլեիչը 1792 թ. դիմում ուղարկեց բարձր հրամանատարությանը՝ Ստ. Դավիսյանին հովանավորելու և նրան «օգնության ձևք մեկնելու» խնդրանքով⁵⁸:

Կանգ շտանելով Ա. Վ. Սուվորովի մյուս հայ բարեկամների ու ծանոթների վրա, հարկ ենք համարում, սակայն, վերջում նշել հետևյալ հանգամանքը: Ռուս աշխարհահռչակ զորավարը մեծ հարգանք էր վայելում ժամանակի հայ հասարակական-քաղաքական գործիչների մեջ ոչ միայն որպես հանճարեղ զորահրամանատար, այլև որպես ռուսական պետության ականավոր գործիչ, որն ան-

կեղծորեն ձգտում էր աջակցել Հայաստանի ազատագրմանը պարսկական շահի և թուրքական սուլթանի ծանր լծից: Այս տեսակետից բնորոշ է Հովսեփ Արղուիսյանի 1795 թ. դեկտեմբերի 15-ի նամակն՝ ուղարկված Թբիլիսիից Պետերբուրգ, Ստեփան Դավիսյանին: Խոսելով այն լուրերի մասին, որոնց համաձայն պատրաստվում է ռուսական զորքերի նոր արշավանք դեպի Անդրկովկաս՝ պարսից զավթիչների դեմ, Արղուիսյանը գրում էր, որ լավ կլիներ, եթե արշավանքը զլխավորի Սուվորովը. «Եթե ուղարկեն գրաֆ Սուվորովին, ապա գործը կվերջանա ի բարօրութիւն մեր... Իմ կողմից ուղղունիր նրան (Սուվորովին) և ասա... շտապիր օգնութիւն տարաբախտ վրացական թագավորությանը և իմ հայրենիքին, որին նա սիրում է»⁵⁹:

Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Հովսեփ Արղուիսյանը լուրջ հիմքեր ուներ գրելու այս ուշագրավ տողերը: Հոգվածում բերված փաստերը խոսում են այն մասին, որ մեծ զորավարը քիչ ջանքեր չի թափել հայ ժողովրդին հուզող հարցերը լուծելու և մասնավորապես նրա պետականությունը վերականգնելու համար:

АРМЯНСКИЕ ДРУЗЬЯ И СПОДВИЖНИКИ А. В. СУВОРОВА

(К 250-летию со дня рождения великого полководца)

Резюме

В 1770—1780-х годах А. В. Суворову довелось вступать в контакты с армянскими общинами Крыма, Астрахани и Москвы, принимать активное участие в русско-армянских переговорах, переписываться со многими армянскими политическими и церковными деятелями. В результате этого он установил деловые дружеские отношения с Иосифом Аргутинским (Аргутяном), Иваном Лазаревым (Лазаряном), «араратским послом» Степаном Давтяном, архимандритом Петросом Маркосяном, Александром Меликовым, Маркосом Серебряковым (Арцатагорцяном), с некоторыми армянскими карабахскими меликами и другими видными и влиятельными лицами. Следует отметить, что под непосредственным командованием великого русского полководца сражались также офицеры-армяне, храбрость и самоотверженность которых неоднократно отмечал сам Александр Васильевич. Более того, некоторые из этих офицеров (А. Хастатов, М. Лалаев, Ив. Манев) принадлежали к числу учеников и боевых сподвижников прославленного полководца.

АРМЯНСКИЕ ВОЛОНТЕРЫ В РУССКО-ТУРЕЦКОЙ ВОЙНЕ 1787—1791 гг.

Известно, что на протяжении многих веков в составе русской действующей армии находились армянские добровольцы⁶⁰. Более того. В рядах русских войск сражались и специальные отряды из армянских волонтеров. В XVIII—XIX вв., например, были организованы пешие отряды и эскадроны, принимавшие активное участие в русско-персидских и русско-турецких войнах. В исторической литературе данному вопросу посвящено немало страниц⁶¹.

Однако нельзя сказать, что эта тема изучена в достаточной степени. Об армянских волонтерах в разных фондах исторических архивов хранятся еще неопубликованные материалы, представляющие значительный интерес. К их числу относятся документы из архива князя Г. А. Потемкина, показывающие, что в 1788 г. в городе Новый Нахичеван был сформирован армянский, точнее, армяно-украинский, добровольческий отряд для участия в русско-турецкой войне 1787—1791 гг.

Основной документ—докладная записка от 14 мая 1788 г. на имя всемогущего фаворита императрицы Екатерины II Григория Александровича Потемкина. Автор записки, главный правитель Нахичевана майор Иван Абрамов (Оганес Абраамян), обращаясь к Потемкину, писал:

«Милости которые Ваша Светлость оказывать мне изволите подают мне смелость изъявить нижайшую мою прозьбу о нижеследующем.

От 779 года, то есть с начала удостоения меня начальником общества армянского в Нахичеване обитающего, неуспынно старался я о благосостоянии онаго; в короткое время выстроил тот город с пятью прикосновенными ему селениями, открыл путь к распространению комерции, к разведению хлебопашества и скотоводства, завел разные фабрики, умножил художества, и словом что во всем им споспешествовал и наконец успел все сие привести в совершенный порядок и благоустройство. Сверх сего употребляем был от главной команды к исполнению политических комиссий, где также заслужил отличную похвалу и имею в том одобрительные аттестаты»⁶².

Отмечая свои заслуги в деле построения, развития и благоустройства города Нахичевана, Абрамов далее сообщал:

«Нынеже желая заслужить особое благоволение Вашей Светлости с отличным усердием исполнил я Вашу волю, и не только собрал из армян волонтеров и часть из малороссиан, но и исправил им на свой кошт хороших лошадей, одел их в приличное платье и вооружил по надлежащему; а через то и привел их в такое состояние, что с желаемым успехом употреблены они быть могут против неприятеля. Все они желают участвовать в Тавриде яко в местах им лучше известных, а по тому и осмеливаюсь Вашу Светлость всенижайше просить за все оказанные мною усердия о награждении чином, так как и достойных команд моих чинов в подносимом у сего списке значущихся, а притом повелеть всей той команде определить жалованье с апреля месяца по окладам всех чинов безобидным, так как прочее все будет их собственное, дабы мы чувствуя особливую Вашей Светлости к нам Милость лучше могли оказать против неприятеля храбрость и неустрашимость и прославлять во веки имя Вашей Светлости. С истинным высокопочтением пребуду до конца жизни»⁶³.

К докладной записке приложена подписанная тем же майором Абрамовым справка—«Стат (штат) армянской волонтерской команде». В ней указано, что отряд в своем составе имеет: рядовых—200, капралов—8, унтер-офицеров—4, вахмистров—6, поручиков—2, подпоручиков—2, капитана—1, командира отряда, майора—1, всего 224 человека. Годовое жалованье составляло: командиру отряда, майору 450 рублей, капитану 280, поручику 190, подпоручику 150, вахмистру 75, унтерофицеру 60, капралу и рядовому по 50 рублей; всего 12000 рублей в год. Приводя эти данные, Абрамов далее сообщал, что все расходы на вооружение, продовольствие и другие потребности добровольцы берут на себя. Государство платит только жалованье; «Прочее—все их собственное, как вооружение и обмундирование, так и лошади и продовольствие»⁶⁴.

Другой документ озаглавлен—«Список удостаеваемым к награждению чином». Здесь некоторых офицеров отряда Абрамов представляет к повышению в чинах: сотника Степана Чалохушева (Чалхушев—Чалхушян)—в капитаны, сотников Данило Давыдова и Тараса Кастова—в поручики, вахмистра Илью Абрамова (Абраамяна) и регистратора Андрея Плужникова—в обер-офицеры.

Архивные материалы, таким образом, говорят о том, что «начальник общества армянского в Нахичеване обитающего» майор Иван Абрамов организовал в 1788 г. «волонтерскую команду», в которую входили армяне и малороссияне (украинцы). В документах упоминаются фамилии некоторых офи-

церов отряда—Абрамовы, Чалхушев (армяне), Давыдов, Плужников (украинцы).

Создание объединенного армяно-украинского добровольческого отряда—сам по себе весьма интересный факт, свидетельствующий об общих интересах и дружественных отношениях, существовавших между армянским и украинским народами.

Волонтеры имели целью участвовать в начавшейся в 1787 г. русско-турецкой войне, причем они выразили желание воевать против Турции в Тавриде (в Крыму), «яко в местах им лучше известных». Отсюда можно сделать заключение, что добровольцами в основном были крымские (нахичеванские) армяне и украинцы.

В архивном деле, к сожалению, нет сведений о боевых действиях и дальнейшей судьбе отряда. Однако есть основания полагать, что он принимал участие в войне вместе с другими волонтерскими формированиями, действовавшими в Крыму или Молдавии и Валахии. Г. Потемкин, волею которого был создан и армяно-украинский отряд, являлся убежденным сторонником широкого участия добровольцев в войне с турками. Командование русских войск не имело причин не использовать армянских волонтеров в военных действиях. Следует добавить, что в известном трехтомном «Собрании актов, относящихся к обозрению истории армянского народа» под редакцией С. Глинки сказано, что в годы второй русско-турецкой войны «из волонтеров составлен был из армян значительный отряд, коим командовал из армян же подполковник Абрамов»⁶⁵. Кстати, эти строки—единственное сведение об эскадроне Абрамова в исторической литературе⁶⁶.

Организатор и командир армяно-украинского отряда майор Иван Абрамов был одним из влиятельных лиц среди крымских и нахичеванских армян. Долгое время он служил в русской армии. После основания Нахичевана в 1779 г. Абрамов стал председателем армянского магистрата этого города. В 1783 г. по поручению А. В. Суворова майор Абрамов вместе с полковником Нижегородского пехотного полка Булгаковым вел переговоры с крымским ханом Шагин-Гиреем с целью убедить его переехать на жительство в Россию⁶⁷. В 1791—1793 гг. он занимал должность городского головы Нахичевана⁶⁸.

Помимо добровольческого эскадрона И. Абрамова в годы второй русско-турецкой войны был создан отряд волонтеров из молдавских и бессарабских армян. Когда военные действия развернулись на Балканах, армянское население Молдавии, Бессарабии и Валахии с радостью встречали русские войска и оказали им всевозможную помощь и содейст-

вие, за что многие местные армяне получали официальные аттестации, в которых отмечались их верная служба, старательность и храбрость. Именно в этот период по указанию И. Аргутинского, в то время находящегося в главном штабе командующего русских войск на Балканах Г. Потемкина, был организован новый армянский добровольческий отряд. В этом деле активное и непосредственное участие принимал один из видных деятелей армянского освободительного движения, «араратский посланник» при дворе Екатерины II Степан Тер-Исаакович Давыдов (Давидян). В надписи на его гробнице в городе Григориополе читаем: «Гробница славного мужа Степаноса, сына, священника Тер-Исаака, племянника знаменитого архиепископа Смирнского Исаака. Он происходил из колена Гехама и великого Давид-бека, рожден князем Гехаркуни и жил в стране Анкахаке (?). В сентябре 1784 года назначен при дворе ея императорского величества Екатерины Второй посланником араратских армян и удостоен чина подполковника. Затем он собирал в Бессарабии ополчение из армян (курсив наш.—М. Н.); грамотой императрицы был назначен председательствующим судьей (в магистрате) армян в Григориополе. Скончался в 65 лет. возрасте, сентября 2-го 1800 г.»⁶⁹.

Есть основания полагать, что С. Давыдов, имевший в те годы чин подполковника, вместе с армянскими добровольцами участвовал в турецкой кампании⁷⁰.

В русско-турецкой войне 1787—1791 гг., помимо отрядов армянских волонтеров, принимали участие также отдельные воинские подразделения армян, служившие в разных частях русской армии,—Хастатов, Манеев, Лалаев, Сумбатов, Ходжамалов, Улуханов, Айвазов, Ваганов, Мкртичев, Лазарев, Аргутинский-Долгоруков и многие другие⁷¹.

Организация армянского добровольческого отряда в период второй русско-турецкой войны и участие в ней многих армян, конечно, неслучайны. Связанные с общим политическим настроением армянского народа, они по существу были одним из проявлений армянского освободительного движения того времени, направленного против господства султанской Турции. Подобного рода факты приобрели бóльшие масштабы в последующие периоды истории армянского народа.

Небезынтересно здесь отметить, что в богатом архивном фонде Г. А. Потемкина хранятся материалы и о том, что в период русско-турецкой войны 1787—1791 гг. генерал-поручик, будущему прославленному фельдмаршалу М. И. Куту-

зову, одержавшему в этой войне ряд крупных побед над турками, пришлось заниматься также вопросом переселения армян из турецких владений в «российские пределы».

Еще 12 июня 1790 г. Кутузов в своем рапорте на имя князя Г. Потемкина писал из Аккермана (Белгорода-Днестровского): «Жители Белграда Днестровского желают поселиться: армянское общество—в новых Дубасарах, греки—на левом берегу Днестровского лимана при Гаджидере, а волхи и цыгане—при урочищах Коялы и Бугас, от Гаджидере расстоянием верстах в осми. Притом просят позволить им: ...собрать виноград и плоды с садов их и сколько им возможно будет дерев и винограду выкопать и перенести на новое жилище...»⁷².

В августе-сентябре 1791 г., будучи комендантом покоренной крепости Измаил, Кутузов непосредственно занимался переселением измаильских армян. 24 августа 1791 г. он рапортовал Потемкину: «Армяне, жительствующие в Измаиле, желают переехать в Дубасыры, но некоторые из них будучи немущи за неимением подвод сего учинить не могут. Подвод же всех потребно параволовых сто пятьдесят, коих здесь достать в наймы никак не возможно, и для того сим представя Вашему сиятельству прошу ежели есть способ оными снабдить приказать доставить оныя в непродолжительном времени. При отзыве здешних армян последуют может быть их примеру и прочия жители»⁷³.

Через некоторое время, 5 сентября 1791 г., Кутузов отправляет из Измаила новый рапорт, где сказано: «Из числа армян жителей измаильских выехало поныне в разныя числа на поселение в Дубасыры семьдесят семь семей с пристойными конвоями. Сии люди изо всех армян достаточнейшия. Остается здесь из армян же много желающих к поселению в российских пределах, но за неимением по неимуществу их подвод, подняться не могут, и для того нужно бы было доставить сюда ежели возможно до ста пятидесяти подвод, или позволить употребить на них для найма фурщиком казенныя деньги»⁷⁴.

Великий полководец, как видим, проявил внимание и заботу о немущих армянах. В одном документе даже сказано, что Кутузов приказал принять армян-переселенцев «в особое покровительство». Бендерский комендант бригадир от кавалерии барон Вестфален в своем рапорте от 6 сентября 1791 г. в канцелярию Г. Потемкина писал: «Его высокопревосходительство господин генерал поручик и кавалер Голенищев-Кутузов при сообщении своем прислать изволил из Измаила к переселению в Новой Дубасар измаильских армян двадцать

две семьи числом обоего пола сто одна душа; и как оных а также и вперед прибывающих приказал поместить в Бендерах принявши их в *особое покровительство*, которое число сего месяца 4-го числа прибыли сюда и расположены по здешним армянам, о чем Вашему превосходительству покорнейше рапортую»⁷⁵.

О том, что генерал-поручик и кавалер М. И. Голенищев-Кутузов сделал соответствующие представления «о вспомоществовании» армянам-переселенцам, писал также армянский общественно-политический деятель Степан Давыдов 16 сентября 1791 г. из Измаила⁷⁶. Давыдов (Давтян), как уже отметили, находился в тот период в русской действующей армии и по поручению Иосифа Аргутинского занимался вопросом переселения армян.

В архивном деле сохранился еще один рапорт Кутузова об армянах. 24 сентября 1791 г. полководец писал Потемкину из Измаила: «Сверх прежде выехавших измаильских жителей армян на переселение сего числа выезжает четырнадцать семей, обоего пола шестдесят одна душа»⁷⁷.

Дальнейшие поиски, вероятно, обнаружат новые интересные материалы. Но и вышеприведенные документы показывают, что М. И. Кутузов, наряду с Г. А. Потемкиным, А. В. Суворовым, армянским архиепископом Иосифом Аргутинским и другими принимал деятельное участие в организации переселения армян, имевшего место в годы второй русско-турецкой войны.

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ 1787—1791 թթ.
ՌՈՒՍ-ՌՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Ամփոփում

Ինչպես վկայում են արխիվային նյութերը, 1788 թ., Նոր Նախիջևանում, հայկական այդ քաղաքի կառավարիչ, մայրը Իվան Աբրամովի (Հովհաննես Աբրահամյանի) ջանքերով ստեղծվում է հայ և մասամբ ուկրաինացի կամավորներից բաղկացած մի ջոկատ (թվով 224 մարդ)՝ ռուսական զորքերի կազմում թուրքական բանակի դեմ կռվելու համար: Այդ նույն ժամանակ Մոլդավիայի և Բեսարաբիայի հայ բնակչությունից կազմակերպվեց հայկական կամավորական մի այլ ջոկատ, որը «Արարատյան դեսպան», փոխգնդապետ Ստեփան Գավթյանի ղեկավարությամբ մասնակցեց

ոուս-թուրքական պատերազմին՝ նրա բալկանյան ճակատում: Կամավորական այդ խմբերի կազմակերպումը, ինչպես նաև ոուսական տարբեր զորամասերում գտնվող բազմաթիվ հայ զինվորականների մասնակցությունը երկրորդ ոուս-թուրքական պատերազմին պատահական, երևույթ չէր. այն կապված էր հայ ժողովրդի ոուսական քաղաքական կողմնորոշման հետ և ըստ էության հանդիսանում էր թուրքական տիրապետության դեմ ուղղված իր ժամանակի հայ ազատագրական շարժման մի արտահայտությունը: Ի դեպ, արխիվային նյութերը պարունակում են հետաքրքիր տեղեկություններ նաև այն մասին, որ 1787—1791 թթ. ոուս-թուրքական պատերազմի ժամանակ Մուլբախյայի և Վալախիայի հայ բընակչության՝ դեպի Ռուսաստան կատարած գաղթի կազմակերպման հարցերով Գ. Ա. Պոտյոմկինի, Ա. Վ. Սուվորովի, Հովսեփ Արղուսյանի և մյուսների հետ անմիջականորեն զբաղվել է նաև զորավար Մ. Ի. Կուտուզովը:

1812 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ

Ռուս ժողովրդի 1812 թ. Հայրենական պատերազմը, որի 150-ամյակը լրանում է այս տարի (1962 թ.), Ռուսաստանի պատմության փայլուն էջերից մեկն է⁷⁸: Համաժողովրդական-ազատագրական այդ պատերազմը, որի ընթացքում ջախջախվեց նապոլեոն Բոնապարտի «մեծ բանակը», հսկայական նշանակություն ունեցավ ոչ միայն Ռուսաստանի, այլև ամբողջ Եվրոպայի պատմական ճակատագրում: Ռուս ժողովրդի հերոսական պայքարը վճռական դեր խաղաց այն մեծ և հաղթական պատերազմում, որ մղում էին Եվրոպայի ժողովուրդները համաշխարհային տիրապետության ձեռք տող ֆրանսիական կայսր Նապոլեոնի դեմ:

1812 թ. Հայրենական պատերազմին մասնակցում էին Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող համարյա բոլոր ժողովուրդները: Չնայած ցարիզմի վարած ազդային-գաղութային քաղաքականությանը, հայրենասիրական ոգին, զավթիչներին վճռական հակահարված տալու ձգտումը համակել էր ուկրաինացիներին, բելոռուսներին, բաշկիրներին, լատիշներին և մյուս ժողովուրդներին:

Հայրենական պատերազմը ջերմ արձագանք գտավ նաև Ռուսաստանի ու Կովկասի հայ բնակչության մեջ: Երկրի պաշտպանությանը մասնակցելու համար կազմակերպվեց հայկական կամավորական ջոկատ: Ռուսական բանակի և աշխարհազորայինների շարքերում հակառակորդի դեմ անձնվեր կռվում էին ոչ քիչ հայ մարտիկներ: Ռուսաստանի և Անդրկովկասի շատ քաղաքների ու բնակավայրերի հայ բնակիչները զգալի նվիրատվություններ արեցին ուսական բանակի և տուժած ազգաբնակչության օգտին: Բուն Հայաստանի ժողովրդական զանգվածները, որոնք այդ շրջանում գտնվում էին պարսիկ խաների և թուրք փաշաների լծի տակ, իրենց բացահայտ համակրանքն արտահայտեցին ոուս ժողովրդի նկատմամբ, որը օրհասական պայքար էր մղում Նապոլեոն Բոնապարտի զավթողական բանակի դեմ:

1812 թ. հուլիսին, երբ Ռուսաստանի շատ նահանգներում կազմակերպվում էին ժողովրդական աշխարհազորային ջոկատներ, նոր

Նախիջևան հայկական քաղաքում ևս ձեռնամուխ եղան այդ գործին: Նախիջևանի մագիստրատի արխիվային նյութերը ցույց են տալիս, որ Տագանրոզի քաղաքագլխի հանձնարարությամբ կամավորական ջոկատ կազմակերպելու հարցով անմիջականորեն զբաղվում էր Մ. Ի. Աբրամովը (Աբրահամյանը), իսկ գործի ընդհանուր ղեկավարությունը իր վրա էր վերցրել քաղաքային մագիստրատը: Հետաքրքրական է, որ վերջինս դիմել է ոչ միայն քաղաքի ազգաբնակչությանը, այլև նախիջևանի շրջակա հայկական գյուղերի բնակիչներին, առաջարկելով իր տրամադրության տակ ուղարկել բոլոր նրանց, ովքեր ցանկանում են ծառայել ժողովրդական աշխարհագործում⁷⁹:

Նախիջևան քաղաքի վարչության 1812 թ. էլից մատչանում գրանցված է մագիստրատի 1812 թ. հուլիսի 29-ի պաշտոնական գրությունը՝ ուղարկված Չալթր հայկական գյուղը: Այնտեղ ասված է. «Գրեցինք Չալթր գիւղը յտամանին և ծերերուն յայսպէս գրելովն նորին քերականցութիւնն պարոն կօստանաշալնիքին, ըստ հետևմանն նորին կայսերական մեծութեան հրամայվիլ է քաղաքիս կոստանին բարձրածին Միքիթը Իվանիչ Ապրամովին որ նա ժողովելու է վրէն թիրի պես զօրք, և կամեցողացն գրելու է, որ հարկաւոր ժամանակի ժամանակաւոր ծառայելու, և ձեր գեղեն ալ հավես էդօղ, ախօթօվ մարդիք կամ նը խրկիք որ քան մագիստրաթ յայտնվին:

Դատավոր Մելեօն Օվայկեմով
Դատավոր Պետրոս Եղեյազարով
Գրագիր Պելիվանով»⁸⁰:

Այդ գրանցման ծանոթագրության մեջ ավելացված է, որ նման գրություններ են ուղարկվել նաև Թոփթի, Մեծ-Սալա, Սուլթան-Սալա և Նեսվիտա գյուղերը⁸¹: Այսպիսով, հայ աշխարհագորականների ջոկատի կազմակերպմանը մասնակցում էր Գոնի ողջ հայկական գաղութը:

Նախիջևանի հայկական աշխարհագորը երկար կյանք չունեցավ: Նա ցրվեց Ալեքսանդր I-ի այն հրովարտակի համաձայն, որով առաջարկվում էր վերացնել ուղղամեծակատներից հեռու գտնվող քաղաքներում ու նահանգներում կազմակերպված աշխարհագորական ջոկատները:

1812 թ. աշխարհագորին մասնակցել են Ռուսաստանի քաղաքներում բնակվող մի շարք հայեր: Այսպես, մոսկվացի ազնու-

վական Մանվելովը ընդունվեց տեղի աշխարհագորը և որպես հեծյալ գեղերից մեկի կորնետ մասնակցեց պատերազմական գործողություններին⁸²: Նույն թվականի հուլիս ամսին աշխարհագորական դարձավ Մոսկվայի համալսարանի ուսանող, մոսկվացի հայ Մելիքովը: Հետագայում նա տեղափոխվեց բանակի 37-րդ եզերական գունդ, ստացավ պրապորշչիկի աստիճան և մասնակցեց հայրենական պատերազմի մի քանի ճակատամարտերին: 1820-ական թվականների սկզբում Մելիքովը ծառայում էր հայկական Գրիգորիովո քաղաքի մագիստրատում⁸³: Նշենք նաև, որ մեծահարուստ ազնվական Ակիմ Լազարևիչ Լազարևը զինեց ու համագլխատավորեց իր մետաքսի գործարանի 60 բանվորներին և ուղարկեց նրանց ռազմաճակատ: Մոսկվացիներ Սուսաննա Գալուստովան աշխարհագորային ջոկատ ուղարկեց իր 10 գյուղացիներին, իսկ Ե. Գ. Մանուկովան՝ իր 5 գյուղացիներին⁸⁴: Այս «կամավոր նվիրաբերությունների» համար Լազարևը, Գալուստովան և Մանուկովան պարգևատրվեցին բրոնզե մեդալներով:

Ռուսաստանի հայ բնակչության հայրենասիրական ոգու մասին է վկայում հետևյալ չափազանց հետաքրքրական փաստը: 1812 թ. սեպտեմբերի ծանր օրերին, երբ Նապոլեոնի բանակը զրավել էր Մոսկվան, Նախիջևանի հայկական մագիստրատը հրապարակեց մի հրաման, որով վճռականորեն առաջարկվում էր քաղաքի հայ բնակչությանը չնվազել, քեֆեր չսարքել, քանի որ այժմ «ուրախության օրեր չեն»: Նախիջևանի մագիստրատի էլից մատչանում պահպանվել է այդ հրամանի գրանցումը, որ կատարված է 1812 թ. սեպտեմբերի 17-ին: Այնտեղ մենք կարդում ենք. «Գրեցինք պուսյլիքացի և սաստիկ թէնպեհ յայսպես, իմանաք որ ահա մագիստրաթս մեր սաստիկ թէնպեհ կան է որ չըլա թե այս մտտիկներս քեմեչե, և կամ տայրե շարվի ամեն տեղ, թե հարսնիքի թե աչի լուսի, և կամ չի յա ֆեթքինչ տեղ ալ ըլանը քեմեչե տայրե շարվելու չե գերե ուրախութեան օրեր չե, երբ որ սաստուած տա ուրախութեան օրեր ըլանը ան վախտն կրկին անքամ տէլլալ կանչելով իմացում կու տանք, ապա աժմ իմանաք որ տասը ռուսլի ճերմեհ կառնվի շարել տվօղէն, և րեմեչեճի տայրաճիին ալ պատիժը կու տրվի:

Դատավոր Մելեօն Օվայկեմով
Դատավոր Պետրոս Եղեյազարով
Գրագիր Պելիվանով»⁸⁵:

Նրկու օր անց, 1812 թ. սեպտեմբերի 19-ին մաղխատրատը նոր որոշում է ընդունում, որտեղ ասված է, որ նկատի ունենալով «գառնաշունչ ժամանակները», արգելվում է ոչ միայն ուրախանալ, այլև շքեղ հագնվել ու ոսկե զարդեր կրել: Այդ որոշումը ուղղված էր զբլխավորապես «լիտի կանանց» դեմ, որոնք հաշվի չէին առնում ծանր ժամանակների հանգամանքները: Մաղխատրատի 1812 թ. սեպտեմբերի 19-ի դրույթյան մեջ արձանագրված է. «Գրեցինք հոգևոր դատարանն այսպէս՝ անցեալ աւուրն քաղաքիս հասարակութեանն թէնպէ՛հ արինք, պուպլիքացի անելով, որ այսմ դառնաշունչ ժամանակիս, այս մօտիկ օրերս քեմեչէ, տայրն ամենեկին մեկտեղ մի շի չալվի տէչի դերէ ուրախութեան օրեր չէ և տեսած է մաղխատրաթս մեր, որ լիտի կանայք ոմանք եկեղեցին կամ այլ տեղ և կամ պազնիք էրթանլո ժամանակներն, իւրեանք կամ ախչի զավակներն ոսկի զարդարանքերօվ կերթան, որ վասն այս շատ անքամ թէնպէ՛հ էղիլ է մաքիստրաթէս ու շատ մատգոյմէ այլ ի շտրաֆառովիլ է այս ևս կամէ հասարակութեան մերում, որ ածմ ժամանակաւոր վերչացի աղագս դառնաշունչ ժամանակիս և բնավին չհամարձակի ով որ և իցէ կինարմատ թէ ինքն և թէ ախչկան ոսկօվ կամ այլ ինչ ոսկէղէն զարդարանքօվ կամ իւրեան տունին մէչն զարդարովի և կամ մէկտեղ մի երթա, վասն այս յատուկ մարդ զային էղիլ է մաքիստրաթէս պիտի քաշին առնուն չաֆա անին ու միտ շունենա մէմալ թէ ետ կու տան տէչի զէրէ այնպես անսկամ կինն որ մտիկ շի անիլեն այսպէս ասոր արժանի է կինմտրղուն զարդարանքն իւրեանցն և կամ ախչկներունն լինելու է, մի միչայն անկաճն մէկ շիֆտ օղ և մէչկն կնտի և մատն մատանի և քան զայս աւելին ի շարէնէ, վասն այն այսպէս պիտի պատժվին, ուրեմն բարեհաճեսցի հոգևոր կառաւարութիւնտ գրել առ ամենայն եկեղեցիս թէ ի քաղաքս և թէ ի գիւղ որ այսն մեր, որ քահանայքն ծանուցում անիլօվ ի մեչ եկեղեցույն խրատեն զժողովուրդսն և ամենայն քահանա իւրեանց խոստովանադուստրսն ևս յատկապէս խրատին ապաշխարանք դնելօվ որ այս ոսկի զարդարանքն, ժամանակաւ որ վերջանա մեր հայոց աղգի մէչէն զէրէ ուրիշ աղգի մէչ շատ կուտան պարսավինք և մեծ պակասութիւն է որ այսպէս մաքիստրաթիս և իշխանայ հրամանին ընդդէմ կէնան ևս քէմէչէ և տայրէ շի չալվելուն համար կրկին ծանուցում արվի եկեղեցիսն և տէր ուղորմեա ասվի լինի թէ ամէն ողորմածն աստուած ողորմի ըստ մեծի ողորմութեան իւրամ, որ սակաւակեաց կեանս մեր խաղաղութեամբ:

անցուցանեմք ընդ հօվանավորութեան ամէն ողորմած կայսրութեանն ուստաց մնալօվ պարկեշտութեամբ:

Դատար Մելիոն Օվայկնօվ
Դրագիր Պէլիվանօվ⁸⁶:

Դոնի հայ բնակիչների հայրենասիրությունը շատմանափակվեց այսքանով: Նրանք ակտիվորեն մասնակցեցին նաև ուղմական կարիքների համար կատարվող կամավոր նվիրատվություններին: Պաշտոնական տվյալների համաձայն Նախիջևանի հայկական համայնքը 1812 թ. նվիրաբերել է 25000 ռուբլի⁸⁷: Մի խումբ հայեր 1818 թ. մայիսին Ալեքսանդր I-ին գրել են, որ 1807 թ. Նախիջևանի հայկական համայնքը ռազմաճակատ ուղարկված միլիցիայի համար նվիրաբերել է դրամ, հաց և զենք, իսկ «1812 թվականին մեր հայրենիքի թշնամու արշավանքը, ետ մղելու համար պետության ընդհանուր աշխարհագրորի կազմակերպման ժամանակ՝ կանխիկ դրամ»⁸⁸:

Նվիրատվությունների վերաբերյալ կոչին առանձնապես ջերմորեն արձագանքեց Աստրախանի հայ բնակչությունը: Այդ մասին կան հետաքրքիր տվյալներ: Աստրախանի քաղաքացիական նահանգապետ Անդրեասկին ոստիկանության մինիստրին ուղղված 1812 թ. հուլիսի 28-ի իր զեկուցագրում ի միջի այլոց գրում էր. «Ազնվականությունը, աստիճանավորները, վաճառականությունը, հայկական դասը (ընդգծումը մերն է—Մ. Ն.), թաթարները և մյուս այլակրոնները... գրամական նվիրատվություններ անելու ջերմ ցանկությամբ են համակվել»⁸⁹: Նույն նահանգապետը այդ օրերին զեկուցում էր Պետերբուրգ, զեներալ Վյազմետինովին, որ հայերը օրինակելի հայրենասիրություն են ցուցաբերում, որ «հայկական դասը ներկայումս սպասվածից ավելի աչքի ընկավ և 73 հազար ռուբլու հասնող նվիրատվությամբ միանգամայն ապացուցեց իր օրինակելի նվիրվածությունը»⁹⁰:

Արխիվային փաստաթղթերից երևում է, որ նյութական միջոցների հավաքումը շարունակվել է նաև հուլիսից հետո և որ 1812 թ. ընթացքում Աստրախանի հայերը նվիրաբերել են 100,000 ռուբլուց ավելի: Աստրախանի նահանգապետի 1836 թ. նոյեմբերի 28-ի գրույթյան մեջ, ուղղված ռազմական պատմաբան, զեներալ Միխայլովսկի-Դանիլևսկուն, ասված է, որ Հայրենական պատերազմի պետերի համար Աստրախանի հայերի նվիրաբերած գումարը կազմել է 100,340 ռուբլի⁹¹:

Աստրախանի մարզային արխիվում պահվում է մի գործ, որ ունի հետևյալ վերնագիրը. «1812 թ. ռազմական կարիքների օգտին հայ համայնքի կատարած նվիրաբերությունների մասին»: Այստեղ պահպանված նյութերը ցույց են տալիս, որ Աստրախանի քաղաքացիական նահանգապետի կողմը՝ նվիրաբերության մասին լայն արձագանք է գտել տեղի հայերի մեջ: Համապատասխան ցուցակներից երևում է, որ նվիրատվություն կատարած հայերի թիվը հասնում է մի քանի հարյուրի: Ահա դրանցից մի քանիսի ազգանունները. Օսիպ Ասկարխանով, Իվան Վարզանով, Գրիգորի Պասոն, Ավագ Վարդազարով, Պետրոս Նիկիտին, Եզեկիլ Ստեփանով, Քրիստափոր Հայկով, Առաքել Քալանթարով, Բարիսուզար Բարխուդարով, Նազար Թաթոսով, Հայրապետ Մարգարով, Դավիթ Բեկտաբեկով, Զարո Թումանով, Զաքար Բուդաղով, Սահակ Թորոսով, Մնացական Հարությունով, Բաղդասար Մուղիկանտով, Գրիգորի Արզումանով, Կալուստ Փափաև, Բարսեղ Թամրազով, Օսիպ Թումանով, Գրիգորի Երևանով, Ավետ Ղազարով, Իզնատ Մատուրով, Հովհաննես Ավետով և այլն⁹²: Դրամական նվիրատվություններ արած աստրախանցիների, այդ թվում և հայերի, մի մասի ազգանունները տպվել են այդ տարիներին Աստրախանում հրատարակվող «Восточные известия» թերթում⁹³: Տպագրված ցուցակներում կան ոչ միայն հայ աստիճանավորներ ու վաճառականներ, որոնք նվիրաբերել են 6000, 5000, 3000-ական ռուբլի, այլև «հասարակ» հայեր, գլխավորապես արհեստավորներ, որոնք նվիրաբերել են ըստ իրենց հնարավորությունների՝ 30, 25, 15, 10-ական ռուբլի⁹⁴:

Նախիջևանի ու Աստրախանի հայերի նման կամավոր նվիրատվություններին մասնակցել է նաև Ղզլարի, Մոզդուկի, Գրիգորիոպոլի, Ղրիմի, Մոսկվայի, Թիֆլիսի, Բաքվի և մի շարք այլ քաղաքների հայ բնակչությունը:

Հայ հոգևորականության մեջ նոր նվիրատվություն կազմակերպելու նպատակով ցարական կառավարության ներկայացուցիչները դիմեցին էջմիածնի կաթողիկոսին: Իշխան Ալեքսանդր Գուլիցինը 1812 թ. նոյեմբերի 6-ին Պետերբուրգից էջմիածին, Եփրեմ կաթողիկոսին գրում էր. «Այստեղ՝ մայրաքաղաքում կազմակերպված է կոմիտե, որ նվիրատվություն է հավաքում հօգուտ տարբեր նահանգների զժբախտ բնակիչների, որոնք լիովին սնանկացել են թշնամու արշավանքների հետևանքով, որը հրով ու սրով ամայացրել է այն վայրերը, որտեղով անցել է:



Նոր Նախիջևանի փողոցներից մեկը (XIX դարի վերջերս)

Համոզված լինելով, որ հոգևոր հովիվները գործուն մասնակցություն ցույց կտան սույն մերձավորների տխուր ճակատագրի թեթևացմանը, ես խոնարհաբար խնդրում եմ Ձերը սրբազանությունը առաջարկել Ձեզ վստահված հոգևորականությունը, նրա հոգևոր հոտին, հնարավոր նվիրատվություններ կատարել զժախտների օգտին, գրի առնելով բարեգործների անունները և նվիրատվության քանակը:

Սույն նվերը հոգևորականությունից ստանալուն պես, բարեհաճեցեք, Ձերը սրբազանություն, ուղարկել ինձ մատյանների հետ միասին, որոնք պարունակում են բարեգործների անուններն ու նվիրատվության քանակը, վերոհիշյալ կոմիտեին ներկայացնելու համար»⁹⁵:

Եփրեմ կաթողիկոսը, որը ռուսական օրինատացիա ուներ, կատարեց Գոլիցինի խնդրանքը: Հատուկ կոնդակներով նա հայ եկեղեցու բոլոր թեմերի առաջնորդներին հանձնարարեց հայերի շրջանում կազմակերպել կամավոր նվիրատվություններ Բոնապարտի բանակի արշավախմբի հետևանքով տուժած բնակչության օգտին: Թեմերի առաջնորդները, իրենց հերթին, դիմեցին հայ եկեղեցու բոլոր սպասավորներին: Այսպես, օրինակ, Ռուսաստանի հայերի թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսը 1812 թ. դեկտեմբերի 26-ին հատուկ շրջաբերականով դիմեց Արիմի հայ հոգևորականությունը, կոչ անելով ակտիվորեն մասնակցել վերոհիշյալ նվիրատվություններին: Ձեզ հայտնի է, գրում էր նա, թե «ինչպես և ինչքան սքանչելի քաղաքներ, հրաշալի կառուցված եկեղեցիներ, գեղեցիկ տներ, առևտրական խանութներ և այլ տեսակի շինություններ, կարողություն ու հարստություն այրվեց ու ոչնչացվեց, ինչպես շատ խիզախ զինվորներ ընկան թշնամու ձեռքից... Հորդորում եմ բոլոր հոգևորականներին, աշխատել այդ գործի (իմա՝ նվիրատվություններին—Մ. Ն.) հաջողության օգտին... լսեք իմ փոխանորդներին և առատ նվերներ տվեք»⁹⁶:

Հովհաննես արքեպիսկոպոսի ցուցումի համաձայն եռանդով գործում էր, մասնավորապես, Մանվել վարդապետը՝ Արիմի և Գրիգորիոսյուլի հայ եկեղեցու առաջնորդը: 1813 թ. մարտի 20-ին Գրիգորիոսյուլի հոգևորականությունը նա մի հրաման ուղարկեց, որով առաջարկում էր նվիրատվություններ հավաքել, քանի որ, գրում էր նա, «ամեն ժողովուրդ պետք է ցույց տա իր նվիրվածությունը պետությանն ու հայրենիքին»⁹⁷: Վերոհիշյալ հրամաններն ու հանձնարարությունները հաջողությամբ իրագործվեցին: Նվիրատվու-

թյունների կամպանիան անցկացվեց ինչպես Հայաստանում, այնպես էլ բազմաթիվ հայ գաղթավայրերում: Նրան մասնակցեցին հայ ժողովրդի լայն խավերը: Հավաքված դրամն ուղարկվեց Պետերբուրգ:

Պետք է նշել նաև, որ 1812 թ. Ռուսաստանի և Անդրկովկասի հայկական եկեղեցիներում Ռուսաստանի հաղթության համար հանդիսավոր մաղթանք էր կատարվում: Բնորոշ է, օրինակ, որ դեռևս 1812 թ. հուլիսին Մանվել վարդապետը առաջարկեց Գրիգորիոսյուլի հոգևոր վարչությունը ամեն օր, օրը 2 անգամ աղոթք անել քաղաքի երկու եկեղեցիներում: «Ներկա ժամանակներում,— գրում էր նա,— մեր բոլորիս պարտքն է ջերմ սրտով աղոթել նորին կայսերական մեծության հաջողությունների և հզորության համար: Ռուսի հրամայում եմ Ձեր երկու եկեղեցիներում առավոտյան և երեկոյան ջանասիրաբար աղոթել ամենազոր աստծուն, որպեսզի մեր քրիստոսասեր կայսրը հաղթի իր թշնամուն»⁹⁸:

Նախիջևանի հայկական մագիստրատը նույնպես առաջարկեց քաղաքի հոգևոր վարչությունը՝ հայկական եկեղեցիներում կատարել հանդիսավոր աղոթքներ ռուսական բանակի հաղթության համար: Բնորոշ է, որ Եփրեմ կաթողիկոսն ինքը մի քանի անգամ շնորհավորական նամակներ է ուղարկել Ալեքսանդր I-ին՝ ռուսական զորքերի հաջողությունների ու հաղթանակների առթիվ:

Իրենց ցուցաբերած ջանքերի համար հայ հոգևորականության շատ ներկայացուցիչներ շքանշաններ ու մեդալներ ստացան: Այսպես, օրինակ, Եփրեմ կաթողիկոսը պարգևատրվեց Ալեքսանդր Նևսկու 1-ին աստիճանի շքանշանով, Ռուսաստանի հայկական թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսը՝ Աննայի 1-ին աստիճանի շքանշանով: Պարգևատրվեցին նաև Բեսարաբիայի հայկական թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսը, Ներսես Աշտարակեցին և մի շարք ուրիշ հոգևորականներ: Հետաքրքիր է, որ պարգևատրվածների մեջ կային ոչ քիչ թվով գյուղական քահանաներ⁹⁹: Այսպես, օրինակ, «1812 թվականի համար» խաշով պարգևատրվեցին քահանաներ Հալոթ Տեր-Աբրահամյանը, Ավետիս Հարությունյանը, Սարգիս Մկրտումյանը, Մովսես Տեր-Հարությունյանը (նշվում է, որ նա ծագում է ճորտ գյուղացիներից), Գրիգոր Տեր-Աբրահամյանցը և շատ ուրիշներ¹⁰⁰:

Հայ հոգևոր անձանց պարգևատրումը «1812 թվականի համար» մակազրույթները կրող խաշով տեղի ունեցավ 1814 և հետագա թվականներին: Այդ պարգևատրման առիթով Ալեքսանդր I-ը

1814 թ. օգոստոսի 30-ին Նփրեմ կաթողիկոսին, ի միջի ալլոց, գրում էր. «Ձեր սրբազույն հոգևորականությունը, որը աստծո սեղանի առաջ իր շերմ աղոթքներով աստծո օրհնությունն էր հրավիրում ուսական զենքի և զինվորության վրա և բարեպաշտության օրինակներով հորդորում ժողովրդին միասնության և տոկոսնության ի նշան ականածանքի՝ հավատի նկատմամբ և ի նշան սիրո՝ հայրենիքի նկատմամբ, հովվապետից սկսած մինչև քահանաները ներառյալ թող կրեն իրենց կրծքերի վրա հատուկ սահմանված «1812 թվականի համար» մակագրությանը խաչը»¹⁰¹:

Ռուսական բանակի շարքերում 1812 թ. ծառայող հայ մարտիկների մի մասը անմիջական մասնակցություն ունեցավ Հայրենական պատերազմի ճակատամարտերին: Նապոլեոն Բոնապարտի բանակի դեմ այդ թվականին կռվող հայ զինվորականներից նախ և առաջ պետք է հիշատակել Վ. Գ. Մաղաթովին, Գ. Ա. Գելլյանովին և Պ. Մ. Մելիքովին:

Վալերիան (Ռոստոմ) Գրիգորի Մաղաթովը (1782—1829) Հայրենական պատերազմի սկզբում ուներ փոխգնդապետի աստիճան և արդեն ճանաչված էր, որպես «անվեհեր քաջ և հմուտ հրամանատար»¹⁰²: Ծառայում էր Արևմտյան III բանակում (զենեքալ կամբերտի զորամասի առաջապահ ջոկատի հրամանատարն էր): Բարձր հրամանատարության կարգադրությամբ Մաղաթովի ջոկատը 1812 թ. հուլիսին անցավ թշնամու թիկունքը և բանակի մյուս զորամասերի հետ միասին Կոբրին քաղաքի մոտ շրջապատելով հակառակորդի զորքերը, ծանր հարվածներ հասցրեց նրանց ու շատ գերիներ վերցրեց: Այս առաջին խոշոր հաղթանակն էր թշնամու նկատմամբ¹⁰³: Նշված մարտերում ակտիվ մասնակցություն ունենալու համար Մաղաթովը պարգևատրվեց Աննայի 2-րդ աստիճանի շքանշանով¹⁰⁴:

Կոբրինի մոտ տարած հաղթանակից շատ շանցած Մաղաթովը նորից է աչքի ընկնում: 1812 թ. հուլիսի 31-ին Գորոդեչնոյի շրջանում տեղի են ունենում կռիվներ, որտեղ 18000 ռուս զինվորներ մարտնչում էին թշնամու 40 000-անոց զորաբանակի դեմ¹⁰⁵: «Թըշնամին,— գրում են Մաղաթովի կենսագիրները,— հարձակվեց մեր ձախ թևի վրա, որը գտնվում էր գեներալ-ադյուտանտ կոմս կամբերտի հրամանատարության ներքո. իշխան Մաղաթովը, Ալեքսանդրյան հուսարական գնդի շորս հեծելավաշտով կայունորեն դի-

մանում էր թշնամու գերազանց ուժերին: Երբ ավստրիական թեթև հեծելազորային երկու գունդ ջանում էին շրջանցել մեր ձախ թևը, իշխան Մաղաթովը գորհեց թևից ու թիկունքից և հետ շարտեց նրանց: Թշնամու մի մասը կոտորվեց. մյուս մասը գերի վերցվեց, որի համար իշխան Մաղաթովը ստացավ զնդապետի աստիճան»¹⁰⁶:

Մաղաթովը ակտիվ մասնակցություն է ունեցել Հայրենական պատերազմի նաև շատ այլ ճակատամարտերում: Նա պատվով կատարում էր հրամանատարության բոլոր հանձնարարությունները:

Այսպես, օրինակ, 1812 թ. սեպտեմբերին-հոկտեմբերին Մաղաթովը Բրեստ-Լիտովսկի շրջանում մի շարք հարվածներ հասցրեց հակառակորդին և ազատեց Տիրասպոլը¹⁰⁷: Դրանից հետո, Մաղաթովի ջոկատը հատուկ կարգադրությամբ ուղարկվեց հակառակորդի թիկունք՝ Լեհաստան, որտեղ նա ոչնչացրեց ռազմական պահեստներ և կատարեց թշնամու ուժերը ջլատող մի շարք այլ գործողություններ: Հաջողությամբ ավարտելով այս պատասխանատու առաջադրանքը, Մաղաթովը վերադարձավ գեներալ կամբերտի զորամասը: Նոյեմբերին նա մասնակցեց թշնամու զորքերի ջախջախմանն ու հետապնդմանը, որի համար և պարգևատրվեց ավաստներով զարդարված թրով՝ «Արիության համար» մակագրությամբ:

Երբ հետապնդելով Նապոլեոնի բանակի մնացորդներին, ռուսական զորքերն անցան սահմանը, զնդապետ Մաղաթովը նորից գտնվում էր առաջապահ զորամասերում: 1813 թ. նա հաճախ է մարտնչել թշնամու դեմ: 1813 թ. փետրվարի 1-ին, Կալիշ քաղաքի մոտ ջախջախվեց հակառակորդի զորքերի մի մեծ ջոկատ: Այստեղ Մաղաթովը նորից ցույց տվեց արիության փայլուն օրինակներ:

Մաղաթովը մեծ հաջողությամբ վարում էր նաև պարտիզանական պատերազմ: Իր ջոկատով անցնելով հակառակորդի թիկունքը, նա 1813 թ. ծանր հարվածներ հասցրեց թշնամուն, գլխովին ջարդելով նրա թիկունքային զորաբաժանուները և ոչնչացնելով ռազմամթերքի պահեստները: Պարտիզանական այս հաջող գոր-



Վ. Գ. Մաղաթով

ծողովյունների համար Մաղաթովը պարզևատրվեց նաև պրուսական թագավոր Ֆրիդրիխի կողմից:

1813 թ. հոկտեմբերի սկզբին, ինչպես հայտնի է, մեծ և վճռական ճակատամարտ տեղի ունեցավ Լայպցիգի մոտ: Մաղաթովն այստեղ ևս ցուցաբերեց արիություն և ռազմական բարձր արվեստ: Մարտերի ժամանակ նա վիրավորվեց, բայց չըբեց մարտադաշտը և մինչև ճակատամարտի վերջը գլխավորեց իր ջոկատը: Այս բոլորի համար զինպետ Մաղաթովը ստացավ զեներալ-մայորի աստիճան: Մաղաթովը իր ժամանակի ռուսական բանակի լավագույն զեներալներից մեկն էր: Միանգամայն արդարացիորեն նրան համարել են սովորական դպրոցի զեներալ¹⁰⁸:

1812 թ. Հայրենական պատերազմում ակտիվ մասնակցություն ունեցած նշանավոր հայ զինվորականներից է Դավիթ Արտեմի Դելյանովը: Դավիթ Դելյանովը ծնվել է Մոսկվայում, ավարտել է կադետական կորպուսը¹⁰⁹: 1773 թ. սկսվում է նրա զինվորական ծառայությունը: Մասնակցել է ռուսական բանակի մի շարք արշավներին և, հատկապես, ռուս-թուրքական պատերազմներին: 1806—1807 թթ. նա կռվել է Նապոլեոնի բանակի դեմ: 1807 թ. Դելյանովը ստանում է զինպետի աստիճան: 1812 թ. Հայրենական պատերազմին նրա ունեցած մասնակցության մասին պաշտոնական թղթերում ասված է. «1813 թվականին, սկսած Գրոդնոյից և մինչև Մոծայակ, մասնակցել է արիերգարդային բոլոր գործողություններին... Հուլիսի 15-ին և 16-ին Վիտեբսկի մոտ, 17-ին՝ Պորեչյեից ոչ հեռու, օգոստոսի 6-ին՝ Սմոլենսկի մոտ, 7-ին՝ Լավրովի մոտերը... օգոստոսի 10-ին՝ Միխայլովայի մոտ, 17-ին՝ Վյազմայի մոտերը, 23-ին՝ Կոլոցկու վանքի մոտ, 24-ին՝ Բորոգինոյի մոտերում, 26-ին՝ հենց Բորոգինյան ճակատամարտում, 28-ին՝ Մոծայակի մոտ, որտեղ և վիրավորվել է»¹¹⁰:

Հետաքրքրական է հիշատակել, որ Դելյանովի կողմից Բորոգինյան ճակատամարտում ցուցաբերած արիությունը նշել է գեթագույն հրամանատարությունը և հենց ինքը՝ հռչակավոր զորավար Միխայիլ Իլարիոնովիչ Կուտուզովը: Ռազմական միջխտությունների վայրի ֆոնդերում պահպանված են Բորոգինյան ճակատամարտի ժամանակ աչքի ընկած սպաների ցուցակները՝ Կուտուզովի ստորագրությամբ: Այդ ցուցակներից մեկի մեջ, որի վերնագիրն է «Օգոստոսի 24-ի և 26-ի ճակատամարտում ֆրանսիացիների դեմ անվահերություններ ու արիությամբ աչքի ընկած շտաբ և օբեր սպաների ցուցակ», նշվում է, որ Սումսկի գնդի գնդապետ

Դելյանովը «օգոստոսի 26-ին, վարելով գնդի հրամանատարությունը, աչքի է ընկել իր արիությամբ, օրինակ է տվել ստորագրյալներին՝ թշնամուն պարտության մատնելու համար»: Բորոգինյան ճակատամարտի մասնակից Դելյանովին Կուտուզովը պարգևատրեց Աննայի 2-րդ աստիճանի շքանշանով¹¹¹: Դելյանովը պարգևատրվել է նաև շատ այլ շքանշաններով ու մեդալներով: 1813 թ. նա ստացավ զեներալ-մայորի աստիճան, 1813—1814 թթ. մասնակցել է Պրուսիայում և Ֆրանսիայում տեղի ունեցած բազմաթիվ կռիվներին:



Պ. Մ. Մեխրով

1812 թ. մարտերում բացի զինպետ Գ. Ա. Դելյանովից աչքի են ընկել նաև նրա երկու եղբայրները, երկուսն էլ մայորի աստիճանով, որոնցից մեկը զոհվեց Վիտեբսկի ճակատամարտում¹¹²:

Մի շարք մարտերում և հատկապես Բորոգինյան նշանավոր ճակատամարտում մասնակցել է աստրախանցի հայ Պավել Մոխսի Մեխրովը: Նա ծնվել է 1780 թ., զինվորական ծառայությունը սկսել է 1796 թ. Լեյբ-գվարդիայի հեծյալ գնդում՝ ենթասպայի աստիճանով: 1812 թ. Մեխրովը ծառայում էր ռուսահատրի պաշտոնով Լեյբ-գվարդիայի կիրասիայի գնդում: Նրա ծառայության ցուցակում նշված է, որ 1812 թ. հուլիսի 28-ից մինչև օգոստոսի 25-ը եղել է Վիտեբսկի, Սմոլենսկի և Վյազմայի մոտ մղվող մարտերում: «25-ին և 26-ին եղել է Բորոգինո գյուղի մոտ տեղի ունեցած ահեղ ճակատամարտում, որտեղ թշնամու մարտիցի վրա գրոհելու ժամանակ հրետազունը կտրել է նրա աջ թևը, որի համար ամենադժուրմածաբար պարգևատրվել է Վլադիմիրի 4-րդ աստիճանի ժապավենավոր շքանշանով»: Բուժվելուց հետո Մեխրովը նորից ծառայում է ռուսական բանակում: 1814—1815 թթ. պատերազմական գործողություններին մասնակցելու համար նա պարգևատրվում է նոր շքանշաններով ու մեդալներով: 1829 թ. Մեխրովը ստանում է զեներալ-մայորի աստիճան¹¹³:

Պ. Մ. Մեխրովի անունը նշված է Կուտուզովի ցուցակներում, այն մարդկանց թվում, որոնք աչքի են ընկել Բորոգինյան ճակատ-

տամարտում: Գուցակներից մեկում Լեյբ-զվարդիայի կիրառության գնդի ռոտմիստր Մելիքովի մասին ասված է, որ «գնդի բոլոր գեր-ծողութայիններում առանձնապես աչքի է ընկել, ըստ որում հրետա-գնդով կտրվել է նրա աչքը»: Բորոդինյան ճակատամարտի կա-պակցությամբ Կուտուզովը Մելիքովին պարգևատրել է Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանով¹¹⁴:

Հայրենական պատերազմի ակտիվ մասնակիցներից են նաև Աբամելիքները, Լազարները, Բեյբութովը, Ախարովովը, Շահնա-վադյանը, Վարժապետյանը, Մելիք-Օսիպովը, Շամշիևը, Գեղեո-նովը, Մելիքովը, Լալանը և ուրիշներ:

Ֆրանսիական ազդեցությունների դեմ մղված կռիվներում Աբամե-լիքներից աչքի ընկան Դավիթ Սեմյոնի Աբամելիքը և նրա երկու որ-դիները՝ բոլորն էլ Բորոդինյան ճակատամարտի մասնակիցներ: Դ. Ս. Աբամելիքը 1798 թ. ծառայության է ընդունվում Լեյբ-զվարդիայի հուսարական գունդը որպես կորնետ: 1807 թ. նրան տրվում է ռոտմիստրի, իսկ 1812 թ.՝ գնդապետի աստիճան: Հայ-րենական պատերազմի ընթացքում նա հիշյալ գնդի հեծելազորի հրամանատարն էր: Արիության և անվնասելիության համար նա պարգևատրվել է Աննայի 2-րդ աստիճանի շքանշանով¹¹⁵:

Դ. Ս. Աբամելիքի ավագ որդին Հայրենական պատերազմին մասնակցել է ունենալով շտաբ-ռոտմիստրի, իսկ կրտսեր որդին՝ կորնետի աստիճան: Առաջինը պարգևատրվել է ոսկյա թրով՝ «Ա-րիության համար» մակարդությամբ, երկրորդը՝ Աննայի 3-րդ աս-տիճանի շքանշանով¹¹⁶:

Մ. Ի. Կուտուզովի կողմից ստորագրած ցուցակներից մեկում նշված են Դավիթ Աբամելիքի երկու որդիների սխրագործություն-ները 1812 թ. սեպտեմբերի 22-ի ճակատամարտում՝ Տարուտինոյի մոտ: Այստեղ ասված է, որ Լեյբ-զվարդիայի հուսարական գնդի պորուչիկ Աբամելիքը «աչքի է ընկել արիությամբ և եռանդուն ծա-ռայությամբ. գեներալ Ուվարովի հրամանները ամենավտանգավոր տեղերն է հասցրել ամենայն ճշտապահությամբ»: Այնուհետև նույն գնդի կորնետ Աբամելիքի մասին գրված է. «Գտնվում էր առաջին շարքերում. քաջալերելով ցածրաստիճան գինավորականներին, աչ-քի ընկավ արիությամբ»¹¹⁷:

Կորնետ Աբամելիքի մասին արխիվային նյութերում կան ավելի մանրամասն տվյալներ: Մի պաշտոնական տեղեկանքում հաղորդ-վում է, որ Ալեքսանդր Աբամելիքը մասնակցել է բազմաթիվ մար-տերի. 1812 թ. հունիսի 22-ին՝ «Վիլկովի մոտ, հուլիսի 13-ին՝

Օստրովնայի մոտ, 14-ին՝ Կուկովիչի, 27-ին՝ Էնկովի մոտերը, օգոստոսի 24-ին և 26-ին՝ Բորոդինյան ճակատամարտում, սեպ-տեմբերի 20-ին՝ Վորոնովոյի մոտ, 22-ին և հոկտեմբերի 6-ին՝ Տարուտինոյի, 11-ին և 12-ին՝ Մալոյարուսլավցի մոտ, 22-ին՝ Վյազմայի, 26-ին՝ Գորոզրուժի, նոյեմբերի 3, 4, 5 և 6-ին՝ Կրաս-նիի մոտերը: 1813 թ. եղել է Սաքսոնական թագավորությունում, ապրիլի 20-ին՝ Լյուցենի, մայիսի 8-ին և 9-ին՝ Բաուցենի, օգոս-տոսի 15-ին՝ Տունի, 16-ին, 17-ին և 18-ին՝ Կուլմի, հոկտեմբերի 4 և 6-ին՝ Լայպցիգի մոտ: 1814 թ. Ֆրանսիայում...»¹¹⁸:

1812 թ. Հայրենական պատերազմին մասնակցեցին նաև Լա-զարները: Այս հայ ազնվականներից հատկապես աչքի ընկավ Արտեմ Լազարը (1791—1813): 1812 թ. նա ուներ շտաբ-ռոտ-միստրի աստիճան. ակտիվ մասնակցություն է ունեցել բազմաթիվ կռիվներին¹¹⁹: Լազարների տոհմի պատմության մեջ նրա մասին ասված է. «Լեյբ-զվարդիայի հուսարական գնդի շտաբ-ռոտմիստր Արտեմ Նիկիթ Լազարը քաջակորով, արի ռազմիկ էր, աչքի ընկ-նելու համար պարգևատրված է՝ Աննայի 2-րդ աստիճանի, Վլադի-միրի 4-րդ աստիճանի ժապավենավոր շքանշաններով, արիության համար թրով, Կուլմի ճակատամարտի համար նշանով և արծաթյա մեդալով՝ 1812 թվականի համար: Այս քաջարի Լազարը եղել է մեծ ու փոքր բազմաթիվ մարտերում, թվով մինչև 40, միշտ ան-վնաս է մնացել և նույնիսկ չի վիրավորվել, բայց, ցժբախտաբար, 1813 թ. հոկտեմբերի 4-ին Լայպցիգի արյունահեղ ճակատամար-տում սպանվեց հրետազնդով, որը նրա մարմինը երկու կես է արել»¹²⁰:

Մոտավորապես նույնն է ասում Ա. Զինովևը իր «Պատմական ակնարկ Լազարյան ճեմարանի» գրքում: Զինովևը գրում է. «Նա մասնակցել է 42 մարտերի, լինելով ընդամենը 22 տարեկան, նա իր արիությամբ և առհասարակ անձնական արժանապատվությամբ, հասավ զվարդիայի շտաբ-ռոտմիստրի աստիճանի, նրան շնորհել են Աննայի 2-րդ աստիճանի, Վլադիմիրի 4-րդ աստիճանի ժապա-վենավոր շքանշաններ, արիության համար թուր, Կուլմի խաչ և այլ արժանիքների համար՝ պրուսական շքանշան: 1813 թ. հոկտեմբերի 4-ին հրետազնդով խփված, նա ընկավ Լայպցիգի արյունահեղ ճակատամարտում»¹²¹:

Արտեմ Լազարի ցուցաբերած արիությունն ու անվնասելի-թյունը 1812 թ. սեպտեմբերի 22-ի ճակատամարտում նշված է Մ. Ի. Կուտուզովի կողմից. «Անցյալ 1812 թվականի սեպտեմբերի

22-ի ճակատամարտում ֆրանսիացիների դեմ արիությանը ու անվեհերությանը աչքի ընկած գեներալների և շտաբ ու օբեր-սպանների ցուցակ» վերնագիրը կրող փաստաթղթում մեծահույզ կերպով արևելքի մասին գրել է. «Առաջին գրոհի ժամանակ, երբ սպանվեց նրա տակի ձին, վերցրեց մի ուրիշը, ամբողջ ժամանակ գտնվում էր առջևում»¹²²; Ա. կազարեւ Բորոգինյան ճակատամարտի մասնակիցներից է:

1813—1814 թթ. պատերազմական գործողություններին մասնակցել է կազար Ակիմի կազարեւ, որը հետագայում՝ 1828 թ. խոշոր դեր խաղաց պարսկահայերի գաղթը Հայաստան կազմակերպելու գործում¹²³:

Վասիլ Հովսեփի Բեյբուսովը մասնակցել է Մերձբալթիկայում տեղի ունեցած մարտերին: Գեներալ մարկիզ Պատուլչիի հետ միասին, որպես նրա աղյուտանտը, Բեյբուսովը 1812 թ. գնաց Կուրլանդիա, որտեղ և մասնակցեց մարշալ Մակդոնալդի հրամանատարության ներքո գտնվող թշնամու զորքերի հետապնդմանը և Մեմել քաղաքի գրավմանը¹²⁴:

Դմիտրի Ախշարումովը 1812 թ. ծառայում էր Լեյբ-գվարդիայի եգերական զնդում փոխգնդապետի աստիճանով, իսկ այնուհետև դարձավ գեներալ Կոնիցիցինի աղյուտանտը¹²⁵: Մասնակցել է բազմաթիվ մարտերի, այդ թվում և Բորոգինյան ճակատամարտին: Ախշարումովի քաջարիությունն իր ժամանակին նշել են հանրահռչակ զորահրամանատարներ Բագրատիոնը և Կուսուզովը: 1812 թ. օգոստոսի 5-ի ճակատամարտում Ախշարումովի և մյուս սպանների ցուցաբերած անվեհերության մասին Բագրատիոնը գրել է. «Սույն սպանների անձնական աներկյուղությունն ու ճարպկությունը գեներալ Կոնովնիցինի համար լավագույն միջոց հանդիսացան հակառակորդի ոտնձգությունները ի դերև հանելու համար»¹²⁶:

Շտաբ-կապիտան Ախշարումովի և նրա հետ գործող պորուչիկ Ալեքսեյի սխրագործությունները Բորոգինյան ճակատամարտում Կուսուզովը հետևյալ կերպ է նշել. «Գտնվելով գեներալ-լեյտենանտին [Կոնովնիցինին] առընթեր, նրա բոլոր հանձնարարությունները կատարում էին եռանդուն արժանավորությամբ՝ գտնվելով դաժանագույն կրակի տակ, ամենավտանգավոր տեղերում. հակառակորդի վրա էին ուղղում խախտված զորաբաժինները, որով նպաստում էին թշնամու պարտությանը»¹²⁷:

Բորոգինյան ճակատամարտին մասնակցելու համար Ախշարումովը պարգևատրվեց Աննայի 2-րդ աստիճանի շքանշանով: Նա

Հայրենական պատերազմի այլ ճակատամարտերին (Սմոլենսկի, Մալոյարոսլավեցի մոտ և այլն) մասնակցելու համար նույնպես ասացել է շքանշաններ ու մեդալներ:

1812 թ. դեպքերի ժամանակակից, վրացական արքայազն Բագրատի վկայությամբ Բորոգինոյի ճակատամարտում սպանվել է գվարդիայի կապիտան Պյոտր Ցակովի Շահնավազյանը: Այն նույն արքայազնի տվյալներով 1812 թ. Հայրենական պատերազմին մասնակցել է Վարժապետյանը (Երևանի հայերից)¹²⁸:

1812 թ. մարտերում աչքի է ընկել նաև Գեորգիյ Իսայի Մելիք-Օսիպովը: Նրա ծառայության թերթիկում կարգում ենք, որ նա «Մեծ Հայաստանի իշխաններից է», զինվորական ծառայության է մտել 1803 թ., մինչև 1812 թ. փետրվար ամիսը եղել է Լեյբ-գվարդիայի կազակային զնդում, ապա Չուգուեյան ուլանական զնդում. 1811 թ. ուներ շտաբ-ոտոմիստրի աստիճան, 1812 թ. հոկտեմբերից՝ մայորի աստիճան: Ակտիվորեն մասնակցել է ֆրանսիացիների դեմ մղված բազմաթիվ ճակատամարտերի: Նրա մասին պահպանված մի վկայության մեջ ասված է, օրինակ, որ 1812 թ. սեպտեմբերի 15-ի ճակատամարտում Մելիք-Օսիպովը «իրեն վստահված հեծելավաշտով հակառակորդին գրոհելու ժամանակ իր օրինակով քաջակերում էր ստորադրյալներին, մղում արիության»¹²⁹:

Գվարդիական զորաբանակի հրամանատար գեներալ-աղյուտանտ Միլորադովիչը 1815 թ. հունվարի 29-ին գրում էր ռազմական մինիստրության կառավարիչ գեներալ Գորչակովին, որ «Չուգուեյան ուլանական զնդի մայոր իշխան Մելիք-Օսիպովը գերազանց է ծառայել 1812 թվականի պատերազմի ժամանակ»¹³⁰: Մայոր Մելիք-Օսիպովը ակտիվորեն մասնակցել է նաև 1813—1815 թթ. ռուսական բանակի արշավներին: Նա պարգևատրվել է Վլադիմիրի 4-րդ աստիճանի ժապավենավոր շքանշանով, Աննայի 3-րդ աստիճանի և այլ շքանշաններով:

Բորոգինյան ճակատամարտի մասնակիցների ցուցակներում հիշատակվում են նաև Իլմախլովյան զնդի պողպորուչիկ Շամշևը և Լեյբ-կիրասիրյան զնդի շտաբ-ոտոմիստր Գեդեոնովը: Վերջինիս և մի քանի այլ սպաների մասին այնտեղ ասված է, որ «Հակառակորդի մարտկոցների և հեծելազորի ու հետևակի շարասյուններ վրա գրոհելու ժամանակ օրինակ են ծառայել ստորադրյալների համար, ընդ որում, Գեդեոնովը հրետազնդով վիրավորվել է ոտքից»¹³¹:

Պորուչիկ Պյոտր Մատվեևիչ կալակը ծառայում էր 44-րդ եգեթական գնդում: Մասնակցել է Հայրենական պատերազմի մի շարք մարտերի¹³²: Սպանվել է 1813 թ.

Նապոլեոն Բոնապարտի դեմ ուս ժողովրդի մղած հերոսական ազատագրական պայքարին մասնակցած հայ մարտիկներից արխիվային փաստաթղթերում հիշատակվում են նաև Աբրամովը, Ազամպարովը, Կասպարովը, Թումանովը, Հայրապետովը, Գալուստովը և ուրիշներ: 1812 թ. Հայրենական պատերազմին մասնակցած հայ զինվորականների թիվը, անշուշտ, ավելի շատ է եղել, քան մեզ հայտնի է այսօր: Կարելի է ենթադրել, որ 1812 թ. հերոսական ճակատամարտերին մասնակցած այլ հայ մարտիկների անունները դեռևս չեն հայտնաբերված կամ առհասարակ չեն պահպանվել արխիվային նյութերում:

Վերջապես մի կարևոր փաստ է: Հայտնի է, որ Նապոլեոն Բոնապարտի արշավանքի հետևանքով 1812 թ. Ռուսաստանի համար ստեղծվեց բավական ծանր վիճակ: Օգտվելով զրանից Անգրկովկասի ռեակցիոն ֆեոդալներն ու խաները՝ հովանավորվելով Պարսկաստանի և Թուրքիայի կողմից զիմեցին զինված ապստամբությունների, որպեսզի տապալեն ռուսական տիրապետությունը երկրամասում: Այդ դժվարին շրջանում տեղի հայ բնակչությունը, ինչպես արձանագրված է իր ժամանակի մի շարք փաստաթղթերում, ամեն կերպ օգնեց ռուսական զորքերին և ցուցաբերեց օրինակելի հավատարմություն և նվիրվածություն Ռուսաստանի նկատմամբ: Նկատի ունենալով հենց այս հանգամանքը կայսր Ալեքսանդր I-ը 1813 թ. սեպտեմբերի 15-ին ստորագրեց հատուկ հրովարտակ՝ ուղղված «Վրաստանում բնակվող հայ ժողովրդի բոլոր խավերին», ուր նրանց հրապարակայնորեն հայտնում էր իր խորին շքնորհակալությունը¹³³:

Հայերի մասնակցությունը ուս ժողովրդի Հայրենական պատերազմին, իհարկե, պատահական երևույթ չէր: Նրանց նվիրվածությունը Ռուսաստանի նկատմամբ 1812 թ. ծանր օրերին երկու ժողովուրդների բարեկամական կապերի արտահայտություններից մեկն էր, բարեկամություն, որ սկիզբ է առել դարերի խորքում¹³⁴:

ОТЕЧЕСТВЕННАЯ ВОЙНА 1812 ГОДА И АРМЯНСКИЙ НАРОД

Резюме

Отечественная война 1812 г., 150-летие которой исполняется в текущем 1962 году, является одной из славных страниц в истории русского народа и одним из крупнейших событий всемирной истории. Эта всенародная освободительная война, в ходе которой была разгромлена «великая армия» Наполеона Бонапарта, сыграла огромную роль в исторических судьбах не только России, но и всей Европы. Героическая борьба русского народа в 1812 г. явилась решающим звеном в той большой и победоносной освободительной войне, которую вели народы Европы против французского императора, стремившегося к мировому господству.

В Отечественной войне русского народа принимали активное участие почти все народы, входившие в то время в состав Российской империи. Несмотря на национально-колониальную политику царизма, патриотический дух, стремление дать решающий отпор грабителям-захватчикам охватили также украинский, белорусский, башкирский, латышский и другие народы и народности России.

Отечественная война 1812 г. нашла горячий отклик и среди армянского народа. Для участия в обороне страны был организован отряд из армян-волонтеров. В рядах русских войск против неприятеля самоотверженно боролось немало воинов-армян. Армянское население многих городов и местностей России и Закавказья с большой готовностью участвовало в кампании по сбору средств для нужд армии, ополчения и пострадавшего населения. Широкие народные массы Армении, находившиеся еще в этот период под игом персидских ханов и турецких пашей, совершенно явно и недвусмысленно выражали свои симпатии к русскому народу, к его освободительной борьбе.

НОВЫЕ ДАННЫЕ О ДЕКАБРИСТАХ, СОСЛАННЫХ НА КАВКАЗ

О декабристах, как известно, существует огромная литература, опубликовано также большое количество архивных материалов¹³⁵. Однако в архивных фондах нашей страны хранится еще немало документов, пока что не изданных и не изученных, поэтому новые изыскания в этом направлении часто дают интересные результаты. Работая ряд лет по теме «Декабристы на Кавказе», автор этих строк обнаружил новые материалы о декабристах, в частности, о рядовых участниках восстания декабристов.

В архивном фонде военного министерства сохранились документы (в основном оригиналы) о рядовом составе Черниговского пехотного полка¹³⁶. В этих пока не опубликованных официальных материалах имеются интересные данные, дополняющие наши сведения о солдатах-черниговцах, принимавших участие в восстании декабристов на Украине.

Имеется прежде всего большое число документов о переводе «нижних чинов» Черниговского полка из местечка Белая Церковь (Васильковский уезд Киевской губернии) в Ставрополь на Кавказе, в Отдельный кавказский корпус. В десятках рапортов майора Елецкого пехотного полка Броссе, под командованием которого совершился этот перевод, приведены разные сведения, справки, ведомости о «бунтарях»-черниговцах, следующих на Кавказ, описания их маршрута и т. д. Майор Броссе систематически рапортовал высшему военному начальству на Кавказе обо всем касающемся этих солдат за период с начала апреля по конец июля 1826 г.

Так, документ, озаглавленный «Перечневая ведомость о числе выступившим из местечка Белая Церковь следуемый в Отдельный Кавказский Корпус сформированная из Черниговского пехотного полка уравнительный 6-ть рот и в каком числе и при каждой конвойная команда с показанием с которого числа каждая рота выступила», составленным майором Броссе 21 апреля 1826 г., показывает, что 1-я рота черниговцев в составе 132 «нижних чинов» (рядовые, музыканты, нестроевые, денщики) выступила 6-го апреля, 2-я рота—9-го апреля (132 чел.), 3-я рота—12 апреля (129 чел.), 4-я ро-

та—15-го (132 чел.), 5-я рота—19-го (133 чел.), 6-я рота—21-го апреля (132 чел.).

Из рапортов майора Броссе видно, что в пути следования умерли рядовые Аким Амиров и Прокофий Васильев, умер в полковом лазарете 17-го егерского полка Данила Панхоча, утонул в реке Самаре рядовой Томаш Янц, 7 солдат остались в разных лазаретах из-за болезни, а рядовой Никита Ильин «по повелению начальника главного штаба 1-й армии господина генерал-адъютанта барона Толя... оставлен в местечке Градижске для предания суду при 14-м егерском полку...».

В материалах имеются также рапорты исправляющего должность ставропольского земского исправника Зайцева, дворянского заседателя уездного суда Новикова, «заседателя от поселян» Панкова и др. на имя управляющего Кавказской областью генерал-майора П. Д. Горчакова о прибытии в Ставропольский уезд «мятежных» солдат, об их «претензиях» и настроениях, об обеспечении их продовольствием и т. д. По инструкции военного командования блюстители порядка зорко следили за тем, чтобы «преступники» не «разсеивали зловредных толков» среди местного населения.

В ряде документов содержатся между прочими точные цифры о числе солдат-черниговцев, сосланных на Кавказ. В этом отношении определенный интерес представляет «Строевой рапорт о числе нижних воинских чинах следующих в шести ротах черниговского пехотного полка в Кавказский отдельный корпус, а равно и прикомандированных для преемственного означенных чинов», составленный майором Броссе 14 июня 1826 г. По этому документу число следующих на Кавказ «нижних чинов» составляло по списку 795 чел., из которых рядовых 726, музыкантов 51, нестроевых 13, денщиков 5. Из этого числа в пути следования умерло 4, остались «за болезнью в разных госпиталях и лазаретах» 6 рядовых. В день составления рапорта, т. е. 14 июня, было налицо 785 чел. (716 рядовых, 51 музыкант, 13 нестроевых, 5 денщиков). В составе конвой было 128 чел. (11 обер-офицеров, 30 унтер-офицеров, 79 рядовых, 8 денщиков) из Мурманского, Нижегородского, Низовского, Симбирского пехотных полков, а также из 13-го и 14-го егерских полков.

Из других официальных списков, составленных в сентябре 1826 г., видно, что 782 солдата Черниговского полка после прибытия на Северный Кавказ были распределены в разные полки и батальоны следующим образом: в Тенгинский полк—40 чел., в Моздокский гарнизонный батальон—100, в

Навагинский пехотный полк—130, в Кабардинский пехотный полк—101, в 43-й егерский полк—70, в Таманский гарнизонный полк—50, в Апшеронский пехотный полк—91, во Владикавказский гарнизонный полк—100, в Ширванский пехотный полк—100 чел. На основании этих данных уже нетрудно определить, в каких военных действиях участвовали солдаты черниговцы в русско-персидской войне 1826—1828 гг.

В деле сохранились именные списки всех сосланных на Кавказ солдат Черниговского полка. При сличении их с уже опубликованными списками черниговцев¹³⁷ выясняется, что фамилии ряда солдат отсутствуют в опубликованных списках. Таким образом, новые архивные материалы могут дополнять и уточнять ранее изданные списки.

Особый интерес представляют формуляры о 782 солдатах-мятежниках, составленные на основании официального документа—«Послужного списка нижним воинским чинам Черниговского пехотного полка, назначенными в Отдельный кавказский корпус». В этих материалах имеются важные данные о социально-классовом положении и национальном происхождении солдат, об их возрасте, месте рождения, службе в армии, об участии в Отечественной войне 1812 г., о наградах и т. д.

Послужные списки прежде всего показывают, что «нижние воинские чины» Черниговского полка были выходцами главным образом из Рязанской, Тамбовской, Саратовской, Симбирской, Смоленской, Могилевской, Полтавской, Минской, Казанской, Курляндской губерний (в списках указаны также уезды и селения). Большинство из 782 солдат были крепостными (помещичьими) крестьянами, число экономических крестьян составляло 112 чел., государственных крестьян—65 чел. Далее: удельных крестьян—18, однодворцев—26, дворовых людей—6, мещан из разных городов—14, солдатских детей—10, казаков—5 чел. и т. д.

Интересные сведения имеются о национальном составе восставших солдат. В подавляющем большинстве «мятежники», разумеется, были русскими, заметное число составляли украинцы и белорусы. Но согласно формулярам в Черниговском полку служили также чувашаи, татары, латыши, литовцы, эстонцы, поляки и др. Так, число чувашей (в том числе крещеных) составляло 26, из народов Прибалтики—38, татар—14, поляков—6, мордвы (крещеной)—3, черемисов (крещеных)—2.

Ряд материалов показывает, что в 1826 г. возраст основной массы солдат был 30—35 лет; самому старшему—57 лет (Аким Немухин сын Немухин, «губернского города Ка-

луги из мещан»), самому младшему—16 лет (Иван Николаев сын Савельев, «Рязанской губернии Рязского уезда из солдатских детей»).

Следует отметить, что многие солдаты Черниговского полка были участниками Отечественной войны 1812 г.; из них 103 чел. имели серебряную медаль за 1812 год (полк имел Георгиевское полковое знамя за 1812 год). Часть солдат служила в армии с 1806—1808 гг., но основная масса с 1811—1814 гг. Некоторые солдаты поступили на службу в армию даже в 1823—1825 гг. Любопытно, что один крепостной крестьянин, Яков Степанов сын Степанов («Симбирской губернии и уезда, села Пажеского, помещицы Надежды Дмитриевой из крестьян»), поступил в армию—в Черниговский пехотный полк 23 декабря 1825 г., т. е. всего за 6 дней до восстания полка. Таким образом, в составе черниговцев имелись как старые боевые солдаты, участвовавшие в Отечественной войне 1812 г. и в заграничных походах русской армии, так и повички-новобранцы.

В архивных фондах выявлено также немало документов, относящихся к рядовым участникам восстания 14-го декабря 1825 г. в Петербурге, на Сенатской площади. Известно, что большинство этих «взбунтовавшихся» солдат и матросов, в составе специально сформированных воинских частей—лейб-гвардии Сводного полка, под командованием полковника И. П. Шипова 2-го, и Отдельного отряда, под командованием подполковника Махова, также были в 1826 г. сосланы на Кавказ—«в теплую Сибирь», о чем написана книга еще в 1896 г. Но вот обнаружено «Дело № 10»: «О Сводном гвардейском полку и Отряде, составленном из полков лейб-гвардии Московского, Гренадерского и Морского Экипажа, прибывших в Кавказский Отдельный корпус, 1-й в команде полковника Шипова 2-го и последней подполковника Махова. 1826 год».

В архивном деле имеются интересные рапорты, послужные списки, ведомости и разные сведения о нижних чинах—«преступниках», о составе Сводного полка и Отряда Махова, об их прибытии на Кавказ и т. д. Интересны, в частности, формуляры многих нижних чинов лейб-гвардии Сводного полка, в которых есть ценные данные о «бунтарях» (социальное положение, национальное происхождение, год рождения, служба в армии и т. д.). Так, например, из списка «лейб-гвардии Сводного полка фельдфебелям, унтер офицерам, строевым и нестроевым» видно, что большинство из них—крепостные и казенные крестьяне; далее, экономические крестьяне, однодворцы, мещане из разных городов, солдатские дети, каза-

ки и один рабочий из Александровской мануфактуры (Александр Васильев сын Васильев). Из 81-го унтер-офицера один немец и один татарин. Подавляющее большинство служили в армии с 1807—1812 гг. и были участниками Отечественной войны 1812 г.

Официальный документ—«Ведомость о числе воинских чинов лейб-гвардии Сводного полка», составленный 19-го июня 1826 г., показывает, что в полку состояло всего 1376 чел., из которых штаб-офицеров 4, обер-офицеров 30, унтер-офицеров 72, музыкантов 35, рядовых 1107, нестроевых 128. Из другой ведомости, подписанной командиром Сводного полка полковником Шиповым (тоже декабристом) 1-го августа 1826 г., видно, что 18 чел. из лейб-гвардии Московского и лейб-гвардии Гренадерского полков еще находились «в С. Петербурге под арестом по случившемуся прошлого 1825 года декабря 14-го числа происшествию». В числе этих арестантов упоминается подпоручик лейб-гвардии Московского полка «князь Павел Иванов сын Цицианов».

Ряд документов показывает, что 14 жен рядовых декабристов из лейб-гвардии Московского полка выразили желание поехать к своим мужьям, сосланным на Кавказ. Решение было получено, и они, выехав из Петербурга в конце мая (1826 г.), прибыли на Северный Кавказ, в гор. Ставрополь в середине августа. В числе этих женщин—Наталья Ивановна Антонова, Агафья Егоровна Аверьянова, Елисавета Андреевна Рыбкина, Авдотья Мироновна Панина, Екатерина Павловна Абрамова и др. Некоторые из них прибыли на Кавказ со своими малолетними детьми.

В архивных материалах сохранились также послужные списки декабристов А. Бестужева-Марлинского, В. С. Толстого, С. И. Кривцова, интересные записки и справки о П. Бестужеве, Е. Лачинове, В. Голицыне, В. Сухорукове, о двух братьях Беляевых и др.

В формулярном списке Бестужева-Марлинского, составленном в 1834 г., о его участии в военных действиях в Армении и на Кавказе сказано: «1829 года сентября 26-го числа под личным начальством главнокомандующего генерала от инфантерии генерал-адъютанта графа Паскевича Эриванского при перестрелке с неприятельскою конницею вышедшею из гор. Байбурта, 27-го при занятии сего города приступом укрепленного лагеря, и при следовании неприятеля защищавшего оной, в действительном сражении находился и при обратном следовании в полковую штаб квартиру в походах находился и за понесенные труды награжден пятью рублями ассигнациями и медалью за турецкую войну. 1831 го-

да августа с 20-го по 27-е число был при обороне крепости Дербента от неприятельского войска Казы муллы день и ночь в беспрестанных перестрелках».

В рапорте начальника Карской крепости Реута от 9 мая 1829 г. на имя начальника штаба генерал-майора Остен-Сакена о декабристе Е. Лачинове между прочим говорится: «При сем обязанностью считаю донести Вашему превосходительству о примерном усердии и отличных действиях 39-го егерского полка унтер-офицера Лачинова, разжалованного из офицеров генерального штаба, который по просьбе предместника моего генерал-майора князя Бековича Черкасского был по взятии Карса прикомандирован генерал-майором Берхманом к армянской дружине для показания оной порядка пограничной службы и надзора за исправностью караулов их и разъездов. По рекомендации о нем князя Бековича Черкасского я также во время управления областью давал ему различные поручения... с наступлением весны, когда исправность караулов и разъездов армянских так много приносит пользы заботясь о предохранении жителей от грабежей хищнических партий и понуждения к засевам полей, то старания и похвальные поступки унтер-офицера Лачинова возлагают на меня обязанность покорнейше просить Ваше превосходительство обратить на него милостивое внимание господина главнокомандующего...».

Новые архивные материалы дополняют наши сведения о жизни, о героических подвигах декабристов. Одновременно они еще раз показывают, что славные имена многих декабристов тесно связаны с историей братских народов Закавказья. Сосланные на Кавказ декабристы принимали непосредственное и самое активное участие в русско-персидской (1826—1828 гг.) и русско-турецкой (1828—1829 гг.) войнах, в ходе которых совершился исторический акт большого прогрессивного значения—Восточная Армения и ряд областей Азербайджана и Грузии были освобождены от тяжелого ига ханов, пашей и присоединены к России. Как отмечалось еще в свое время, «мятежники» сражались с беззаветной храбростью, большим воодушевлением. И главным источником вдохновения и героизма русских революционеров был тот мир высоких идей, свободы и гуманизма, которому они были преданы как до, так и после 1825 года.

Примечательно, что, несмотря на жестокий режим и всевозможные преследования, сосланные на Кавказ декабристы не пали духом. Декабрист Гангеблов, которого также перевели на Кавказ, в своих воспоминаниях писал: «Вообще говоря, в настроении духа декабристов нисколько не замеча-

лось, чтобы они приуныли, чтоб выражали сожаления о том, что жизненные надежды каждого из них им изменили. Где не встречались, где не сходились они, начиная с Арзрума, всегда они казались веселыми, приветливыми, как между собою, так и с другими»¹³⁸.

Более того, как однажды признался верноподданный царский генерал Паскевич, многие из декабристов, служивших в войсках Кавказского корпуса, «не оставили прежних мыслей». В другой связи тот же генерал утверждал, что среди сосланных на Кавказ декабристов «дух сообщества существует... и живет»¹³⁹.

Высокие, благородные идеи и гражданский долг перед родиной оказались сильнее, чем виселица, каторга и жестокие гонения.

ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԿՈՎԿԱՍ ԱՔՍՈՐՎԱՅ ԳԵԿԱՐՐԻՍՏՆԵՐԻ ՄՕՍԻՆ

Ամփոփում

Արխիվային պրպտումների ժամանակ հաշտվեց հայտնաբերել արխիվային նոր նյութեր ղեկաբրիտների և մասնավորապես Կովկաս արսորված շարքային ղեկաբրիտների վերաբերյալ: Փաստաթղթերի մեծ մասում կարևոր տեղեկություններ կան Չեռնիգովյան գնդի զինվորներին Կովկաս արսորելու, նրանց թվի, կազմի, սոցիալական դրույթյան ու ազգային ծագման մասին: Հետաքրքիր են այն նյութերը, որոնք վերաբերում են Պետերբուրգից Կովկաս, Հայաստան փոխադրված «խոտվարար» զինվորներին, ինչպես նաև առանձին ղեկաբրիտներին՝ Ա. Բեստուժև-Մառլինսկուն, Վ. Տոլստոյին, Ե. Լաշինովին և ուրիշներին:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՍՅՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական տիրապետությունից և միացումը Ռուսաստանին նոր էջ, նոր դարազույգ բացեց հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ¹⁴⁰: Պատմական այդ նշանավոր ակտը խոշոր ազդեցություն ունեցավ արևելահայկաթյան սոցիալ-տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման հետագա ընթացքի վրա:

Արևելյան Հայաստանը պարսկական ու թուրքական դարավոր տիրապետությունից ազատագրելու և Ռուսաստանին միացնելու հարցը արծարծվեց դեռևս XVII դարում: Խիստ կենսական այդ խնդիրը լուծելու համար հայ, ինչպես նաև վրաց ու ադրբեջանական ժողովուրդների առաջադեմ գործիչները դիմումներ ուղղեցին ռուսական արքունիքին, որի արտաքին քաղաքականության շահերը Անդրկովկասում համընկնում էին երկրամասի ժողովուրդների ազատագրական ձգտումների հետ:

Ռուսական կառավարությունը Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու նպատակով գործնական քայլեր կատարեց XVIII դարում: 1722—1723 թթ. տեղի ունեցավ Պետրոս I-ի, այսպես կոչված, Պարսկական (Կասպիական) արշավանքը: 1780—1781 թթ. զորավար Ա. Վ. Սուվորովին հանձնարարվեց նախապատրաստել նոր արշավանք: Մի այլ փորձ ձեռնարկվեց 1796 թ. գեներալ Վալերիան Զուբովի հրամանատարությամբ: Սակայն XVIII դարում կատարված այդ փորձերը արտաքին և ներքին մի շարք հանգամանքների պատճառով մնացին անհետևանք:

XIX դարի սկզբներին Ռուսաստանի կովկասյան և մերձարևելյան քաղաքականությունը, նախորդ շրջանների համեմատությամբ, դարձավ ավելի գործուն ու հետևողական: 1801 թ. Վրաստանը միացվեց Ռուսաստանին: Մի քանի տարի անց բռնկվեց ռուս-պարսկական առաջին պատերազմը (1804—1813), որի ընթացքում Ռուսական կայսրության մեջ ընդգրկվեցին Գյանջայի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի և մյուս խանությունները, այլ կերպ ասած՝ Հյուսիսային Ադրբեջանը:

Պատերազմի տարիներին ռուսական զորքերը երկու անգամ

փորձեցին զրավել Արևելյան Հայաստանը և նրա կենտրոն Երևանը: 1804 թ. ամռանը փոքրաթիվ մի զորամաս գեներալ Յիցիանովի հրամանատարությամբ շարժվեց Լոռի-Փամբակի, Աշտարակի, Էջմիածնի վրայով դեպի Երևան և պաշարեց այն:

Պաշարումը տևեց երկու ամիս, հուլիսի 2-ից մինչև սեպտեմբերի 2-ը: Յիցիանովը ձեռնարկեց մի շարք զրոհներ, բայց հաջողություն չունեցավ: Պարենի և մասնավորապես ռազմամթերքի պակասը լուրջ դժվարություններ ստեղծեց զորամասի համար: Յիցիանովը ստիպված թողեց Երևանը և վերադարձավ Վրաստան¹⁴¹:

Երկրորդ արշավանքը դեպի Երևան տեղի ունեցավ 1808 թ. աշնանը: Այս անգամ ռուսական զորամասի հրամանատարն էր գեներալ-ֆելդմարշալ Գուրովիչը: Երևանի բերդը առնվեց սեղմ օղակի մեջ: Նոյեմբերի 17-ին կազմակերպվեց ուժեղ զրոհ, որը, սակայն, չնայած ռուսական մարտիկների արիությանը և հերոսական ջանքերին, հաջողություն չունեցավ¹⁴²: Զորքի մատակարարման դժվարությունները և մոտեցող ձմեռը հարկադրեցին Գուրովիչին վերացնել պաշարումը և հեռանալ Երևանից:

Այսպիսով, ռուսական զորքերի առաջին երկու փորձերը՝ գրավել Երևանը և Արևելյան Հայաստանը, ապարդյուն անցան: Բայց այն, ինչ որ շահողվեց 1804 և 1808 թթ., փայլուն հաղթանակով ավարտվեց ռուս-պարսկական երկրորդ՝ 1826—1828 թթ. պատերազմի ժամանակ:

Այս պատերազմում նախահարձակ կողմը Պարսկաստանն էր, որ անգլիական գործակալների հրահրումով փորձում էր շեղյալ հայտարարել 1813 թ. կնքված Գյուլիստանի պայմանագիրը և իր տիրապետությունը վերականգնել Ադրբեջանում ու Վրաստանում: 1826 թ. հուլիսի 16-ին Երևանի սարգար Շուսեյն խանի և նրա եղբայր Հասան խանի զորքերն առանց պատերազմ հայտարարելու, հանկարծակի հարձակումով ներխուժեցին Երևակի և Փամբակի գավառները, իսկ երկու օր հետո 60.000 մարդուց բաղկացած պարսկական զլխավոր բանակը, թագածառանգ Աբաս-Միրզայի հրամանատարությամբ անցավ Ղարաբաղի սահմանները:

Անդրկովկասի զանազան մասերում տեղավորված ռուսական փոքրաթիվ զորքերի համար ստեղծվեց ծանր վիճակ: Թշնամին սկզբում ձեռք բերեց որոշ հաջողություններ: Հասան խանի հրոսակախմբերը, ընկճելով հայ գյուղացիության հերոսական դիմադրությունը, գրավեցին Երևակը և Փամբակը: Աբաս-Միրզայի զորքերը պաշարեցին Շուշու բերդը, ուր տեղական հայ բնակչության հետ

միասին պատսպարվել էր ռուսական փոքրաթիվ զորամաս: Օգոստոսի ընթացքում թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ ռուսական զորքերը ետ քաշվեցին Թալիշից և Նուխուց: Գրավվեց նաև Գյանջան: Հաջողություններից արբեցած Աբաս-Միրզան պատրաստվում էր արշավել Թբիլիսիի վրա:

Շահական զորքերի հաջողությունները, սակայն, ժամանակավոր էին: Կովկասի ռուսական կորպուսի զլխավոր հրամանատար, ականավոր զորահրամանատար գեներալ Ա. Պ. Երմոլովը, վերադասավորելով իր ուժերը և ստանալով նոր, լրացուցիչ զորքեր, դիմեց հակահարձակման: Սեպտեմբերի 3-ին ռուսական մի շրկատ, հայազգի նշանավոր գեներալ Մաղաթովի հրամանատարությամբ, Շամխորի մոտ զլխովին ջախջախեց հակառակորդի առաջապահ զորամասը¹⁴³: Տաս օր հետո, սեպտեմբերի 13-ին, Գյանջայի տակ ծանր պարտություն կրեց և փախուստի դիմեց պարսկական զլխավոր բանակը: Աբաս-Միրզան ստիպված եղավ անցնել Արաքս գետը և ճողպրել դեպի Թավրիզ:

Սեպտեմբեր ամսին պարսկական զորքերից մաքրվեցին նաև Փամբակն ու Երևակը: Այս գործն ի կատար ածեց ռուս ժողովրդի 1812 թ. Հայրենական պատերազմի հռչակավոր պարտիզան, բանաստեղծ Գեներալ Դավիդովը: 1826 թ. սեպտեմբերի սկզբներին նա նշանակվեց Հասան խանի դեմ գործող ռուսական զորամասի հրամանատար: Սեպտեմբերի 21-ին Միրաք գյուղի մոտ Դավիդովը պարտության մատնեց թշնամու զորքերին և հաջորդ օրը մտավ Երևանի խանություն սահմանները: Սակայն Երմոլովի հրամանով Դավիդովը դադարեցրեց իր զորամասի առաջխաղացումը և վերադարձավ Զալալօղլի (այժմ՝ Ստեփանավան), որովհետև Երևանի վրա արշավելը հետաձգվում էր հաջորդ տարվա՝ 1827 թ. գարնանը:

1827 թ. մարտ ամսին Երմոլովի փոխարեն Կովկասի կառավարչապետ և զորքերի զլխավոր հրամանատար նշանակվեց գեներալ Ի. Ֆ. Պասկևիչը, որի հրամանատարությամբ էլ վերսկսվեցին պատերազմական գործողությունները: 1827 թ. գարնան և ամռան ամիսներին ռուսական զորքերը գրավեցին Էջմիածինը, Նախիջևանը, Աբբասբաղը: Այս ժամանակաշրջանում տեղի ունեցավ Օշականի հայտնի ճակատամարտը: Օգոստոսի 17-ին երեք հազար մարդուց բաղկացած ռուսական զորամասը, որ շարժվում էր Ապարանից դեպի պաշարված Էջմիածին, նրան օգնություն ցույց տալու համար, Օշական գյուղի մոտ, գեներալ-լեյտենանտ Ա. Ի. Կրասովսկու հրամանատարությամբ արյունահեղ մարտեր մղեց 30 հա-

դարանոց պարսկական բանակի դեմ: Թշնամին քանակով գերազանցում էր տասն անգամ, բայց ոռու մարտիկները, ցուցաբերելով հիասքանչ սիրահործություն, հետ շարտեցին նրա կատաղի գրոհները, դուրս եկան շրջափակումից և հասնելով էջմիածին, փրկեցին այն թալանից ու կոտորածից: Պատմական այդ ճակատամարտում Կրասովսկու զորամասը, որի կազմում գտնվում էին նաև հայ ու վրացի աշխարհազորայիններ, տվեց զգալի կորուստ¹⁴⁴: Ընկած հերոսների հիշատակը հավերժացնելու համար երախտապարտ հայ ժողովուրդը Օշականից էջմիածին տանող ճանապարհի վրա 1834 թ. կանգնեցրեց հուշարձան, որը կանգուն է նաև այսօր: Օշականի ճակատամարտը ամենահերոսական և միևնույն ժամանակ ամենադրամատիկականն է ուսուպարսկական պատերազմների պատմության մեջ:

Օշականի ճակատամարտից մոտ մեկ ամիս հետո՝ 1827 թ. սեպտեմբերի 20-ին, մի քանի օր տևող մարտերից ու գրոհներից հետո, սուսական զորքերը վերցրին Սարգարապատ բերդը, որ կառուցված էր Երևանի խանի կողմից Ֆրանսիացի ինժեներների ղեկավարությամբ (1817): Սակայն այս խոշոր հաջողությունից հետո էլ Պասկևիչի առաջ կանգնած էր լուրջ և զժվարին խնդիր՝ դրավել Երևանի բերդը, որը համարվում էր Պարսկաստանի խոշոր ու անմատչելի ամրություններից մեկը Անդրկովկասում: Ժամանակի պաշտոնական փաստաթղթերում ասված է, որ Երևանի բերդը կանգնած էր քաղաքի հարավային ծայրամասում՝ Հրազդան (Ջանգու) գետի բարձր ու ժայռոտ ափին: Նա երեք կողմից շրջափակված էր երկշարք պարիսպներով: Ներքին պարիսպը, որ կառուցված էր աղյուսից ու քարից, բավական բարձր ու հաստ էր և ունեւր 17 բուրգ: Նրանից մոտ 32—40 մ հեռավորության վրա գտնվում էր արտաքին պարիսպը, կառուցված կավից ու քարից: Սա համեմատաբար բարակ ու ցածր էր: Բերդի շուրջը փորված էին լայն ու խոր փոսեր, որոնց մի մասը լցված էր ջրով:

Սարգարապատի գրավումից հետո ուսսական բանակը Պասկևիչի հրամանատարությամբ շարժվեց դեպի Երևան: Բերդը, որի պաշարումը սկսվեց սեպտեմբերի 24-ից, ենթարկվեց ուժեղ ուղմբակոծության: Ամսի 28-ին գործեցին 14 պաշարողական ծանր թնդանոթներ, իսկ 30-ի ամբողջ գիշերը կրակեցին 40 թնդանոթներ: Խաչատուր Աբովյանը այդ օրերի մասին իր «Վերք Հայաստանի» վեպում գրել է. «...Երևանու բերդը ծխումը կորավ... հինգ օր հինգ գիշեր սար ու ձոր դրմբում, դմբում էր: Հենց գիտես Սո-

դամ-Գոմորի քուբուրթն ու կրակը էսօր ա վեր գալիս: Երևանու բերդը ձեթը հատած պատրուքի պես՝ թե մեկ ճրթճրթում էլ էր մեկ սհաթ բիմի, էլ եդ հանքչում, խավարում էր. էնքան թոփի գյուլլա էր գլխին ու սրտին դիպել, հոգին բերանը հասցրել»¹⁴⁵:

Վերջապես հոկտեմբերի 1-ին բերդում փակված հայ բնակչության աջակցությամբ ուսսական զորքը կտրեց թշնամու դիմադրությունը: Ընկալվ Երևանի նշանավոր ամրոցը, խանի կայազորը անձնատուր եղավ: Գերի վերցվեցին Հասան խանը և շատ բարձրաստիճան պաշտոնյաներ, գրավվեց ռազմական հարուստ ավար¹⁴⁶: 1827 թ. հոկտեմբերի 1-ին Երևանի վրա ծածանվեց ուսսական զորքը:

Պատմական այս ահար առաջ բերեց մեծ խանգավառություն հայ ժողովրդի բոլոր խավերում: Նկարագրելով Երևանի հայ բնակչության ուրախությունը և հուզմունքը Երևանի ազատագրման ժամանակ, Ն. Աբովյանը գրել է. «Սալդաթի տուտը հենց բերդը մտավ թե չէ՛, հազար տեղից, հազար փանջարից լացն ու արտասուներ էլ չէին թողում, որ մարդի բերանը բաց ըլի: Բայց ով սիրտ ուներ լավ էր տեսնում, որ է՛ն ձեռներն, է՛ն աչքերը, որ քարացել, սառել երկինք էին մտիկ տալիս, առանց խոսքի էլ՝ ասում էին, որ դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար: ...Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի Հայք իրանց գլուխն էին թրի տեղ թըշնամու ձեռք քցել, է՛ս օրը, է՛ս ուրախությունը չէին տեսել, չէին վայելել»¹⁴⁷:

Ցնծում էին ոչ միայն երևանցիները, ցնծում էր ամբողջ հայ ժողովուրդը: Երևանի ազատագրումը պարսկական խաների լծից, որ ամբողջ Արևելյան Հայաստանի ազատագրման խորհրդանիշը դարձավ, անսահման ուրախություն և ոգևորություն առաջացրեց ոչ միայն կովկասահայության մեջ, այլև Ռուսաստանի ու այլ երկրների հայաբնակ վայրերում ու հայկական գաղթօջախներում: Այս տեսակետից շատ բնորոշ է այն խանգավառությունը, որ ապրեցին Հնդկաստանի հայերը: Մազրասում և Կալկաթայում տեղի ունեցան հանդեսներ ու տոնակատարություններ: Այդ և այլ գաղթավայրերից ստացվեցին բազմաթիվ ողջույններ և շնորհավորանքներ: Նրանցից մեկում ասված էր. «Հնդկաստանի տարբեր քաղաքներում բնակվող հայությունը խիստ հիացած է, որ իր հին հայրենիքը՝ Արարատյան աշխարհը էջմիածին դարավոր մայր տաճարի հետ միասին գտնվում է Ռուսաստանի սահմաններում»¹⁴⁸: Հայ նշանա-

վոր գրող Մեսրոպ Թաղիադյանը իր հայրենակիցներին (երևանցիներին) Մաղրասից ուղղված ողջույնի նամակում գրում էր. «Աչքներդ լույս, որ մեր քաղցր աշխարհքն պարսից դառն շարշարանքներից ազատվեց»¹⁴⁹: Երևանի և ամբողջ Արևելյան Հայաստանի ազատագրումն ամենուրեք դիտվեց որպես հայ ժողովրդի ազգային տոն, որպես ազատագրական շարժման նշանավոր իրադարձություն:

Երևանի բերդի գրավումը ռուսական կովկասյան զորքերի կաբերո հաղթանակներից մեկն էր: Սահմանվեց հատուկ մեղալ՝ «Երևանի գրավման համար», որով պարգևատրվեցին շատերը և զբրանց թվում Ա. Ս. Գրիբոյեդովը, Լ. Ս. Պուշկինը (մեծ բանաստեղծի եղբայրը), բազմաթիվ հայ, վրացի և ադրբեջանցի կամավորներ, մի շարք ղեկաբերիստներ և այլն: Գեներալ Պասկևիչը ստացավ «Երևանյան կոմս» տիտղոսը և շքանշան:

Արևելյան Հայաստանի կենտրոն Երևանի գրավումը ռուսական զորքերի կողմից ծանր հարված էր Պարսկաստանի համար, այն զգալի չափով կանխորոշեց պատերազմի ելքը: Հետապնդելով խուճապի մատնված շահական զորքերին, ռուսական զորամասերը շուտով գրավեցին Թավրիզը և ապա մի շարք այլ քաղաքներ: Պարսկաստանն իրեն պարտված ճանաչեց: 1828 թ. փետրվարի 10-ին (22-ին) կնքվեց Թուրքմենչայի (Թուրքմանչայի) պայմանագիրը, որով Արևելյան Հայաստանը վերջնականապես միացվեց Ռուսաստանին:

Ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմին գործուն մասնակցություն ունեցան հայ ժողովրդի լայն խավերը և Կովկաս արսորված ռուս առաջին հեղափոխականները՝ ղեկաբերիստները:

Խաների ու բեկերի ծանր լծից ազատագրվելու իր հույսերը կապելով ռուսական զենքի հաղթանակի հետ, արևելահայերը դիմեցին հնարավոր բոլոր միջոցներին՝ այդ հաղթանակն ապահովելու համար: Նրանք իրենց ուժերի ներածին չափով ռուսական զորքերին օգնեցին ոչ միայն սննդամթերքով, անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելով և բազմաթիվ այլ ծառայություններ ու հանձնարարություններ կատարելով, այլև զինված ուժերով: Պատերազմական գործողությունների ժամանակ գլուղացիությունը հաճախ զենքի էր դիմում իրեն հարստահարող խաներից ու փաշաներից ազատագրվելու համար: Ռուսական զորքերի շարքերում արիաբար կռվում էին բազմաթիվ հայ կամավորներ ու աշխարհազորայիններ:



Ռուսական զորքեր գրոհը Երևանի բերդի վրա (նկ. Վ. Բ. Մաշկովի)

1826 թ. ամռանը, երբ դեռ նոր էր սկսվել ռուս-պարսկական պատերազմը, Շամշադինում հոգևորական Գրիգոր Մանուչարյանի ղեկավարությամբ կազմակերպվեց կամավորական մի ջոկատ, որը ռազմական գործողություններ ծավալեց Երևանի սարգարի հրոսակախմբերի դեմ և աչքի ընկնող ծառայություններ մատուցեց ռուսական զորքերին: Նույն 1826 թ. աշնանը գեներալ Մադաթովի նախաձեռնությամբ կամավորական մի ջոկատ կազմակերպվեց Ղարաբաղում: Արիաբար կռվելով ռուսական զորքերի շարքերում, նա հաջողությամբ կատարեց մի շարք մարտական առաջադրանքներ:

Հայ կամավորական ու աշխարհազորային ջոկատներ կազմակերպելու ուղղությամբ առանձնապես մեծ եռանդ գործադրեցին ապականվոր հայրենասեր ու քաղաքական գործիչ արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին և բանաստեղծ Հարություն Ալամգարյանը: Դեռևս պատերազմի առաջին օրերին (1826 թ. հուլիսի 29-ին) Աշտարակեցին հատուկ շրջաբերականով դիմեց Անդրկովկասի ամբողջ հայությանը, կոչ անելով ոտքի կանգնել և գեներլ ձեռքին, ռուսական զորքերի հետ միասին կռվել պարսիկ խաների դեմ: Ուղղելով իր խոսքը հայրենակիցներին, նա գրում էր. «Արիացե՛ք, մի վախե՛ք: Նոցա (պարսիկները—Մ. Ն.) հանկարծակի հարձակումը անդենք և իսողաղ շինացվոց վրա՝ չէ կարող սասանացնել Ռուսիո օգոստափառ Կայսեր անհաղթելի զորաց: Հաստատ մնացե՛ք ձեր հավատարմության մեջ: Աշխատեցեք խոհեմությամբ անմահացնել և փառավորել ձեր և ձեր նախնյաց հիշատակը... Ահա՛ ժամանակ, երբ ամենեքյանրդ, վերածնելով ձեր մեջ ձեր նախնյաց սխրագործությունները, միաբանությամբ պիտի քաջալերեք միմյանց ասելով՝ ամենկնք քաջությամբ և առանց հայրենյացը դավաճանելու և այդպեսով ժողանդենք մեր նախնյաց պանծալի անունն ու փառքը...»¹⁵⁰:

Նման կոչերով Ներսես Աշտարակեցին դիմեց նաև Աշտարակի, Օշականի, Էջմիածնի, Սարդարապատի, Երևանի բնակչությանը: 1827 թ. գարնանից սկսած մշտապես գտնվելով Արարատյան դաշտավայրում գործող ռուսական բանակում, նա ոգևորում էր տեղական հայ բնակչությանը և ամեն կերպ օգնում ռուսական զորահրամանատարությանը: Վ. Պոտտոն իրավացիորեն գրել է. «Պարսկական պատերազմի ժամանակ նա արդեն 66 տարեկան էր, բայց տարիները շնուլացրին սրբազանի եռանդն ու կայտառությունը, որը պատրաստ էր ամեն ինչ զոհելու, միայն թե տեսներ հայրենիքի

աղատագրությունը... Ներսեսի ներկայությունը ռուսական բանակում ոգևորում էր հայ ժողովրդին, հայրենասիրության զգացումը նրանում հասցնում սխրագործության, հերոսության և ինքնազոհության...»¹⁵¹: Ի դեպ, Ներսես Աշտարակեցուն, որպես հայրենասերի ու քաղաքական ակտիվ գործիչ, բարձր գնահատական են տվել ռուսական շատ գործիչներ և, մասնավորապես, գեկաբրիստ Ե. Լաշինովը, որն անձամբ ծանոթ էր նրա հետ¹⁵²:

Պատերազմի ընթացքում ըստեղծված հայ կամավորական ջոկատներից առանձնապես աչքի ընկավ հայ կամավորական «գունդը» («Հայոց զորքը»), որ կազմակերպվեց Թբիլիսիում, 1827 թ. գարնանը՝ գեներալ Սիպյազինի, Ներսես Աշտարակեցու և Հարություն Ալամգարյանի նախաձեռնությամբ: Ահա երկու քաղվածք այդ գնդի կանոնադրությունից, որ կոչվում էր «Առաջադրություն Հայոց նոր սարքվող զորքի համար».



Ներսես Աշտարակեցի

- «1. Հայոց զորքը կունենա բառալիոններ:
 2. Բատալիոնի մեջ են մտնում հայք իրանց սեպհական ցանկությամբն:
 3. Նրանք վեր են կալնվում 18 տարեկանից մինչև 30 տարեկան մարդիկ. ամա էս կանոնն հիմի չէ՛ կարող դայիմ պահպանվիլ, միայն պահանջվում է, որ մարդս բավական զորություն ունենա պախոտ գնալու համար:
 4. Նրանք ազատ կուլին իրանց օղուլուշաղովն ամենայն խարջ տալուցն և ծառայությունիցն, քանի ժամանակ որ էս ծառայության մէջն կուլին:
 5. Նրանք պետք է կապվին միայն ծառայել էնքան ժամանակ, քանի կոիվն Ղզլբաշի հետ կու երկարվի, իժում նրանք կու ազատվին գնալ իրենց տներն, կամ մտնել ծառայության զորքի մեջ»:
- Մի շարք տեսակետներից շատ հետաքրքիր այդ «Առաջադրություն» (Կանոնադրության) հաջորդ մասում ասված էր.
- «15. Յուրաքանչյուր զինվորի խազնիցն կուտան թվանք, թաս-

մա գոտիկով պարկ, երեսուն զցելու գուլլով, բարութով և տասն շախմատի քարով:

16. Յուրաքանչյուր զինվորն պիտի ունենա չոր սեպհական խանջալն և տիլոյի պարկն ուստ վրա շորս օրվան պաշար տանելու համար:

17. Ունտեր-օֆիցերներն ունենան թուր խանշալի տեղ:

18. Օֆիցերներն ունենան մին ջուխտ դարանշա և թուր:

19. Շուրերը՝ շուխեն բոլ մահուտից: Արխալուխն նաշուրի մուգ ունգն: Շալվարն նաշուրի էլի էն ունգն: Գդակն վրացու նման: Յափնջի»¹⁵³:

Բազմաթիվ կամավորների ու աշխարհագորայինների հետ միասին ուսական զորքերին օգնում էին ժողովրդի ամենալայն զանգվածները: Ազատագրական պայքարն ընդունել էր համաժողովրդական բնույթ: Հարկ է նշել, որ Հայաստանում պարսից խաների դեմ կռվում էին նաև վրացական ու ադրբեջանական կամավորական ջոկատներ:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմին անմիջական մասնակցություն ունեցան Ռուսաստանի այն ժամանակվա բազմաթիվ առաջավոր ազատամիտ գործիչներ և հեղափոխականներ: Ռուս ժողովրդի այդ իսկական ներկայացուցիչները գրտնրվելով Կովկասյան գործող կորպուսի զանազան զորամասերում, խիզախորեն մարտնչում էին Հայաստանում և Անդրկովկասի որոշ շրջաններում դեռևս իշխող պարսիկ խաների ու թուրք փաշաների դեմ և դրանով իսկ իրենց կարևոր լուծան ներդրում երկրամասի ժողովուրդների ազատագրական պայքարի պատմության մեջ:

Ռուս ժողովրդի այդ փառապանծ զավակների շարքում էին գտնվում Ռուսաստանի առաջին հեղափոխականները՝ ղեկաբերիստները, մեծ գրող ու հումանիստ Ալեքսանդր Գրիբոյեդովը, 1812 թ. Հայրենական պատերազմի հուշակավոր պարտիզան, բանաստեղծ Գենիս Գավիդովը, իր ժամանակի ազատամիտ, առաջավոր գաղափարներով տոգորված Ի. Գ. Բուրցովը, Ն. Ն. Ռաևսկին, Վ. Գ. Վոլյովսկին, Ա. Մ. Միկլաշևսկին և ուրիշներ:

Ինչպես հայտնի է, Նիկոլայ I-ը ճնշելով ղեկաբերիստների ապստամբությունը, մոտ 70 ամտիճանադրված սպա ղեկաբերիստներ արսորեց Կովկաս՝ «տաք Սիբիր»: Այստեղ ուղարկվեցին նաև շարքային ղեկաբերիստները՝ ապստամբությանը մասնակցած զին-

վորները, մոտ 2800 մարդ: Նրանք բոլորը գործուն մասնակցություն ունեցան ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմին:

Ռուս-պարսկական այդ պատերազմի մարտական գործողություններում առանձնապես աչքի ընկան ղեկաբերիստներ Լաչինովը, Պուշչինը, Ռինկեիչը, Դեպրերադովիչը, Դորբինսկին, Իսկրիցկին, Օրժիցկին, Մալյուտինը, Յեբրիկովը և ուրիշներ:



Հայ կամավորների դրոշակը

Նվերովիմ Լաչինովը մասնակցեց Օշականի հայտնի ճակատամարտին, Սարդարապատ, Երևան բերդերի և այլ ավանների ու բընակավայրերի գրավմանը: Հիշատակության արժանի է մասնավորապես նրա մասնակցությունը Օշականի ճակատամարտին: Գեներալ-լեյտենանտ Կրասովսկին նշում էր, որ շարքային Լաչինովը Օշականի ճակատամարտում ցուցաբերեց «բաշուլյան ու անվհե-րություն զերազանց օրինակներ»¹⁵⁴: Միխայիլ Իվանովիչ Պուշչինը, լինելով սակրավորների գումարտակի հրամանատար, հաջողությամբ կազմակերպեց ու ղեկավարեց մի շարք բերդերի և մասնավորապես Երևանի բերդի պաշարումը¹⁵⁵: Նիկոլայ Նիկոլևիչ Դեպրերադովիչի մասին իր գնդի հրամանատար Ն. Ռաևսկին գրել է, որ


նա «Սարգարապատ և Երևան ամրոցների պաշարման ժամանակ իրեն դրսևորեց գերազանց քաջությամբ»¹⁵⁶: Ալեքսանդր Եֆիմովիչ Ռինկեհիչը մասնակցեց բազմաթիվ մարտերի: Նրա մասին գեներալ Պասկևիչը 1827 թ. հոկտեմբերին ղեկուցել է ցարին. «Պրապորշչիկ Ռինկեհիչը թշնամու դեմ մղված մարտերում իրեն դրսևորեց որպես անվեհեր մարտիկ»¹⁵⁷: Խիզախությամբ կռվում էին Կովկասի գործող բանակում գտնվող նաև մյուս ղեկաբերիստները: Բարեբախտաբար պահպանվել են շատերի ծառայության ցուցակները, ուր մանրամասն արձանագրված է նրանց մասնակցությունը Հայաստանի ազատագրման համար մղված կռիվներին:

Պատերազմական գործողություններին անմիջական մասնակցություն ցույց տվեց նաև Լեյբ-գվարդիայի հավաքական գունդը, որը կազմված էր Պետերբուրգում ապստամբած ղեկաբերիստ զինվորներից: Նա մեծ դեր խաղաց մասնավորապես Երևանը պարսկական խաների լծից ազատագրելու գործում: Բերդի պաշարման ամբողջ ընթացքում շարքային ղեկաբերիստները գտնվում էին պաշարող զորքերի առաջին դիրքերում: 1827 թ. հոկտեմբերի 1-ին, Երևանի բերդի գրավման օրը, հավաքական զնդի վաշտերը, սկսելով գրոհը, առաջինը մտան բերդ: Գնդի մարտիկները ցուցաբերեցին խիզախության և հերոսության հիանալի օրինակներ, որի համար շատերը ստացան շքանշաններ¹⁵⁸: Հերոսաբար կռվում էին նաև հույտնի Չեռնիզովյան զնդի ապստամբ զինվորները, որոնք ցրված էին տարբեր զորամասերում¹⁵⁹:

Կովկաս արսորված ղեկաբերիստները ակտիվ մասնակցություն ունեցան նաև ռուս-թուրքական 1828—1829 թթ. պատերազմին, այսինքն պատերազմական այն գործողություններին, որոնք ծավալվեցին Արևմտյան Հայաստանում: Կարսի, Էրզրումի, Բայբուրդի և այլ քաղաքների համար մղված կռիվներում առանձնապես աչքի ընկան բացի վերը նշվածներից նաև նշանավոր ղեկաբերիստ և գրոզ Ալեքսանդր Բեստուժև-Մաուլինսկին¹⁶⁰, Ն. Սեմիչևը, Վ. Սուխորուկովը, Զ. Չերնիշովը, Պ. Լեմանը, Պ. Կոնովնիցինը և ուրիշներ:

Հարկ է նշել այն հանգամանքը, որ ղեկաբերիստները ի տարբերություն ցարական զենեակների ու շինովնիկների, չեմո վերաբերմունք էին ցուցաբերում հայ ժողովրդի նկատմամբ: Ցարական ղեսպոտիզմի դեմ վենք բարձրացրած ռուս հեղափոխականները, որոնց համար հարազատ էին մարզասիրական և ժողովուրդների ազատագրության գաղափարները, մեծ ոգևորությամբ կռվում էին բռնակալ պարսկական խաների ու թուրքական փաշաների դեմ:

Մոտ երկու տարի գտնվելով Հայաստանում, ղեկաբերիստներից շատերը ծանոթություն և կապեր հաստատեցին ժամանակի մի շարք հայ անվանի գրողների ու հասարակական-քաղաքական գործիչների հետ: Նրանցից մի մասը լավ գիտեր կրոնական ու քաղաքական գործիչ Ներսես Աշտարակեցուն, բանաստեղծ Հարություն Ալամդարյանին, պրոֆեսոր, հայագետ Շահան Զրայետյանին, զին-



Գ. Գ. Լաչինով

վորականներ Վասիլ Բելյուսովին, Լազար Կազարեևի և ուրիշների: Լուրջ հիմքեր կան կարծելու, որ ռուս հեղափոխականների հետ ծանոթ է եղել նաև Խաչատուր Աբովյանը¹⁶¹:

Ռուս-պարսկական պատերազմին գործուն մասնակցություն ունեցան նաև ռուսական առաջավոր, ազատամիտ զինվորականության ու մտավորականության բազմաթիվ այլ ներկայացուցիչներ, որոնցից մի մասը կապեր ուներ ապստամբների հետ և այս կամ այն չափով ընդգրկված էր ռուս առաջին հեղափոխականների շարժման մեջ: Ահա նրանցից մի քանիսը:

Իվան Գրիգորևիչ Բուրցովը (1794—1829) ռուսական բանակի կրթված ու ազատամիտ սպաներից էր: Մասնակցել է 1812 թ. հայրենական պատերազմին, եղել է ղեկաբերիստների առաջին ընկերություններից մեկի («Բարորության միություն») անդամ: 1826 թ. բանտարկվել, ապա փոխադրվել է Կովկաս: 1827 թ. ամռան և աշնան ամիսներին մասնակցել է Հայաստանում և Ադրբեջանում ծավալված պատերազմական գործողություններին: Գեներալ Պասկև-

վիշը 1827 թ. նոյեմբերին ցարին զեկուցում էր, որ գնդապետ Բուրցովը և իր ընկերները պարսկական զորքերի դեմ մղվող կռիվներում ցուցաբերում են արիություն և անվեհերություն:

կուսակալներին, առաջարկելով ոչնչացնել հայկական հին հուշար-
ձանները²⁵⁴: Թուրք փաշաները կարծում էին, որ պատմական հու-
շարձանները հիշեցնում են անցյալը և կարող են դարթեցնել ազ-
գային անկախության գաղափարը հայ ժողովրդի մեջ:

Թուրքական կառավարությանը, սակայն, առանձնապես ան-
հանդստություն էր պատճառում Զեյթունը: Այդ անհանգստությունն

ավելի ուժեղացավ 1860 թ. հունիսին, երբ ղեկավարները փախուստի մատնեցին Մարաշի կառավարիչ Խուրշիդ փաշային, որը փորձում էր իր գործառնի օգնությամբ հարկեր գանձել Տավրոսի հայ լեռնականներից: Վախենալով, թե Զեյթունը կարող է դառնալ հայ ազատագրական շարժման կենտրոններից մեկը, Բ. Դուռը որոշում ընդունեց գրավել ու ավերել այդ գավառը, բնակչությունը կոտորել, բնաջինջ անել: Որ Բ. Դուռը ունեցել է այդպիսի ծրագիր, այդ մասին հետաքրքրական վկայություններ է բերում վիպագիր Ծերենցը իր մի հոդվածում²⁵⁵:

Զեյթունը գրավելու, նրա հայ բնակչությունը սրի քաշելու իր ծրագիրը սուլթանական կառավարությունը որոշեց իրագործել 1862 թ. ամռանը: Մարաշի նոր կուսակալ Ազիզ փաշան կազմեց մի խոշոր բանակ և 1862 թ. հուլիսին պաշարեց Զեյթունը²⁵⁶: Ամբողջ բնակչությունը ոտքի կանգնեց, ղենքի դիմեցին բոլորը՝ երկտասարգները, հասակավորները, կանայք և ծերերը: Ազիզ փաշան սկզբում ունեցավ որոշ հաջողություններ: Նա գրավեց մի քանի հայկական գյուղեր և դրանք ամբողջությամբ կոտորածի, ավերի ու թալանի ենթարկեց: Այդ ղեկավարի ականատեսներից մեկը Ալաբաշ գյուղի կոտորածի մասին հետևյալն է գրում. «...արք և կանայք և տղայք բոլոր սուրի բերան գնացին, տուները կողոպտեցան և ամբողջ գյուղը հրո ճարակ եղավ: Արյունը փողոցներու մեջ կը վազեր, և հրդեհին մուխը սոսկում ու սաբսափ կը ծավալեր մերձակա գյուղերը: Փաշան հրամայեց գյուղին մոտակա հայ վանքին ղոները խորտակել, և այս արյան ծարավի մարդիկը կուսակալին աշաց առջև և նորա հրամանով վանահայրը և միաբանքը փողոտեցին»²⁵⁷: Սակայն փաշայի հաջողությունները երկար չտևեցին: 1862 թ. օգոստոսի 2-ին ղեկավարները վճռական գրոհի անցան և մեծ ջարդ տվին սուլթանական զորքերին: Թշնամին դիմեց փախուստի: Ազիզ փաշան խայտառակ պարտություն կրեց: Հաղթողները դրավեցին շատ ղենք և այլ ռազմամթերք: Թշնամին դաշտում թողեց մոտ 2000 դիակ: Տեղի ունեցած կոիվներում ղեկավարները մի անգամ ևս ցուցաբերեցին հիասքանչ քաջություն և պատերազմելու բարձր արվեստ²⁵⁸:

Ժամանակակիցներից մեկի հոդվածում, գրված 1862 թ. դեկտեմբերին Կ. Պոլսում, հերոսական այդ ճակատամարտը հետևյալ ձևով է պատկերվում. «Օգոստոսի երկրորդ օրը առավոտյան կանուխ Ազիզ փաշան Զեյթունի վրա հարձակվելու նշանը տվավ. այլազգյաց բանակին առջևն իբր 150 մուլաներու և շեյխերու մեծ



Պատմական փոփոխություններ

գունդը կերթար և անոնց ամենուն ալ առչեկն մեծ Միֆթին: Զեյթունեն կես ժամի շափ հետավորություն հասած ատեննին մեկ բարձր դաշտավայրի վրա ժողովեցան և աղոթելու կեցան և Զեյթունի վրա անեծքներ կարգացին... Այլագրի բանակը կես ժամու շափ աղոթելեն վերջը, Զեյթունի վրա հարձակվեցավ, որուն առջին ժայռերու ետին տեղ-տեղ զեյթունցիք պահեստի մեջ կեցած էին իրենց շորս գլխավորներուն հրամանատարությանը տակ...»:

Խոսելով այն գազանությունների մասին, որ կատարում էին թուրքական զորքերը իրենց ձեռքն ընկած հայ զյուզացիների նըկատմամբ, հողվածագիրն այնուհետև շարունակում էր. «...պատե-րազմը ամեն կողմը բորբոքած էր, Զեյթունի զանգակաց հնչումը բոլոր Հայոց ի զեն դիմելու նշանը տված էր: Կռիվը խիստ կատաղի եղավ: Հայերը ամուր տեղեր բռնած ըլլալովնին՝ այլազգիներուն աղեկ ջարդ մը տվին և զանոնք ետ վունդեցին և մինչև Աղիզ փաշային բանակատեղին հասան, որն-որ հազիվ կրցավ մաղապուրծ խալըսի: Ասոր նման ջարդ մը կերավ նաև Աստվածածնա վանից կողմը եզոզ այլազգի գունդը: Զեյթունցիք լեռանց կիրճերը և նեղ անցքերը ամրացած ըլլալով, մեծ վնաս հասցուցին այլազգյաց բանակին. կռիվը առավանից մինչև կեսօր տեկց և Աղիզ փաշային զորքերը սկսան անդին ցիր ու ցան փախչել: Զեյթունցիք մինչև իրիկուն անոնց հետեկն ինկան և հալածեցին անոնցմե շատ մարդ ջարդելով: Այս զորացս մեկ մասը Մարաշի ճամփան բռնած էր, որն որ իր փախստյանը ատեն մեծամեծ կորուստներ ընկեն վերջը՝ հազիվ հազ գիշերը հոն կրցավ մտնել: Մյուս մասը ավելի կարճ ճամբե անցնելով՝ փախչելու համար Զեյթունի աջ և ձախ կողմերը ուղղած էին իրենց ընթացքը, այլ անոնց մեծ մասը լեռներու, կիրճերու և ձորերուն մեջ ջարդվեցան, մեծ մաս մ'ալ գետին մեջ թափվելով՝ խեղդվեցան: Այսպես այլազգյաց կորուստը վեց կամ ութը հազարի շափ կը հաշվի: Նողայիններեն 18 պեյ և գնդերու զլխավորները պատերազմի մեջ ինկած են: Հետևյալ օրը, օգոստոսի 3-ին, զեյթունցիք այլազգյաց դիակունքը փոսերուն մեջ նետելու զբաղած էին: Աղիզ փաշային բանակին մեջ նաև շատ ձխավորներ ալ կը գտնվեին: Զեյթունցվոց մեծելներուն թիվը 100—150 հոգով շարժ կը հաշվվի»²⁵⁹:

Զեյթունի 1862 թ. դեպքերի այս նկարագրությունը չնայած իր որոշ չափազանցություններին, հիմնականում ճիշտ է: Այդ են ցույց տալիս բազմաթիվ այլ վկայություններ²⁶⁰:

Օսմանյան պետությունը պատրաստություն տեսավ ապրստամբությունը ճնշելու համար: Աղիզ փաշան հետ կանչվեց և նրա փոխարեն նշանակվեց Աշիր փաշան, որին և հանձնարարվեց մեծ բանակով արշավանք սկսել: Ապստամբները նորից պատրաստվեցին թշնամուն դիմադրելու, սակայն դեպքերը շուտով նոր ընթացք ստացան: Զեյթունցիների վերնախավը՝ Պոլսի պատրիարքը դիմեցին Փրանսիային: Կայսր Նապոլեոն III-ը, որ այդ շրջանում նվաճողական ակտիվ քաղաքականություն էր վարում Մերձավոր Արևելքում, փորձեց օգտվել առիթից և հանդես գալ հայերի «պաշտպանի» դերում: Թուրքական կառավարությունը, հասկանալով Փրանսիայի իսկական նպատակը, որոշեց չձեռնարկել նոր արշավանքը զեյթունցիների դեմ, որպեսզի չստեղծի պատերվակ նապոլեոնի համար: Սուլթան Աբդուլ Ազիզը բանակցություններ սկսեց զեյթունցիների հետ, կնքվեց համաձայնություն, ըստ որի Բ. Դուռը զադարեցրեց Զեյթունի դեմ նախապատրաստվող արշավանքը, իսկ ապստամբները համաձայնվեցին վճարել հարկերը և ընդունել կառավարության կողմից նշանակվելիք գայմազամին՝ գավառապետին:

Կնքված համաձայնագիրը էական փոփոխություններ չառաջացրեց զեյթունցիների կյանքում: Գավառը ըստ էության շարունակեց մնալ կիսանկախ վիճակում: Գայմազամը, որ Զեյթուն եկավ միայն 1865 թ., հետևում էր հարկերի գանձման գործին, նրա իշխանությունը ձեռնարկ էր: Իրենց ներքին գործերում զեյթունցիներն առաջվա նման անկախ մնացին: Մյուս կողմից սուլթանական կառավարության հիմնական նպատակը՝ ոչնչացնել, ցրել տալ զեյթունցիների համայնքը, շիրագործվեց. ավելին, սուլթանի զորքերը պարտվեցին և մեծ կորուստներով հետ շարժվեցին: Այս բոլորը մեղ հիմք է տալիս ասելու, որ զեյթունցիների 1862 թ. պատմաբանությունը փաստորեն չի պարտվել, ինչպես կարծում են մի շարք հեղինակներ:

Զեյթունցիների 1862 թ. հերոսամարտը լայն արձագանք գտավ հայ իրականության մեջ: Ազատագրական այդ պայքարը, ինչպես հայտնի է, երգեցին շատերը, և մասնավորապես Մ. Պեշեկթաշլյանը՝ Կ. Պոլսում ու Ս. Շահազիզը՝ Մոսկվայում: Կ. Պոլսի հայ բնակչությունը, հատկապես նրա դեմոկրատական խավերը, լարված հետաքրքրությամբ հետևում էին կատարվող անցքերին և ամեն կերպ աշխատում նյութական ու բարոյական օժանդակություն

հասցնել զենքի դիմած հայրենակիցներին: Իր հուշերում Սրբուհի Ծրիցյանը վկայում է, որ Զեյթունի ապստամբության ժամանակ կրոնական-դավանաբանական կոիվներն արևմտահայերի մեջ թուլացել էին և շատերն աշխատում էին հնարավոր բոլոր միջոցներով օգնել ապստամբներին:

«Այս տարին,— գրում էր Ծրիցյանը,— Զեյթունի անցքերը մեծ ազդեցություն բնեցան Պոլսո և այլ տեղերի հայոց վերա. ամենայն որ Կիլիկիան ուներ ի բերան, ամենայն որ մասնակից էր դրամական հանգանակությանց. ...նույնիսկ հոռմեադավան հայ երիտասարդները մոռացել էին զեպի իրանց լուսավորչական եղբայրներն ունեցած ատելությունը, և ամենայն սիրով թե՛ նյութապես և թե՛ բարոյապես օգնում էին այդ ձեռնարկություններին»²⁶¹:

Ծրիցյանը հայտնում էր նաև, որ Կ. Պոլսի «Անձնվեր ընկերությունը» նույնպես օգնում էր ապստամբ զեյթունցիներին: Զեյթունի հերոսամարտն առանձնապես զգալի աշխուժություն առաջացրեց հայրենասիրական գաղափարներով տոգորված երիտասարդության մեջ: Զեյթունի անցքերն արձագանք գտան նաև Վանում, Կարինում (Էրզրումում) և այլ քաղաքներում:

Թիֆլիսում հայ հայրենասերները և զլխավորապես երիտասարդությունը հանգանակություն սկսեցին ապստամբների օգտին: Այս կապակցությամբ «Կոստնկ Հայոց Աշխարհին» հանդեսում տրպագրվեց հատուկ կոչ, որ ուներ «Հրավեր Ռուսաստանի հայերուն» խորագիրը: Կոչում ասվում էր. «...ուրախ ենք, որ մեր քաջասիրտ Զեյթունի հայերն իրանց աջու կուսն ուժով մեր հավատո թշնամիներին ակոծք փշրել են հենց էն զլխեմեն և թույլ չեն տվել, որ նրանց կատաղությունը իր ուզածն զլուխ տանի: Սակայն մենակ էս դարգակ կարեկցությունը մեր Ռուսաստանի հայերուս կողմանե բավական չէ թուրքերի սրի տակ վեր ընկած հայերու խեղճ և անտերունչ որբերու և այրիներու դառը վիճակը թեթևացնելու...»²⁶²:

Կոչն այնուհետև հիշեցնում էր, որ Ռուսաստանը միշտ օգնության ձեռք էր մեկնել թուրքական տիրապետության դեմ ապստամբած ժողովուրդներին և որ այժմ ռուսական պետությանը հաճելի կլինի, եթե ռուսահայերը օժանդակեն զեյթունցիներին: Մեր խընդիրը և պարտքն է, ասվում էր կոչում, «...մեր կարեկցությունը տարածել մեր... հեռավոր ազգայինների վերա. թող ուրեմն մեր մեջ եղանակը մտածենք, փող հավաքենք ապահով եղանակով հասցընենք նրանց ձեռք: էս ազնիվ խորհուրդը մենք շատ հայերի բերանից լսում ենք էս օրերումս, միայն գործադրությունն է հարկավոր.

թող աշխարհ ամենայն վկա լինի, որ Ռուսաստանի հայերն էլ... չեն մոռանում խորը Տաճկաստանումը կրակի ու սրի տակ հայրամաշ եղող իրանց եղբայրքը»²⁶³:

Զեյթունի կոիվներին նվիրված հոգվածներ տպագրվեցին հայ պարբերական մամուլի մի շարք օրգաններում և մասնավորապես «Փարիզ», «Կոստնկ Հայոց Աշխարհին», «Ծաղիկ», «Մասիս» թերթերում և հանդեսներում²⁶⁴: Այդ պայքարն ամենուրեք ողջունվեց ու մեծ ոգևորություն առաջացրեց: Միայն չնչին թիվ կազմող հայ մեծատուններն էին, որ հնազանդություն ու սարկամտություն քարոզելով պարսավեցին արի զեյթունցիների հերոսամարտը:

Զեյթունի 1862 թ. ապստամբության նշանակությունը դուրս եկավ մի գավառի սահմաններից: Ի տարբերություն նախորդ շրջանի ապստամբությունների, 1862 թ. հերոսամարտը ստացավ ընդհանուր, համազգային նշանակություն: Նա օրինակ հանդիսացավ հայության մյուս հատվածների համար և մեծ ազդեցություն թողեց հետագա շրջանի հայ ազատագրական պայքարի վրա: Բնորոշ է, որ 1863 թ. սուլթանական բռնապետության դեմ ոտքի կանգնեց Մշո, իսկ 1865 թ.՝ Չարսանջակի հայ գյուղացիությունը²⁶⁵: Զեյթունի 1862 թ. ապստամբությունը նոր դարաշրջան բացեց թուրքական բռնապետության դեմ ուղղված հայ ազատագրական շարժման պատմության մեջ:

Տավրոսի հայ լեռնականների ապստամբությունը տարերային ու անկազմակերպ չէր: Փաստերը ցույց են տալիս, որ այդ ապստամբությանը նախորդել է նախապատրաստական աշխատանք և որ դրանում մասնակցել են արևմտահայ դեմոկրատական, ազատագրական գաղափարներով տոգորված մտավորականության մի շարք ներկայացուցիչներ: Հետաքրքիր է, որ դեռևս տարիներ առաջ Կ. Պոլսի մտավորականությունը կապեր է հաստատել Զեյթունի հետ: Այսպես, 1853 թ., երբ նոր էր սկսվել 1853—1856 թթ. ռուս-թուրքական պատերազմը, ուսուցչի պաշտոնով Կ. Պոլսից Զեյթուն է գալիս Հովակիմ Մեխրեյանը, որին ժամանակակիցները անվանում էին «առաջին գաղափարական քարոզիչը Զեյթունում»²⁶⁶: Ազատասիրական, հայրենասիրական գաղափարներ տարածելու հետ մեկտեղ Մեխրեյանը աշխատում էր կազմակերպել Զեյթունի ինքնապաշտպանությունը, ավելի լավ զինել նրա բնակչությունը: Այդ նպատակով նա փորձում է անցնել Կովկաս և դիմել արևելահայերին՝ դրամական օժանդակություն ստանալու համար: Սակայն այդ չի հաջողվում. թուրքական կառավարությունը Կարինում նրան ձեր-

բակալում և կախադան է բարձրացնում: Պետք է կարծել, որ Հ. Մե-
լիքյանը եղել է առաջին այն գործիչներից, որոնք Կ. Պոլսից Զեյ-
թուն են եկել քաղաքական-ազատագրական նպատակներով:

Այլևլի ուշ Զեյթունի հետ քաղաքական կապեր են հաստատել
Կ. Պոլսի մի խումբ հայ մտավորականներ, որոնցից մի քանիսը
եղել են հուլիսի 29-ի հայ հեղափոխական դեմոկրատ Միքայել Նալ-
բանդյանի համախոհները: Այս տեսակետից շատ հետաքրքրական
է Սերովբե Թագվորյանի նամակը՝ ուղղված Մ. Նալբանդյանին:
1862 թ. մայիսի 14-ին գրված այդ նամակում ուշադրության ար-
ժանի են հատկապես հետևյալ տողերը. «Տավրոսեն վարդապետ մը
եկավ հոս, քանի օր է, որ կաշխատիմ, որ առուտուր մը ընեմ այս
մարդուս հետ. հազիվ կրցան քսան, երստն հոգիով ժողով մը կազ-
մել և այն ալ մեծ դժվարությամբ. քիչ մը ստակ ես, քիչ մ'ալ բա-
րեկամին մեկը տվինք անոր, որ հարկավոր եղած դասագիրք-
ները առեն և ճամփու ծախք ընե: Մնացածին համար խոսք տվինք,
որ պիտի աշխատինք իրենց համար»²⁶⁷:

Նշված տողերն, իհարկե, ծածկագիր են: «Կաշխատիմ, որ
առուտուր մը ընեմ» ասելով՝ Թագվորյանը, ըստ երևույթին, նկատի
է ունեցել ազատագրական շարժում կազմակերպելու նպատակով
զեյթունցիների հետ վարած իր բանակցությունները, իսկ հարկա-
վոր եղած «դասագիրքները առեն» ասելով՝ զենք, զինամթերք զնե-
լը: Նամակից երևում է, որ Թագվորյանի հաղորդած տեղեկություն-
նը՝ Զեյթունի հետ կապ հաստատելու մասին, Նալբանդյանին հե-
տաքրքրող հարցերից մեկն է եղել:

Արևմտահայ նշանավոր բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանը
նույնպես քաղաքական կապեր է հաստատել զեյթունցիների հետ:
Իր արժեքավոր հուշերում Սրբուհի Երիցյանը պատմում է, որ Պե-
շիկթաշլյանը 1862 թ. գաղտնի տեսակցություններ էր ունենում
զեյթունցիների ներկայացուցիչների հետ, պատասխան նամակներ
էր ուղարկում Զեյթուն և անում էր ամեն ինչ հայ լեռնականների
ապստամբության հաջողությունն ապահովելու համար²⁶⁸:

Վերջապես ապստամբ զեյթունցիների հետ անմիջական կապ
ունեն մեր ականավոր վիպագիր Մերենցը (Հովսեփ Ծիշմանյան):
Իհարկե, պատահականություն չէր այն, որ ազգային-ազատագրա-
կան գաղափարներով տարված նշանավոր գրողը 1862 թ.՝ զեյթուն-
ցիների ապստամբության ժամանակ, գտնվում էր Կիլիկիայում:

Նշված փաստերը և մի շարք այլ տվյալներ հիմք են տալիս
պնդելու, որ ազգային-ազատագրական պայքարի կողմնակից հայ

մտավորականները ներգրավվել են զեյթունցիների 1862 թ. շարժ-
ման մեջ, զգալի դեր են խաղացել այդ ապստամբության նախա-
պատրաստման և նույնիսկ ղեկավարման գործում: Նրանք Զեյթունը
համարել են հայ ազատագրական շարժման կարևոր օջախ և մեծ
հույսեր են կապել լեռնային գավառի հետ: Ըստ երևույթին այդ
մտայնության արտահայտություններից մեկն էր «Հյուսիս» պարբե-
րականում Ռափայել Պատկանյանի ծավալած այն պրոպագանդան,
թե պարսկահայերը պետք է թողնեն իրենց հայրենիքը և կենտրո-
նանան Զեյթունում: Պատկանյանը ակնարկում էր, որ այդ երկրա-
մասում հնարավոր է վերականգնել հայ ազգային-քաղաքական ան-
կախությունը²⁶⁹: Կարծում ենք սխալ կլինի ասել, թե այսպիսի տե-
սակետ ուներ միայն Պատկանյանը:

Ի վերջո մի հարցի մասին ևս: Զեյթունցիների նկատմամբ
խիստ թշնամական դիրք գրավեց անգլիական կառավարությունը:
Երբ բռնկվեց զեյթունցիների 1862 թ. ապստամբությունը, Կ. Պոլսի
անգլիական դեսպան Հենրի Պոլիվերը բացահայտ կերպով արտա-
հայտվեց այդ շարժման դեմ: Ապստամբությունը վերջանալուց հե-
տո, ինչպես պատմում է վիպագիր Մերենցը, զեյթունցիք դիմում-
ներ արեցին Կ. Պոլսի ռուսական, ֆրանսիական և անգլիական դես-
պաններին, բողոքելով թուրքական կառավարության դեմ: Անգլիա-
կան դեսպանն արհամարհանքով է ընդունել խնդրագիրը իրեն ներ-
կայացնողին և բացահայտ կերպով իր թշնամական վերաբերմունքն
արտահայտել զեյթունցիների նկատմամբ: Մերենցն այդ մասին
գրում էր. «Զեյթունցից վերոհիշյալ աղերսագիրը իրեն (դեսպա-
նին) մատուցանողը շատ դաժան և արհամարհոտ կերպով ընդունե-
ր էր, և աչք մը ձգելեն վերջը ըսեք էր զայրագին. «բայց դուք պետք է
գիտնաք, թե այդ ձեր անղգամ զեյթունցիք, այդ ավազակները շատ
վատ գործողություն ըրեք են և Ազիզ փաշան խորտակեք ու փա-
խուցեք են. ինչպե՞ս կհամարձակիք հիմա իրենց կողմեն ինձ աղեր-
սագիր բերել»²⁷⁰:

Անգլիական դեսպանն ավազակներ էր համարում իրենց ազա-
տագրության համար պայքարող հերոս զեյթունցիներին և իր
պաշտպանության տակ վերցնում թուրքական շարդարաբ Ազիզ փա-
շային: Այլևլի ռեակցիոն դիրք դժվար է երևակայել²⁷¹: Անգլիական
կառավարության այս դիրքը ցայտուն արտահայտություն գտավ
Կ. Պոլսի դեսպանության օրգան «Լեանտ Հերալդ» թերթի էջերում:
Թերթը 1862 թ. տպագրեց մի շարք հոդվածներ, որոնցում ամեն
կերպ վատաբանում էր զեյթունցիներին և արդարացնում թուրքա-

կան կառավարության ճնշումների ու հալածանքների քաղաքականությունը նրանց նկատմամբ: Իր ժամանակին «Լեւոնտ Հերալդի» դեմ բողոքի ձայն բարձրացրին մի շարք հայկական պարբերականներ, որոնց թվում և «Մեղուն», «Ծաղիկը», «Փարիզը» և այլն: Կեղծարար այդ թերթի դեմ մերկացնող տողեր գրեց հատկապես Կ. Պոլսի «Մեղուն», նշելով նրա տերերի ունակցիոն նպատակները²⁷²: Զմյուռնիայում հրատարակվող «Ծաղիկ» պարբերականը գրում էր. «...հայ ազգին վրա շարախոսություն ընելու համար գըլխարկը նետող սա «Լեւոնտ Հերալդ» լրագիրը չեմ գիտեր մարդկության, քաղաքակրթության, քրիստոնեության, կրթության և վերջապես խմբագրության որ օրենքով կամ սկզբունքով այս մոտերս ելեր և առանց ամչնալու այնպիսի անտեղի, անհիմն և կամ գոնե խիստ վարճուրեկ կերպով շարազանցյալ տեղեկություն մի հրատարակեր է Զեյթունի վրա, որ եթե մեր զարմանքը չի շարժե, յուր հայոց թշնամին լինելուն վրա ալ այլ տարակույս չի թողուր մըտքերնուս մեջ... Լեւոնտի թղթակիցը պարտ է գիտնալ, որ ինքը նախ բողոքովին տգետ է ղեյթունցոց վրա, երկրորդ թշնամի է հայոց և երրորդ ստախոս է... պարոն թղթակիցն հայոց թշնամի լինելը հաստատելու համար երկու խոսք խիստ բավական է. ան մարդը, որ կելլե և ղեյթունցոց կրածը նոցա վրա թողլով վանտը կը զրպարտե և կը շարախոսե և բերենե ելած ածականները և վատ արանց միմիայն վայել զրպարտությունները անոնց վրա կը տեղացնե՝ այնպիսի մեկը եթե հայոց թշնամի չէ հասպա ի՞նչ է...»²⁷³:

Անգլիայի թշնամական քաղաքականությունը հայ ժողովրդի ազատագրական շարժումների նկատմամբ այնքան բացահայտ էր, որ այդ մասին գրում էին նաև օտարերկրյա թերթերը: Այսպես, ֆրանսիական «Բեբա» թերթը Զեյթունի 1862 թ. ապստամբության կապակցությամբ գրում էր, թե սուլթանական կառավարությունը Կ. Պոլսի անգլիական դեսպանության հովանավորության հետեանքով է, որ ուժեղացրել է ճնշումները հայ ժողովրդի նկատմամբ²⁷⁴: Ֆրանսիական հրապարակախոս Ժիրարդենը մոտավորապես նույն միտքն էր արտահայտում²⁷⁵:

Անգլիայի և մյուս մեծ պետությունների թշնամական, խարդախ քաղաքականությունը հայ ժողովրդի, նրա ազատադրական շարժման նկատմամբ շարունակվեց նաև հաջորդ տասնամյակներում: Ստեղծվեց ահավոր վիճակ: Թուրքական շարժարարների հայացին, սև գործը, մեծ պետությունների խարդախ քաղաքականությունը կործանման եզրին հասցրին հայ ժողովրդին: Արևմտահայ-

յությունը մասսայական կոտորածների ենթարկվեց, նրա բեկորներն ընկան օտարության մեջ, ցրվեցին աշխարհով մեկ:

Պատմության դժվարին քառուղիներով անցած բազմաշարժար հայ ժողովուրդը իր փրկության հանգրվանը հասավ միայն այն ժամանակ, երբ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր, որտեղ եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում, ոուս ժողովրդի օգնության պայմաններում անհետ չբացավ այն արյունոտ դամոկլյան սուրը, որ դարեր շարունակ կախված էր հայ ժողովրդի գլխին: Սովետական կարգերը մեր ժողովրդին բերեցին ազգային վերածնություն և խաղաղ ու ստեղծագործ աշխատանք, որին մասնակցում են ոչ միայն արևելահայերը, այլև թուրքական յաթաղանից փրկված ու հայրենիք վերադարձած արևմտահայերը, այդ թվում և շատ ղեյթունցիներ:

Նշելով այսօր Զեյթունի 1862 թ. հերոսամարտի 100-ամյակը, մենք հպարտությամբ և խոր հարգանքով ենք հիշում արի ղեյթունցիներին և մեր բոլոր այն նախնիներին, որոնք հերոսական պայքար են մղել իրենց ազատության և անկախության համար:

ЗЕЙТУНСКОЕ ВОССТАНИЕ 1862 ГОДА

Резюме

Зейтунское восстание 1862 г., столетие которого исполнилось в августе текущего года, является одной из славных страниц в истории армянского национально-освободительного движения. Направленное против турецкого деспотизма, оно нашло горячий отклик в широких слоях армянского народа и оставило заметные следы в его политической жизни. В подготовке этого общенародного вооруженного выступления принимал участие ряд представителей армянской демократической интеллигенции. Восстание зейтунцев, с беспримерной храбростью и самоотверженностью сражавшихся против чужеземных поработителей, окончилось победой: мужественным горцам из Тавра удалось разгромить турецкую армию, осадившую Зейтун и стремившуюся истребить его население. Героическая эпопея в Зейтуне имела большое влияние на дальнейшее развитие национально-освободительного движения в Западной Армении.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ
ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԼՈՒՍԱՔԱՆՈՒԹՅԱՄԲ

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1861—1865 թթ. տեղի ունեցած քաղաքացիական պատերազմը, որի 100-ամյակը լրանում է ընթացիկ տարվա (1961 թ.) ապրիլին, բոստ էություն, բուրժուազեմոկրատական հեղափոխություն էր²⁷⁶։ Կ. Մարքսը դեռևս 1861 թ. գրել է, որ այդ պատերազմը ոչ այլ ինչ է, եթե ոչ սոցիալական երկու սիստեմների՝ ստրկատիրության և ազատ աշխատանքի սիստեմների պայքար²⁷⁷։

Քաղաքացիական պատերազմում առաջադեմ ուժերի տարած հաղթանակը հանգեցրեց լուրջ փոփոխությունների երկրի սոցիալատեսական և քաղաքական կյանքում։ Հաղթանակած հեղափոխության հետևանքով իշխանությունն Ամերիկայի Միացյալ Նահանգներում պլանտատոր-ստրկատերերի ձեռքից անցավ արդյունաբերական բուրժուազիայի ձեռքը, վերացվեց ստրկատիրությունը, ազրարային հարցը հիմնականում պրոգրեսիվ լուծում ստացավ։ զգալիորեն ուժեղացավ կապիտալիզմի զարգացումը արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ։ «Քաղաքացիական պատերազմը, որ տևեց չորս տարի և վերջ դրեց անվազն մեկ միլիոն զինվորների ու խաղաղ քաղաքացիների կյանքին, ամենամեծ պատերազմն էր, որ երբևէ մղվել էր Նոր աշխարհում... Պատերազմն ամբապնդեց բուրժուազիայի տնտեսական և քաղաքական գերբերը, բայց և միաժամանակ, ինչպես նշել են Մարքսն ու Էնգելսը քաղաքացիական պատերազմի մասին իրենց աշխատություններում, այն վերացրեց ստրկությունը՝ բանվոր դասակարգի զարգացմանը խանգարեց պատմական գլխավոր խոչընդոտներից մեկը»²⁷⁸։

Ճիշտ է, 1861—1865 թթ. բուրժուազեմոկրատական հեղափոխության ոչ բոլոր խնդիրները լուծվեցին արմատականորեն։ Մի շարք հարցեր, ինչպես, օրինակ, նեգրերի հարցը, մնաց չլուծված։ Սակայն, չնայած դրան, քաղաքացիական պատերազմը հսկայական պատմական նշանակություն ունեցող հեղափոխական ակա հանդիսացավ, այն նոր էջ բացեց ԱՄՆ-ի պատմության մեջ։ Ավել-

ին, այդ պատերազմը առաջադիմական մեծ նշանակություն ունեցավ արտասահմանյան մի շարք երկրների ու առաջին հերթին Ամերիկայի մյուս ժողովուրդների համար։ Վ. Ի. Լենինը 1918 թ. ամերիկյան բանվորներին ուղղած իր նամակում ընդգծում էր ԱՄՆ-ի քաղաքացիական պատերազմի համաշխարհային-պատմական, առաջադիմական և հեղափոխական նշանակությունը²⁷⁹։

Ամերիկյան հեղափոխության հաղթանակի գործում վճռական դեր կատարեցին բանվորները, մանր ֆերմերները և նեգրերը։ Հըսկայական են «Ամերիկայի մեծ քաղաքացու»՝ Աբրահամ Լինկոլնի ծառայությունները։ Հուշակալոր պրեզիդենտի գործունեության մեջ քիչ չեն հակասություններն ու անհետևողականությունը, բայց, չնայած դրան, Մարքսը Լինկոլնի մասին գրել է. «...դա մի մարդ էր, որին չէին կարող ընկճել ձախորդությունները և արբեցնել հաշտությունները, որը անշեղորեն ձգտում էր դեպի իր մեծ նպատակը, այն երբեք չէր արատավորում կույր շտապողականությամբ, հանգիստ չափավորում էր իր արարքները, երբեք ետ չէր դառնում, չէր հրապուրվում ժողովրդական համակրանքի ալիքով, հոգեպես չէր ընկճվում ժողովրդի երակազարկի թուլացման ժամանակ, գործողությունների խստությունը մեղմացնում էր բարի սրտի ջերմությամբ, կրքերով մոռալված իրադարձությունները լուսավորում էր հումորի ժպիտով, իր տիտանական աշխատանքը կատարում էր այնպիսի համեստությամբ և պարզությամբ, ինչպիսի ճոխություններ, փքունությամբ ու հանդիսավորությամբ են կատարում իրենց շնչին գործերը աստծո ողորմությամբ կառավարողները. մի խոսքով, նա այն հազվադեպ մարդկանցից էր, որոնք հասնելով վեհության, պահպանում են իրենց դրական հատկությունները։ Եվ այդ արտատավոր ու լավ մարդու համեստությունն այնպիսին էր, որ աշխարհը հանձին նրա տեսավ հերոսի միայն այն բանից հետո, երբ նա ընկավ որպես նահատակ»²⁸⁰։

Քաղաքացիական պատերազմն ԱՄՆ-ում լայն արձագանք գրտավ Եվրոպայի ու Ասիայի շատ երկրներում։ Հասկանալի է, որ Ամերիկայում կատարվող հեղափոխական իրադարձությունների նկատմամբ տարբեր դասակարգեր տարբեր դիրք էին բռնում։ Եթե Անգլիայի կառավարող շրջաններն ամեն կերպ պաշտպանում էին Հարավային նահանգների ստրկատերերին և փորձում էին ուսումնական ինտերվենցիա կազմակերպել, ապա անգլիական պրոլետարիատը հանդես էր գալիս ի պաշտպանություն Հյուսիսային նա-

հանգնեցրի, ժողովրդական մասսաների, որոնք զինված պայքար էին վարում ստրկության դեմ:

Ամերիկյան ժողովրդի զինված պայքարը վճռականորեն պաշտպանում էին գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը: Ուշադիր հետևելով քաղաքացիական պատերազմի ղեպքերին, նրանք առաջինը բացահայտեցին կատարվող անցքերի էությունն ու պատմական նշանակությունը: Այդ պատերազմն անկեղծ ուրախություն և ոգևորություն առաջ բերեց նաև ժամանակի առաջադիմական, ուսուցիչուն-դեմոկրատական շրջաններում: Հայտնի է, որ ուսուցիչուն-դեմոկրատներ Ն. Գ. Չերնիշևսկին, Ն. Ա. Դոբրոլյուբովը, Ա. Ի. Գերցենը և մյուսները ջերմորեն էին ողջունում ամերիկյան ժողովրդի արդարացի պայքարը և այրող ատելություններ էին խոսում ստրկատեր-պլանտատորների մասին:

Ստրկության դեմ մղվող պայքարի մասին խոր համակրանքով է արտահայտվել նաև հայ ուսուցիչուն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը²⁸¹: Բարձր գնահատելով Հյուսիսային նահանգների նպատակները և ընդգծելով, որ ծավալված պայքարի գլխավոր պատճառը ստրկության հարցն է, նա միաժամանակ նշում էր, որ անզիջական կռուվարությունը պաշտպանում է Հարավի ստրկատերերին:

«Հյուսիսային Ամերիկան,— գրում էր Նալբանդյանը 1862 թ.,— Հարավային Ամերիկայի միջից ստրկությունը վերացնելու համար, ուրեմն ազատության անունով, պատերազմ բացեց հարավային մասի դեմ. քանզի այս մասը չէ հոժարում վերցնել յուր միջից մարդկության նախատինքը, մարդավաճառ ստրկությունը: Այն ո՛ր սիրտն է, որ համակրություն չունի ղեպի Հյուսիսային Ամերիկայի այս դուրացական անձնազոհությունը, ո՛ր խղճմտանքն է, որ հաշտ կարող է մնալ Հարավային Ամերիկայի մինչև այժմ բռնած ընթացքի հետ:

Բայց նայելով այս բոլորի վերա, քիչ մնաց, որ Անգլիան պատերազմ հայտնե Հյուսիսային Ամերիկային. և թե շհայտնեց, ապա ուրեմն ակամա, քանզի հաղթությունը, որ տանում են այժմ հյուսիսայինը հարավայնոց վերա, շատ և շատ ծանրանում են Անգլիո սրտին:

Անգլիան ուրախ էր, մինչ, սորանից մի քանի ամիս հառաջ, հարված հարվածի քամակից ընդունում էր Հյուսիսային Ամերիկան»²⁸²:

Պատերազմական գործողություններին մասնակցում էին

շատ օտարերկրացիներ: Հյուսիսային նահանգների զորքերի շարքերում ստրկատերերի դեմ կռվում էին վտարանդիները՝ Գերմանիայից, Լեհաստանից, Ռուսաստանից և այլ երկրներից: Այսպես, Ա. Ի. Գերցենի ծանոթներից մեկը՝ Ի. Վ. Տուրչանինովը (1822—1901) գլխավորում էր Իլինոյսի կամավորների 19-րդ գունդը և հետագայում, մի քանի ռազմական օպերացիաների հաջող ղեկավարման համար, ստացավ բրիգադային գեներալի աստիճան²⁸³:

Հեղափոխական է, որ 1861—1865 թթ. քաղաքացիական պատերազմին մասնակցել են նաև հայեր²⁸⁴: Նրանցից ոմանք, որպես կամավորներ ընդունվեցին հյուսիսային բանակի շարքերը, իսկ մյուսները՝ բժիշկներ Սիմեոն Մինասյանը, Գալստյանը և Պարոնիկ Մաթևոսյանը ծառայում էին Ֆիլադելֆիայի զինվորական հիվանդանոցներում²⁸⁵:

Քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում ժամանակին լայնորեն լուսաբանվել է ինչպես ամերիկյան, այնպես էլ արևմտահվրոպական պարբերական մամուլում: Ամերիկյան հեղափոխություն մասին քիչ չեն գրել նաև ուսուսական շատ թերթեր ու ամսագրեր:

Ի՞նչ դիրք է գրավել ժամանակի հայ պարբերական մամուլը, ինչպես էր այն գնահատում ու լուսաբանում ԱՄՆ-ում 1861—1865 թթ. տեղի ունեցող պատմական իրադարձությունները:

Նախ պետք է նշել, որ քաղաքացիական պատերազմի մասին իր ժամանակի հայկական թերթերի ու ամսագրերի մի մասը լուսվում պահպանեց, հավանաբար չցանկանալով դուրս գալ «ազգային խնդիրների» սահմաններից: Այդպիսիներից էին, որքան էլ դա տառափոխակ լինի, «Հյուսիսափայլ», «Մեղու», «Կոտնիկ Հայոց աշխարհի», «Ծաղիկ», «Ժամանակ» և այլ հանդեսները:

Սակայն հայ պարբերական մամուլի մի շարք օրգաններ 1861—1865 թթ. աշխուժորեն արձագանքում էին Ամերիկայի քաղաքացիական պատերազմին և աշխատում իրենց ընթերցողներին անհրաժեշտ տեղեկություններ հաղորդել այդ մասին: Պատկանելով տարբեր ուղղությունների, նրանք, իհարկե, տարբեր մոտեցում ունեին կատարվող անցքերի նկատմամբ և միևնույն հաջողությամբ չէին կատարում իրենց խնդիրը:

Ամերիկայի քաղաքացիական պատերազմի մասին տեղեկություններ հաղորդող հայկական պարբերականներից մեկը «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթն էր (Թիֆլիս, խմբագիր՝ Ստեփանոս

քահանա Մանդինյանց, այնուհետև՝ Պետրոս Սիմոնյանց): Նյու-թեր քաղելով գլխավորապես ռուսական և անգլիական թերթերից, պարբերականն իր էջերում հաղորդումներ էր ղեկավարում պատերազմական գործողությունների ընթացքի և ԱՄՆ-ի տնտեսական ու քաղաքական կյանքի մասին, տպագրում հոդվածներ ու քաղաքական տեսություններ, որոնցում փորձեր էին արվում բացահայտելու ամերիկյան հեղափոխության էությունն ու նշանակությունը, ցույց տալու եվրոպական տերությունների, մասնավորապես Անգլիայի ու Ֆրանսիայի դիրքը ԱՄՆ-ի նկատմամբ և այլն: Հանդեսում տեղ են գտել նաև մի շարք ակնարկներ ԱՄՆ-ում խոշոր պետական գործիչների, նեգր-ստրուկների և այլ հարցերի մասին: Այսպես, դեռևս 1859 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համարներում տրպագրված է ընդարձակ հոդված (Թարգմանություն ֆրանսերենից) Բենիամին Ֆրանկլինի մասին: 1864 թ. մայիսի 23-ի համարում ղեկավարված է հոդված Ամերիկայում երեխաների առևանգման վերաբերյալ, 1866 թ. դեկտեմբերի 10-ի համարում՝ նեգր-ստրուկուհու վիճակի մասին (Թարգմանություն ռուսերենից) և այլն:

Ամերիկայի քաղաքացիական կռիվների վերաբերյալ տեղեկությունները հանդեսը տպագրում էր մեծ մասամբ առանց մեկնաբանությունների: Ահա, օրինակ, ինչպես էր նա հայտնում իր ընթերցողներին 1864 թ. գարնանը ԱՄՆ-ում տեղի ունեցող ռազմական գործողությունների մասին. «Նորերումս Հյուսիսային և Հարավային ամերիկացիների մեջ շուրջ մեծ պատերազմ է եղել: Նրանցից առաջինը տեղի է ունեցել ապրիլի 23-ին (մայիսի 5-ին), երկրորդը՝ ապրիլի 24-ին (մայիսի 6-ին): Հյուսիսային զորքերի հրամանատարն է Քրանտ զորապետը, Հարավայիններինը՝ Լի: Հաղթությունը անորոշ մնաց և երկու կողմից էլ շատ մարդ ջարդվեցավ: Նյու Յորքից հետևյալ տեղեկությունները տալիս են երկու կողմի նշանավոր կորուստի վրա: «Լի զորապետի զորքերից, ինչպես երեվում է, պատերազմի մեջ ընկան 8000 մարդ և 20000-ի շուրջ վիրավորվեցան: Պատերազմից հետո Լի քառասունը ութը ժամ դիմադարում խնդրեց, որ մեռելներին թաղե. բայց Քրանտը մերժեց, ասելով թե՛ ինքը մեռելներին թաղելու ժամանակ շունի: Այս պատերազմների մեջ ամբողջ գնդեր ոչնչացան: Նյու Յորքի Իններորդ գնդում, որ 600 մարդից էր բաղկանում, այժմ մնացել է միայն 40 հարյուրապետ և 15 զինվոր: 13-րդ գունդը 700 զորքից 620 մարդ է կորցրել: Րոբինզոնի խումբը գրեթե բոլորովին փրացավ և ուրիշ

շատ գնդեր վնասվեցան: Յոթը նշանավոր զորավարներ ընկան պատերազմի դաշտը...»²⁸⁶:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում «Մեղու Հայաստանիում» տպագրված այն հոդվածները, որոնցում խորհրդածություններ են արվում Ամերիկայի քաղաքացիական պատերազմի մասին և փորձ կատարվում գնահատելու տեղի ունեցող անցքերը: Շաբաթաթերթի դեռևս 1861 թ. նոյեմբերի 4-ի համարում ղեկավարված Ա. Ե. Սանահնեցու «Ամերիկայի ներկան և ապագան» հոդվածում կարդում ենք. «...Հարավային նահանգները շատ ունենալով իրանց ձեռքի տակ ճորտեր կամենում են, որ ճորտերը շաղատվեն և միևնույն ժամանակ ուզում են սկսել ազատ ծովային առուտուր (առանց մաքս պահանջելու). նոքա ցանկանում են իրանց նավահանգիստները բաց անել ամեն կերպ վաճառականների նավերի համար և էնդրով Հյուսիսային նահանգների վաճառականությանը վնաս հասցնել: Իսկ Հյուսիսային նահանգները իրանց կողմից գերիք վաճառելը կամենում են վերջացնել, բայց իրանց վաճառականական օգուտը պահպանելով փակում են իրանց նավահանգիստները ալյազգի նավերի համար: Էստեղ բարիշացնել Հյուսիսային նահանգներն հարավայինների հետ ամենևին չի կարելի, որովհետև ոչ առաջինը իրանց պահանջումներներից և ոչ ետինքը իրանց պահանջումներներից ձեռք չեն վեր առնելու: Իհարկև պատերազմը էստեղ անշուշտ պետք է սկսվեր: Բայց թե ինչ օգուտ պետք է դուրս գա էդ ազգային և ժողովրդական պատերազմից: Մի հայտնի ճշմարտություն է, որ հյուսիսայինքը հաղթող կհանդիսանան հարավայինքը վրա, որովհետև հյուսիսայինքը թե զորքով թե փողով և կամ մտավոր զորությունը ուժեղ են քան թե հարավայինքը: Հայտնի է նմանապես, որ պատերազմը շուտ չէ վերջանալու և թե վերջը երկու պատերազմող կողմերն էլ պետք է թուլանան»²⁸⁷:

Խոսելով ԱՄՆ-ի քաղաքացիական պատերազմի պատճառների մասին, հոդվածագիրը նկատում էր. «Միացյալ Նահանգները իրանց 77 տարվա դրությունից հետո հիմա բաժանված պատերազմում են իրանց մեջ. և պատճառը գերելու առևտուրն է: Ամերիկայի պատերազմը վերջինն է պատմության մեջ, որ ճորտերն ու գերիքը իրանց անկախությունը ձեռք բերելու համար զոհ են լինում: Մի այսպիսի գործ արժան էր տեսնել էն հին բարբարոսական դարերում և ոչ թե այս 19-րդ դարումը և էն էլ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պես լուսավորյալ երկրումը: Այդտեղ մենք տեսնում ենք անզուսակական ազգի սերունդներին պես... աշխատում են սաղ

երկրագունդը իրանց ձեռքը գցել: Մյուս կողմից մենք տեսնում ենք սևամորթ ճնշված ու լծի տակ ընկած սաղ ազգ, որը որ մարդ գոյով իրա նման մարդի ձեռքին անասնի տեղ է համարվում: Պետք է ասել, որ հենց նահանգների հիմնադիր Վաշինգտոնն էլ միտք ունեւր ազատել գերիններին, այնուհետև նահանգների երեսի պատմաբանական անձինք միշտ աշխատել են հիշյալ միտքը զլուխ բերել»²⁸⁸:

Անդրադառնալով նույն հարցին, «Մեզու Հայաստանին» 1864 թ. ընդգծում էր, որ «ազատության կատարյալ գաղափարը պատճառ դառավ այն արյունահեղ պատերազմին հիշյալ նահանգների մեջ, որն որ մինչև ցայժմ էլ շարունակվում է»²⁸⁹:

Ինչպես 1861 թ., այնպես էլ հետագա տարիներին «Մեզու Հայաստանին» պաշտպանում էր Հյուսիսային նահանգներին, և նրանց ցանկութունը՝ վերացնել ստրկութունը, համարում էր «ազնիվ նպատակ»: 1866 թ. հունվարի 15-ի համարում տպագրված «քաղաքական տեսության» մեջ նորից այդ միտքը դարգացնելով, շաբաթաթերթը ավելացնում էր, որ 1865 թ. մարդկության պատմության մեջ նշանավոր եղավ ստրկության վերացումսը²⁹⁰:

Ամերիկայի քաղաքացիական կռվի մասին մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել Կ. Պոլսի «Մասիս» շաբաթաթերթում (խմբագիր՝ Կ. Ս. Յուստույան): Հանդեսի «քաղաքական» բաժնում պարբերաբար հաղորդագրություններ են տպվել մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ: Ահա մի քանի օրինակ այդ հաղորդագրություններից: 1862 թ. մարտի սկզբներին «Մասիսը» գրում էր. «Ամերիկայեն եկած վերջին լուրերը կը ծանուցանեն թե հյուսիսային ամերիկացիները նոր և մեծ հաջողություններ ձեռք բերել են հարավայնոց դեմ: Այս վերջինները քանի մը պատերազմներու մեջ հաղթվելով Քոլումպիսի գավառեն քաշվելու ստիպվել են: Ծովու վրա ալ մեծ պատերազմ մը եղեր՝ հարավայնոց նավատորմիը շարաշար հաղթվել ու բնաջինջ եղեր է. երկու կողմանե հազարեն ավելի մարդ ջարդվել կամ վիրավորել են և երեք հազար հարավայինը գերի ինկեր են: Ելիզաբեթ-Սիթի քաղաքը մոխիր եղել է, և հիմա հյուսիսայինները հարավայնոց Նորֆոլք քաղաքին վրա կը քալեն եղեր»²⁹¹:

Թերթի 1863 թ. հուլիսի 13-ի համարում կարդում ենք. «Ամերիկայեն եկած վերջին լուրերը կը ծանուցանեն թե հունիս 19-ին հյուսիսականաց և հարավայնոց մեջ մեծ պատերազմ մը եղել է, որ երեք օր շարունակել է և վերջապես հարավայինը հաղթվել են:

Նրկու կողման կորուստն էլ մեծ է. հարավայինը 30 000, իսկ հյուսիսայինը 20 000 մեռյալ ունին եղեր... Հարավայնոց Վիքսպուրկ քաղաքը պակասութենեն անձնատուր եղեր է հյուսիսականաց և 18 000 հոգի գերի ինկեր են: Հարավայինը պատգամավորներ զըրկեր են հյուսիսականաց կինկոյն նախագահին, բայց նախագահը չէ ընդունել զանոնը»²⁹²:

1863 թ. հոկտեմբերին ուսական մի քանի ռազմանավեր, ի նշան իբենց համակրանքի դեպի Հյուսիսային նահանգները, խարխախ գցեցին Նյու Յորքի նավահանգստում: Ամերիկացիները մեծ ոգեվորությամբ ու ջերմությամբ ընդունեցին ուս նավաստիներին: Այս փաստի մասին «Մասիսը» հաղորդում էր. «Նյու-Յորքեն եկած վերջին լուրերուն մեջ ամենեն կարևոր և ուշադրության արժանի է Ռուսաց նավախումբի մը հոն հասնիլը, որուն համար ամերիկացիք ուրախության տոն կատարել են: Արդեն չորս ուսական պատերազմի նավ մտեր են Նյու Յորքի նավահանգիստը և հինգ ալ կսպասվին եղեր»²⁹³:

«Մասիսը» լայնորեն տեղեկություններ էր քաղում ամերիկայան, անգլիական և ֆրանսիական մամուլից, ինչպես նաև Վիեննայի «Պրես» թերթից, որտեղ, ինչպես հայտնի է, Կ. Մարքսը բազմաթիվ հոդվածներ հրատարակեց Միացյալ Նահանգների քաղաքացիական պատերազմի վերաբերյալ: Թերթը քաղվածորեն տպում էր նաև նշանավոր մարդկանց կարծիքները ամերիկյան իրադրությունների մասին: Այսպես, շաբաթաթերթի 1862 թ. փետրվարի 10-ի համարում տպագրված է Վիկտոր Հյուգոյի կարծիքը, որտեղ, ի միջի այլոց, ասված է. «Գերության շնչվիլը այսօրվա օրաբանախոհաց գերագույն նպատակն է... Գերութունը վերք մըն է Ամերիկայի դեռահասակ հասարակապետության երեսին վրա»²⁹⁴:

Ժամանակին շատ է խոսվել այն մասին, թե ինչպես ԱՄՆ-ի քաղաքացիական պատերազմի պատճառով Անգլիան ու Յրանսիան չեն ստանում բամբակ, որի հետևանքով փակվում են գործվածքեղենի բազմաթիվ գործարաններ և առաջ է գալիս գործազրկություն, բանվորները ընկնում են նյութական խիստ ծանր կացության մեջ: Անդրադառնալով իր ժամանակի այս հուզող հարցին, «Մասիսը» գրում էր. «Ամերիկայի Միացյալ Նահանգաց մեջ ծագած համառ և կատաղի պատերազմին երեսեն Գաղիո և Անգլիո մեջ բամբակեղենի գործարաններու գոցվիլն ու անթիվ գործավորներու առանց հացի հետին թշվառության մեջ տվյալիլը երկու տերությանց ալ մեծ մտմտուր պատճառած է, մասնավանդ Անգլիո, ուր ութսուն հազար

ընտանիք բամբակագործությանը կապերին: Արդեն այս թշվառ արարածներն անոթի շարդվելիս ազատելու համար Անգղիո մեջ ինչպիսիք բարեգործական ընկերությանց սնտուկներն պարզվեցան և խնայության դանձարաններուն մեջ ստակ շմնաց: Սակայն թշվառությունն օր քան զօր կավելանա և Ամերիկայի պատերազմին ալ շուտով վերջանալուն հույս չերևիր: Ի՞նչ պիտի ընեն, ինչպե՞ս պիտի ապրին այսքան հաղարավոր ընտանիք.—ամեն մարդ այս կը հարցնեն իրարու և վտանգին մեծությունը նկատելով կը սոսկան»²⁹⁵:

Միացյալ Նահանգների քաղաքական կյանքի ամենախոշոր իրադարձություններից մեկը 1864 թ. նոյեմբերի 8-ի պրեզիդենտական ընտրությունն էր, երբ, ինչպես հայտնի է, երկրորդ անգամ պրեզիդենտ ընտրվեց Աբրահամ Լինկոլնը: Այդ կապացույցությամբ թերթը հետևյալ խորհրդածություններն էր անում. «Ամերիկայի եղբայրասպան պատերազմը տակավին միևնույն կատաղությունը կը շարունակվի՝ ինչպես անցյալ տարի, և հետզհետե երևան եկած դեպքերը հաշտության ակնկալությունները խաբեցին: Նախագահի ընտրությունը կատարվեցավ ի նպաստ պ. Լինկոլնի: Այս մեծ պարագայիս մեջ հյուսիսային նահանգները զարմանալի հաստատամտության և միաբանության օրինակ մը ցույց տվին բոլոր աշխարհի: Եվրոպայի մեջ շատերը կը կարծեին թե պ. Լինկոլն իր համարումը կորուսած է այսպիսի ահռելի պատերազմի մը սկզբընապատճառ ըլլալուն համար, և թե իր տեղն ավելի չափավոր մեկը պիտի նստի, և հետևաբար, հաշտության բանակցություններն անմիջապես պիտի սկսին: Սակայն, քվեից բաղմամբով վկայությունը ցույց տվավ, որ հյուսիսայինը դյուրությունը կը կրեն այս մեծ պատերազմին բոլոր աղետները, և չեն ուզեր երբեք թույլ տալ, որ իրենց ազգին առջև նախանձորդ հասարակապետություն մ'ալ հաստատվի»²⁹⁶:

Այս տողերը գրելուց մոտ մեկ ամիս անց շաբաթաթերթը արդեն շէր կասկածում, որ հաղթությունը հյուսիսայինների կողմն է: Փետրվարի սկզբներին նա հայտնում է. «Ամերիկայի մեծ հյուսիսայինոց դատը գրեթե վաստակվելու մոտ է, և հետզհետե եկած լուրերն հարավայինացոց ըրած նորանոր կորուստը կը ծանուցանեն»²⁹⁷:

«Մասիսը» դրականորեն էր արտահայտվում Աբրահամ Լինկոլնի գործունեության մասին: Հռչակավոր պրեզիդենտի սպանության առիթով թերթը գրում էր. «Պ. Լինքոլն իր զարմանալի հաստատամտությամբը և իր անբիժ ուղղությամբն Ամերիկայի ժո-

ղովրդյան սիրտը գրաված էր, և ինքն եղած էր որ նույն իսկ հյուսիսայինոց զենքերուն ձախորդության ժամանակներն՝ առանց հուսահատության ճիկ մը հանելու՝ իր գործն աննկուն հաստատամտությամբ հառաչ տարած էր: Ոչ ոք կարող էր իր տեղը լցնելու, և այս էր պատճառը, որ գրեթե միահաղույն քվեարկությամբ դարձյալ իր պաշտոնին մեջ հաստատվեցավ»²⁹⁸:

Պետք է նկատել, որ շաբաթաթերթին ընդհանուր առմամբ ժըլատ էր իր գնահատականների մեջ և աշխատում էր «անկողմնակալ ակնատեսի» դիրքերից շարադրել քաղաքացիական պատերազմի և նրա հետ կապված դեպքերի ընթացքը:

Ձմյուռնիայում հրատարակվող «Արշալույս Արարատյան» երկշաբաթաթերթը (խմբագիր՝ Դուկաս Գ. Պալատազարյան) նույնպես աշխատել է լուսաբանել Միացյալ Նահանգներում կատարվող անցքերը և նրանց մասին տեղեկություններ հաղորդել իր ընթերցողներին: Թերթի գրեթե բոլոր համարներում զետեղված են հաղորդագրություններ քաղաքացիական պատերազմի ընթացքի և երկրում տեղի ունեցող մյուս կարևոր իրադարձությունների վերաբերյալ: Նրա էջերում այդ նույն հարցերի մասին հաճախ թարգմանաբար տպագրվել են հոդվածներ անգլիական ու ֆրանսիական թերթերից և մասնավորապես Լոնդոնի «Թայմսից» ու «Մորնինգ Պոստից»:

Միացյալ Նահանգներում տեղի ունեցող ռազմական գործողությունների մասին հաղորդագրություններ զետեղելուց բացի հանդեսը փորձում էր լուսաբանել և գնահատական տալ կատարվող անցքերին: Քաղաքացիական պատերազմը նա համարում է «ղժժբախտ և ցավալի» երևույթ, դատափետում բոլոր նրանց, ովքեր ցանկանում են շարունակել այն ու չեն ուզում համաձայնության գալ և՛ հաշտություն կնքել: Գտնելով, որ Աբրահամ Լինկոլնը դեմ է հաշտության դադարարին, թերթը բացասաբար է արտահայտվում հռչակավոր պրեզիդենտի մասին: «Յուր նպատակը հառաչ տանելու համար Լինկոլն նախագահը կոնթաց է այն զորավոր կուսակցության վերա, որ պատերազմին սաստկությամբ շարունակվիլը կուզե և ամենևին ականջ չկախեր բարեկամական կարգադրության և հաշտության առաջարկությանց: Այս կերպիվ մասնավոր օգուտները և զահասիրությունները մեծ վնաս կպատճառեն ընդհանուր օգտից, անվերջանալի պահելով այս համազգային ղժբախտ ու ցավալի պատերազմը»²⁹⁹:

Նույն դիրքերից էր ելնում թերթը, երբ հետևյալ դատողություններն էր անում. «Ամերիկային հասած լուրերը կծանուցանեն,

թե Հյուսիսային Միացյալ Նահանգացի զահերեց միտքը կինկոլն 400 հազար քվեից առավելությամբ վերահաստատվեցավ իր նախագահական բարձր պաշտոնին մեջ, հետևաբար հաշտության հույսը առայժմ բոլորովին անհետ եղավ, վասնզի հայտնի է, որ միտքը կինկոլն պատերազմի շարունակությունը կուզե ամենայն զորություններ, մինչև որ հարավային նահանգները պարտավորվին միությունը ընդունելու: Սակայն հարավը ամենևին չուզեր միանալ հյուսիսայնոց հետ և յուր գերիները զինվոր կզրե այն պայմանով, որ եթե ժամանակ մը ծառայելու ըլլան, իրենց ազատությունը ստանան: Չեմք գիտեր թե այս կերպով հարավայինը բավական զորություն պիտի ստանան, որպեսզի կարող ըլլան հյուսիսայնոց վերա որոշել հաղթություն մը ընելու: Հասարականորեն շխարհվիր, բայց ցավալին այն է, որ հարավայնոց այս եղանակով քիչ մը զորանալը պատճառ պիտի ըլլա պատերազմին երկար ժամանակ դիմանալուն»³⁰⁰:

Հավատարիմ իր այն տեսակետին, թե քաղաքացիական պատերազմը վնասակար ու կործանարար է, «Արշալույս Արարատյանը» մի այլ կապակցությամբ գրում էր. «Ամերիկայի մեջ համազգային պատերազմը կը շարունակվի հյուսիսային և հարավային դաշնակցությանց մեջ, և մինչև ցայսօր տակավին որոշիչ հաղթություն մի տեղի չունեցավ ո՛չ մեկ կողմեն և ո՛չ մյուս կողմեն: Գաղիո տերությունը բրած խաղաղասիրական առաջարկության ի՛նչ ազդեցություն ընելը և ի՛նչ վախճան ունենալը դեռ հայտնի չէ: Այսուամենայնիվ հաջող վախճան մի չկրնար հուսացվիլ, վասնզի երկու ընդդիմամարտ կողմանց գրգռությունը, դժբախտաբար, երթալով կավելնա ու զինվորական զորությունն ալ գրեթե հավասար է թե՛ հյուսիսային և թե՛ հարավային կողմը: Ուստի այս պատճառով է, որ պատերազմը կերկարի ի կործանումն համազգային ժողովրդոց և ի մեծ վնաս բոլոր աշխարհի»³⁰¹:

Թերթը իր էջերում զետեղել է մանրամասն տեղեկություններ 1864 թ. պրեզիդենտական ընտրությունների մասին: Միացյալ Նահանգների երկու քաղաքական պարտիաների ընտրական ծրագրերը նա հետևյալ կերպ էր պատկերում. «Հասարակապետության նոր նախագահին ընտրությունը վրայոք ծանր երկպառակություն կա Ամերիկայի հյուսիսային նահանգացի մեջ: Ռամկապետական (դեմոկրատական—Մ. Ն.) կուսակցությունը, որ զորավոր է ու օրըստօրե զորանալու վրա է, Մաք-Քլեյնն զորապետը ընտրեցին իբրև ապանի նախագահ հասարակապետության: Այս կուսակցությունը կփափարի, որ հաշտությունը օր առաջ ի գործ գրվի և հետևաբար

խաղաղության պաշտպան հռչակված է. սակայն կպահանջե, որ Հարավը Հյուսիսին հետ միավորվելով հաշտություն ըլլա... Հասարակապետական (հանրապետական—Մ. Ն.) կուսակցությունը, որուն հետ են զինվորականները, կուզեն, որ այժմյան կինկոլն նախագահն վերստին ընտրվի: Այս կուսակցությունը, որ պատերազմասեր համարված է և քիչ ազդեցություն չունի, ըստ որում իշխանությունը յուր ձեռքն է այժմ, ամենևին չուզեր որ որևէ կերպով զիջում մի ընել հաշտությունը ձեռք բերելու համար, այլ կպահանջե, որ պատերազմը ամենայն սաստկությամբ հառաջ երթա, մինչև որ հարավային նահանգները հաղթվին և պարտավորվին գերությունը ջնջել ու առաջվան պես միավորվիլ հյուսիսայնոց հետ»³⁰²:

Չմշտունիայում հրատարակվող հայկական պարբերականը հաճախ կրկնում էր անգլիական ու ֆրանսիական հետադեմ թերթերի հորինած, իրականությունը չհամապատասխանող լուրերն ու մըտքերը: Բնորոշ է այդ տեսակետից այն, որ հակառակ փաստերին, հակառակ այն բանին, որ ակնհայտ էր Անգլիայի ու Ֆրանսիայի թշնամական դիրքը Միացյալ Նահանգների նկատմամբ, նա գրում էր, թե Անգլիան ու Ֆրանսիան իբր չեզոք դիրք են բռնել և չեն ցանկանում խառնվել Միացյալ Նահանգների ներքին գործերին՝ քաղաքացիական պատերազմին: «Գաղիան, սր շատ ժամանակ չկա փորձ մի փորձեց բարեկամական միջնորդություն մը ընելու ի նրպատ հաշտության և չ'աջողեցավ, այժմ կամա ակամա բոլորովին հեռու կմնա այսպիսի ընթացքե մի: Անգլիան նմանապես կուզե մեծ ճշտությամբ հաստատուն պահել յուր չեզոքությունը և ամենևին չվշտացնել Հյուսիսային Միացյալ Նահանգացի կառավարությունը, ինչպես հայտնապես զրուցեց Մեծին Բրիտանյո արտաքին գործոց տեսուչ լորտ ձո՛նն Ռասել՝ մոտերս բրած հրապարակական ատենախոսության մը մեջ»³⁰³:

Անգլիական նույն թերթերին էր կրկնում «Արշալույս Արարատյանը», երբ հրապարակում էր հետևյալ հաղորդագրությունը. «Կըսվի թե Ռուսիո տերության և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգացի հասարակապետության մեջ զաղտնի դաշնակցություն մի հաստատված է: Այս դաշնակցությամբ Ռուսիան կխոստանա օգնական ըլլալ Միացյալ Նահանգացի դիպվածի, որ պատերազմ մի ունենան Գաղիո և Անգլիո հետ: Ռուսիո կառավարությունը արդեն նավատորմիդ մը ուղարկած է Ամերիկայի Միացյալ Նահանգները, ուր վաթսուներե հատ զրահավորյալ շոգենավեր ևս շինել կուտա կը-

սեն: Այն նազվերը պիտի լըմընան և պիտի հանձնվին իրեն՝ ներկա տարվույս վերջը և հընթացո առաջիկա ամին»³⁰⁴:

Հարկ է նկատել և այն, որ պարբերականի էջերում երբեմն տպագրվում էին հակասական տեղեկություններ: Այսպես, 1863 թ. օգոստոսի 10-ին թերթն իր ընթերցողներին հավատացնում էր, թե Հարավային նահանգների գրությունը ծանր է և նրանք ստիպված են հաշտություն խնդրելու: «Ամերիկայի մեջ համադրային արյունահեղ կռիվը կշարունակվի և մինչև ցայսօր տակավին աչնպիսի որոշիչ պատերազմ մի չեղավ, որ կարող ըլլա մոտավոր հաշտության մի ակնկալություններ տալ: Այսուամենայնիվ հյուսիսային դաշնակցության զորաբանակը օրըստօրե հառաջանալու վերա է և հավանականաբար հարավին դաշնակցությունը վերջապես նեղը մնալով՝ հաշտություն պիտի խնդրե»: Մի քանի ամիս անց, 1863 թ. դեկտեմբերի 14-ին, նույն թերթը գրում էր. «Հարավային զորաբանակը տակավին մեծամեծ ու հզոր միջոցներ ունի հյուսիսային հարձակմանցը դեմ դնելու»:

Ընդհանրապես կարելի է ասել, որ ինչպես Ամերիկայի քաղաքացիական պատերազմի, այնպես էլ միջազգային նշանակություն ունեցող մյուս հարցերի լուսաբանման գործում «Արշալույս Արաբատյան» երկշաբաթաթերթը հանդես էր բերում էկլեկտիզմ, ոչ հստակ գիծ:

Ամերիկյան պլանտատոր-ստրկատերերի դեմ է արտահայտվել «Նվրոպա» շաբաթաթերթը (Վրեննա, հրատարակություն Միքիթարյանների): Խոսելով Միացյալ Նահանգների հարավային մասերում տիրող կարգի և ստրուկների ծանր վիճակի մասին, նա 1862 թ. գրում էր, որ Հարավային նահանգները «իրենց մեջ ստացվածքի իրավունքը, ինչպես նաև օրենքներեն շնորհված ուրիշ ամեն իրավունքներն ու առանձնաշնորհությունները, միայն քանի մը ընտանյաց ու անոնց հաջորդներուն վրա ամփոփած են, իսկ մնացյալ ժողովուրդը՝ չէ թե միայն ամեն քաղաքական ու ընկերական արտոնություններն զուրկ է, այլ տիրող մասը զինքը խիստ հպատակության, ծառայության ու գերության մեջ կը բռնե: Արտոնյացյալ դասին ամեն մեկ անձ իրավունք ունի իր հարստության համաձայն անթիվ անհամար մարդիկներ գնելու, իրեն ստացված ընելու, և օրենքը զինքը միշտ անոնց վրա իբրև բացարձակ տեր կը ճանչնա... Բնակիչները երկու կարգի կը բաժնվին, այսինքն Ազատ մարդիկներու և Գերիներու: Ազատներն ամեն կողմանե իրարու հավասար ըլլալով, կրնա ըլլալ, որ գերիներու բազմության տեր եղողը մեծ

նախանձավորությամբ ու հաստատությամբ ազատության և հավասարության պաշտպան էլլե: Բայց նույն ազատությունն ու հավասարությունն որո՞ւն համար է. միայն իր արտոնացյալ դասին կամ իրեն պես ազատ եղողներուն համար: Իսկ անդին արտոնացյալ չեղող դասին կամ գերիներուն մշտատե գերությունը բնության օրինաց պես անփոփոխական բան մը համարված է»³⁰⁵:

Թերթը նշում էր, որ Հյուսիսային նահանգներում իշխող է ուսուցիչական, իսկ Հարավային նահանգներում ազնվապետական սկզբունքը: «Աս ամերիկյան պատերազմը՝ հասարակորեն իբրև պարզ ուսուցիչական ձեռնարկություն մը կը նկարագրվի, որուն վախճանն ըլլա դաշնակցության ամեն նահանգներուն մեջ քաղաքային իրավանց հավասարություն խոթել, սմեն անձի հավասար ազատություն տալ և ստացվածոց կողմանե ու մարդկային ընկերության մեջ պատմական համարված իրերուն նկատմամբ հավասար մասնակցություն հաստատել... Ստույգ է՝ Միաբանյաց Նահանգներուն շատերն ավելի ուսուցիչական սկզբունց կը հետեին, և աս սկիզբն իրենց մեջ հետզհետե ավելի ընդհանրանալու և զորանալու վրա է, սակայն ուրիշ տիրող մ'ալ կա, որուն վրա թեև քիչ անգամ կը խոսվի, բայց նույնպես իրական ու աչքի դարնող է, այսինքն է տիրապետելու սկիզբը: Նույն Միաբանյալ Նահանգներուն ուսուցիչական ըլլալուն վրա տարակույս չկա, բայց ան նահանգներուն հարավայինները՝ թեպետ Սահմանադրությունին ուսուցիչական սկզբունքներով լեցուն է, բայց իրենք՝ ըստ այժմու նշանակության բառին ուսուցիչական կոչվելու իրավունք չունին, այլ են ազնվապետական ու սաստիկ խիստ ազնվապետական»³⁰⁶:

Մտրկատերերը, ինչպես հայտնի է, աշխատում էին ցույց տալ, որ քաղաքացիական պատերազմի պատճառը ստրկության վերացման հարցը չէ: Չհամաձայնելով խնդրի այդ մտացածին, ոչ ճիշտ մեկնաբանման հետ «Նվրոպան» գրում էր. «...Հարավային զավառներուն դաշնակցութենեն բաժանվիլ ուզելուն և անկե ծագած Ամերիկայի հիմակվան քաղաքային պատերազմին պատճառը՝ միայն գերյաց խնդիրն է, և ոչ թե ուրիշ քաղաքական պատճառ մը, ինչպես իրենք հաստատել կուզեն: Պատերազմին ինչ վերջ ունենալը չի գիտցվիր, բայց աս ստույգ է, որ այսպիսի պատերազմի մը մեջ, ուր խնդիրը գերության վերացվելուն կամ չվերացվելուն վրա կը դառնա, բոլոր Նվրոպայի ազգաց համակրությունն արդար, իրավա-

ցի ու ազնվական բանի մը համար արյուն թափող հրուսիսային գավառներուն ավելի կը հակի»³⁰⁷։

Քաղաքացիական պատերազմի նշանակութւյան մասին թերթը արտահայտում էր հետևյալ կարծիքը. «Հիմիկվան ժամանակս ընդհանուր խոսակցութւյան նյութերեն մեկն եղած է Հյուսիսային Ամերիկայի Միաբանյալ Նահանգաց պատերազմը, որուն կատարածին կախված է նույն կողմանց ապագա վիճակը։ Եվ թեպետ մարդ չհավանի ոմանց կարծիքին, որոնք նույն պատերազմին հաջողութենէն կամ շաջողութենէն հառաջ գալու հետևութւոյնները շարժանց կերպով կը մեծցնեն, մինչև կրսեն թե բովանդակ մարդկութւյան վրա պետք է, որ ազդեցութիւն ունենա, բայց և այնպես պետք է, որ տեսնեն թե շատերուն համարածին պես ալ՝ բոլորովին աննշան դեպք մը չէ»³⁰⁸։

Միացյալ Նահանգների քաղաքացիական պատերազմի՝ մասին շատ է գրել Կ. Պոլսի «Ավետարեք և շտեմարան պիտանի գիտելոյսց» ամսաթերթը, որը հանդիսանում էր ամերիկյան միսիոներների և հայ բողոքականների օրգանը։ Այստեղ, մասնավորապես 1864—1865 թթ. պարբերաբար և բավական մանրամասնորեն տեղեկութւոյններ են հաղորդել պատերազմական գործողութւոյնների և դրանց հետ կապված այլ անցքերի վերաբերյալ։ Ահա մի օրինակ այդ հաղորդագրութւոյններից։ 1864 թ. հոկտեմբերին տեղի ունեցած պատերազմական անցքերի մասին հանդեսը գրում էր. «Միացյալ Նահանգաց ծայրի նահանգներեն մեկն եղող Միսսուրին, որ թեև Հարավը իրեն վերաբերյալ կը սեպեր, բայց Հյուսիսին ձեռքն անցած էր, Հարավի բանակը աս նահանգը գրավելով շատ վնաս տրվավ թե հասարակաց և թե մասնավորաց ստացվածքի ավերմունք պատճառելով, թեև աս տեսակ ասպատակութւոյնները որչափ որ վնասակար ալ ըլլան, մնալուն վնաս մը չեն կրնար ընել Հյուսիսին։ Ընեներալ Կրանթին բանակը տակավին Ռիչմոնտը պաշարելու գործին պարսպած է, որ թեպետ ծանր՝ բայց հաստատուն կերպով հառաջ կերթա։ Մեկ քանի սաստիկ պատերազմներ եղան հոն, և անոնց ընդհանուր արդյունքը սա եղավ, որ ձեներալ Կրանթը քանի մը մըղոն ավելի մտանցավ քաղաքին։ Բայց անցյալ ամսվան (հոկտեմբերի) ամենեն երևելի դեպքն է Ռիչմոնտի հյուսիսային արևմտյան կողմը Շենանոտա ձորին մեջ եղած պատերազմը։ Ընեներալ Շերիտանն ալ երեք-չորս պատերազմով հարավի ձեներալ Իրլիջին բանակը խորտակեց, բայց ձեռք անցուցած դիրքը խիստ կարևոր ըլլալուն, ձեներալ Լին իր ամենեն աղեկ ձեներալ Լոնկսթրիթը ուրիշ

բանակով մը խրկեց ձեներալ Շերիտանին դեմ։ Մեծ պատերազմ մը եղավ հոկտեմբերի 19-ին, ու Լոնկսթրիթ բոլորովին հաղթվելով 50 թնդանոթ կորսնցուց ու 2000 հոգի ալ գերի գնաց ու ինքն ալ ստիպվեցավ հետ քաշվելու»³⁰⁹։

Ինչպես հայտնի է, 1865 թ. ապրիլի սկզբներին Հյուսիսային նահանգները ծանր հարվածներ հասցրին «հարավայիններին» և վճռական հաղթանակ տարան։ Այս դեպքերի մասին «Ավետարեքում» մենք կարդում ենք. «Ապրիլ 3-ին (մարտ 22) երկուշաբթի առտու հյուսիսի զորքը ապստամբներուն մայրաքաղաք Ռիչմոնտ մտան և ճերմակ ու սևամորթ ժողովուրդին խիստ սրտառուչ կերպով ընդունվեցան։ Քաղաքը մտնող առջի զորքերը սևամորթ գունդերն էին։ Ապստամբ նախագահ Ճեֆերսոն Տեյլիսը առջի գիշերվընե փախած էր. Ապստամբ զորքը դուրս ելած ատենը քաղաքը կրակ տալու շանք բրավ ու հաջողեցավ շատ մը կառավարութւյան շենքերեն ավերակ ընել, բայց հյուսիսի զորքը շուտով կրակը մարեց։ Նույն ատենը Լինքոլն նախագահ (պրեզիդենտ Լինկոլն—Մ. Ն.) ձեներալ Կրանթին բանակին այցելութւոյն ընելու դացած ըլլալով՝ զորքին հետ քաղաքը մտավ ու խիստ սրտեռանդ կերպով ընդունվեցավ... Ընեներալ Կրանթը Ռիչմոնտը գրավելէն ետև հետ փախչող ապստամբ բանակին ետեն ինկավ ու անանկ սաստիկ նեղը ձգեց անոնք, որ ապրիլի 9-ին (մարտ 28) ամբողջ ապստամբ բանակը, որ 20-են 30 հազար հոգիի շափ էր, ձեներալ Կրանթին անձնատուր եղավ»³¹⁰։

«Ավետարեքը» համակրում էր Հյուսիսային նահանգներին և բարձր գնահատական տալիս պրեզիդենտ Աբրահամ Լինկոլնին ու «հյուսիսայիններին» բանակի գլխավոր զորահրամանատար գեներալ Գրանտին։ Վերջինիս նա համարում էր «մեծ զորապետ», իսկ Լինկոլնին՝ «հանձարավոր քաղաքագետ»։ Պրեզիդենտ Լինկոլնի սպանութւյան կապակցութւյամբ ամսաթերթը գրում էր. «Ամերիկացիք կը սիրեին իրենց նախագահը, շատ կը հարգեին անիկա, ու «Հայրենյաց հայր» կանվանեին, որովհետև ինքը շարժանց տաղանդի տեր ու հանձարավոր քաղաքագետ մեկը ըլլալէն ի զատ, նաև շատ անկեղծ բնավորութւյան տեր անձ մըն էր, ու անմեղադրելի վարք մը ունէր։ Ուրիշ ազգերն ալ սկսեք էին անոր հարգը ճանշնալ ու իր մահվան վրա՝ ամերիկացւոց վշտակրութւյանը վշտակից և զանիկա սպանողին եղեռնագործութւյանը դեմ անոնց ունեցած զգովանքուն հաղորդ պիտի ըլլան»³¹¹։

Հարուստ նյութ տալով քաղաքացիական պատերազմի ընթաց-

քի մասին, հանդեսը միաժամանակ հետաքրքիր տեղեկություններ էր հաղորդում երկրի ընդհանուր քաղաքական դրություն, տնտեսական-ֆինանսական կյանքի, կոնգրեսի նիստերի, ընտրությունների և այլ կարևոր հարցերի մասին, հարցեր, որոնք ի դեպ, այստեղ հաճախ ավելի հաջող էին լուսաբանվում, քան հայկական մամուլի շատ օրգաններում: Այսպես, օրինակ, 1864 թ. նոյեմբերի 8-ի պրեզիդենտական ընտրությունների մասին նա գրում էր. «Աշխարհիս պատմությանցը մեջ նմանը շտեսնված ասանկ մեծ քաղաքական պատերազմի մը ատեն Միացյալ Նահանգաց ժողովուրդը հրավիրված էր քվեաուփին մեջ իր նոր ընտրելիք վարչության քվեն ձգելու... Երկիրը երկու մեծ կուսակցության բաժանված էր. մեկ կողմը որոշած էր հիմնիկական վարչությունը փոխելով՝ ճեներալ Մաք Քլեյանը նախագահ ընտրելու: Աս կողմնակցությունը՝ հարավին հետ հասկըցողություն մը գալով՝ պատերազմին անմիջապես վերջ տալ կուզեր, տակավին սենքը անոնց ձեռքը գեցի ձգելով. և հավանական է, որ Միությունը բոլորովին նոր կազմություն մը պիտի առներ հարավային ազդեցության տակ: Մյուս մեծ կուսակցությունն ալ կինքընին (կինկոնին—Մ. Ն.) նորեն շորս տարի նախագահ մնալը կուզեր և հարավի հետ եղած պատերազմը շարունակել, մինչև որ կառավարության իշխանությունը հաստատվի Միության բոլոր նահանգներուն վրա ու գերությունը բոլորովին ջնջվի Միացյալ Նահանգներուն միջև: Աս կուսակցությունները՝ սկզբունքի կողմանե իրարու այսչափ դեմ ըլլալովը, նոյեմբերի 8-ին քվեարկության տեղը հավաքվեցան Ամերիկայի ու անոր ժողովրդին ապագան որոշելու... Անցյալ շորս տարվան պատերազմին փորձություններեն անվեհեր մնալով Միացյալ Նահանգաց ժողովուրդը նույն օրը կրկին կինքընը նախագահ ընտրեց շորս տարվան համար: Աս ընտրության մեջ քվե տվող 27 նահանգներեն 24-ը կինքընի համար քվե տվավ, և այս բոլոր նահանգներուն մեջ քվե տվող ժողովուրդեն կես միլիոնի շափ քվեի առավելություն ինքը ունեցավ»³¹²:

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում կատարվող պատմական իրադարձություններին արձագանքել է նաև «Մասյաց Ազգային» երկշաբաթաթերթը (Թեոդոսիա, խմբագիր՝ Գաբրիել վարդապետ Այվազյան): Հաղորդելով մի շարք տեղեկություններ Ամերիկայի քաղաքացիական կռիվների մասին, հետագեմ այդ պարբերականը, հավատարիմ դասակարգերի, սոցիալական տարբեր խավերի խաղաղ գործակցություն ու միաբանությունը բարոզող իր դավանանքին, փորձում էր գործը պատկերել այնպես, թե իբր

Ամերիկայում տեղի են ունենում «ներքին երկպառակություններ, խռովություն և եղբայրասպան պատերազմ»: Դեռևս 1861 թ. մարտին՝ քաղաքացիական պատերազմի նախօրեին հանդեսը կռահելով գալիք դեպքերի ընթացքը, նշում էր. «Ամերիկայի Միացյալ Նահանգաց հարավային նահանգները հետզհետ հյուսիսայիններեն բաժանվելու վրա են, և այս ցավալի երկպառակության պատճառը, մանավանդ թե պատճառանքը, գերիներու ազատությունը սալու դիտավորությունն է, որ նորընտիր կինքունը գահերեցը ունի: Պատճառանք կըսեմք ասոր, վասն զի այն նահանգները արդեն շատոնց առիթ կըփնտրենին հյուսիսային նահանգներեն զատվելու և ինքնագլուխ լինելու: Միացյալ Նահանգաց ույժը այս երկպառակությամբ շատ պիտի տկարանա, Անգլիո ալ մեծամեծ վնասներ պիտի լինին ասկեց, թե որ գահերեցը զորավոր դարման մը չզբտնե այն խռովությանց»³¹³:

Նորացնելով իր տեսակետը, «Մասյաց Ազգային» 1862 թ. նոյեմբերին գրում էր. «Իրավամբ ըսած է քաղաքագետ և ազատամիտ մարդուն մեկը թե «երբոր երկրի մը մեջ քաղաքական պատերազմ բացվի, այն տեղը իզուր կփրնտրես իրավանց ույժը, վասն իրարու դեմ և բողոքիչ և դատավոր և դահիճ»... Այսպիսի խեղճության մեջ են ավասիկ երկու տարիի իվեր Հյուսիսային Ամերիկո բնակիչները, որ քանի մը տարի առաջ նախանձեղի օրինակ էին միաբանության և ամեն տեսակ հառաջադիմություն»:

Ընդգծելով «ներքին երկպառակությանց մեծ վնասը», Գաբրիել Այվազյանի պարբերականը ավելացնում էր, որ հայերը պետք է դաս վերցնեն Ամերիկայի օրինակից և չղբաղվեն ներքին վեճերով ու կռիվներով: «Ծիթ ցավալի է իրավամբ Ամերիկայի հզոր տերության մը այսպիսի կռիվներով փճանալը, միթե ցավալի չէ մեր ազգին պես տկար ու ցիրուցան ժողովրդյան մը ոչինչ պատճառներով իրարու հետ կովտելով, հակաճառելով, իրար զրպարտելով, բամբասելով, հայհոյելով, իրարու անուն և սիրտ կոտրելով, իրարու շինածը քանդելով ետ մնալը, ավրվիլը, փճանալը, ապականվիլը և անձնասեր ու շահասեր օտարոտի թշնամյաց պատրաստական որս լինելը... Այս տխուր մտածմունքներեն վեր առնումք մեր հոգվո աչքը և նայիմք անգամ մը Ամերիկայի քաղաքներուն ամենեն վաճառաշահ ու ամենեն բազմամարդ քաղաքին վրա: Տեսնեմք նաև անով՝ թե որքան դժվարին բան է աշխարք մը շինելն ու պայծառացնելը միաբանությամբ ու խաղաղությամբ, և որչափ դյուրին

դայն քանդելն ու հիմնահատակ կործանելը եթե երկպառակությունն ու խռովությունը տիրապետե անոր մեջ»³¹⁴։

Այս նույն հարցին պարբերականը անդրադառնում էր նաև հետագայում՝ 1864 թ. հունվարին։ «...Ամերիկացվոց հույսը ի՞նչ է, որ երեք տարին իվեր սարսափելի արյունահեղությամբ իրենց երկիրն ոտնակոխ կընեն, մեկզմեկ կջրգզեն, կկողոպտեն, կաղբըտցընեն, կթշվառացնեն,— մեզ հայտնի չէ. այն ևս հայտնի չէ, թե բարվո հույս մը ունի՞նք թե ոչ։ Ուստի կթողումք, որ իրենք նախ հասկընան իրենց ներկա և սպագա վիճակը։ Եթե ըսեն որ «Արասցուք զչար՝ զի եկեսցէ բարի», վախճմ թե անհույս կորսվին ու փրձանան.— ափսոս այն մեծ ազգին»³¹⁵։

Այսպես, «Մասյաց Աղավնին» անընդունելի, անցանկալի էր համարում դասակարգային, հեղափոխական պայքարը։ Որակելով այն «ներքին երկպառակություն», նա ցավ էր հայտնում, որ Ամերիկայի քաղաքացիական պատերազմը ծագել ու շարունակվում է։

Սակայն հարկ է նկատել, որ այս բոլորի հետ մեկտեղ պարբերականում մենք հանդիպում ենք նաև տողերի, որոնցում համակրական խոսքեր կան ստրկության վերացման մասին։ Այսպես, հանդեսում 1861 թ. դեկտեմբերի 1-ին տպագրված «Ամերիկայի սև գերիներն ու նոցա հայրենիքը՝ Լիպերիա» հոդվածում ասվում էր. «Ամերիկայի Միացյալ Նահանգաց մեջ ըսկսված պատերազմին պատճառ... է գերիներու ազատության խնդիրը։ Գիտնալու բան է, որ այն մեծ հասարակապետության բոլոր նահանգները, որ 16 հատ են, գերիներ չունին, իսկ հարավայինները, որ 15 հատ են, գերիներու ձեռքով կընեն իրենց շատ աշխատություններն ու գործերը։ Ուստի երկու կուսակցություն ձևացած էր վաղուց Ամերիկացվոց մեջ՝ եղծողականք և գերեվարք։ Եղծողականները (որ իրենց մեջ ապոլիտիստիսթ կըսվին) կուզեն, որ գերի բանեցնելու սովորությունը վերցվի իրենց մեջեն, իսկ գերեվարները կպահանջեն, որ իրենց գերիներեն ունեցած շահը լիսպանվի, չդադրի, և զանազան իմաստակություններով կջանան ցուցնել, թե գերի բանեցնելը օրինավոր և հարկավոր բան է, և հակառակ չէ բրիտանություն և մարդկություն»։

Ավելի ուշ՝ 1862 թ. ապրիլին նույն հարցի մասին հանդեսում տպագրվեց «Միացյալ Նահանգաց պատերազմը» խորագիրը կրող քաղաքական մի տեսություն, ուր ասված է. «Ամերիկայի Միացյալ Նահանգաց պատերազմին պատճառը այնպիսի հայտնի խըն-

դիր մըն է, որ արդարություն ճանչցող ու սիրող մարդը դուրսավերնա գուշակել թե երկու կողմեն որը պիտի հաջողություն գտնե։ Հյուսիսայինները կուզեն, որ գերի զենքն ու ծախելն վերնա իրենց մեջեն, իսկ հարավայինները ոտք կկոխեն, որ այս շահաբեր գործողութենեն զիրենք ևս քաշվելու ոչ որ իշավունք չունի։ Որչափ որ հայտնի է առաջիններուն իրավունքը, նույնչափ պայծառ կտեսնվի նաև հարավայիններուն անիրավությունը։ Եվ սակայն սոքա իրենց հույսը դրած էին Գաղիո և Անգղիո վրա, իբր թե այս երկու տերությունները իրենց պաշտպան պիտի կենան ու պիտի ստիպեն հյուսիսայինները բաժանվելու հարավայիններեն, ու ձգելու, որ սոքա ինչպես որ կուզեն՝ այնպես կառավարվին։ Եվ հիրավի, եթե Գաղիո և Անգղիո վաճառականաց մնար խնդիրը, թերևս նոքա այնպես կորոշեին, այսինքն հարավայինոց կամ բաժանասիրաց կողմը կըբռնեին, որպեսզի իրենց բամբակեղենի գործարանները չդադրին, ու Հարավային Ամերիկայեն բամբակը անպակաս գա Եվրոպա։ Բայց որովհետև բաժանասիրաց կամքին կատարվելով մարդավաճառության գարշելի սովորությունն ալ պիտի հավիտյան հաստատվեր Ամերիկային մեջ, և Եվրոպայի լուսավորչալ տեսությունները չէին կրնար այս բանիս հավանել, հյուսիսայինները քանի զնացին զորացան, հարավայինները շատ տեղ հաղթվեցան, և կնքվեա թե քիչ ատենեն բոլորովին պիտի նվաճվին»³¹⁶։

Արբահամ Լինկոլնի սպանության կապակցությամբ հանդեսում տպագրվեց հատուկ հոդված Ամերիկայի Միացյալ Նահանգների հաշակավոր պրեզիդենտի կյանքի և գործունեության, ինչպես նաև նրան հաջորդող Ա. Ջոնսոնի մասին։ Անստորագիր այդ հոդվածում առանձնապես նշվում էին Լինկոլնի «համեստությունը, ազնվությունը, ազատասիրությունը և արդարասիրությունը» և այլ առաքինությունները։ «Իրեն ազատամտությանը պատճառով,— դրոմ էր ամսաթերթը Ա. Լինկոլնի մասին,— և մանավանդ դերիներու ազատությանը մեծ պաշտպան լինելովը, 1860-ին ընտրվեցավ նույն հասարակապետության (Միացյալ Նահանգների—Մ. Ն.) գահերեց, և այն անձը, որ երկրագործի որդի, փայտ կտրող, հյուսն և բեռնակիր էր, եղավ աշխարհիս մեծամեծ ազգերեն մեկուն գլուխը. և թեպետ վարմուքին մեջ միշտ կերեք հասարակ ու ռամկական կերպ մը, բայց սրամիտ դատողությամբը, անաչառ և անշահասեր արդարությունը և համեստ ու քաջասիրտ բնավորությամբը շուտով պատկասելի եղավ ոչ միայն յուր քաղաքակիցներուն, այլև թշնամիներուն»³¹⁷։

Ամերիկյան դեպքերի մասին իր ընթերցողներին պարբերաբար լուրեր էր հաղորդում Մանչեստրում 1863—1864 թթ. հրատարակվող «Երկրագունդ» շաբաթաթերթը (խմբագիր՝ Կարապետ վարդապետ Շահնազարյանց)։ Այդ անցքերը, սակայն, թերթը լուսաբանում էր չուրովի։ Նա մի կողմից աշխատում էր ցույց տալ, որ ինքը, իբր, կողմնակից է ստրուկների ազատության, սակայն մյուս կողմից փորձում էր այնպիսի տպավորություն ստեղծել, որ իբր Հարավային նահանգները կռվում են ոչ թե ստրկատիրությունը պահպանելու, այլ իրենց անկախության համար։ Ավելին. հակառակ իրականությանը, թերթը աշխատում էր հավատացնել, թե իբր հարավայինները դեմ չեն, որ վերացվի «գերությունը»։ Ստրկությունը վերացնելու հարցի կապակցությամբ «Երկրագունդը» 1864 թ. մարտին գրում էր. «Հյուսիսային Ամերիկայի Միացյալ նահանգաց մեջ գերյաց ազատության խնդիրն օրն ավուր ավելի առաջ կբալի։ Վաշինգտոնի երեսփոխանաց խորհրդարանն 78 քվեով 62-ի հակառակ վճռեց, որ Սահմանադրությունն վերաքննվի և փոփոխվի, և գերությունը ջնջվի բոլորովին։ Երեսփոխանաց խորհրդարանի այս մարդասիրական ձեռնարկն մեծ պատիվ կընե անոնց, և կըսվի, որ պարոն Լինկոլն նախագահի առաջադրության արդյունքն է, որ կամեցեք էր այս կերպով հասարակության կարծիքն իմանալ գերության անմիջական և բացարձակ բարձման հրովարտակն հանելեն առաջ։ Տարակույս չկա, որ ծերակույան ալ միևնույն ազատասեր հոգովն քվե տա։ Սակայն գերյաց ազատությունն որչափ կարևոր է մարդկային ցեղի բարօրության համար, այնչափ էլ կարևոր է անոնց գործ և ապրուստ տնօրինելու խնամքնը։ Զորավար Բանկըն այս խնդիրս լուծելու փորձն ըրավ Լուչիսյանի մեջ, որ, ինչպես հայտնի է, գերության ամբողջներեն մեկն էր հարավի մեջ։ Հիշյալ փորձն տևե պիտի այս տարի և վարձկան ծառայության կնամանի։ Հարավայինը, կըսեն Ամերիկայի լրագրերն, որ հաճությամբ ընդունել են այս տնօրինությունը»³¹⁸։

«Երկրագունդում» տպագրված մի շարք հաղորդագրություններից կարելի է եզրակացնել, որ թերթը հակված էր դեպի Հարավային նահանգները։ 1864 թ. մայիսին թերթը գրում էր. «Գարնան սկիզբեն ի վեր, հյուսիսայիններն արտաքո կարգի և հսկայական պատրաստություններ կտեսնեին, որ հարավի ապստամբներուն առաջին և վերջին մեկ հարված տան, ինչպես և անոնք, իրենց կողմեն, կպատրաստվեին իրենց անկախությունն պահել և իրենց թըշնամին համոզել, որ զենքով չպիտի նվաճվին և ոչ երբեք հյուսիսի

հետ միաբանությունն ընեն»։ Այնուհետև բերելով հաղորդագրություն Հյուսիսային նահանգների խոշոր հաղթանակների մասին, թերթը վերջում հեռակալ վերապահումն էր անում. «Ասոր հակառակ Ռիչմոնդտեն եկած կամ թե հարավայնոց տված լուրերն ոչ այս չափ կորուստ կպատմեն, ոչ ալ այսպիսի պարտություն։ Անգլիո և Ֆրանսիայի լրագրերն ալ, որք, ըստ մեծի մասի, հարավայնոց բարեկամ են, բոլորովին այլ շրջանակի մեջ կներկայացնեն այսչափ մեծամեծ կորուստներ, որոնց նմանն զուցե մեր զորու մեջ դեռ չէք պատահեր»³¹⁹։

Թերթի համակրանքը դեպի Հարավային նահանգները ավելի որոշակի երևում էր, երբ նա գրում էր. «Անտարակուսելի կերևի, որ պ. Լինկոլնի գորավարներն երբեք չկրնան պիտի զենքով խոնարհեցնել կատարելապես ապստամբներին, ինչպես որ չկրցան ընել մինչև ցայսօր»³²⁰։ Նույն ոգով են գրված նաև հետևյալ տողերը. «Պ. Լինկոլն երեք և կես տարի պատերազմելեն, մեկ միլիոն մարդոց արյուն հեղլեն և 2000 միլիոն վառոգ այրելու վատնելեն հետո տակավին 1861 թվի ցնորքն կզգվե և սվինի ծայրով հարավայիններն նվաճել կերազե»³²¹։ Շաբաթաթերթին ընդհանրապես բացասաբար էր արտահայտվում Ահրահամ Լինկոլնի մասին։ Նա երբեմն կոպիտ հարձակումներ էր գործում ամերիկյան հանրահռչակ պրեզիդենտի վրա։ Այս և բազմաթիվ այլ հարցերում «Երկրագունդը» ձայնակցում էր անգլիական բուրժուական թերթերին և կանգնում սեռակցին դիրքերի վրա։

Ստատվորապես նույնպիսի դիրքերի վրա էր կանգնած նաև արևմտահայ «խավարչայնների» օրգան «Երևակը» (Կ. Պոլիս, խմբագիր՝ Հովհաննես Տերոյնց-Չամուռճյան)։ Չհամարձակվելով բացահայտորեն հանդես գալ ի պաշտպանություն Հարավային նահանգների, Չամուռճյանի «Ութօրյա հանդեսը» փորձում էր վարկաբեկել ամերիկյան պրոպեհսիվ և հեղափոխական ուժերը, հայտարարելով, որ նրանք իբր անկեղծ չեն, երբ հայտարարում են, թե քաղաքացիական պատերազմի զլխավոր նպատակը ստրկատիրությունը Միացյալ նահանգներում վերացնելն է։ «Երեք տարի են ավելի է, որ Ամերիկայի միացյալ զավառներուն հարավային և հյուսիսային մասերուն մեջ պատերազմ կըլլա։ Ինչո՞ւ համար։ Հայտնի պատճառը՝ գերիներուն վիճակը լավացնել կամ գերությունը վերցնել կըսվի։ Շատերը այս պատճառիս անկեղծ ըլլալուն չեն ուզեր հավատալ. աշխարհային շահու դրդում մը պիտի ըլլա և գերությունը վերցնել պատճառանք մըն է կըսեն. և մեզի ալ այս

կարծիքս հավանական կերևի: Բուն պատճառը գուցե ժամանակը կհայտնեն»³²²:

Փարիզում լույս տեսած «Փարիզ» պարբերականում (1860—1863 թթ., խմբագիր՝ Ա. Մուրադյան) տպագրված են մի շարք տեղեկություններ, որոնցում փորձ է արված ընդհանուր գաղափար տալ Միացյալ Նահանգներում ծավալված քաղաքացիական պատերազմի մասին: Տպագրելով զանազան նկարագրական նյութեր, հանդեսը, սակայն, չի հայտնում իր կարծիքը, խուսափում է ցույց տալ իր վերաբերմունքը Ամերիկայում տեղի ունեցող պատմական անցքերի նկատմամբ:

Առանձնապես ուշադրության արժանի է այն, որ պարբերականի 1861 թ. դեկտեմբերի 21-ի համարում մանրամասն հաղորդագրություն է տպագրված անգլիական «Տրենտ» նավի հետ կապված հայտնի միջադեպի և անգլո-ամերիկյան սրված հարաբերությունների վերաբերյալ: Հանդեսի 1863 թ. փետրվարի 20-ի համարում տեղափոխված է Ֆրանսերենից թարգմանված մի հոդված Ամերիկայի նեգր ստրուկների վիճակի մասին: Բավական հետաքրքիր այդ հոդվածում մենք ի միջի այլոց կարդում ենք. «Ամերիկայի Միացյալ Նահանգը իրենց անկախությունը ձեռք բերած ատենին (1776), 600.000 գերի ունեին, այս թիվը այնպիսի արագությամբ բազմապատկած է, որ 1862 հունվարի 1-ին իբր 4.000.000-ի կը հասներ: Ոչ մեկ ժամանակ և ոչ մեկ երկրի մեջ գերությունն այնչափ անարդև և այնչափ խիստ եղած է քան հարավային նահանգաց մեջ... Գերին կրնա դրավ դրվիլ, վաճառվիլ կամ վարձու տրվիլ: Տերն ինչ տեսակ և որքան ուտելիք և հագնելիք պատշաճ համարի, նույնչափ կրնա տալ իր գերույն... Ամենածանր պատժով արգելյալ է գերյաց կարգալ ու գրել ուսուցանել: Կուրտնա, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամսոց մեջ, գերիները հաճախ օրը քսան ժամ կաշխատին: Տերն ուղածին պես կրնա պատժել իր գերին: Գերի մը ձերմակե մը, մինչև անգամ առանց պատճառի, ծեծ կերած ատենը իրավունք չունի ինքզինքը պաշտպանելու, միայն իր տերը կրնա ծեծողը հալածել և տուգանք պահանջել, եթե գերին աշխատանքի անկարող լինելու շափ վերք ընդունի... Գերյաց մեջ ամուսնություն չկա. տերը կրնա զանոնք զուգել և բաժանել ըստ յուր հաճոյից»³²³:

Ամերիկայի քաղաքացիական պատերազմի մասին կողմնակի ձևով արտահայտվել է «Բազմավեպ» հանդեսը: Խոսելով բամբակի առևտրի հետ կապված մի շարք հարցերի մասին, նա այն կարծիքն էր հայտնում, թե այդ պատերազմը Միացյալ Նահանգներին

ներքին, տնտեսական «վեճ մըն է», և եթե այն լայն արձագանք էլ գտնում շատ երկրներում և համաշխարհային նշանակություն ստանում, ապա այդ այն պատճառով, որ Ամերիկայի ներքին կուլիներն իրենց անմիջական և խոշոր ազդեցությունն են ունենում միջազգային առևտրի վրա: «...Ամերիկայի պատերազմը, որ զրեթե ընտանի ազգային խնդրո և տնտեսության վեճ մըն է, բոլոր աշխարհի սարսուռ և դեռ ազդեցությունը վերջացած չէ: Իսկ սարսուռն առևտրի ոչ այնչափ զինուց ահավոր խոշուուն է, և ոչ թերևս արյունահեղությանց աղետալի տեսարանը, որչափ իրեն առևտրական ազդեցությունը, որ զարմանալի կերպով մը պատեալ և արմատացեալ է ընդ բոլոր տիեզերս»³²⁴:

Բացատրելով իր միտքը, «Բազմավեպը» գրում էր, թե խոսքը վերաբերում է նրան, որ եթե մինչ այսօր բամբակի արտադրության և առևտրի մենաշնորհը պատկանում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներին, ապա այսօր նրանց հակառակորդ երկրները օգտվելով քաղաքացիական պատերազմի հետևանքով ստեղծված հանգամանքներից, հաջող քայլեր են կատարում բամբակի արտադրությունը և առևտուրն իրենց ձեռքերում կենտրոնացնելու ուղղությամբ:

Հանդեսը միաժամանակ այն միտքն էր արտահայտում, թե Միացյալ Նահանգների քաղաքացիական պատերազմի համար «մարդասիրական խնդիրը», կամ, այլ կերպ ասած, ստրկության վերացման հարցը, ոչ թե պատճառ, այլ միայն առիթ հանդիսացավ³²⁵:

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների 1861—1865 թթ. քաղաքացիական պատերազմի մասին այս կամ այն շափով գրել են իր ժամանակի հայկական պարբերական մամուլի նաև մի քանի այլ օրգաններ, որոնց վրա, սակայն, հարկ չենք համարում կանգ առնել, որովհետև նրանք ոչինչ չեն ավելացնում այն ամենին, ինչ մեզ հաղորդում են վերը նշված պարբերականները: Ամփոփելով վերջիններին տեսակետները, մենք կարող ենք գալ հետևյալ եզրակացություն: Ամերիկայի քաղաքացիական պատերազմին արձագանքող 1861—1865 թթ. հայ պարբերականների մեծ մասը գտնում էր, որ Հյուսիսային Նահանգների պայքարը Հարավային Նահանգների դեմ մղվում է ստրկատիրությունը երկրում վերացնելու համար, և որ այդ պայքարը արդարացի ու մարդասիրական է: Մյուս մասը չհասկանալով կատարվող անցքերի ո՛չ էությունը և ո՛չ էլ նշանակությունը, պնդում էր, թե Միացյալ Նա-

հանգներում տեղի են ունենում ավելորդ ու ցավալի «ներքին երկպառակություններ», որոնք միայն վնաս են պատճառում ժողովրդին: Հայ պարբերականների երրորդ, բայց աննշան մասը, որ կանգնած էր ունակցիոն դիրքերի վրա, ձայնակցելով անգլո-ֆրանսիական հետադեմ մամուլին, փորձում էր, հակառակ իրականության, գործը պատկերացնել այնպես, թե իբր Հարավային նահանգները կռվում են ոչ թե ստրկատիրությունը պահպանելու, այլ անկախություն ձեռք բերելու համար:

ГРАЖДАНСКАЯ ВОЙНА В США В ОСВЕЩЕНИИ АРМЯНСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ

Резюме

Гражданская война в Соединенных Штатах Америки в 1861—1865 гг. нашла живой отклик во многих странах и широко освещалась в западноевропейской и русской печати.

Об исторических событиях американской буржуазно-демократической революции писали также многие органы армянской периодической печати 1861—1865 гг. Сообщая сведения о ходе гражданской войны, они одновременно старались оценить и определить ее суть и значение. Придерживаясь различных направлений, эти газеты и журналы, разумеется, по-разному подходили к историческим событиям в США. Если большая часть армянской печати выступала за Северные Штаты, боровшиеся против рабства, а другая часть занимала «нейтральную» позицию, то лишь некоторые реакционные журналы пытались оправдать Южные Штаты.

Справедливую борьбу американского народа против рабовладения горячо приветствовал выдающийся армянский революционер-демократ Микаел Налбандян. В гражданской войне 1861—1865 гг. принимали участие некоторые армяне, проживавшие в те годы в Соединенных Штатах Америки.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1860—1880-Ս.ԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Քաղաքական-վարչական այն վիճակը, որ ստեղծվեց Հայաստանում XIX դարի առաջին երեք տասնամյակներում տեղի ունեցած ուսուպարսկական և ուս-թուրքական պատերազմներից հետո, էական փոփոխություններ չկրեց հաջորդ տասնամյակներում և հիմնականում պահպանվեց նաև մեզ այստեղ հետաքրքրող ժամանակաշրջանում՝ 1860—1880-ական թթ.³²⁶: Հայաստանի արևելյան և հյուսիսային գավառները, կամ, սովորաբար ինչպես ընդունված է անվանել, Արևելյան Հայաստանը, շարունակեց մնալ ուսական կայսրության սահմանների մեջ, իսկ արևմտյան և հարավային գավառները (Արևմտյան Հայաստանը) օսմանյան բիրտ տիրապետության տակ: Դրիմի պատերազմը չբերեց նոր փոփոխություն: Միայն 1877—1878 թթ. ուս-թուրքական պատերազմի հետևանքով թուրքական տիրապետությունից ազատվեց Կարսը և միացվեց Ռուսաստանին:

Արևելյան Հայաստանը, ինչպես և ամբողջ Անդրկովկասը, համեմատաբար մնալուն վարչական բաժանման ենթարկվեց 1846—1849 թթ., Կովկասի առաջին փոխարքա իշխան Միխայիլ Սեմյոնովիչ Վորոնցովի ժամանակ: Այդ տարիներին, ինչպես հայտնի է, ցարական կառավարությունը Անդրկովկասում ստեղծեց հինգ նահանգներ՝ Թիֆլիսի, Քուֆայի, Շամախու, Դերբենդի և Երևանի³²⁷: Երևանի նահանգը, որ բաժանվեց Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի և Օրդուբադի գավառների, իր մեջ ընդգրկեց Արևելյան Հայաստանի կենտրոնական և մեծ մասը: Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջաններից Ջալալօղլին, Ալավերդին մտան Թիֆլիսի նահանգի մեջ, իսկ Ադրբեջանին սահմանակից մի քանի շրջաններ՝ Զանգեզուր, Ղազախ, Շամշադին՝ Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգի մեջ: 1877 թ. նոյեմբերի 1-ին ցարական կառավարությունը Կարսի և նրա մերձակա այն շրջաններից, որոնք մինչ այդ կաղմում էին էրզրումի վիլայեթի երկու՝ Կարսի և Զըլզըրի սանջակները, ստեղծեց վարչական մի առանձին միավոր՝ Կարսի մարզ, որ հետագայում բաժանվեց չորս գավառների՝ Կարսի, Արդա-

հանրի, Կաղզվածների և Օլթու³²⁸: Անդրկովկասի և մասնավորապես Արև-վելյան Հայաստանի վարչական այս բաժանումը հիմնականում անփոփոխ մնաց XIX դարի ամբողջ կեսի ընթացքում:

Արևմտյան Հայաստանը, ինչպես և ամբողջ Թուրքիան, որ մոտ երկու դար շարունակ վարչականորեն բաժանված էր փառայությունների, 1856 թ. բարենորոգումների՝ Խաթիվ-Հյումայունի սկզբունքներից բխող 1864 թ. օրենքի համաձայն, ենթարկվեց նոր բաժանման³²⁹: Փառայությունների փոխարեն ստեղծվեցին վիլայեթներ: 1870-ական թթ. վերջին Արևմտյան Հայաստանի տարածքում ընդգրկված էին վեց վիլայեթներ՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Սվազի, Դիարբեքի և Խարբեքի³³⁰: Հայկական Կիլիկիան բաժանված էր Հալեպի և Ադանայի վիլայեթների միջև:

Մեզ հետաքրքրող շրջանում Անդրկովկասի հայ բնակչությունը հիմնականում կենտրոնացած էր Երևանի, Ելիզավետպոլի (Գանձակի), Թիֆլիսի, Բաքվի նահանգներում և Կարսի մարզում: Պաշտոնական տվյալների համաձայն, 1836 թ. Երևանի նահանգի բնակչության թիվը եղել է 670.405, որից հայ՝ 375.700, Ելիզավետպոլի նահանգինը՝ 728.943, որից հայ՝ 258.324, Թիֆլիսի նահանգինը՝ 808.143, որից հայ՝ 193.610, Բաքվի նահանգինը՝ 712.703, որից հայ՝ 55.459, Կարսի մարզինը՝ 174.044, որից հայ՝ 33.094³³¹: Ամբողջ Անդրկովկասի հայ բնակչության թիվը 1865 թ. եղել է 540.931 (Անդրկովկասի ամբողջ բնակչության թիվն էր 3.115.164 մարդ)³³², 1874 թ.՝ 711.960³³³, 1886 թ.՝ 939.131 (Անդրկովկասի ամբողջ բնակչության թիվն էր 4.702.898 մարդ)³³⁴, 1897 թ.՝ 1.086.980 մարդ³³⁵: 1881 թ. տվյալներով ուսական կայսրության մեջ ապրող հայերի թիվը կազմում էր Անդրկովկասում՝ 820.753, Հյուսիսային Կովկասում՝ 39.700, կայսրության մնացած մասերում 56.536 մարդ³³⁶:

Արևմտյան Հայաստանի և ընդհանրապես Թուրքիայի տիրապետության տակ ապրող հայ բնակչության թվի մասին մենք չունենք ճշգրիտ տեղեկություններ: Մուլթանական կառավարությունը ոչ միայն մտահոգված չէր զրանով, այլև ամեն կերպ աշխատում էր, քաղաքական հասկանալի պատճառներով, գաղտնիքի աշխարհում պահել իրական տվյալները: Թուրքական պաշտոնական շրջանները մի քանի անգամ հրատարակեցին թվական տվյալներ, բայց դրանք խիստ աղավաղված և սխալ էին: Համեմատաբար հավաստի տեղեկություններ տվել է Կ. Պոլսի հայ պատրիարքարանը, որը 1882 թ. տվյալներ հրատարակեց Թուրքիայում ապրող հայ բն-

նակչության թվի վերաբերյալ: Այդ տվյալների համաձայն՝ Թուրքական տիրապետության տակ գտնվող հայերի ընդհանուր թիվը կազմում էր 2.660.000 մարդ, ընդ որում Վանի վիլայեթում՝ 400.000, Սվազի վիլայեթում՝ 280.000, Խարբեքի վիլայեթում՝ 270.000, Բիթլիսի վիլայեթում՝ 250.000, Դիարբեքի վիլայեթում՝ 150.000, Էրզրումի վիլայեթում՝ 280.000, Կիլիկիայում (Ադանայի և Հալեպի վիլայեթները)՝ 380.000, Ասիական Թուրքիայի մնացած մասերում՝ 455.000, Եվրոպական Թուրքիայում՝ 195.000³³⁷:

Նույն շրջանում՝ 1880-ական թվականներին սկզբներին Ռուսն ժեկմենը պարսկահայերի թիվը հաշվում էր 200.000-ից մինչև 225.000, Հնդկաստանում, Ճավայում և Չինաստանում գտնվող հայերի թիվը՝ 40.000, Ավստրո-Հունգարիայում՝ 30.000, Արևելյան և Արևմտյան Եվրոպայում, Ամերիկայում և Աֆրիկայում՝ 97.000 մարդ³³⁸:

Տնտեսական զարգացման ի՞նչ մակարդակի վրա էր գտնվում Հայաստանը մեզ այստեղ հետաքրքրող ժամանակաշրջանում: Արևելյան Հայաստանը, ինչպես և Անդրկովկասի մյուս մասերը՝ Վերաստանն ու Ադրբեջանը, 1860—1880-ական թթ. ապրում էին ֆեոդեալիզմի, հին նահապետական կյանքի քայքայման և կապիտալիստական հարաբերությունների ձևավորման շրջան: Անդրկովկասյան ժողովուրդների պատմության այս փուլը փայլուն կերպով բնորոշել է Վ. Ի. Լենինը իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» հայտնի գրքում: Լենինը գրում էր, որ 1870—1880-ական թթ. արդեն Կովկասը ներգրավվեց համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ, ավելի աճեցին շուկայական հարաբերությունները, ուժեղացավ երկրի բնատնտեսության քայքայման պրոցեսը, սկսեց կազմակերպվել արդյունաբերական կապիտալիզմը: «Հետունֆորմյան դարաշրջանում,— գրում էր Լենինը,— մի կողմից Կովկասը սաստիկ գաղութացման էր ենթարկվում... Մյուս կողմից տեղի էր ունենում բնիկ դարավոր «տնայնագործական» արհեստագործությունների արտամղումը, որոնք Մոսկվայից ներմուծվող ֆաբրիկատների մրցման հետևանքով ընկնում էին: Ընկնում էր զենքի հինավուրց արտադրությունը՝ Տուվայից ու Բելգիայից ներմուծվող ապրանքների մրցման շնորհիվ, ընկնում էր երկաթի տրանսպորտի մշակումը՝ ներմուծվող ուսական արտադրանքի մրցման շնորհիվ, նմանապես ընկնում էր պղնձի, ոսկու և արծաթի, կավի, ճարպի և սոդայի, կաշիների տնայնագործական մշակումը և այլն... Ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր

համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց, նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շակա էր ստեղծում... Կովկասի ուժեղ գաղութացման պրոցեսին ու նրա հողագործական բնակչության արագ աճմանը զուգընթաց տեղի էր ունենում նաև բնակչության՝ հողագործությունից կտրվելու և արդյունաբերությանը հարելու պրոցես... Կովկասի քաղաքային բնակչությունը 1863 թվի 350.000-ից աճեց մինչև 900.000-ի 1897 թվին...»³³⁹:

Կապիտալիզմի զարգացման համար զգալի շահով նախադրությաններ ստեղծեցին մի կողմից՝ ագրարային-գյուղացիական ռեֆորմը Անդրկովկասում և մյուս կողմից՝ ճանապարհային շինարարությունը, որ կատարվեց 1860—1880-ական թվականներին: Ագրարային-գյուղացիական ռեֆորմը, որն իրականացնող օրենքներն ընդունվեցին Վրաստանի համար 1864 թ., իսկ Հայաստանի և Աղբյուրքեջանի համար՝ 1870 թ., չնայած իր շատ թերություններին ու անհետևողականությանը, ուներ բուրժուական բովանդակություն և ստեղծում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար մի շարք անհրաժեշտ նախադրյալներ³⁴⁰: Նույն իմաստով զգալի դեր խաղաց ցարական կառավարության կողմից ձեռնարկված ճանապարհային շինարարությունը: Ինչպես հաստի է, 1871—1872 թթ. կառուցվեցին Թիֆլիս—Ղարաբաղիսա—Երևան խճուղին, սպա Երևան—Ջուլֆա, Ղարաբաղիսա—Ալեքսանդրապոլ, Ալեքսանդրապոլ—Կողբ և Նախիջևան—Գորիս խճուղիները³⁴¹: 1872 թ. գործարկվեց Թիֆլիս—Փոթի երկաթգիծը, որն առաջինն էր Անդրկովկասում: 1883 թ. շահագործման հանձնվեց Բաքու—Բաթում գիծը, 1899 թ. պատրաստ էր Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս գիծը³⁴²:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը սկզբվեց նախ և առաջ գյուղատնտեսության մեջ, որի հետևանքով և աշխուժացան ապրանքափոխանակային հարաբերությունները գյուղում, ուժեղացավ գյուղացիության քայքայման և շերտավորման պրոցեսը, լայն գործունեություն ծավալեց վաղխառուական կապիտալը, հրապարակ եկավ գյուղի հարուստ, ուռճացած շերտը, որը սկսեց աստիճանաբար իր ձեռքում կենտրոնացնել հողային ֆոնդը և իշխող դիրք գրավել գյուղում³⁴³: Գյուղական կյանքում առաջացած այս նոր երևույթների պատճառով գյուղացիության մի զգալի մասը գրկվեց հողից, անասուններից և բռնեց պանդխտության ճա-

նապարհը: 1895 թ. Երևանի նահանգի հողագործի գյուղացիության թիվը կազմում էր 5211 մարդ (1209 գյուղացիական ընտանիք)³⁴⁴: Այդ նույն տարիներին Երևանի գավառի ցանք չունեցող գյուղացիների թիվը կազմում էր 36%: Իսկ բանող անասուններից զուրկ գյուղացիներին՝ 37%: 1884 թ. Չանգեղուրի գավառից պանդխտության են դիմել մոտ 3000 գյուղացի, 1893 թ. նոր Բայազետից հեռացել են 1347 մարդ, իսկ 1894 թ.՝ Մեծ Ղարաբաղիսայից 1900 մարդ³⁴⁵: Պանդխտության դիմող հայ գյուղացիությունը գնում էր գլխավորապես Բաքու, Թիֆլիս, Բաթում և Երեման էլ Ռուսաստանի կենտրոնները:

Գյուղացիության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը խթանեց նաև այն հանգամանքը, որ արդեն 1860-ական թվականների վերջերից սկսած Ռուսական կապիտալը մուտք գործեց հայկական գյուղը: Այսպես, 1872 թ. զենեռալ Կախանովը պետությունից 65 տարով կապալով վերցրեց Արագոյան տափաստանի հաղարավոր հեկտար հողերը, ստեղծեց կապիտալիստական խոշոր տնտեսություն և մշակեց բամբակ ու հացահատիկային կուլտուրաներ³⁴⁶: 1880-ական թթ. Հայաստանի գյուղերում երևացին Մոսկվայի, Վարշավայի, Թիֆլիսի և Ռուսաստանի արդյունաբերական այլ կենտրոնների բուրժուազիայի ներկայացուցիչներ, որոնք աշխատեցին իրենց արդյունաբերության համար հումուլթ մատակարարող բազաներ ստեղծել Հայաստանի գյուղերում: Օրինակ, 1880-ական թվականների սկզբներին Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության խոշոր ներկայացուցիչներից մեկի՝ կապիտալիստ Մամվա Մորոզովի գործակալները բամբակ մթերելու նպատակով հատուկ գրասենյակներ բաց արին Երևանի նահանգում:

Գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով նշանակալից շահով զարգացան մի շարք կուլտուրաներ և, առաջին հերթին, բամբակի կուլտուրան: Բամբակի արտադրությունը Երևանի նահանգում հետևյալ պատկերն է ունեցել. 1861 թ. արտադրվել է 30.000 փուլ բամբակ, 1870 թ.՝ 270.000, 1889 թ.՝ 508.764 փուլ բամբակ³⁴⁷: Արագ տեմպերով զարգացել էր նաև սլեզգործությունը և, մասնավորապես, խաղողագործությունը: Այսպես, եթե Երևանի գավառի խաղողի այգիների տարածությունը 1870 թ. հավասար էր 2890 դեկյատինի³⁴⁸, ապա 1897 թ. այն կազմում էր 8467 դեկյատինի³⁴⁹: Զարգա-

ցել էր նաև ծխախոտի կուլտուրան: 1896 թ. Երևանի նահանգից ստացվել է 7231 փուլ 6 ֆունտ ծխախոտ:³⁵⁰

Կապիտալիզմի զարգացումը տեղի ունեցավ ոչ միայն գյուղատնտեսության մեջ: 1860—1880-ական թթ. շրջանը բնորոշ է նաև այն տեսակետից, որ այդ ժամանակաշրջանում ծնունդ է առնում և կազմավորվում արդյունաբերական կապիտալիզմը ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Արևելյան Հայաստանում: Կապիտալիստական արդյունաբերության առաջին ձեռնարկություններն Անդրկովկասում հիմնվեցին դեռևս 1860-ական թթ.: Անդրկովկասի պատմության այդ շրջանը կարելի է անվանել արդյունաբերական հեղաշրջման շրջան: Սակայն, ի բաց աչյալ Բաքուն, որը զարգացավ խիստ արագ տեմպերով, Անդրկովկասի արդյունաբերության զարգացումը, ամբողջությամբ վերցրած, ընթանում էր դանդաղ: Առանձնապես դանդաղ էր զարգանում այն Հայաստանում, ուր մեզ հետաքրքրող շրջանում փաստորեն ստեղծվեցին կապիտալիստական արդյունաբերության միայն երկու կենտրոններ՝ Ալավերդին և Զանգեզուրը: Ալավերդու պղնձահանքերը մինչև 1887 թվականը շահագործում էին հույն հանքագործները, իսկ դրանից հետո՝ ֆրանսիական ակցիոներական ընկերությունը: Ալավերդու պղնձածուլարանների տարեկան արտադրանքը եղել է 1861 թ. 4807 փուլ, 1871 թ.՝ 7325 փուլ, 1900 թ.՝ 19.682 փուլ պղինձ³⁵¹: Զանգեզուրի պղնձածուլարանների արտադրանքը եղել է 1858 թ. 2485 փուլ, 1873 թ.՝ 10.147 փուլ, 1887 թ.՝ 15.312 փուլ, 1900 թ.՝ 51.783 փուլ պղինձ³⁵²: 1880-ական թթ. սկսած Հայաստանում հիմնվեցին արդյունաբերական ձեռնարկություններ նաև բամբակի, գինու, կոնյակի, մետաքսի ու կաշվի արտադրության գծով:

Զգալի չափով ընդարձակվեց և՛ ներքին, և՛ արտաքին առևտուրը, ծավալվեց դրամական շրջանառությունը: Անդրկովկասի բուրժուազիան մշտական կապեր հաստատեց Ռուսաստանի, Արևմտյան Եվրոպայի երկրների և ապա Պարսկաստանի ու Թուրքիայի առևտրական կենտրոնների հետ: Թե ինչպիսի զարգացում է ունեցել Անդրկովկասի առևտուրը, այդ մասին վկայում են հետևյալ թվերը: 1862—1866 թթ. ընթացքում Անդրկովկասի առևտրի տարեկան շրջանառությունը, միջին հաշվով, կազմում էր 11.815.891 ռուբլի, 1872—1876 թթ. շրջանում՝ 14.139.270 ռուբլի, իսկ 1886 թ.՝ 39.264.547 ռուբլի³⁵³:

Հարաճուն առևտուրը խոշոր ազդեցություն թողեց արհեստավորական արտադրության վրա³⁵⁴: Ռուսաստանից ու եվրոպական

երկրներից ներմուծվող արդյունաբերական սուրանքները շուկայից աստիճանաբար դուրս էին մղում տեղական արհեստավորական արտադրանքը, որն ի վիճակի չէր մրցելու համեմատաբար բարձրորակ և էժանագին ներմուծվող արդյունաբերական ապրանքների հետ: Սրա հետևանքով արհեստավորները կանգնեցին փակուղու առաջ և ընկան տնտեսական ծանր դրության մեջ: Համաքաղաքային ներս սկսեցին քայքայվել: Արհեստավորության մի զգալի մասը թողնելով արհեստները, աշխատանքի ընդունվեց գործարաններում և արդյունաբերական այլ ձեռնարկություններում: Համաքաղաքային շրջանում տեղի ունեցան համաքաղաքային ելույթներ, որոնցից առանձնապես նշանավոր է Թիֆլիսի հայ համաքարների 1865 թ. ելույթը:

Կապիտալիզմի զարգացման տեմպերի մասին որոշ գաղափար կարող են տալ նաև քաղաքային բնակչության աճին վերաբերող տվյալները: 1865 թ. Բաքուն ուներ ընդամենը 14.715 բնակիչ, 1897 թ.՝ 112.252: Թիֆլիսը 1875 թ. ուներ 67.770 բնակիչ, իսկ 1897 թ.՝ 160.645 բնակիչ: Համեմատաբար դանդաղ էին աճում Հայաստանի քաղաքները. 1865 թ. Երևանն ուներ 14.070 բնակիչ, 1886 թ.՝ 17.738, իսկ 1897 թ.՝ 29.023 բնակիչ: Ալեքսանդրապոլը 1865 թ. ուներ 16.814 բնակիչ, 1886 թ.՝ 24.230, իսկ 1897 թ.՝ 32.230 բնակիչ³⁵⁵:

Անդրկովկասի կապիտալիստական զարգացման գործում նշանակալից դեր խաղաց հայ բուրժուազիան, որ մինչև 1860-ական թթ. զբաղվում էր բացառապես առևտրով: Սակայն այդ բուրժուազիայի մի մասը 1860-ական թթ. սկսած անցավ արդյունաբերական գործունեության: Թողնելով առևտրական օպերացիաները, նա հիմնեց ֆաբրիկաներ, գործարաններ և արդյունաբերական այլ ձեռնարկություններ: Նոր ձևավորվող արդյունաբերական բուրժուազիան կենտրոնացավ գլխավորապես Հայաստանից դուրս՝ Բաքվում, Թիֆլիսում և Բաթումում: Հայաստանում նա կապիտալ ներդրեց Զանգեզուրի պղնձարդյունաբերության մեջ: Հայ արդյունաբերական բուրժուազիան կուտակեց խոշոր կապիտալ: Նա փաստաբար կենտրոնացրեց Բաքվի նավթարդյունաբերության տոտրեն իր ձեռքում կենտրոնացրեց Բաքվի նավթարդյունաբերության մի խոշոր մասը և իշխող դիրք զբաղեցրեց Անդրկովկասի տեքստիլ արդյունաբերության մեջ: Նրան էին պատկանում ծխախոտի գրեթե արդյունաբերության մեջ: 1879 թ. Բաքվում շահագործվում էր 295 բուրժուազիաները: 155-ը պատկանում էր հայ բուրժուազիային: 1876 թ. վիճակագրական տվյալներով՝ Թիֆլիս քաղաքի առևտրա-

կանների ընդհանուր թիվն էր 6851, որից հայ՝ 4249: Նույն ավյալներով՝ Թիֆլիսում արդյունաբերությանը զբաղվողների ընդհանուր թիվն էր 13.137 մարդ, որից հայ՝ 5919 մարդ³⁵⁶: 1890-ական թթ. Թիֆլիսի առևտրական-արդյունաբերական ձեռնարկությունների 62% -ը հայ բուրժուազիային էր պատկանում: Ընդհանուր առմամբ՝ թե՛ առևտրական բուրժուազիան և թե՛ արդյունաբերական բուրժուազիան իշխող դիրք ունեին Անդրկովկասի տնտեսական կյանքում: Այս հանգամանքի շնորհիվ նրանց դերը խոշոր էր նաև երկրի հասարակական-քաղաքական կյանքում:

Սակայն կապիտալիստական զարգացման այն պրոցեսները, որ մենք նշեցինք վերևում, ի վիճակի չեղան, այնուամենայնիվ, խոշոր տեղաշարժեր կատարելու տնտեսական կյանքում և փոխելու երկրի տնտեսական դեմքը: Արևելյան Հայաստանը, ինչպես և ամբողջ Անդրկովկասը, ոչ միայն 1860—1880-ական թթ., այլև ավելի ուշ, հետագա տասնամյակներին, շարունակեց մնալ որպես հետամնաց ագրարային երկիր՝ ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների բազմաթիվ մնացուկներով:

Ո՛չ 1870 թ. ագրարային-գյուղացիական ռեֆորմը, ո՛չ էլ ձեւավորվող ու զարգացող կապիտալիզմը չկարողացան վերացնել ֆեոդալական հարաբերությունները³⁵⁷, և Հայաստանի, ինչպես և ամբողջ Անդրկովկասի աշխատավորական-գյուղացիական հոծ մասսաները մեզ այստեղ հետաքրքրող ժամանակաշրջանում՝ 1860—1880-ական թթ., կանգնած էին բուրժուազեմոկրատական հեղափոխության խնդիրները լուծելու անհրաժեշտության առաջ՝ նշված ժամանակաշրջանի հիմնական հարցը ագրարային-գյուղացիական հարցն էր³⁵⁸: Դասակարգային պայքարի առանցքը կազմում էր գյուղացիական մասսաների պայքարը ֆեոդալական հարաբերությունների և դրանց պաշտպան ցարիզմի դեմ: Այս տեսակետից էական տարբերություններ չկային Ռուսաստանի և Անդրկովկասի միջև: Ծիշտ է, սոցիալ-տնտեսական զարգացման տեսակետից Անդրկովկասն ավելի հետամնաց էր, քան Ռուսաստանը: Կապիտալիստական զարգացման երևույթները Ռուսաստանում ավելի զարգացած էին, քան Անդրկովկասում: Սակայն այդ տարբերությունները քանակական էին, բայց ոչ որակական:

Տնտեսական-հասարակական զարգացման անհամեմատ ավելի ցածր մակարդակի վրա էր գտնվում Արևմտյան Հայաստանը: Այստեղ իշխող հասարակական ձևը ֆեոդալիզմն էր, որ ապրում էր քայքայման թույլ պրոցես: Սուլթանական կառավարության

1834 թ. հողային ռեֆորմը, որ նպատակ ուներ վերացնել ռազմաֆեոդալական խոշոր հողատիրությունը և դրանով իսկ թուլացնել կենտրոնախույս ուժերը, գրեթե չկիրառվեց Արևմտյան Հայաստանի այն մասերում, ուր իշխող քուրդ շեյխերն ու բեյերը կիսանկախ էին և միանգամայն թույլ կապեր ունեին կենտրոնական կառավարության հետ: Նույն բախտին արժանացան նաև 1839 թ. հաթիբ Շեքիֆը, 1856 թ. հաթիբ Հյումայունը, 1876 թ. սահմանադրությունը և Թանգիմաթ ազդարարող սուլթանական մյուս հրովարտակները: Քուրդ ավատական դասը տնտեսական ու արտատնտեսական անսահմանափակ շահագործման էր ենթարկում գյուղացիական զանգվածներին, որոնք գերազանցապես կազմված էին հայ բնակչությունից: Քուրդ ֆեոդալների համար գոյություն չունեին նորմաներ: Քուրդ կամ թուրք բեգերը, աղաները կամ դերեբեյները գյուղացուն շահագործում, հափշտակում, նրանից վերցնում էին այնքան, որքան իրենք էին ցանկանում: Գյուղացին ֆեոդալի համար կոռ ու բեկար էր կատարում: Տղամարդիկ նրա համար տներ, բերդեր ու ճանապարհներ էին կառուցում, իսկ կանայք՝ տնային աշխատանք կատարում: Արևմտյան Հայաստանի որոշ մասերում և մասնավորապես Մուշի, Բիթլիսի ու Վանի գավառներում հայ գյուղացիությունը գտնվում էր ճորտական վիճակում: Այս մասին մենք ունենք բազմաթիվ վկայություններ, որ թողել են մեզ ժամանակակիցներն ու ականատեսները: Բերենք մի քանի վկայություններ: Կ. Պոլսում լույս տեսնող «Մասիս» լրագրի 1872 թ. համարներում հրատարակվեց Մուշից գրված մի թղթակցություն, ուր ասված էր. «Մերոզնյա դաս մը ժողովուրդը, որ է Բոնաշեն, ի Խուլթ, ի Սասուն և ի Շատախ գավառներ, քյուրդերու հետ խառն կընակվին: Նոցա գլխավորներուն որ խաֆիր կավին, ճորտ լինելով, ամենադառն կենցաղ վիճակված է: Դաս-դաս նոցա բաժին եղած, յուրաքանչյուրն իբրև հպատակ և սեփականություն համարված, տարեկան տուրք կուտան խաֆիրներուն... Այս մարդակեր զազան խաֆիրներ՝ ինքնազուլա և ապստամբ վիճակի մեջ լինելով, իրենց ճորտ հայերը կանամբ և որդվովք, շարժական և անշարժ կավածքներով իրարու ծախելու սովորություն ունին, և երբ իրարու դեմ կատաղին կամ թշնամանան, յուրաքանչյուրն իրենց հպատակ հայերին բռնությամբ տուժնին ձգելով, իրարու սահման կասպատակեն, մանավանդ հայոց գյուղերու վրա հարձակվելով, կկողոպտեն, կվիրավորեն, կըսպանեն և կվերադառնան տեղերնին... Գերիի տեք խաֆիրնեո, երբ մարդ ծնանելու լինին, հանձն յուր ճորտի տունեն՝ կառամբ և ոչ-

խարով աչքալուսի պիտ երթան, աղույի զգեստացու պիտի տանեն, այնինչ հայոց մերկանդամ կանայք ձեռքերով իրենց կուրծքը ծածկելու աղքատ վիճակի մեջ կգտնվին: Երբ պատանեկության հասնին, դենք պիտի պատրաստեն անոր: Հինայելու ատենը, զալան (բաշլըղ) պիտի տանին հարսնացու ծնողաց, և հարսանքաց պիտույք պիտի պատրաստեն: Եթե մեռած էլ պատահի, ոչխար, չուղ պանիր և այլն տանելով՝ կմխիթարեն զխաֆիրները: Բայց ընդհանուր ազգության նախատինք այն կետն է, որ նահապետացն հայոց պարկեշտության առաջաստի հույսը և սրբության քողի ներքև սեղան աղջիկներ այսօր հույանի եղած, խաֆիրներու տան մեջ, իբրև հարս՝ օրերով ձավարը, կորկոտը շինելու, լաթը լվանալու և կարկատելու սպասարկություն կրնեն՝ լռին արտասովելով և անոնց կրկրի արտերը քաղհանելու շարքներով կաշխատին մերկ անձամբ և բոբիկ ոտամբ, արևակեղ և տոթահար եղած»³⁵⁹:

Հայ գյուղացու ճորտական վիճակի մասին իր ժամանակ գրել է նաև Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը: Սուլթանական կառավարությանն ուղղված իր մի բողոքագրի մեջ, ուր մանրամասնորեն նկարագրված էին Արևմտյան Հայաստանի գավառներում կատարվող հարստահարությունները, Վարժապետյանը խոսելով Մոսկու գավառի մասին, գրում էր, թե «Քուրդ պեյները գյուղացի հայերն իրենց մեջ իբրև զերի կվաճառեն»³⁶⁰: Այսօրինակ փաստերի մասին հայտնում էին նաև Գարեգին Սրվանձտյանը³⁶¹, Պողոս Ժ. Վ. Նաթանյանը³⁶², Ֆրանսիացի գինվորական Միլենգինը³⁶³ և ուրիշներ: Արևմտահայ գյուղացու ճորտական վիճակը շարունակվում էր դեռևս 1890-ական թթ. և ավելի ուշ՝ XX դարի սկզբներին: 1890-ական թթ. Արևմտյան Հայաստանում ուղեորություն կատարած անգլիական նշանավոր ճանապարհորդ և աշխարհագրագետ Լինչը մոտիկից ծանոթանալով Արևմտյան Հայաստանում տիրող դրությունը, գրում էր. «Ճորտական իրավունքը անհայտ չէ այս երկրի համար... Ճորտ հայերը հայանի են Չեր-Կուրի անվան տակ, որ նշանակում է ոսկով գնվածներ: Եվ իսկպպես նրանք գնվում և վաճառվում են քուրդ բեյերի ու աղաների կողմից, ճիշտ այնպես, ինչպես որ գնվում և վաճառվում են ոչխարն ու տավարը: Միակ տարբերությունն այն է, որ այդ մարդիկ չեն կտրվում իրենց հողից և վաճառվում են այն հողի հետ միասին, որը որ նրանք մշակում են»³⁶⁴: 1903 թ. խոսելով արևմուտահայերի դրության մասին, ֆրանսիական պառլամենտի սոցիալիստական ֆրակցիայի ղեկավար Ֆրանսիս Պրեսանսեն ասում էր,

որ արևմտահայ գյուղացիները քուրդերի ձեռքին «ժառանգական ստրուկներ դարձել են»³⁶⁵: Նույն շրջանի արևմտահայ գյուղացիության վիճակի մասին՝ այդ հարցն ուսումնասիրողներից մեկը գրում էր. «Խաֆիրառու քյուրդ աղաները վարվում են հարկատու գյուղացիների հետ, ինչպես ստրուկների հետ, այսինքն ծախում են, զնում են նրանց իբրև ապրանք»³⁶⁶:

Սակայն ճորտական իրավունքը տիրում էր Արևմտյան Հայաստանի ոչ բոլոր մասերում: Երկրի այն գավառներում, ուր ռեալ իշխանություն ունեին կենտրոնական կառավարության օրգանները և ուր այսպես թե այնպես կիրառվել էին Քանգիմաթի օրենքները, գյուղացին իրավականորեն ազատ էր և սեփականատիրական իրավունքով օգտվում էր հողից: Արևմտյան Հայաստանի այդ մասերում՝ գյուղություն ունեին հողատիրության երեք հիմնական ձևեր. 1. պետական, 2. վախուժային, 3. մասնավոր (մյուլքային)³⁶⁷: Առաջին և երկրորդ կարգի հողերը պատկանում էին պետությանը, սուլթանական պալատին, տոհմային բարձրաստիճան պաշտոնյաներին և մզկիթներին ու մահմեդական հոգևորականությանը: Երրորդ կարգի հողերն այն հողերն էին, որոնք որպես սեփականություն պատկանում էին կալվածատեր բեյերին, աղաներին և գյուղացիներին: Սուլթան Աբդուլ Մեջիդի 1858 թ. հրատարակած օրենքի համաձայն, հողի մասնավոր սեփականության իրավունքից կարող էր օգտվել միայն նա, ով որ ուներ պետության կողմից հաստատված կալվածագիր՝ թափու: Բեյերից ու աղաներից բացի՝ այդ թափուներից ուներ նաև արևմտահայ գյուղացիության մի զգալի մասը: Գյուղացիության մյուս մասը, որ հողազուրկ էր, կիսաճորտական պայմաններով աշխատում էր բեյերի ու աղաների հողերի վրա:

Հողազուրկ այդ գյուղացիությունը կոչվում էր մարաբա: Մարաբա գյուղացու հիմնական տիպն այն գյուղացին էր, որը «զուրկ է ամեն ինչից՝ և՛ հողից, և՛ սերմից, և՛ լծկանից, և՛ գործիքից... Այսպիսի մարաբան վերցնում է աղայից հողը, սերմը, լծկանը, գործիքները և բերքի 2/3-ը տալիս է աղային, իսկ միմիայն 1/3-ը իրեն վերցնում... Նախքան բերքի կիսելը վճարվում է կառավարության հասանելիք տասանորդի տուրքը... Մարաբան ղեպի աղան ունի մի շարք պարտականություններ, որոնք հաճախ ավելի ծանր են նրա համար, քան նույնիսկ իր աշխատանքի արդյունքի 2/3 մասի վճարելը: Մարաբան պարտական է կատարել աղայի տնային ու դաշտային աշխատանքները... Եթե աղայի ընտանիքը գյուղումն է գտնվում, մարաբայի կինն ու աղջիկը պարտավոր են կատարելու աղայի տան

կարը, լվացքը, գործվածքներ և այլ աշխատանքներ: Այս ձևի օլամական աշխատանքները որևէ նորմայի կամ շափի տակ չեն մրտնում, այլ այդ աշխատանքների քանակը, որակը և տեսակը կախված է աղայի կամքից... Աղան նայում է մարաբայի վրա իբրև մի գրաստի, ոտքի տակ տալով նրա մարդկային բոլոր արժանիքները»³⁶⁸: Գծվար չէ հղբակացնել, որ մարաբա գյուղացիությունը, որը, ի դեպ ասած, իր մեջ ընդգրկում էր հավասարապես թե՛ հայ և թե՛ թուրք գյուղացիներին, կիսաճորտական վիճակ էր ապրում: Մարաբա գյուղացու վիճակը ճորտ գյուղացու վիճակից տարբերվում էր միայն նրանով, որ առաջինը ամբացված չէր հողին և իրավականորեն ազատ էր: Նա կարող էր աշխատել այնտեղ, որտեղ ինքը ցանկանում էր³⁶⁹:

Մանր էր նաև հողային սեփականություն ունեցող գյուղացիության վիճակը: Այս կարգի գյուղացին ուներ սեփական հող, իրավաբանորեն ազատ էր ֆեոդալական պարտավորություններից: Սակայն այդպես էր միայն թղթի վրա: Իրականում դրությունն այլ էր: Արևմտյան Հայաստանում միանգամայն ոտնահարված էին իրավական նորմաները: Օրենքներին փոխարինում էին բեգերի, աղաների, ինչպես և խաֆիրների ուժը, կամայականությունը և ցանկությունը: Իրավացի էր թուրքական կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը, որը կառավարությանն ուղղած իր պաշտոնական զեկուցագրերից մեկում խոսելով Արևմտյան Հայաստանի մասին, գրում էր. «Այս կողմերը «ուժը իրավունքին կհաղթանակե», բռնապետական պատգամը իր իմաստի ամբողջությամբ կբարձրապետե... Գյուղացիներու հողը, կայքը, ընտանի անասունները, մինչև իսկ պատիվնին ու կյանքերնին աղայի քմահաճույքին ենթակա են»³⁷⁰: Իրավականորեն ազատ և սեփականատեր համարված գյուղացին մշտապես ենթակա էր անլուր ճնշումների, հալածանքների ու հետապնդումների: Ամեն մի քիչ թե շատ ուժեղ բեգ, աղա կարող էր առանց դժվարության խլել գյուղացիների հողը, տունը և կայքը: 1870-ական թվականներին, երբ քրդական վերնախավը իր օրավուր աճող տնտեսական պահանջները բավարարելու համար սկսեց հողային մեծ կոտակումներ կատարել, արևմտահայ գյուղացիության հողերի բռնագրավումը ստացավ մասսայական կերպարանը: 1874—1876 թթ. ընթացքում գավառական հարստահարությունների մասին Կ. Պոլսի հայ պատրիարքարանի կողմից կազմված տեղեկագրերը բերում են հարյուրավոր օրինակներ, որոնք պերճախոս կերպով ցույց են տալիս, թե ինչպես քուրդ

և թուրք բեգերը, աղաներն ու մյուս կարգի ֆեոդալները խլում են գյուղացիների հողերը, կալվածները և դրանք իրենց սեփականություն հայտարարում: Ավելին. քրդական դերբեյներն ու աշիրաթապետները գրավում էին ամբողջ գյուղեր, դուրս քշելով այնտեղից բոլոր բնակիչներին և սեփականացնելով նրանց ամբողջ հողային հարստությունը: Այդ տեղեկագրերում զետեղված ցուցակներից պարզվում է, օրինակ, որ միայն 1874 թվականի ընթացքում վանի գավառում հողային հափշտակություններ են կատարվել 160, իսկ Գիարբեքի Վիլայեթում՝ 110 հայկական գյուղերում³⁷¹: Այդ հողային բռնագրավումները հետագա շրջաններում ավելի մեծ ծավալ ստացան³⁷²:

Գյուղություն ունեցող օրենքների համաձայն, իրավականորեն ազատ գյուղացին պետք է բազմաթիվ և բազմատեսակ հարկեր վճարեր պետությունը³⁷³: Սակայն պետական «օրինական» այդ հարկերից բացի՝ գյուղացին վճարում էր նաև ապօրինի, օրենքով չնախատեսված հարկեր: Զինվորական ուժ ունեցող քրդական վերնախավի ներկայացուցիչները զենքի ուժով ստիպում էին գյուղացիությունը, որպեսզի նա իրենց ևս հարկեր վճարի³⁷⁴: Անպաշտպան գյուղացին ստիպված էր լինում կատարել այդ պահանջը, որովհետև հակառակ դեպքում քրդական հրոսակախմբերը կոչնչացնեին նրա ամբողջ ընտանիքը, ավերի և թալանի կմատնեին նրա կայքն ու զույքը: Քուրդ աղան մշտական ձև էր տալիս իր այդ պահանջին, գյուղացին պարբերաբար վճարում էր այն ամենը, ինչ որ պահանջում էր քուրդ ցեղապետը: Այս ապօրինի հարկահանությունը, որ կոչվում էր խաֆիրություն³⁷⁵, խիստ մեծ ծանրություն էր գյուղացու համար: Թուրքական կառավարությունը ո՛չ ցանկություն և ո՛չ էլ կարողություն ուներ կովելու այդ երևույթի դեմ³⁷⁶:

Մենք արդեն ասացինք, որ Արևմտյան Հայաստանում XIX դարի ամբողջ երկրորդ կեսին և դեռ ավելի ուշ շրջանում իշխում էին ֆեոդալական հարաբերությունները: Սակայն չի կարելի չնկատել այն փաստը, որ արդեն 1870-ական թթ. սկսած Արևմտյան Հայաստանում աշխուժանում են ապրանքափոխանակային հարաբերությունները: Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում վաճառքի հանվեցին մեծ քանակությամբ անզլիական ապրանքներ: Ներքին առևտրի զարգացման վրա որոշ ազդեցություն թողեցին նաև առևտրական տարանցիկ ճանապարհները, մասնավորապես այն ճանապարհը, որը Տրապիզոնը միացնում էր Բայազեդի և ապա Պարսկաստանի հետ³⁷⁷: Այդ տարանցիկ ճանապարհի շնորհիվ

гар мировой войны, осуществили хитро, методично и беспощадно. Вначале они тайно и вероломно истребили интеллигенцию и боеспособное армянское население, а затем перешли к открытой и массовой резне женщин, детей и стариков. Часть беззащитного армянского населения была уничтожена в родных селах и городах, другая часть, принудительно выселявшаяся,—в пути. Остатки беспомощных масс, депортированные в знойные пустыни Месопотамии, погибли, изуроченные голодом, болезнями, жаждой и усталостью.

Резня совершалась с каннибальской жестокостью. Правительство приказывало своим местным органам быть решительными, не щадить никого. Так, министр внутренних дел Талаат-бей в одной из своих телеграмм, посланной губернатору Алеппо, приказывал: «Вам уже сообщалось о том, что по указанию Джемиета (руководящего комитета младотурок.—М. Н.) было решено полностью уничтожить проживающих в Турции армян. Те, кто выступает против решения, не могут оставаться на официальных постах. Как бы жестоки ни были принятые меры, должен быть положен конец существованию армян. Не обращайтесь никакого внимания ни на возраст, ни на пол, ни на угрозы совести»⁴⁶².

Указания главаря убийц выполнялись с возмутительной жестокостью. Злодеи действовали самыми варварскими, самыми зверскими способами. Потеряв человеческий облик, они топили свои жертвы в реках, душили дымом в запертых домах, сбрасывали со скал, убивали после неслыханных пыток, глумлений и бесчинств.

Очевидцы с ледяным сердцем ужасом рассказывали об этой беспрецедентной резне. Один из деятелей арабского национально-освободительного движения Фаез-эль-Хосейн в своих воспоминаниях писал: «В Битлисе власти заключили армян в амбары. Затем последовал приказ обложить их соломой и поджечь. И все несчастные погибли от удушья. В Муше многие армяне также умерли от удушья, запертые в кладовых, предназначенных для хранения сена. Но большинство было расстреляно или вырезано. Правительством нанималось для этой цели палачей, которым ежедневно давало одну турецкую лиру... Жандармы связывали вместе женщин и детей и сбрасывали их с большой высоты. В Диарбекире правительство применило много методов для истребления армян. Их убивали то огнем, то мечом, часто же бросали их в колодезь или пещеры, закрывали отверстие, чтобы дать им умереть самой страшной смертью»⁴⁶³.


Разумеется, там где это было возможно, армяне приступали к самообороне и с оружием в руках защищали свою

жизнь и честь. Беззаветно храбро сражалось против своих палачей население Вана, Шатаха, Шапингарайсара, Урфы, Мусадага и других местностей. Успешно кончилась, в частности, самооборона города Вана, длившаяся около месяца. Благодаря героической борьбе народа и помощи частей русской кавказской армии десятки тысяч ванских армян спаслись от угрожавшей им страшной резни. Но в большинстве случаев самооборона армян, вследствие неравенства сил, терпела поражение.

Вместе с сотнями тысяч простых людей были зверски убиты также выдающиеся армянские писатели, поэты и публицисты Григор Зограб, Даниел Варужан, Сиаманто, Севак, Зардарян и многие другие деятели литературы, науки и искусства. Великий армянский композитор Комитас, уделенный лишь случайно, не выдержав беспримерных ужасов, лишился рассудка.

Массовое истребление армян, начавшееся весной 1915 г., продолжалось и в 1916 г. Оно распространилось на все части Западной Армении, на все местности Турции, населенные армянами. Тысячи деревень и городов были превращены в пепелища. Из целых уездов и провинций спаслись лишь десятки или сотни людей. Вот несколько цифр. Из 27 сел Хнысского уезда, насчитывавших 3322 армянских семейства, спаслось лишь 128 душ. Из 11 сел Нижнего Буланыха спасся всего 21 человек, из 28 сел Маназкерта—34, из 24 сел Хлата, насчитывавших 2150 семейств,—248 человек⁴⁶⁴.

О кровавой политике младотурок патриарх турецких армян епископ Завен Егиян, которому были хорошо известны происходящие события, в январе 1918 года писал: «Не думаю, что в истории когда-либо могла быть зафиксирована такая резня. Не думаю, что какое-либо перо способно описать те ужасные погромы, которые произошли в последние 8—9 месяцев в Турции, с одного ее конца до другого... Погромы, имевшие место при гамидовском режиме и даже раньше, ничто в сравнении с теперешними. То, что было организовано в этот раз, было не чем иным, как осуществлением программы истребления, и теперь можно сказать, что армянин на своей родине стал отныне «историческим». Некоторые из вали хвастливо телеграфировали центральному правительству, что в управляемых ими округах не найдется ныне ни одного армянина. На этот раз не чернь напала на мирный народ, а само правительство, которое свою программу проводило через солдат, жандармерию, полицию, особенно через разбойничьи шайки. Приказ был дан из центра и его исполнение повсюду было безжалостным... Народ был изгнан из своего



Насильственная депортация армян в 1915 г.

родного очага, потеряв все, и в пути разграблен и уничтожен. Начиная с Самсуна и до Тигранакерта не спасся почти ни один мужчина. Молодые женщины и девушки были похищены, а дети вырезаны. Резня была потрясающей в Муше, Багеше, Тигранакерте, Едессе, Трапезунде, Шапин-Гарайсаре, Кеги, Балу и Ерзанка-Кемахе, где почти ни один армянин не спасся и где не пощадили даже стариков и младенцев. В других округах Армении были спасенные, но едва ли более пяти процентов. Во многих городах и селах на сегодня вряд ли найдется больше одной или двух женщин... Из Багеша и его районов не имеем никаких сведений о спасенных армянах. В тигранакертском округе не только армяне, но и айсоры вырезаны. За неисполнение приказа вали об устройстве погрома три турецких каймакама были лишены должности и расстреляны. В Трапезунде и его районах почти все армяне убиты»⁴⁶⁵.

Политика избиения армян была политикой геноцида, подробно разработанная и беспощадно осуществленная правящими кругами султанской Турции. Зверства младотурок во многом напоминают кровавые деяния гитлеровских фашистов во время второй мировой войны. Турецкие головорезы в некотором отношении были предшественниками и прототипами фашистских убийц. Не случайно, что бесноватый фюрер иногда ссылался и на «опыт» младотурецких палачей. Так, Гитлер на одном совещании, созванном в городе Оберзальцбурге в августе 1939 г. перед наступлением фашистских полчищ на Польшу, напоминал об избиении армян в Турции, чтобы ободрить своих генералов. Не надо обращать никакого внимания на общественное мнение, нужно безжалостно убивать мужчин, женщин и детей, нужно уничтожать славонскую расу,—изрекал Гитлер. «Кто же сегодня еще говорит об истреблении армян?»⁴⁶⁶.

Правительству младотурок, проводившему политику геноцида в отношении армян, покровительствовала союзница Турции—кайзеровская Германия. Исходя из своих империалистических планов на Ближнем Востоке и на Кавказе, она всячески помогала вандалам в организации депортации и резни армянского населения. Более того, немецкие офицеры, находившиеся в Турции, нередко принимали участие в кровавых преступлениях младотурок.

Фарисейскую позицию в отношении беззащитных армян заняли западноевропейские государства и Соединенные Штаты Америки. Американское правительство, например, несмотря на протесты некоторых должностных лиц, не приняло никаких мер к обузданию убийц. В то время как по-

громщики безжалостно истребляли армян, правящие круги США укрепляли свои внешнеторговые, экономические связи с правительством султана. Английское правительство, часто выступавшее в роли «покровителя» армян, в начале 1916 г. отвергло предложение министерства иностранных дел России о совместной финансовой помощи армянским беженцам, оказавшимся в исключительно бедственном положении. Позицию, занятую западными державами в отношении армянского народа в те тяжелые годы, Максим Горький квалифицировал как «гнусное равнодушие»⁴⁶⁷.

Против геноцида армянского народа выступила передовая общественность того времени. С гневом протестовали против палачей Сергей Киров, Максим Горький, Валерий Брюсов и Юрий Веселовский в России, Дж. Брайс—в Англии, Анатоль Франс и Ромен Роллан—во Франции, Фридьоф Нансен—в Норвегии, революционные социал-демократы («тесняки») — в Болгарии, Карл Либкнехт, Иозеф Маркварт—в Германии и многие другие прогрессивные деятели почти во всех странах мира. Но голос этих благородных людей был чужд и непонятен озверелым бандитам. Турецкие захватчики продолжали свои кровавые преступления и в последующие годы.

Казалось, пришел конец целому народу, народу древнему, культурному, трудолюбивому. Но как жестоки и беспощадны ни были палачи, они все же не смогли сломить его дух и осуществить свои злоеющие планы. Погромщики просчитались.

Великая Октябрьская социалистическая революция, героическая освободительная борьба трудящихся масс и установление Советской власти в Армении положили конец вековым страданиям армянского народа. Встав на ноги при помощи русского народа и других братских народов нашей страны, он приступил к мирной жизни, к созидательному труду и национальному возрождению.

Весьма примечательно, что еще в декабре 1917 г. В. И. Ленин специально занимался судьбой западных армян. 29 декабря Ленин руководил заседанием Совнаркома, на котором обсуждался этот вопрос⁴⁶⁸. В известном декрете Совета народных комиссаров о «Турецкой Армении», подписанном В. И. Лениным 31 декабря 1917 г., было поручено Чрезвычайному комиссару по делам Кавказа Степану Шаумяну оказать всяческое содействие армянам-беженцам, «насилственно выселенным во время войны турецкими властями»⁴⁶⁹. В тот же период по инициативе В. И. Ленина Советская Россия приютила десятки тысяч армянских беженцев на Северном Кавказе, в Крыму и в других частях республики.

Армения, в прошлом отсталая и разоренная, в годы Советской власти превратилась в передовую, цветущую социалистическую республику. В дружной семье народов Советского Союза армянский народ достиг огромных успехов в области экономики, науки и культуры.

Армянская Советская Социалистическая Республика стала родиной также трудящихся армян, рассеянных во всех странах мира. Благодаря заботам Советского правительства в Армению вернулось более 200 тысяч армян, скитавшихся в Европе и Америке, Азии и Африке. Притягательная сила родины с каждым днем усиливается. Ныне сотни тысяч армян в Европе и Америке, Азии и Африке горят желанием вернуться на родину, где осуществились вековые чаяния трудового армянского народа.

Трагическое прошлое армянского народа—красноречивый пример того, как может обернуться судьба малых народов в капиталистическом мире, где господствуют волчий закон, насилие и угнетение, с одной стороны, ложь, лицемерие и обман—с другой.

Отмечая память родных людей, безвинно погибших 50 лет назад, армянский народ вместе с братскими народами нашей великой страны вдохновенно борется за светлое будущее, за то чтобы больше не повторялись истребительные войны и кровавые преступления, нигде и никогда.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԳԵՆՈՑԻԴԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ

Ամփոփում

1915—1916 թթ. հայկական եղեռնը մարդկության պատմության ամենախոշոր ողբերգություններից մեկն է: Այդ տարիներին թուրքական ռազմամուկ կառավարությունը կոտորածի ենթարկեց մեկ և կես միլիոն խաղաղ հայ բնակչություն և ծխացող անապատի վերածեց մի ամբողջ երկիր՝ Արևմտյան Հայաստանը: Երևանը, Երևանի կատարեցին ահավոր ոճիր, իրականացրին գենոցիդի (ցեղասպանության) քաղաքականություն արևմտահայերի նկատմամբ, քաղաքականություն, որը մանրամասնորեն մշակել էին նրանք տարիներ առաջ: Թուրքական շարդարարները որոշ իմաստով հիպոկրիտների ֆաշիստների նախորդները, նախատիպերն էին: Կազմերական Գերմանիան ամեն կերպ հովանավորում էր թուրքական կառավարությունը, իսկ արևմտյան մյուս մեծ պետությունները, որոնք հաճախ հանդես էին գալիս փոքր ժողովուրդների «հովանավորողի» դերում, ոչ մի ոեալ քաջ չկատարեցին, որպեսզի դադարեցնեն արևմտահայ բնակչության մասսայական կոտորածները:

ՄՂՁԱՎԱՆՋԻՑ ԳԵՊԻ ՎԵՐԱՄՆՈՒԹՅՈՒՆ
(Մեծ եղեռնի 60-ամյակի առթիվ)

Ժողովուրդների դարավոր պատմությունը ունի ողբերգական ոչ քիչ դրվագներ⁴⁷⁰: Շահագործողական հասարակության պայմաններում ծանր, մղձավանջային պահեր են ապրել հատկապես փոքր ժողովուրդները, որոնց ֆիզիկական գոյությունը հաճախ վտանգի է ենթարկվել: Իմպերիալիզմի դարաշրջանում ավելի դաժան ու մասսայական դարձան կոտորածները, համընդհանուր բնույթ ստացան ավերն ու բնաջնջումը, ցեղասպանությունը՝ գենոցիդը:

Վաթսուն տարի առաջ նախկին Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցավ մի հրեշավոր ոճրագործություն, որը դարձավ մարդկային հասարակության մեծագույն ողբերգություններից մեկը: Սուլթանական Թուրքիայի կառավարող շրջանները գաղանաբար կոտորածի ենթարկեցին մոտ միլիոն ու կես հայ բնակչություն՝ անապատի վերածեցին ամբողջ Արևմտյան Հայաստանը:

Օսմանյան կայսրության մեջ հայկական զանգվածային կոտորածներ տեղի ունեցան դեռևս XIX դարի վերջերին: Արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը 1894—1896 թթ. բնաջինջ արեց մոտ երեք հարյուր հազար մարդ: Սակայն, երիտասարդ թուրքերի ազգայնամոլ կուսակցությունը, որը իշխանության գլուխ անցավ 1908 թ., վարեց ավելի դաժան քաղաքականություն:

Երիտթուրքերի մասին «Պրավդա» թերթը 1912 թ. գրել է, թե «Նրանց ձգտումը թուրքացնել Օսմանյան կայսրությունում բնակվող սլավոններին, հայերին, հրեաներին և ուրիշներին ընդունեց ավելի կոպիտ և համառ բնույթ, քան Աբդուլ Համիդի ժամանակ»:

Երիտասարդ թուրքերի մոլի ազգայնական կուսակցությունը, հետապնդելով տարածողական նպատակներ և շցանկանալով լսել ազգային փոքրամասնությունների որևէ իրավունքի մասին, նախապատրաստեց մի նոր, անօրինակ ոճրագործություն: Որպեսզի վերջ տա Հայկական հարցին և դյուրություն մը իրականացնի իր պանթյուրքիստական ցնորամիտ նպատակները, նա որոշեց ֆիզիկապես ոչնչացնել օսմանյան ծանր լծից ազատվել ցանկացող հայ ժողովրդին:


Այդ զարհուրելի ծրագիրը երիտթուրքերի կառավարությունը իրականացրեց առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ ամենայն բարբարոսությամբ: Ջարդերը սկսվեցին դեռևս 1914 թ. վերջերին: Սկզբում նենգորեն և գաղտնի կոտորեցին դիմագրելու ընդունակ բնակչության մեծ մասը: 1915 թ. ապրիլի 24-ին բանտարկվեցին ու ոչնչացվեցին արևմտահայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ: Ձոհերի թվում էին ականավոր գրողներ, բանաստեղծներ, երաժիշտներ ու հրապարակախոսներ՝ Գրիգոր Ձոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սեվակը և շատ ուրիշներ: Ջարդարարներն այնուհետև անցան անօդանական բնակչության համընդհանուր կոտորածներին: Սկսվեց կանանց, երեխաների ու ծերունիների անխնա բնաջնջում, ընդ որում, նրանց մի մասը կոտորվեց հայրենի գյուղերում ու քաղաքներում, մյուս մասը, որ բռնի տեղահան էր արվել՝ ձանապարհներին, երրորդ մասը ոչնչացավ Միջագետքի անապատներում:

Կոտորածներն աննախագես էին: Ականատեսները, այդ թվում հայերը, արաբները, քրդերը և շատ եվրոպացիներ ու առանձին թուրք պաշտոնյաներ սարսափով են պատմել կատարված զարկելի ոճրագործությունների մասին⁴⁷¹:

Հայկական կոտորածները, որ առանձնապես ծավալվեցին 1915 թ., շարունակվեցին հետագա տարիներին Միջագետք և կայսրության մյուս անկյունները քրոջված հայ բնակչության նկատմամբ: Ջարդեր տեղի ունեցան Արևմտյան Հայաստանի բոլոր մասերում, Թուրքիայի հայաբնակ բոլոր վայրերում:

Ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, գավառական իշխանություններին մի շարք ստորին պաշտոնյաներ փորձեց են արել շրկատարել կենտրոնական իշխանության հրամանները, որոնցում պահանջվում էր անխնա բնաջնջել հայ բնակչությունը: Այդպիսի արարքների համար նրանք ոչ միայն հեռացվել են պաշտոններից, այլև գնդակահարվել: Նշենք նաև այն հանգամանքը, որ Սիրիա ու Միջագետք քրոջված հայ գաղթականությունը, որ գտնվում էր ծայրահեղ թշվառ կացության մեջ, գաղտնի օգնություն էր ստանում տեղի արաբ բնակչության կողմից:

Հայերի մասսայական կոտորածների քաղաքականությունը ցեղասպանության—գենոցիդի քաղաքականություն էր, որ մանրամասնորեն մշակեցին և անողորբար իրականացրին երիտթուրքերը և մասնավորապես նրանց երեք ղեկավարները՝ արյունարբու դահիճներ Թալեաթը, էնվերը և Ջեմալը:




Վանք քաղաքի կոտորածներից հետո

Թուրքական մարդասպանները որոշ իմաստով ֆաշիստ եղեռնագործների նախատիպերն են եղել: Պատահական չէ, որ դիվանահար «Ֆյուրերը» երբեմն վկայակոչում էր երիտթուրքական դահիճներին և նրանց «փորձը»: Այսպես, 1939 թ. օգոստոսին, Լեհաստանի վրա ֆաշիստական հորդանների հարձակման նախօրյակին, Օբերդալցբուրգ քաղաքում հրավիրված մի խորհրդակցության ժամանակ նա իր գեներալներին հիշեցրել է հայկական կոտորածները: Ոչ մի ուշադրություն հասարակական կարծիքին, հարկավոր է անխնա կոտորել տղամարդկանց, կանանց և երեխաներին, հարկավոր է ոչնչացնել ողջ սլավոնական ռասան,— բարբառում էր Հիտլերը: «Ո՞վ է այսօր հիշում հայերի ջարդերը»:

Կոտորածների ժամանակ արևատահալերը, որտեղ այդ հնարավոր էր, դիմեցին զինված դիմադրության, ինքնապաշտպանական կռիվներ: Իրենց կյանքն ու պատիվը փրկելու համար հերոսական պայքար մղեցին Վանի, Ուրֆայի, Շատախի, Շապին-Գարահիսարի, Մասունի և այլ քաղաքների ու շրջանների հայ բնակիչները: Առանձնապես հաջող անցավ Վան քաղաքի ինքնապաշտպանությունը, որը տևեց մոտ մեկ ամիս: Համաժողովրդական անձնազոհ պայքարով և ռուսական բանակի զորամասերի օգնությամբ Վանի բնակչությունը փրկվեց կոտորածներից: Անզիջում պայքարի շնորհիվ հաջողությամբ պսակվեց նաև Մուսա լեռան հերոսամարտը, որի մասին, ի դեպ, տարիներ հետո լույս տեսավ ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հայտնի վեպը: Հետաքրքիր է նկատել, որ փոքրաթիվ հայ բնակչության այդ հերոսական դիմադրությունը թուրք շարժարարներին, ոգևորել է Սլովենիայի լեռներում 1942 թ. շրջապատված հարավսլավական պարտիզաններին գերմանախտալական ֆաշիստների դեմ մղած մարտերում:

Արևատահալերի զանգվածային կոտորածների դեմ իր ձայնը բարձրացրեց ժամանակի առաջավոր ու մարդասեր հասարակչությունը: Հայ ժողովրդի ցեղասպանության դեմ հանդես եկան Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը, Յուրի Վեսելովսկին և ուրիշները Ռուսաստանում, Անատոլ Ֆրանսը և Ռոմեն Ռոլանը՝ Ֆրանսիայում, Ֆրիտցոֆ Նանսենը՝ Նորվեգիայում, Կարլ Լիբկնիխտը և Յ. Լեպսիուսը՝ Գերմանիայում, Ջեյմս Բրայսը՝ Անգլիայում և ուրիշներ: Տեղի ունեցան բողոքի ցույցեր, ժողովներ և հավաքույթներ, ընդունվեցին համապատասխան որոշումներ: Այդ բոլորը, սակայն, ոչ մի ազդեցություն չունեցավ ջարդարարների վրա:



Մեծ եղևոնին նվիրված հուշարձանից Երևանում

և վերածնությունը ապահովելու գործում: Ավետիք Իսահակյանը ամենայն իրավամբ գրել է. «Հրդեհվող քաղաքների, արյան հեղեղների, աննպատակ ու անհամար զոհերի վրայով վերջապես մեզ էլ հասավ դարերի մեծագույն հանճար Լենինի մարգարեական, զգաստացնող ձայնը: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը փրկեց և կյանքի կոչեց հայ ժողովրդին, որը կանգնած էր գերեզմանի եզրին: Սկսվեց իսկական վերածնությունը, որի մասին ժողովուրդը երազել էր դարեր շարունակ... և նոր շինված մարդսին ժողովուրդը երազել էր դարեր շարունակ... և նոր շինված մարդսին աշխարհում հայ ժողովուրդը ձեռք բերեց վաղուց կորցրած պետականությունը, ազգային և համամարդկային կուլտուրայի զարգացման ազատություն և հավերժական եղբայրություն ուս ժողովրդի և մյուս ժողովուրդների հետ»:

Պատմության ընթացքը ցույց տվեց, որ հայ ժողովրդի բախտը իսկապես կապված է ոչ թե արևմտյան կապիտալիստական պետությունների, ինչպես քարոզել են հայ ազգայնականները, այլ սոցիալիստական հեղափոխության, Սովետական Ռուսաստանի հետ:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Հայաստանի աշխատավորական մասսաների հերոսական հեղափոխական պայքարը, սովետական իշխանության հաստատումը Հայաստանում վերջ դրեց հայ ժողովրդի դարավոր տառապանքներին: Ոտքի կանգնելով ուս և մեր երկրի մյուս ժողովուրդների աջակցությամբ, նա անցավ խաղաղ, ստեղծագործական աշխատանքի, սկսեց կերտել իր նոր կյանքը և պայծառ ապագան: Հայ ժողովուրդն ունեցավ իր պետականությունը՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը, որը դարձավ Սովետական Միության Հանրապետությունների եղբայրական ընտանիքի իրավահավասար անդամը:

Անցյալում հետամնաց և մեծապես ավերված Հայաստանը սովետական իշխանության տարիներին ձեռք բերեց վիթխարի հաջողություններ: Վերականգնվեց քայքայված տնտեսությունը, ըստեղծվեց հզոր, բազմաճյուղ արդյունաբերություն, զարգացավ գյուղատնտեսությունը, ժողովրդական տնտեսությունը ենթարկվեց սոցիալիստական վերակառուցման, ծաղկեց գիտությունը և կուլտուրան:

Սովետական Հայաստանը դարձել է ողջ աշխարհում ցրված հայ աշխատավորական դանգվածների մայր հայրենիքը: Օտարության մեջ ապրող բազմահազար հայ բնտանիքներ իրենց հանգրվանին հասան Սովետական Հայաստանում: Գտնվելով հզոր Սո-

վետական Միության կազմում, հայ ժողովուրդը վստահ է իր ապագայի նկատմամբ:

Մեր ժողովուրդը, ողջ առաջավոր մարդկությունը շուտով նըշելու են հիտլերյան ֆաշիզմի նկատմամբ տարած մեծ հաղթանակի 30-ամյակը: Սովետական ժողովուրդը, որ Հայրենական մեծ պատերազմի ընթացքում տվեց 20 միլիոն զոհ, դայրույթով է հիշում ֆաշիստական ճիվաղների ոճրագործությունները և իր հաստատկամբն արտահայտում՝ վճռական պայքար մղելու ֆաշիզմի, միլիտարիզմի, բոլոր ուսակցիոն ու ազրեսիվ ուժերի դեմ, որպեսզի չլինեն նոր պատերազմներ ու կոտորածներ, որպեսզի չկրկնվի այնպիսի ողբերգություն, ինչպիսին ապրեց հայ ժողովուրդը վաթսուն տարի առաջ:

ОТ ТРАГЕДИИ К ВОЗРОЖДЕНИЮ (К 60-летию геноцида армян в 1915 г.)

Резюме

В годы первой мировой войны произошла одна из величайших трагедий в новой истории человечества. Озверелые турецкие шовинисты, именуемые младотурками, беспощадно истребили полутора миллиона армян, разорили и опустошили всю Западную Армению, находящуюся под тяжелым игом султанского деспотизма. Исходя из интересов своей захватнической политики на Ближнем Востоке, кайзеровская Германия покровительствовала турецким палачам, а «союзнические державы» — Англия, Франция и другие проявляли преступное равнодушие. Благодаря только Великой Октябрьской революции, установлению Советской власти в Армении многогосударственный армянский народ встал на путь мирного труда и национального возрождения.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՐՈՍԸ

(Զորավար Անդրանիկի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Անդրանիկ Թորոսի Օղանյանը (1865—1927), որը հայության լայն շրջաններին հայտնի է «բաջ Անդրանիկ» անունով, հայ ազգային-ազատագրական շարժման խոշորագույն դեմքերից մեկն է⁴⁷²: Իր մարտական-հայրենասիրական փայլուն գործունեությամբ նա վաղուց արդեն պատվավոր տեղ է զբաղեցրել մեր ժողովրդի հերոսական անցյալի՝ պատմության մեջ:

Քաղաքական պայքարի ասպարեզ մտնելով անցյալ դարի 90-ական թվականներին, Անդրանիկը մոտ 30 տարի շարունակ մարտընչել է սովետական արյունոտ բռնապետության դեմ, կազմակերպել և ղեկավարել է արևմտահայ գյուղացիության ինքնապաշտպանական, ազատագրական կռիվները: Մասնակցել է բազմաթիվ ճակատամարտերի և միշտ էլ, թե՛ պարտիզանական ջոկատներ, թե՛ կանոնավոր բանակի զորամասեր ղեկավարելիս, հանդես է բերել անօրինակ խիզախություն և հնարամտություն: Թշնամուն հաղթելը, ինչպես ասում են, նրա «սովորությունն» է եղել:

Անվեհճեր մարտիկի և զորավարի անունը ոգեշնչել է ժողովրդի ազատասեր բոլոր խավերին: Ժամանակակիցները նրան տվել են հայկական Գարիբալդի, Լեոնային արժիվ, Անհաղթ գյուցադն և նման այլ մականուններ: Նրա մասին, դեռ իր ժամանակ, հյուսել են բազմաթիվ երգեր ու լեգենդներ:

Անդրանիկը միաժամանակ աչքի է ընկել իր համեստությամբ, պարզությամբ, ազնվությամբ ու մարդասիրությամբ: Այս բոլորը, անկասկած, ավելի են բարձրացրել նրա հմայքը ժողովրդական զանգվածների մեջ: Նրան չէր կարելի շահարգել ու չսիրել: Բնորոշ են այս տեսակետից այն տողերը, որ գրել է ուսական թերթերից մեկը Անդրանիկի մասին 1915 թ. «Ֆիզիկական արիությունը և իսկական գինվորական բաշտությունը Անդրանիկը զուգակցել է հոգեկան խոր ազնվության և լայն սրտի բարության հետ: Լինելով մեղմ և անվերապահ մարդասեր, նա մշտապես ետ է պահել իր բարեկամներին ավերորդ դաժանությունից... Զգայուն, ուշիմ է և չիմականալով, թե ինչ է անձնական կյանքը, նա չի հասկանում մարդ-

կանց բուժ եսասիրությունը: Ով գոնե մեկ անգամ հանդիպել է Անդրանիկի հետ, չի կարող չսիրել այդ օրիգինալ մարդուն»:

Հարազատ ժողովրդի իդձերով ու հույսերով ապրող քաջ գաւրահիսարցիին, սակայն, ունեցել է նաև վրիպումներ ու մոլորություններ: Նա միշտ չէ, որ հստակ պատկերացում ուներ իր ժողովրդի ազատագրության ձիշտ ուղու մասին, միշտ չէ, որ ըմբռնել է բարեկամի ու հովանավորողի դիմակ հաղած «մեծ տերություններն» խարդախ քաղաքականությունը:

Բայց Անդրանիկը ո՛չ քաղաքագետ էր և ո՛չ էլ դիվանագետ: Չնայած այն բանին, որ օժտված էր առողջ դատողությամբ և ժողովրդական իմաստության բարեմասնություններով, այնուամենայնիվ, նրա համար երբեմն դժվար էր ձիշտ կողմնորոշվել հայկական ազատագրական շարժման և ժամանակի միջազգային հարաբերությունների բավական բարդ ու խճճված հարցերում: Նա մարտիկ էր, պարտիզան և զորավար, իր կոչումն էր կազմակերպել զինված ելույթներ բռնակալների դեմ ու զենքը ձեռքին կրուվել ժողովրդի ազատության համար: Եվ այդ նա անում էր չզերականցված հերոսությամբ ու վարպետությամբ:

Անդրանիկ Օղանյանը ծնվել է 1865 թ. փետրվարի 13 (25)-ին, պատմական Շապին-Գարահիսար քաղաքում, արհեստավորի ընտանիքում: Պատանի Անդրանիկը ցանկացել է զնալ հոր ճանապարհով՝ զբաղվել արհեստով: Բայց ժամանակի դժնդակ իրակացությունը ստիպում է նրան հրաժարվել իր մտադրությունից և դառնալ պրոֆեսիոնալ հայդուկ-պարտիզան, որոնց թիվն այդ տարիներին աստիճանաբար ալիւնում էր ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ սուլթանական թուրքիայի տիրապետության տակ գտնվող մյուս երկրներում:

Արևմտահայերի վիճակը 1880—1890 թթ. ինչպես հայտնի է, ալիւի ծանրացավ: Արյունաբերու սուլթան Համիդը դիմում էր ամեն միջոցի, որպեսզի իրագործի հայերի բնաջնջման իր հրեշավոր քաղաքականությունը: Ալիւի էին սաստկանում անլուր ճնշումներն ու հարստահարությունները, կողոպուտներն ու ալերումները: Սանձազերծ բռնակալներն սպանում էին և անպատիժ մնում, առևանգում էին կանանց ու աղջիկներին, ոտնահարում մարդկանց արժանապատվությունը:

Այս բոլորը ծանր ապրումներ էին պատճառում ազատասեր ու հայրենասեր երիտասարդին: Նա որոշում է մասնակցել հարստահարիչների դեմ սկսված շարժմանը և պաշտպանել բազմաշարք հայրենակիցների կյանքը, գույքը և պատիվը: Եվ ահա 1891 թ., մի խումբ ընկերների հետ, նա երդում է տալիս նվիրել իրեն արևմրտահայության ազատագրման գործին:

1890-ական թվականներին, երբ բռնակալ սուլթան Համիդը սկսեց արևմտահայերի մասսայական կոտորածները, հայ գյուղացիները զենքի դիմեցին Սասունում (1894 թ.) և Զեյթունում (1895 թ.): Միաժամանակ ակտիվ գործունեություն ծավալեցին մի շարք հայդուկ-պարտիզաններ՝ Աղբյուր Սերոբը, Գևորգ Չավուչը, Վաղգեն Տերոյանը և ուրիշներ, որոնք իրենց զինված խմբերով ինքնապաշտպանական կոիւներ էին մղում ջարդարարների դեմ: Այդ հերոսական մարտերին գործուն, անմիջական մասնակցություն ունեցան քաջարի Անդրանիկը և նրա ընկերները:

Արևելահայերից համապատասխան օգնություն ստանալու նըպատակով Անդրանիկն անցնում է Ռուսաստան՝ Ղրիմ, Կովկաս և ապա նորից վերադառնում Արևմտյան Հայաստան: Ազատագրական պայքարին որդեգրված մարտիկն այստեղ նոր կապեր է հաստատում գյուղացիների և տեղի ազատամիտ, հայրենասեր գործիչների հետ և մասնակցում ժողովրդական ինքնապաշտպանական մարտերին ու ապստամբական ելույթներին: Միաժամանակ կազմակերպում է զինված խմբեր, գլխավորում նրանց և վարում կոիւներ թուրքական ինչպես կանոնավոր զորքի, այնպես էլ զանազան հրոսակախմբերի դեմ: Այս ժամանակաշրջանում առանձնապես աչքի ընկան այն մարտերը, որ տեղի ունեցան Մշո ս. Առաքելոց վանքում, 1901 թ. նոյեմբերին: Անդրանիկի սխրագործությունների համբավը տարածվեց Հայաստանում, Կովկասում, Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայում:

1904 թ. գարնանը նորից ապստամբության դրոշ բարձրացրեց Սասունի հայ գյուղացիությունը: Տեղի ունեցան կատաղի մարտեր թուրքական զորքերի և ապստամբ գյուղացիների միջև: Անդրանիկն իր ջոկատով գործուն մասնակցություն ունեցավ այդ կոիւներին և բազմիցս փայլուն հաղթանակներ տարավ մի քանի անգամ գերակշռող թուրքական ուժերի նկատմամբ: Իր անհամեմատ փոքր ջոկատով, հայտնում էր ժամանակակիցներից մեկը, քաջ պարտիզանը «մի անգամ չէ, որ հաղթանակ է տանում սուլթանի զորքերի ուժեղ զորամասերի նկատմամբ: Միշտ և ամենուրեք լինելով բոլո-

կի հետ, նրան համարում էր «վերին աստիճանի եռանդուն, քաջարի և անձնվիրորեն խիզախ հրամանատար»:

Անդրանիկը աչքի ընկավ նաև այն կոիվներում, որոնք տեղի ունեցան Արևմտյան Հայաստանում 1916 թ.: Ետ շարտեզով թուրքական զերայանց ուժերը, նա այդ տարվա փետրվարին ազատեց Բիթլիս, իսկ մարտին Մուշ քաղաքները: Խիզախ մարտիկը և զորահրամանատարը պարզևատրվեց մի շարք շքանշաններով: Ավելի ուշ նրան շնորհվեց գեներալ-մայորի աստիճան:

Անդրանիկը ողջունեց ցարական կարգերի տապալումը Ռուսաստանում: Նա մեծ հույսեր կապեց Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հետ: Առողջ բնազդը, կյանքի փորձը և իմաստովյունը նրան բերեցին այն համոզման, որ հայ ժողովուրդը կարող է ռեալ օգնություն սպասել միայն Սովետական Ռուսաստանից: 1918 թ., երբ թուրքական զավթիչների արշավանքի հետևանքով Անդրկովկասում ստեղծվել էր ճգնաժամային վիճակ, գեներալ-մայոր Անդրանիկը որոշեց իր ուժերը տրամադրել Սովետական Ռուսաստանին: Հուլիսի 14-ին նա հեռագիր ուղարկեց Բաքու՝ Կովկասի արտակարգ կոմիսար և Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ստեփան Շահումյանին, որտեղ ասվում էր. «...Նախիջևանի գավառը, ուր ներկայումս գտնվում եմ իմ ջոկատով, հայտարարում եմ Ռուսաստանի հանրապետության անբաժան մասը: Խնդրում եմ հայտնել ում հարկն է, որ ես իմ ջոկատով այսօրվանից գտնվում եմ Ռուսաստանի կենտրոնական կառավարության տրամադրության տակ և ենթարկվում նրան: Կաշխատեմ արգելակել թուրքական զորքերի մուտքը Նախիջևանի գավառ: Սպասում եմ պատասխանի և կարգադրության»:

Ստեփան Շահումյանը բարձր գնահատեց Անդրանիկի այս քայլը: Մի քանի օր հետո նա ուղարկեց պատասխան հեռագիր: «Ժողովրդական առաջնորդ Անդրանիկին: Ձեր հեռագիրը ստացա: Լրիվ տեքստը հաղորդել եմ Մոսկվա, Կենտրոնական կառավարությանը: Իմ կողմից հանձին Ձեզ, ողջունում եմ իսկական ժողովրդական հերոսին: Եթե պարոնայք Քաջազնունիները և մյուսները Ձեզ նման լինեին, հայ գյուղացիությունը չէր ապրի ներկայիս ողբերգությունը: Ողջուն հաղորդեցեք Ձեր գրոշի տակ մարտնչող բոլոր խիզախ մարտիկներին և ամբողջ աշխատավոր ազգաբնակչությունը... Երբ մենք հաղթենք թուրքերին, խաներին ու բեկերին, վրաց իշխաններին ու հայ բուրժուազիային, այն ժամանակ ամբողջ Անդրկովկասի միավորված գյուղացիներն ու բանվորները

սովետական իշխանություն կհաստատեն իրենց ընդհանուր համագործակցում և կրկին կկապվեն Ռուսաստանյան մեծ ռեսպուբլիկայի հետ: Ուրախ կլինեի Ձեզ անհրաժեշտ աջակցություն ցույց տալու: Գուցե ուղիներ որոնենք կապ պահպանելու համար»:

Թուրքական բանակի ներխուժումը Անդրկովկաս, Բաքվի հերոսական կոմունայի անկումը հնարավորություն չտվեցին Անդրանիկին իրադրոժելու իր նոր ծրագիրը: Սակայն, անխոնջ և տոկուն մարտիկը շարունակեց իր ջանքերը, դիմեց ամեն հնարավոր միջոցի՝ Հայաստանը ազատագրելու թուրք ջարդարարներից:

1918 թ. վերջերից սկսած Անդրկովկասի ու Հայաստանի փաստական տերերը դարձան այսպես կոչված «դաշնակից» տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները: Ժողովրդի վիճակը շարունակում էր մնալ ծանր, ողբերգական: Անդրանիկը տեսնում էր այս և խոր հիասթափություն ասպրում: Մյուս կողմից զնալով ավելի էին խորանում և թըշնամական կերպարանք ստանում տարածայնություններն Անդրանամական կերպարանք կառավարության միջև: Այս և մի շարք այլ նիկի և դաշնակցական կառավարության միջև: Այս և մի շարք այլ հանգամանքների հետևանքով Անդրանիկը որոշում ընդունեց հեռանալ Հայաստանից: 1919 թ. ապրիլին, էջմիածնում, Անդրանիկը ցրեց իր զորամասը, զենքերը հանձնեց կաթողիկոսին, և ապա անցավ արտասահման:

Եվրոպական մի շարք երկրներ շրջելուց հետո Անդրանիկն ի վերջո հաստատվեց Ամերիկայի Միացյալ Նահանգներում (Կալիֆորնիայում), ուր և վախճանվեց 1927 թ. օգոստոսի 31-ին: Թաղվեց Ֆրեզնոյում: 1928 թ. Անդրանիկի աճյունը փոխադրվեց Փարիզի Պեր-Լաշեզ գերեզմանատունը:

Իր կյանքի վերջին տարիները Անդրանիկը անցկացրեց օտար երկնակամարի տակ: Բայց նա երբեք իր կապերը չկտրեց հարազատ ժողովրդի և երկրի հետ: Հայ ժողովրդի սիրված հերոսը հետաքրքրվել ու ոգեշնչվել է Սովետական Հայաստանի հաջողություներով, աշխատել է օգնել նրան, հանդես է եկել նրա թշնամիների դեմ: Դեպի հայրենիքն ունեցած ջերմ վերաբերմունքի արտափայտություն պետք է համարել սիմվոլիկ իմաստ ունեցող այն հարատևողությունը, որ հուշակավոր զորավարն իր թանկարժեք սուրբ ուղարկեց Սովետական Հայաստան, որը և պահպանում է նրանի պետական պատմական թանգարանում: Հայաստանի օգնության կոմիտեի պատվիրակներին, որոնք 1926 թ. ժամանել էին Նյու Յորք, Անդրանիկը գրում էր. «Ուրախությամբ կարդացի թերթերուն մեջ այն

գեղեցիկ և գործնական կոչը Հայաստանի վերաշինության համար, որ կազմված էր Նյու Յորքի մեջ հարգելի ազգայիններու մասնախումբե մը, ուղղված բոլոր Ամերիկայի հայության, ի նպաստ Հայրենիքի վերաշինության մեծ գործին:

Հուսով եմ, որ Ամերիկայի բովանդակ հայությունը գիտակցութեամբ ընդառաջ պիտի երթա լիառատ նյութական աջակցութեամբ: Ի սրտե կը մաղթեմ կատարյալ հաջողություն:

Եգիպտոսի հայ զաղութը ինձ նվիրած է սուր մը, գեղեցիկ արվեստ մը կա շինության մեջ: Արդ, բարեբախտություն ունիմ ձեզի հետ ուղարկելու Հայաստան, որպեսզի իմ ցանկությանս համաձայն նվիրեք Հայաստանի թանգարանին, որուն համար խնդրում եմ ընդունեք իմ խորին շնորհակալությունը: Մոտ ժամանակի մեջ ձեզի պիտի ուղարկեմ, Նյու Յորք:

Հաճեք թարգման ըլլալ և իմ սիրալիր բարեներս հաղորդել ալևոր Արարատի հովանիին տակ գտնվող ստեղծագործող, ժրջան ու աշխատող Հայաստանի պետական պաշտոնյաներուն, իմ հայ ժողովրդին և Հայաստանի զմայլելի ծաղիկներուն՝ հայ որբերուն»:

Խիստ բնորոշ է նաև այն ճառը, որ նա արտասանել է Մովսեսիան Հայաստանի 6-րդ տարեդարձի առթիվ Ֆրեզնոյում, 1926 թ. նոյեմբերի 28-ին կազմակերպված տոնակատարության ժամանակ: Դատապարտելով դաշնակցականներին, որոնք ատելությամբ են լցված դեպի հորհրդային Հայաստանը, Անդրանիկն ասել է, որ այժմ գոյություն ունի հորհրդային ազատ Հայաստան: Հայ ժողովուրդը առհավետ փրկված է շնորհիվ ռուս ազատասեր ժողովրդի, որն արհավիրքի ժամին ձեռք մեկնեց խորտակվող հայ ժողովրդին և փրկեց անդունդի եզրից: Այժմ բազմաշարք ու տանջված հայ ժողովուրդն ունի իր հայրենիքը: Այսօր հորհրդային իշխանության իմաստուն վարիչները, կրթնած հորհրդային Միության ուժին ու հարևանների եղբայրական հարաբերություններին, տանում են հայ ժողովուրդը խաղաղության, ապահովության ու շինարարության ուղիներով: Թող կեցցե հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Այս խոսքերը, որ արտասանեց հայ ժողովրդի ազգային հերոսը, իր մահվանից մոտ ութ ամիս առաջ, ըստ էության նրա քաղաքական կտակն էր սերունդներին:

НАРОДНЫЙ ГЕРОЙ

(К 100-летию со дня рождения генерала Андраника)

Резюме

Во второй половине XIX в. в Западной Армении, находящейся под жестоким господством турецкой деспотии, усилилось армянское национально-освободительное движение. Наряду с происходившими крупными вооруженными восстаниями народных масс, на арену справедливой борьбы выходило также немало партизанов-гайдуков. В 1890-х годах свою героическую деятельность начал и стойкий партизан, выдающийся деятель антиосманского освободительного движения Андраник Озаян (1865—1927). На протяжении примерно трех десятилетий он самоотверженно боролся против угнетателей и палачей, одерживал много побед над поработителями, умело организовывал самооборону народных масс. Уже в начале XIX-го столетия снискал уважение и любовь широких слоев своего народа и пользовался репутацией истинного героя. Со временем Андраник стал талантливым полководцем; в годы первой мировой войны он весьма успешно командовал полком армянских добровольцев, а в последующие годы—более крупными войсковыми частями. Являясь храбрым воином, превосходным мастером выигрывать победы Андраник, однако не всегда разбирался в сложных международных отношениях и поэтому иногда допускал ошибки, впадал в мир иллюзии. Правда, это продолжалось не долго. Народная мудрость, которой он был широко наделен, все же большей частью брала верх. Как до революции, так и после нее Андраник имел русскую ориентацию. Знаменательно, что летом 1918 г. он изъявил желание служить правительству Советской России, а в ноябре 1926 г., приветствуя шестую годовщину Советской Армении, публично заявил, что Армянский народ навсегда спасен русским народом.

ՊՐՈՖԵՍՈՐ ԼԵՈՅԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

1

Հայ նոր մշակույթի և մասնավորապես հայագիտության ակա-
նավոր ներկայացուցիչներից մեկն է Լեոն⁴⁷³: Ավելի քան հիսուն
տարի նա բեղմնավոր գործունեություն է ծավալել իր ժողովրդի
հոգևոր կուլտուրայի ու գիտական մտքի մի շարք կարևոր մարզե-
րում: Նա ստեղծագործել է որպես գրող, գրականագետ, հրապար-
ակախոս և պատմաբան: Գրչի այդ անխոնջ մշակը ղգալի աշխա-
տանք է կատարել մեր ժողովրդի բազմադարյան գրականության և
մասնավորապես պատմության ուսումնասիրության ու մասսայա-
կանացման ուղղությամբ:

Լեոն (Առաքել Բաբախանյանը) ծնվել է 1860 թ. ապրիլի 14-ին
Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում: Նրա հայրը՝ դերձակ և
ապա՝ ժամկոչ Գրիգորը աննշան վաստակ ունեւր: Բազմանդամ ըն-
տանիքի նյութական ծանր վիճակը հնարավորություն չտվեց պա-
տանի Առաքելին ստանալ սիստեմատիկ կրթություն: Տեղի թեմա-
կան ու քաղաքային դպրոցները ավարտելուց հետո նա զբաղվեց
ինքնագործացմամբ և համառ աշխատանքի շնորհիվ ձեռք բերեց
խոր գիտելիքներ և լայն էրուդիցիա: Խոսելով Լեոյի մասին, Ավե-
տիք Իսահակյանը նկատել է. «Անսպառ եռանդի տեր և շահագնաց
աշխատունակ՝ նվիրվեց ինքնակրթության և իրենից շինեց-կեր-
տեց գրական այն ուժը, որ երկար տարիներ եղավ տիրապետող
ղեմքերից մեկը կովկասահայ հասարակության մտավոր կյանքի
մեջ»⁴⁷⁴:

Հոր մահից հետո, 1879 թ., երիտասարդ Առաքելը փորձում է
աշխատանք գտնել Բաքվում, բայց անհաջողության հանդիպելով
վերադառնում է Շուշի և գրագրի պաշտոն վարում քաղաքի նոտարի
մոտ, իսկ ավելի ուշ՝ 1881—1893 թթ. աշխատում է տեղի հեռա-
գրատանը որպես հեռագրիչ: 1893 թ. նա փոխադրվում է Բաքու,
իսկ երկու տարի հետո՝ Թիֆլիս: Այնտեղ մոտ 12 տարի (1895—
1906) աշխատում է «Մշակի» խմբագրատանը, որպես այդ նշա-
նավոր թերթի մշտական աշխատակից և քարտուղար⁴⁷⁵:

Լեոն գրել սկսեց դեռևս 1870-ական թթ. վերջերից (նրա առա-
ջին թղթակցությունը տպագրվեց «Кавказ» լրագրում 1877 թ.):
Ավելի ուշ՝ 1880—90 թթ. նա պարբերաբար թղթակցում է «Մշա-
կին», «Արձագանքին», «Աղբյուրին», «Տարազին», «Արմենիային»,
«Մուրճին», կատարում է թարգմանություններ, հրապարակում ա-
ռանձին գրքեր և գրքուկներ: Արձագանքելով իր ժամանակի հայ
հասարակությանը հուղող հարցե-
րին, նա պատկերում է գավա-
ռահայության, մասնավորապես
գյուղացիության ծանր վիճակը,
մերկացնում համփաների շահա-
տակությունները, գրում Հայկա-
կան հարցի և արևմտահայու-
թյան ծանր կացության մասին,
քարոզում հայրենասիրական գա-
ղափարներ, շոշափում գրակա-
նության և կուլտուրայի հարցեր,
հանդես գալիս պահպանողա-
կան-ոեակցիոն հայ գործիչների
դեմ և այլն: Այդ տարիներին
Լեոն գտնվում էր Բաֆֆու և Գրի-
գոր Արծրունու գաղափարական
աղցեցության ներքո:



Պրոֆ. Լեո

Առանձնապես բեղուն եղավ մեր հեղինակի գրիչը XIX դարի
վերջերին և XX դարի առաջին երկու տասնամյակներին: Ավելի խո-
րանալով գրական ու գիտական աշխատանքի մեջ, Լեոն, որ օժտը-
ված էր զարմանալի եռանդով ու աշխատասիրությամբ, գրեց բազ-
մաթիվ հոդվածներ, գեղարվեստական երկեր, գրականագիտական
ու պատմագիտական մեծածավալ աշխատություններ:

Գրական-գիտական աշխատանքի հետ միասին Լեոն ինչպես
նախորդ շրջանում, այնպես էլ XX դարի սկզբներին զբաղվեց հրա-
պարակախոսությամբ՝ շոշափեց բազմաթիվ գրական-կուլտուրա-
կան և հասարակական-քաղաքական թեմաներ, արձագանքեց ռու-
սական առաջին հեղափոխության տարիների փոթորկալից անցքե-
րին, գրեց ոչ քիչ հոդվածներ առաջին համաշխարհային պատերազ-
մի արյունոտ դեպքերի ու 1917—1920 թթ. Անդրկովկասում ստեղծ-
ված տնտեսական ու քաղաքական ծանր իրադրության մասին: Հայ-
րենասերի շնչով ու կրքով գրված իր հոդվածներում նա բացահայ-

տում էր սևհարյուրակային ունակցիայի էությունը, իր գայրույթն արտահայտում արևմտահայերի աննախընթաց կոտորածները կազմակերպող երիտթուրքերի դեմ, մերկացնում Անդրկովկասի բուրժուանացիոնալիստական կուսակցությունների հակաժողովրդական քաղաքականությունը, լուսաբանում առօրյայի գրական-կուլտուրական և հասարակական այլևայլ հարցեր: Լեոյի հոգվածները դիպուկ են և սրամիտ, շնայած նրանցում կան նաև սխալ դրույթներ:

Հայտնի է, որ Լեոն շի եղել որևէ քաղաքական կուսակցության անդամ: Նա գործել է որպես «անպարտիական» մտավորական ու հասարակական գործիչ: Սակայն քաղաքական տեսակետներով նա, այնուամենայնիվ, կանգնած էր մշակականների, այլ կերպ ասած՝ հայկական բուրժուական լիբերալիզմի դիրքերում: Չնայած իր ժողովրդասիրությանը, դեմոկրատական հայացքներին, ու այն բանին, որ քննադատել է ցարական, բուրժուակալվածատիրական կարգերը, Լեոն քաղաքական ու հասարակական հիմնական հարցերում համերաշխ էր հայ լիբերալների հետ: Գլխավորապես հենց սրանով էլ բացատրվում են բազմավաստակ հեղինակի մի շարք սխալներն ու մոլորությունները, մոլորություններ, որոնց մասին նա հետագայում խոսեց հրապարակայնորեն ու ամենայն անկեղծությամբ:

Ի՞նչ դիրք բռնեց Լեոն Սովետական Հայաստանի նկատմամբ: Ժողովրդի շահերով ու բախտով ապրող ականավոր մտավորականը ի սրտե ողջունեց խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում: Եվ ոչ միայն ողջունեց: Նա պատրաստակամություն հայտնեց իր ուժերը տրամադրելու ազատագրված ու վերածնության ուղին բռնած հայրենիքի կուլտուրայի ու դիտության զարգացման գործին: 1924 թ. Սովետական Հայաստանի կառավարության հրավերով Լեոն Թիֆլիսից Երևան ժամանեց և աշխատանքի անցավ Երևանի պետական համալսարանում որպես պատմության դասախոս: Մանկավարժական-դասախոսական աշխատանքի հետ միասին նա շարունակեց իր գիտահետազոտական պրպտումները և հայագիտությունը հարստացրեց նոր ուսումնասիրություններով:

Լեոն վախճանվեց 1932 թ. նոյեմբերի 14-ին, Երևանում:

2

Լեոյի հարուստ ու բազմաժանր գրական ժառանգության մեջ խոշոր տեղ են գրավում նրա պատմագիտական աշխատությունները: Եթե իր ստեղծագործական կյանքի առաջին շրջանում՝ մոտավորապես 1880—1900 թթ. նա հանդես եկավ հիմնականում որպես

հրապարակախոս, գրող ու գրականագետ, ապա հաջորդ տարիներին՝ 1900—1930 թթ. Լեոն ղեկավարեց գլխավորապես պատմության հարցերով: Պատահական չէ, որ նա մեր ժողովրդի լայն խավերին հայտնի է որպես պատմաբան:

Լեոյի պատմագիտական գործունեությունը կարելի է բաժանել երկու հիմնական շրջանի՝ նախասովետական ու սովետական: Տարբեր շրջաններում հեղինակի ստեղծած աշխատությունները գրված են տարբեր աշխարհայեցողությամբ ու մակարդակով և այդ առումով համարժեք չեն:

Նախասովետական տարիներին անվանի պատմաբանը հրապարակեց պատմագիտական բազմաթիվ աշխատություններ, որոնց թվում «Հայկական տպագրություն» (2 հատոր, 1901—1902), «Ստեփանոս Նազարյանց» (2 հատոր, 1902), «Հովսեփ կաթ. Արղուի» (1902), «Գրիգոր Արծրունի» (3 հատոր, 1902—1905), «Ս. Մեսրոպ» (1904), «Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի» (1914), «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի» (1914), «Հայոց հարցի վավերագրեր» (1915), «Վանի թագավորությունը» (1915), «Վարդանանք» (1917) և այլն: Բացի այս ծավալուն գործերից, Լեոյի գրչին են պատկանում նաև մի շարք փոքր ուսումնասիրություններ ու բազմաթիվ հոգվածներ: Հիմնականում նախասովետական շրջանում ստեղծվեց հեղինակի գլուխգործոցը՝ «Հայոց պատմություն» քառահատոր ֆունդամենտալ աշխատության առաջին, երկրորդ և երրորդ հատորները (չորրորդ հատորը, որ դեռևս մնացել է անտիպ, գրված է սովետական իշխանության տարիներին՝ 1920-ական թթ.):

«Հայկական տպագրություն» երկհատոր աշխատությունը Լեոյի լավագույն գործերից է: Այստեղ տրված է ինչպես հայ տպագրության, այնպես էլ հայ ժողովրդի XVI—XVIII դդ. մտավոր ու քաղաքական կյանքի պատմությունը: Հեղինակը հանգամանորեն կանգ է առնում հատկապես XVII—XVIII դդ. հայ գրականության և ազատագրական շարժումների վրա: Այս աշխատությունը ժամանակին բարձր գնահատական ստացավ:

Ստեփանոս Նազարյանին և Գրիգոր Արծրունուն նվիրված հատորներում լուսաբանված են ոչ միայն այդ երկու նշանավոր գործիչների կյանքն ու գործունեությունը, այլև XIX դարի հայ գրական, մշակութային կյանքի և հասարակական-քաղաքական հոսանքների պատմության մի շարք կարևոր էջեր:

Երևանի ու Ղարաբաղի թեմական դպրոցների պատմությանը

նվիրված գործերը միաժամանակ արժեքավոր նյութեր են տալիս XIX դարի և XX դարի առաջին տասնամյակի հայկական դպրոցների, ինչպես նաև արևելահայերի կուլտուրական կյանքի մասին: Գրական աղբյուրների հետ միասին հեղինակը օգտագործել է նաև արխիվային ուշագրավ նյութեր:

«Հայոց հարցի վավերագրեր» գրքում գիտնականը աշխատել է ամփոփ գաղափար տալ հայ ընթերցողին հուզող «հայոց արյունոտ հարցի» մասին: Այդ նպատակով նա թարգմանաբար տալիս է խնդրին վերաբերող մի շարք կարևոր փաստաթղթեր-վավերագրեր, որոնք ստեղծվեցին միջազգային դիվանագիտության խոհանոցում XIX դարում և XX դարի սկզբներին (մինչև Առաջին համաշխարհային պատերազմը): Բացի ներածականից, դիրքն ունի վավերագրերին կցված ընդարձակ մեկնաբանություններ:

Բազմամյա քրտնաջան աշխատանքի արդյունքն է պրոֆ. Լեոյի «Հայոց պատմություն» մեծածավալ աշխատությունը, որտեղ ի հայտ են բերված հեղինակի պատմագիտական ամբողջ ուժը, գիտելիքներն ու տաղանդը: Հարկ է նկատել, որ Լեոն ծրագրում էր գրել հինգ հատոր, ընդ որում վերջին հատորը պետք է լուսաբաներ հայ գաղթօջախների պատմությունը: Սակայն հիվանդության պատճառով նա ի վիճակի չեղավ ավարտել այդ մեծածավալ աշխատության վերջին մասը:

«Հայոց պատմության» առաջին հատորը, որ լույս տեսավ 1917 թ. Թիֆլիսում, նվիրված է Հայաստանի հին պատմությանը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր թվականության V դարը: Գրքում հեղինակը հանգամանորեն կանգ է առնում աշխարհագրական միջավայրի հարցի վրա, խոսում նախահայկական շրջանի մասին, տալիս աղբյուրների տեսություն և ապա հարևան երկրների պատմության ընդհանուր ֆոնի վրա շարադրում հայ ժողովրդի քաղաքական, ինչպես և կուլտուրական զարգացման պատմությունը: Երկրորդ հատորը պետք է ընդգրկեր V—XV դարերը, կամ հեղինակի խոսքերով ասած՝ միջին դարերը, հայկական միջնադարը: Սակայն Լեոն չկարողանալով ամբողջովին իրականացնել իր ծրագիրը, այս հատորում նա շարադրեց միայն V—XI դարերի պատմությունը: Երրորդ հատորը լուսաբանում է հայ ժողովրդի XVI—XVIII դդ. պատմությունը, ընդ որում այստեղ մեծ ուշագրություն է դարձված ազատագրական շարժման, հայ-ռուսական հարաբերությունների և մշակույթի զարգացման հարցերի վրա:

Խոսելով Լեոյի նախասովետական շրջանի պատմագիտական

աշխատությունների մասին, պետք է նախ և առաջ նշել այն, որ դրանք զգալի թարմություն մտցրին ավանդական հայագիտության մեջ: Թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ շարադրման եղանակով այդ գործերը հաճելի նորություն էին և այդ պատճառով էլ ջերմ ընդունելության արժանացան ընթերցող հասարակության կողմից:

Անվանի պատմաբանը կարողացավ հաղթահարել կղերապահ-պանողական, սխոլաստիկական շատ կոնցեպցիաներ և հանդես բերեց նոր, գիտական մոտեցում հայ ժողովրդի պատմության մի շարք հանգուցային հարցերի նկատմամբ: Այդ հնարավոր եղավ շնորհիվ այն բանի, որ Լեոն իր պատմագիտական գործունեության առաջին իսկ տարիներից հարեց հայագիտության նոր, առաջավոր ուղղությանը և լայնորեն օգտագործեց իր ժամանակի ռուսական և արևմտաեվրոպական պատմագիտության խոշոր ներկայացուցիչների, ինչպես նաև ականավոր հայագետներ Ն. Մառի, Ն. Ագոնցի, Գ. Խալաթյանցի և ուրիշների հետազոտությունները:

Լեոն բազմիցս նկատել է, որ պատմագիտությունը պետք է դբադվի ոչ թե թագավորների ու զորավարների, այլ ժողովրդի պատմությամբ: Իր հոդվածներից մեկում նա գրում էր. «Պատմությունը վաղուց դադարել է լոկ պատերազմական թմբուկների և արքաների արձագանք լինելուց: Պատմությունը այժմ զվարճալի ընթերցանություն չէ, այլ գիտություն... նրա (պատմության) առջև ավելի մեծ, ավելի պատասխանատու գործ կա՝ ժողովրդի կյանքը դարերի ընթացքում... Թագավորները, իշխանները, եպիսկոպոսներն ու եպիսկոպոսապետները ժողովրդի պատմություն չեն, այլ այդ պատմության արտահայտությունը»⁴⁷⁶:

Ելնելով այս դրույթից, Լեոն աշխատեց լուսաբանել հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական ու մտավոր կյանքը և ցույց տալ նրա անցած բարդ ու դժվարին դարավոր ուղին: Եվ հենց այս հարցերն էլ կազմեցին նրա պատմագիտական աշխատությունների հիմնական բովանդակությունը:

Հայտնի է, որ կղերաֆեոդալական պատմագրության ներկայացուցիչները իղեալականացրել են անցյալը, փորձել են ժխտել սոցիալ-դասակարգային ճնշումների ու ներհակությունների առկայությունը մեր ժողովրդի պատմության մեջ: Ժխտելով այդ բոլոր ամեննայնի սխալ «տեսությունը», Լեոն մի անգամ ևս հիմնավորեց այն ճշմարտությունը, թե հայ ժողովրդական մասսաները ևս ենթարկվել են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին, «հայրենի» հարստահարիչների ճնշումներին ու կեղերումներին: Այս մասին նա գրել է ոչ

քիչ էջեր, անդրադարձել է իր մի շարք աշխատություններում: Բնորոշ է, որ դեռևս 1905 թ. Լեոն Տրապարակեց մի հոդված, ուր հենվելով Շիրակում գտնված արձանագրությունների և Մխիթար Գոշի «Պատաստանագրքի» տվյալների վրա, այն միտքը հայտնեց, թե հակառակ տիրապետող տեսակետին, Հայաստանում ևս եղել է ճորտատիրություն: Մերժելով Վահան Բաստամյանի կարծիքը, թե Հայաստանում երբեք ճորտեր չեն եղել, Լեոն նկատում էր. «Նախ և առաջ մեզ զարմացնում է այն կտրուկ ձևը, որով գիտնական վարդապետը ժխտում է ճորտությունը Հայաստանում: Երբեք, ասում է նա, գոյություն չէ ունեցել ճորտությունը: Ինչի՞ց գիտեք: Արդյոք այնքան լավ հայտնի՞ են հին հայկական կյանքի բոլոր ներքին պայմանները: Բաստամյանցը նույնիսկ դիտի, որ ճորտատիրական դրություն բացակայությունը մեծ չվերցնող մի ճշմարտություն է, որ նա հայտնի է ամենքին: Այդպիսի համոզմունքը, ձեռք է ալյուր էլ ընդհանուր է մեր մեջ, բայց հարցն այն է, թե որքա՞ն ճշմարտություն կա այդ համոզմունքի մեջ»⁴⁷⁷:

Ամփոփելով պատմական նյութերով հարուստ իր հոդվածը և չհամաձայնելով Բաստամյանի հետ, Լեոն գրում էր. «Հայաստանի հողն էլ ուրեմն ազատ չի եղել ստրուկ, անասունի պես վաճառվող հողագործի հեծեծանքներից, արյուն քստիներից: Իզուր էինք կարծում, թե մեր պապերը ոչ ճորտ են եղել, ոչ ճորտատեր»⁴⁷⁸:

Հայաստանի պատմությունը Լեոյի աշխատություններում տրված է ոչ թե մեկուսացված, ինքնամփոփ ձևով, այլ լայն ֆոնի վրա, սերտորեն կապակցված հարևան երկրների պատմության հետ: Հեղինակը անց է կացնում զուգահեռներ, կատարում համեմատություններ, նշում փոխազդեցություններ, հայտնաբերում առանձնահատկություններ ու ընդհանրություններ հայ և հարևան ժողովուրդների սոցիալական, քաղաքական ու մշակութային կյանքի միջև: Այս բոլորի հետևանքով Հայաստանի պատմությունը անկասկած ավելի է լուսաբանվում, ավելի հստակ ու ամբողջական դառնում:

Պատմագիտական աշխատություններն առավել արժեքավոր են այն դեպքում, երբ տալիս են ոչ միայն կոնկրետ նյութ, փաստեր, այլև ընդհանրացումներ, տեսական եզրակացություններ: Լեոյի գործերում կան և մեկը, և մյուսը: Նշանավոր պատմաբանը հայտնի է նաև իր սրամիտ դատողություններով ու փաստերի նուրբ վերլուծություններ:

Լեոն չի պատկանել այն պատմաբանների թվին, որոնք խուսափել են գրել ժամանակակից դեպքերի կամ թե մտաւոր անցյալի

մասին: Նա բազմաթիվ առիթներով շոշափել է ժողովրդին հուզող խնդիրները, փորձել իմաստավորել ընթացիկ քաղաքական ու սոցիալական անցքերը, միջազգային դիվանագիտության շղարշավորված խարդախ քաղաքականությունը: Հայրենասեր պատմաբանի մի շարք աշխատություններում խոսվում է արևմտահայության ծանր կացության, Հայկական հարցի, կովկասահայերի ներքին կյանքի, ազգերի փոխհարաբերությունների և այլ խնդիրների մասին: Ավելին: Անգամ հեռավոր անցյալին նվիրած աշխատություններում Լեոն յուրովի արտահայտել է իր ապրած ժամանակաշրջանի հասարակական տրամադրությունները, իր ձեռն ու ցանկությունները:

Պատմագիտական իր երկերը շարադրելիս Լեոն օգտագործել է բազմատեսակ ու բազմաբովանդակ աղբյուրներ, նյութեր և գրականություն: Նա պրպտումներ է կատարել ձեռագրատներում և արխիվներում, անհրաժեշտ նյութեր է քաղել հայ պատմիչների երկերից ու ժամանակագրություններից, հին հունական և հռոմեական հեղինակներից, ուսումնասիրել է վիմական արձանագրություններ, հենվել է հնագիտական, լեզվագիտական ու բանասիրական տվյալների վրա, կարդացել է ճանապարհորդական նոթեր, հուշեր, դիտական ուսումնասիրություններ և այլն: Եվ այս հսկայական նյութն ու գրականությունը բազմավաստակ պատմաբանը օգտագործել է ոչ թե մեխանիկորեն, այլ քննադատաբար: Քանիցս նա առիթներ է ունեցել խիստ քննադատության ենթարկելու պատմական աղբյուրները և բացահայտելու մի շարք հեղինակների սխալները, միակողմանիությունը և հետապնդած քաղաքական դիտավորությունը: Այսպես, օրինակ, Լեոն ցույց է տալիս, թե ինչպիսի միտումնաւորություն են հանդես բերել հռոմեական աղբյուրները հայ-հռոմեական պատերազմները լուսաբանելիս: Մասնավորեցնելով իր խոսքը Լուկուլլոսի դեպի Հայաստան կատարած արշավանքի մասին, նա գրում էր. «Հռոմեական աղբյուրները պայծառ և զեղեցիկ մանրամասնություններով են նկարագրում այդ արշավանքը: Բայց նրանք, տարաբախտաբար, մի ընդհանուր պակասություն ունեն—միակողմանիություն: Հիմնված լինելով վլիսավորապես Լուկուլլոսի պաշտոնական զեկուցումների և արշավանքին մասնակցած այլ հռոմեացի զինվորականների պատմվածքների վրա, այդ տեղեկությունները ամեն տեղ և ամեն կերպ աշխատում են փառաբանել Լուկուլլոսին և ստորացնել նրա հակառակորդներին: Այս միտումնավորությունը շահագործել է անգամ հրաշքները, ցույց

տալու համար թե նույնիսկ երկինքն էլ ջանք էր թափում, որ հոռմեացիների հաղթանակը լիակատար լինի: Սակայն այդ ծայրահեղ միակողմանիության մեջ էլ մնացել են շատ սկնարկներ, որոնք վկայում են, թե հոռմեական աղբյուրները թաքցնում են շատ բան, որ ձեռնտու չէ Լուկուլլոսին և նրա բանակին»⁴⁷⁹:

Լեոն քննադատական մտտեցում է հանդես բերել նաև մյուս, այդ թվում և հայ աղբյուրների ու հեղինակների նկատմամբ: Հայտնի է, որ նա, բարձր գնահատելով Մ. Չամչյանի «Պատմություն հայոց» եռահատոր աշխատությունը, միաժամանակ իրավացիորեն նշել է այդ գործի լուրջ թերությունները: Ականավոր հայագետի նման մտտեցումը, իհարկե, ճիշտ էր:

Սակայն Լեոյի նախասովետական շրջանի պատմագիտական աշխատությունները, վերը նշված և մի շարք այլ արժանիքների հետ մեկտեղ, ունեն նաև զգալի թերություններ: Բանն այն է, որ Լեոյի պատմահայեցողության վրա ուժեղ ազդեցություն է ունեցել իդեալիստական աշխարհայացքը, պատմական պրոցեսի ըմբռնման նրա մեթոդոլոգիական սկզբունքները կրթման հեղձեղուկ են եղել: Սրանից էլ բխում են նրա գործերի ընդհանուր բնույթի մի շարք սխալներն ու թերությունները:

Պատմաբանի երկերում գերազնահատված է «հոգևոր գործոնի» դերը մարդկային հասարակության զարգացման գործում: Թերագնահատելով նյութական-տնտեսական պայմանների, սոցիալ-դասակարգային հարաբերությունների, ժողովրդի պայքարի ու դիմադրական ուժի, քաղաքական անցքերի դերը և նշանակությունը, Լեոն հայ ժողովրդի պատմության մեջ տեղի ունեցած մի շարք խոշոր սեղաշարժեր բացատրում է, օրինակ, միայն զաղափարների, դպրոցների ու գրականության զարգացմամբ: «Հինգերորդ դարի սկզբին, հայ աշխարհը փրկվել էր կործանումից, ստեղծելով ազգային դաստիարակություն», — գրում էր նա⁴⁸⁰:

Լեոն այն կարծիքն ունեւր, թե պատմական իրադարձություններում վճռական դերը պատկանում է անհատներին, հատկապես թագավորներին ու զորահրամանատարներին: Հին Արևելքի երկրներում «պետության առաջադիմությունը և անկումը կախված էին միապետի անձնական հատկություններից»: Հայ պետականության հզորացումն ու թուլացումը ևս նա մեծ շափով կապում էր թագավորների ընդունակության կամ անկարողության հետ: Տիգրան II-ը քաջ էր ու տաղանդավոր, այդ պատճառով նա կարողացավ ստեղծել մեծ կայսրություն: Հովհաննես-Սմբատ Բագրատունին, «այդ

խեղճ ու անկարող մարդը... գերեզմանի ափը հասցրեց Շիրակի փոքրիկ պետությունը»⁴⁸¹: Լեոն միաժամանակ գտնում էր, որ պատմական իրադարձությունների մեջ խոշոր դեր են խաղում նաև պատահականությունները: Նրա կարծիքով «մարդկային հաջողությունների մեջ միշտ գլխավոր դերը կատարել է պատահականությունը»⁴⁸²:

Պատմության հարցերին նվիրված իր գործերում Լեոն մեծ նըշանակություն է տալիս կրոնին, շափազանցնում նրա նշանակությունը հայ ժողովրդի պատմության մեջ: Սոցիալ-դասակարգային և հասարակական-քաղաքական մի շարք անցքերի ու երևույթների հիմքում նա փորձում է տեսնել կրոնական դրդապատճառներ: Ավելին: Սոցիալ-դասակարգային բովանդակություն ունեցող և ֆեոդալիզմի դեմ ուղղված պայլիկյան ու թոնգրակյան շարժումների մեջ, օրինակ, Լեոն դնում էր կրոնադավանաբանական բովանդակություն⁴⁸³:

Պրոֆ. Լեոն տուրք է տվել, այսպես կոչված, աշխարհագրական գործոնի տեսությունը: Ունենալով սխալ մեթոդոլոգիական ելակետ, նա գերագնահատում է աշխարհագրական միջավայրի դերը, հաճախ դրան վերագրելով վճռական նշանակություն հասարակական զարգացման մեջ: Ժողովուրդների ոչ միայն տնտեսական կյանքը, այլև մշակույթը, զաղափարախոսությունը, հոգևոր աշխարհը և այլն, պայմանավորված է աշխարհագրական միջավայրով: «Եթե քաղղեանգիպտական քաղաքակրթությանն էր վիճակված կատարել համաշխարհային դեր, դրա գլխավոր պատճառն այն աշխարհագրական միջավայրն էր, ուր նա ձոխացավ»⁴⁸⁴:

Ի վերջո հարկ է նկատել, որ Լեոյի նախահեղափոխական շրջանի պատմագիտական աշխատությունները, որ գրված են տասնյակ տարիներ առաջ, մասամբ կորցրել են իրենց թարմությունը և որոշ հարցերում արդեն հնացել են: Այս վերաբերում է հատկապես «Հայոց պատմության» առաջին հատորին, ուր տրված է հայ ժողովրդի հին պատմությունը: Այժմ չի կարելի ճիշտ համարել այն տեսակետները, որ հեղինակը զարգացնում է մարդկային հնագույն քաղաքակրթության պարբերացման, հին Արևելքի տնտեսական ֆորմացիաների, ուրարտացիների, հայ ժողովրդի կազմավորման (էթնոգենեզի), հայկական պետականության սկզբնավորման և հայ հին մշակույթի, պատմահայր Մովսես Խորենացու պորբեմի և այլ հարցերի վերաբերյալ: Ժամանակակից պատմագիտության և հնա-

գիտության հավաստի տվյալները այսօր նոր լույս են սփռում անցյալում չպարզաբանված այդ խնդիրների վրա:

Սովետական իշխանության տարիներին՝ իր կյանքի վերջին տասնամյակում, պրոֆ. Լեոն գրեց մի շարք նոր աշխատություններ, նվիրված հայ ժողովրդի պատմության տարբեր հարցերին: Նա ավարտեց «Հայոց պատմության» չորրորդ հատորը, գրեց «Խոջալահան կապիտալ» երկհատորյակը (լույս է տեսել միայն առաջին հատորը), հրատարակեց «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» (2 հատոր), «Անցյալից» խորագիրը կրող իր հուշերը և մի շարք հետաքրքիր հոդվածներ: Լեոյի արխիվում պահվում են նաև դեռևս չհրատարակված ձեռագիր աշխատություններ («Մանուկ Հայաստան», «Հայերը համաշխարհային պատերազմի մեջ» և այլն), որոնք նույնպես գրված և ավարտված են այս շրջանում:

Ապրելով սովետական կարգերում, Լեոն աշխատեց հրաժարվել իր իդեալիստական աշխարհայացքից և կանգնել մատերիալիստական պատմահայեցողության դիրքերում: Տարեց պատմաբանը սկսեց ավելի շատ ուշադրություն դարձնել Հայաստանի սոցիալ-տնտեսական ու դասակարգային պայքարի հարցերի պատմության վրա, հաջողությամբ վեր հանեց ցարիզմի գաղութային քաղաքականությունը և արևմտյան պետությունների խարդախ դիվանագիտությունը Հայկական հարցում, սուր քննադատության ենթարկեց հայ ազգայնական կաղմակերպությունների ու կուսակցությունների գործունեությունը, վերանայեց ու վերագնահատեց անցյալի իր սխալ տեսակետները: Շատ բնորոշ են Լեոյի ժամանակակից սովետահայ ակնաւոր մտավորականներից մեկի՝ Դրաստամատ Տեր-Սիմոնյանի հուշերն այն մասին, թե ինչպես բազմավաստակ պատմաբանը փորձում էր «վերակառուցվել» նաև մանկավարժական աշխատանքում: Տեր-Սիմոնյանը 1932 թ. գրել է. «1926 թվին տղերիս գրողին վիճակվեց լսել Լեոյի մեկ դասախոսությունը պետական համալսարանի պատմա-գրական բաժանմունքի ուսանողների համար: Ֆրանսիական մեծ հեղափոխությունն էր դասախոսության թեման: Այդ դասախոսությունը տպավորվեց իմ մեջ որպես անմոռանալի մի հիշողություն: 66 տարեկան դասախոսը, որի գրեթե 40-ամյա գործունեությունը անցել էր իդեալիստական աշխարհայացքի գորեղ ազդեցության տակ, անկեղծորեն, համոզված ձգտում էր մատերիալիստորեն լուսաբանել 18-րդ դարի ֆրանսիական ժողովրդի մեծ դրամայի իրադարձությունները»⁴⁸⁵:

Չնայած այդ բոլորին Լեոյին, այնուամենայնիվ, շահողվեց

ճիշտ ըմբռնել մատերիալիստական-մարքսիստական պատմահայեցողությունը և նա զգալի շափով տուրք տվեց Մ. Ն. Պոկրովսկու պատմագիտական դպրոցին, որն այն ժամանակ, ինչպես հայտնի է, իշխող դիրք էր գրավում: Իսկ այդ այն հետևանքն ունեցավ, որ հայ գիտնականը սովետական շրջանում գրած իր աշխատություններում մեծ մասամբ գեհհիկ սոցիոլոգիզմի և ազգային նիհիլիզմի դիրքերից լուսաբանեց հայ ժողովրդի պատմության մի շարք հարցեր: Իներենք երկու օրինակ:

Հետևելով Մ. Ն. Պոկրովսկուն՝ առևտրական կապիտալի մասին ունեցած սխալ տեսությունը, Լեոն գտնում էր, որ «նոր ժամանակներում», այսինքն՝ XVI—XIX դդ., ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում հասարակական զարգացման հիմնական շարժիչ ուժը եղել է առևտրական կապիտալը: Այդ մասին իր «Խոջալահան կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ» աշխատության մեջ (լույս է տեսել 1934 թ.) նա գրում էր. «Եթե Արևմտյան Եվրոպայում առևտրական կապիտալի տիրապետությունը բերում էր իր հետ մի շարք խոշոր քաղաքական-հասարակական շարժումներ (նիդեռլանդական, անգլիական, ֆրանսիական հեղափոխություններ, դերմանական ռեֆորմացիա և այլն) հայերի մեջ էլ, չնայած որ սրանք ապրում էին բոլորովին տարբեր քաղաքական մշակութային միջավայրում, խոջալահան կապիտալը ծնող, դաստիարակող, ղեկավար դարձավ խոշոր և երկարատև մի երևույթի, որ նույնպես ազատագրական հեղափոխություն էր, բայց արդեն Առաջավոր Ասիայի հողի վրա, ասիական մեծ բռնապետություններից սեփական ազգային անկախություն խլելու համար»⁴⁸⁶:

Մասնավորեցնելով խոսքը հայ առևտրական կապիտալի, կամ իր խոսքերով ասած՝ խոջալահան կապիտալի մասին, Լեոն եզրակացնում էր. «Այսպիսով խոջալահան կապիտալը հանդիսանում է այնքան մեծ, այնքան անզերակչուելի մի հասարակական ուժ, որ նրան է միայն վերապահվում իրանով լցնել հայոց պատմության ամբողջ նոր շրջանը»⁴⁸⁷: Հավատարիմ այս դրույթին, նա հայ ժողովրդի XVI—XVIII դդ. ամբողջ պատմությունը՝ թե՛ քաղաքական ու քաղաքացիական, թե՛ տնտեսական ու մշակութային անսպում է միայն առևտրական կապիտալի հետ, միանգամայն անտեսելով մյուս դասերի ու դասակարգերի դերը: Այս տեսակետը, հասկանալի է, չի կարող դիմանալ քննադատության:

Ինչպես «Խոջալահան կապիտալում», այնպես էլ «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» երկհատորյա աշխա-

տուվյան մեջ (լույս է տեսել 1934 թ.) և իր հուշերում («Անցյալից», լույս է տեսել 1925 թ.) Լեոն հանգամանորեն խոսում է XVIII և XIX դդ. հայ ազատագրական շարժումների մասին: Ելնելով նիհիլիստական դիրքերից, տարեց հեղինակը բացասական վերաբերմունք է ցուցաբերում այդ շարժումների և դրանց գործիչների նրկատամբ: Այսպես, Լեոն փորձում էր նսեմացնել Դավիթ-Բեկի գլխավորած շարժումը, միամիտ ու սխալ էր համարում Իսրայել Օրու, Հովսեփ Էմինի և մյուս հայ ականավոր գործիչների ազատագրական ձգտումները և քաղաքական ծրագրերը⁴⁸⁸: Նրա կարծիքով XIX դարի երկրորդ կեսի արեւտահայ ազատագրական շարժումները չէին բխում ժողովրդի շահերից, ինքնաբուխ չէին և ըստ էության հանդիսանում էին «ինտելիգենտական մտածողության արգասիք»⁴⁸⁹: Իհարկե, այստեղ ևս թույլ են տրված լուրջ սխալներ:

Ավելորդ չէ հիշել, որ Լեոյի այս անընդունելի տեսակետները չէին համընկնում նույն հարցերին վերաբերող նրա նախահեղափոխական շրջանի հայացքներին: Եթե, օրինակ, իր կյանքի երեկոյին՝ անհաջող վերագնահատումների պահերին դրած աշխատություններում նա սե գույներով էր պատկերում XVIII դարի հայ ազատագրական շարժումները, ապա նախկինում ստեղծած իր գործերում սխառաբանում և ըստ հարկին էր արժեքավորում այդ նույն ժողովրդական, առաջադեմ շարժումները: Ինչպես տեսնում ենք, տրամագծորեն հակառակ կարծիքներ միևնույն խնդրի վերաբերյալ:

Լեոն անցել է դժվարին ու հակասություններով լի ուղի: Նրա թողած բազմաթիվ ու բազմաբովանդակ աշխատությունները ունեն ինչպես իրենց ուժեղ, այնպես էլ թույլ կողմերը: Տաղանդավոր հեղինակի պատմագիտական ժառանգության մասին կարելի է շատ խոսել ու վիճել: Բայց այդ ժառանգությունն ունի այնպիսի բացահայտ արժանիքներ և առավելություններ, որոնց մասին հազիվ թե կարելի լինի տարակուսել: Թվենք դրանցից մի քանիսը:

Անվանի պատմաբանի աշխատությունները պարունակում են փաստագրական հարուստ նյութ: Տասնյակ տարիների ընթացքում զարմանալի եռանդով ու աշխատասիրությամբ Լեոն բազմաթիվ ձեռագրերից, արխիվային փաստաթղթերից և գրական-պատմական աղբյուրներից հավաքել է հետաքրքիր շատ փաստեր ու տեղեկություններ: Հեղինակի աշխատություններում կարելի է գտնել արժեքավոր նյութեր հայ ժողովրդի ինչպես հասարակական-քաղաքական կյանքի, այնպես էլ հոգևոր մշակույթի պատմության վերաբերյալ:

Լեոյի գործերը շարադրված են հստակ, կենդանի և պատկերա-

վոր լեզվով ու վարակիչ հուզականությամբ: Այս հարցում նա չունի իր հավասարը մեղանում: Լեոն ոչ միայն գիտնական է, այլև գրող, խոսքի վարպետ: Կարգալով նրան, ընթերցողը հաճախ ստանում է գեղարվեստական հաճույք: Պատահական չէ, որ ականավոր պատմաբանի աշխատությունները սիրով են ընդունվում հասարակության լայն խավերում:

Հայ ժողովրդի պատմության շատ դրվագներ և մասնավորապես XVI—XVIII դդ. պատմության մի շարք հարցեր առաջին անգամ լուսաբանվել են Լեոյի աշխատություններում, ընդ որում այդ լուսաբանությունը չի կորցրել իր թարմությունը և գիտականությունը նաև մեր օրերում: Ականավոր պատմաբանը սուր գրչով է պատկերել այն դաժան հարստահարություններն ու անլուր ճնշումները, որոնց ենթակա էին թուրքական ու պարսկական բռնապետությունների լծի տակ տառապող հայ ժողովրդական մասսաները, հաջողություններ է շարադրել ժողովրդի ազատագրական պայքարը, նրա մշակույթի դարգացման պատմությունը և այլն: Լեոյի այս և մի շարք այլ հարցերին նվիրված ուսումնասիրությունները մեծ հետաքրքրություններ են կարդացվում նաև այսօր:

Մեր պատմաբաններից Լեոն առաջինն էր, որ հաղթահարելով մեծ դժվարություններ, իրականացրեց հայ ժողովրդի գիտական պատմության սիստեմատիկ շարադրանքը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև XIX դարը: Բազմավաստակ գիտնականը կատարեց խոշոր և շնորհակալ գործ:

Լեոյի պատմագիտական ժառանգությունն իր պատշաճ տեղն է գրավել հայագիտության պատմության մեջ: Այդ ժառանգության մի զգալի մասը արժանի է այն բանին, որ դառնա մեր ժողովրդի լայն խավերի սեփականությունը:

ИСТОРИОГРАФИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ ПРОФ. ЛЕО

Резюме

Одним из крупных представителей новой армянской культуры, арменоведения в частности, является Лео (Араке́л Бабахя́н, 1860—1932). На протяжении примерно пятидесяти лет он творил как писатель, литературовед, публицист и историк. Но в его литературном наследии главное место занимают его труды по истории и истории культуры армянского народа. В своих ценных исследованиях Лео выступил против ряда устаревших и антинаучных положений старой армянской историографии, внес в научный оборот богатый фактический ма-

териал, по-новому осветил ряд проблем истории Армении. В произведениях автора дореволюционного периода чувствуется влияние идеалистического мировоззрения. В годы Советской власти Лео работал профессором в Ереванском университете, создавая новые интересные труды. В этот период, он отдал определенную дань исторической школе М. Н. Покровского. Труды Лео написаны живым, образным языком, пользуются большой популярностью. Неслучайно, что его иногда называют «армянским Ключевским». Многие работы проф. Лео сохранили свою свежесть и научную ценность и в наши дни.

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԿՆՆՏՐՈՆԸ

(Երևանի պետական համալսարանի 50-ամյակի առթիվ)

Երևանի պետական համալսարանը, որի հիսուն տարին լրանում է այս տարվա՝ 1970 թ. դեկտեմբերին, խորհրդային Հայաստանի առաջին բարձրագույն դպրոցն է⁴⁹⁰: Անցնելով փառավոր ուղի, նա այսօր դարձել է Սովետական Միության առաջնակարգ ուսումնական հաստատություններից և ճանաչված գիտական կենտրոններից մեկը: Երևանի համալսարանը խոշոր ավանդ ունի բարձրորակ մասնագետներ պատրաստելու և ընդհանրապես մեր հանրապետության տնտեսության, մշակույթի ու գիտության զարգացման գործում:

1

Գլածորի, Տաթևի և հայկական միջնադարյան մյուս համալսարանները փակվելուց հետո Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատություններ ստեղծելու գաղափարը նորից արժարժվեց XIX դարում: Հայ առաջավոր մտավորականության մի շարք ներկայացուցիչներ, որոնց թվում խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանը, Միքայել Նալբանդյանը տենչում էին ունենալ նոր ժամանակների պահանջներին համապատասխանող հայկական բարձրագույն դպրոցներ: Ավելի ուշ, XX դարի սկզբներին Հովհաննես Թումանյանը, խիստ մտահոգված այդ խնդրով, գրում էր. «...Պետք է ստեղծել Հայոց Համալսարանը, ուր կարելի լինի բարձրագույն գիտությունները ավանդել ու սովորել հայերեն լեզվով: Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցել ու պահել մի գիտության տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի մեծ ջահ, — Հայկական Համալսարանը»⁴⁹¹:

Հարկ է նկատել, որ XIX դարում ստեղծվեցին բարձր տիպի մի շարք նշանավոր ուսումնական հաստատություններ՝ Լազարյան ճեմարան Մոսկվայում (1815 թ.), Ներսիսյան դպրոցը Քիֆլիսում (1824 թ.), Գևորգյան ճեմարանը էջմիածնում (1874 թ.) և այլն: Այս դպրոցները մեծ դեր խաղացին հայ ժողովրդի մշակույթի զարգացման մեջ, բայց, այնուամենայնիվ, նրանք չբարձրացան ժամա-

նակի համալսարանների մակարդակին և այդպիսի նպատակ նրանք չէին էլ հետապնդում:

Յարական ինքնակալության տապալումից և մասնավորապես Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Կովկասում աղգային համալսարաններ ստեղծելու հարցը ավելի գործնական դարձավ: 1918 թ. Թիֆլիսում հիմնվեց վրացական համալսարանը, իսկ 1919 թ. Բաքվում՝ ադրեջանականը: Նույն 1919 թ. մի խումբ հայ մտավորականների առաջարկով հայկական համալսարան կազմակերպելու հարցով զբաղվեց նաև այդ ժամանակ Հայաստանում իշխող դաշնականների կառավարությունը:

Համալսարանի կազմակերպման գործը հանձնարարվեց քիմիկոս, պրոֆ. Գալիթ Զավրիևին (Զավրյանին), որպես համալսարանի տեսուչ հրավիրվեց իրավաբան Յու. Ս. Գամբարովը (Գամբարյանը): Համալսարանի կազմակերպման գործին մասնակցեցին նաև հայագետներ Երվանդ Տեր-Մինասյանը, Ստեփան Մալխասյանը, Գարեգին Հովսեփյանը, Մանուկ Աբեղյանը, Հակոբ Մանանդյանը և ուրիշներ:

Հարցը քննարկվեց մի շարք անգամ: Սկզբում ենթադրվում էր համալսարանը բացել Երևանում, բայց հետո որոշվեց այն հիմնել Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լեհինական): 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի առևտրական դպրոցի շենքում տեղի ունեցավ համալսարանի հանդիսավոր բացումը: Փետրվարի սկզբից սկսվեցին պարապմունքները, որոնք, սակայն, երկար շտեղծեցին: Հունիս ամսին որոշում ընդունվեց համալսարանը փոխադրել Երևան, որը և կատարվեց ամռան ամիսներին: Նախատեսվում էր Երևանում պարապմունքները սկսել պատմա-լեզվաբանական և իրավաբանական ֆակուլտետներում հոկտեմբերի 1-ից, իսկ բնագիտական ֆակուլտետում՝ նոյեմբերի 1-ից: Սակայն Երևան փոխադրված համալսարանը չկարողացավ սկսել նորմալ պարապմունքներ, որովհետև չէր լուծվել շենքի հարցը, չկային ֆինանսական միջոցներ ու անհրաժեշտ հարմարություններ, երկրում՝ թուրքական զորքերի արշավանքների հետևանքով, տիրում էր քաղաքական խիստ ծանր ճգնաժամ:

Նոյեմբերի 29-ին Հայաստանի հեղափոխական աշխատավորները ուսական կարմիր բանակի զուգամասերի գործուն օգնությամբ ու մասնակցությամբ տապալեցին դաշնականների իշխանությունը և երկրում հաստատեցին սովետական կարգեր: Բազմաշարժար հայ ժողովուրդը ազատվեց իրեն սպառնացող նոր մասսայական կոտո-

րածների վտանգից և ստացավ խաղաղ ու ապահով ստեղծագործ աշխատանքի հնարավորություն:

Նորաստեղծ խորհրդային իշխանությունը, ի թիվս մի շարք միջոցառումների, որոշակի քայլեր կատարեց նաև երկրի կուլտուրական կյանքի զարգացման ուղղությամբ: 1920 թ. դեկտեմբերի 17-ին լուսավորության ժողովրդական կոմիսարիատը արձակեց հետևյալ հրամանը.

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Երևանի համալսարանը վերակազմվում է և վերակոչվում Երևանի ժողովրդական համալսարան:

2. Նախկին համալսարանի ֆակուլտետները փակվում են և հիմնվում է երկու բաժանմունք՝ բնագիտական և հասարակագիտական:

3. Նախկին համալսարանի բոլոր պրոֆեսորները, դոցենտները, պրիվատ-դոցենտները, դասախոսները և ասիստենտները համարվում են արձակված:

4. Նախկին համալսարանի գույքի պահպանության ամբողջ պատասխանատվությունը մինչև համալսարանի լիակատար վերակազմությունը ընկնում է հին վարչության վրա:

5. Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին կից կազմակերպվում է համալսարանի վերակազմության հանձնաժողով, որի վրա պարտավորություն է դրվում սույն հրամանը հաստատելու օրից մի շաբաթվա ընթացքում ներկայացնել կոմիսարիատի հաստատության նոր համալսարանի կազմակերպության հիմունքները, ծրագիրը, դասախոսների կազմն ու շտատները:

6. Հանձնաժողովի նախագահն է նշանակվում ընկ. Կողբեայանը, անդամներ՝ ընկ. ընկ. Չուբարյան, Պիեիկյան և ուսանողության երկու ներկայացուցիչներ»⁴⁹²:

Հանձնաժողովը, վերջացնելով իր վրա դրված պարտականությունները, ներկայացնում է անհրաժեշտ առաջարկներ, որոնց հիման վրա և լուսավորության ժողովրդական կոմիսար Ա. Հովհաննիսյանը դեկտեմբերի 28-ին արձակում է նոր հրաման.

ԵՐԵՎԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Երևանի համալսարանի վերակազմության հանձնաժողովի աշխատանքները համարել սվարաված և հանձնաժողովը լուծված:

ՍԱՆՈՐՈՒԹՅՈՒՆ.—Մինչև համալսարանի խորհրդի կազմակերպությունը հանձնաժողովի նախագահը մնում է իր պաշտոնում:

2. Ժողովրդական համալսարանի սույն հրամանին կցված ժամանակավոր կանոնադրությունը հաստատել:

3. Ժողովրդական համալսարանի խորհրդին վերապահել՝ մրշակել համալսարանի կյանքի ներքին կանոնադրությունը և հստակից մանրամասն հրահանգներ:

4. Հաստատել ժողովրդական համալսարանի անձնական կազմի շտատները:

Ա. 20 պրոֆեսոր

Բ. 30 դասատու

Գ. 7 լեզուների դասախոս

Ե. 10 տեխնիկական և գրասենյակային պաշտոնյաներ:

5. Հաստատել—

Ա. Հասարակագիտական ֆակուլտետում դասատուներ՝ ընկ. ընկ. Արեղյան Մ., Աղբալյան Ն., Տերտեյան Ա., Ղափանցյան Գ., Աբրահամյան Ռ., Լիսիցյան Լ., Մանանդյան Հ., Մելիք-Ալլահվերդյան Գ., Պիեիկյան Գ., Տիգրանյան Ս., Էղիյան Գ., Թորամանյան Ա., Չուբարյան Գ. և Խոնդկարյան Ա.:


Բ. Բնագիտական ֆակուլտետում՝ ընկ. ընկ. Հակոբյան Ա., Նալբանդյան Տ., Վարդապետյան Ա., Տեր-Պողոսյան Ա., Զավրչյան Գ., Գուրգենյան Գ., Ղամբարյան Ս., Սավիչ-Զաբլոցկի Կ. և Կողբեայան Ե.:

6. Երևանի համալսարանի շարժական և անշարժ գույքի բոլոր գործերը, հաշիվներն և այլն փոխանցել ժողովրդական համալսարանին:

7. Ներկա հրամանի գործադրության և ժողովրդական համալսարանի խորհրդի առաջին նիստի հրավիրման պարտականություններն ընկնում են Երևանի համալսարանի վերակազմության հանձնաժողովի նախագահի վրա:

8. Ժողովրդական համալսարանի խորհուրդն սկսում է իր գործունեությունը քաղաքում գտնված անդամների կեսից ոչ պակաս կազմով»⁴⁹³:

Ինչպես տեսնում ենք, նորաստեղծ ժողովրդական համալսարանը կազմակերպվում է 1920 թ. դեկտեմբերին, նախկին համալսարանի վերակազմության ճանապարհով: Նա կազմավորվում էր նոր սկզբունքներով և քաղաքական ու գաղափարական այլ դրոշի տակ: Այսպիսով, Երևանի ժողովրդական համալսարանը, որ հետա-



Ձեռքը ցվե վերածրուխտուց գոհուտողի վրադրել

գալում կոչվեց Երևանի պետական համալսարան, փաստորեն հանգիսացավ նոր կարգերի ծնունդ:

Նորաստեղծ ժողովրդական համալսարանի առաջին ռեկտոր ընտրվեց ականավոր պատմաբան, հետագայում Սովետական Միության գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հակոբ Մանանդյանը: Առաջին և հիմնադիր ղասախոսների շարքում էին այնպիսի նշանավոր գիտնականներ ու մանկավարժներ, ինչպիսիք էին հայագետներ Մանուկ Աբեղյանը, Գրիգոր Ղափանցյանը, Արսեն Տերտերյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Թադևոս Ավդալբեգյանը, Աշխարհբեգ Քալանթարը, արևելագետ Գևորգ Ասատուրը, քիմիկոս Ստեփան Ղամբարյանը, մեխանիկայի մասնագետ Ալեքսանդր Հակոբյանը, ֆիզիկոս Հարություն Անժուրը, կենսաբան Ավետիք Տեր-Պողոսյանը, գյուղատնտես Պապա Քալանթարյանը, մանկավարժներ Գուրգեն Էղիշյանը, Արշավիր Շավարժյանը, իրավաբան Գրիգոր Չուբարյանը և ուրիշներ: Քիչ ուշ համալսարանում սկսեցին զասախոսություններ կարդալ նշանավոր պրոֆեսորներ Հակոբ Հովհաննիսյանը, Հարություն Միրզա-Ավագյանը, Գրիգոր Արեշյանը, Հայկ Գյուլիքեվիսյանը, Լևոն Ռոտինյանը, Լևոն Հովհաննիսյանը և այլք:

Ժողովրդական համալսարանի ստեղծումը մեծ խանգավառություն առաջ բերեց ժողովրդի լայն խավերի և մասնավորապես նրա մտավորականության շրջաններում: Բաղմաթիվ հայ գիտնականներ ու խոշոր մասնագետներ, որ ապրում էին Հայաստանից դուրս, հայրենիք եկան համալսարանում աշխատելու համար: Այսպես, 1922—1924 թթ. գալով Հայաստան, համալսարանում աշխատանքի անցան հայտնի գիտնականներ և մանկավարժներ Հրաչյա Աճառյանը, Լեոն (Առաքել Բաբախանյանը), Վահան Արժրուհին, Համբարձում Քեչեկը, Սիմոն Հակոբյանը, Յուլիկ Խանդաղյանը, Ստեփան Լիսիցյանը, Հովակիմ Բեղելյանը և ուրիշներ:

Երևանի ժողովրդական (պետական) համալսարանի դերը մեր երկրի տնտեսական և մշակութային կյանքում բարձր գնահատվեց հանրապետության ղեկավար կուսակցական և պետական օրգանների ու գործիչների կողմից: Այդ տեսակետից խիստ բնորոշ է Ալ. Մյասնիկյանի կարծիքը: 1923 թ. նա Երևանի համալսարանի մասին գրել է. «...մեր կուլտուրայի կենտրոնն է կազմելու պետական համալսարանը Երևանում: Նրա համար միջոցներ չպետք է խնայել, ինչպես և գրագիտության տարածման համար: Սրանք համարժեք և կենսական մեծություններ են: Որովհետև համալսարանն այն հնոցն



Երևանի համալսարանի ղասախոսների մի խումբ (1928)

է ու լաբորատորիան, որից կենսատու ճառագայթներ են ցրվում դեպի ծայրերը: Գիրն ու ընթերցանությունը տարածելու համար պետք են լուսավոր գրուխներ, որ կտա համալսարանը: Հողի մշակությունը պահանջում է դաշտագետներ, որոնց ստեղծելու է դարձյալ համալսարանը: Արդյունագործությունն ու արհեստը չեն կարող բարգավաճել առանց ճարտարագետի, որին նույնպես կդաստիարակի համալսարանը: Ընդհանուր կուլտուրայի զարկերակը բանելու է շարունակ ու անընդհատ, եթե առողջ պահվի սիրտը: Համալսարանն այդ սիրտն է...

Համալսարանը կստեղծի նոր ինտելիգենցիա՝ բառի իսկական իմաստով. նա կինտելիգենտացնի ողջ երկիրը: Իսկ առանց այս հանգամանքի կոժվարանա, նույնիսկ անկարելի կդառնա սոցիալիստական կարգերի զարգացումը. չէ՞ որ սոցիալիզմը մի ամբողջ, մի նոր, մի կատարյալ կուլտուրա է»⁴⁹⁴:

Այցելելով Երևանի պետական համալսարան, Ա. Լոնաչարսկին ասել է. «Անձամբ ծանոթանալով համալսարանին, ես այժմ եկա այն համոզման, որ անպայման անհրաժեշտ է ամեն կերպ օգնություն ցույց տալ այդ փոքրիկ հանրապետությանը, որ պետք է բարձրագույն կրթության այդ շահը, որը պետք է քաղաքակրթության կենտրոն դառնա հայ լեզվին տիրապետող բոլոր մարդկանց համար, ոչ թե մարի, այլ ավելի ու ավելի առկայծի»⁴⁹⁵:

Հայ մտավորականության ներկայացուցիչները տարբեր առիթներով բազմիցս իրենց երախտագիտության գագաձունքներն են արտահայտել Սովետական Հայաստանի կառավարությանը, որը, գտնվելով նյութական ծանր պայմաններում, միջոցներ չխնայեց համալսարան կազմակերպելու համար: Հայտնի քիմիկոս Ստ. Ղամբարյանը, օրինակ, ՀՍՍՀ խորհուրդների IV համագումարում արտասանած իր ճառում դիմելով պատգամավորներին, ասել է. «Հայաստանի համալսարանը հիմնադրվեց այն ժամանակ, երբ դրա համար միջոցներ չկային, դուք վերջին կոպեկները տվեցիք համալսարանին, երբ ամեն մի կոպեկը թանկ էր... Հայոց պատմությունը դա երբեք մոռանալ չի կարող»⁴⁹⁶:

2

Մեծ չէր Խորհրդային Հայաստանի նորաստեղծ համալսարանը, սահմանափակ էին նրա հնարավորությունները: Առաջին տարիներին նա ուներ ընդամենը երկու ֆակուլտետ՝ հասարակագիտական և քնադիտական: Ուսանողների ընդհանուր թիվը կազմում էր մի քանի

հարյուր, չկային ուսումնական և գիտական լաբորատորիաներ, նյութական անհրաժեշտ միջոցներ, պարապմունքները հաճախ տեղի էին ունենում նավթի ճրագի լույսի տակ: Սակայն վիճակը արագորեն փոխվում էր: Հաղթահարելով շատ դժվարություններ, համալսարանի ղեկավարությունը աստիճանաբար ստեղծում էր նյութական բազա, բարելավում էր ուսանողների ու պրոֆեսորադասախոսական կազմի վիճակը:

Ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքի հետ միասին ընդարձակվում էր նաև Երևանի պետական համալսարանը, ավելանում էին նրա հնարավորությունները: Բացվում էին նոր բաժիններ, ֆակուլտետներ, ամբիոններ ու լաբորատորիաներ, ավելանում էր մասնագիտությունների թիվը և այլն: Անընդհատ աճի և զարգացման շնորհիվ հնարավոր եղավ 1930—1940-ական թթ. համալսարանից անջատել նրա մի շարք ֆակուլտետներ, ինչպես, օրինակ, բժշկական, գյուղատնտեսական և դրանք դարձնել ինքնուրույն ուսումնական հաստատություններ: Համալսարանի համապատասխան բաժինների հիման վրա այնուհետև ստեղծվեցին Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը, Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական և Վալերի Բրյուսովի անվան ուսական մանկավարժական ինստիտուտները և այլ ուսումնական ու գիտական հաստատություններ: Այսպիսով, հանրապետության այսօրվա բարձրագույն ուսումնական հաստատությունների մեծ մասը ծնունդ է առել Երևանի պետական համալսարանից:

Համալսարանի աճը ժամանակավորապես կանգ առավ Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Բազմաթիվ ուսանողներ և դասախոսներ մեկնեցին ռազմաճակատ, սեղմվեց հաստատության աշխատանքի ծավալը: Սակայն պատերազմի ավարտից հետո ինչպես ամբողջ երկիրը, այնպես էլ համալսարանը բունց նոր աճի և բուռն զարգացման ուղին: Հետպատերազմյան շրջանում ստեղծվեցին նոր ամբիոններ, գիտական կաբինետներ ու լաբորատորիաներ: Զգալի չափերով ընդարձակվեց ուսումնական աշխատանքը, ուժեղացավ համալսարանի նյութատեխնիկական բազան և այլն: Միայն վերջին տասը տարիների ընթացքում կազմակերպվեցին չորս նոր ֆակուլտետներ (նախապատրաստական ֆակուլտետ արտասահմանցիների համար, դասախոսների վերապատրաստման համամիութենական ֆակուլտետ, վերաորակավորման ֆակուլտետ հանրապետության ղեկավար տնտեսագիտական կադրերի

համար, արևելագիտության ֆակուլտետ), մոտ 20 նոր ամբիոններ ու կաբինետներ:

Այսօր համալսարանն ունի 15 ֆակուլտետ. 1. մեխանիկա-մաթեմատիկական, 2. ֆիզիկայի, 3. քիմիական, 4. բիոլոգիական, 5. երկրաբանական, 6. աշխարհագրական, 7. պատմության, 8. բանասիրական, 9. արևելագիտական, 10. իրավաբանական, 11. տնտեսագիտական, 12. ապրանքագիտական և առևտրի էկոնոմիկայի, 13. նախապատրաստական ֆակուլտետ արտասահմանցիների համար, 14. բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսների վերապատրաստման համամիութենական ֆակուլտետ, 15. հանրապետության ղեկավար տնտեսագիտական կադրերի վերաորակավորման ֆակուլտետ: Գործում են 80 ամբիոններ, որոնց կազմում ընդգրկված են այլևի քան 900 դասախոսներ, այդ թվում՝ Միութեան և հանրապետության գիտությունների ակադեմիաների իսկական անդամներ և թղթակից-անդամներ՝ 30, գիտություն ղեկավարներ և պրոֆեսորներ՝ 90, գիտության թեկնածուներ և դոցենտներ՝ 320:

Պատմության ֆակուլտետը, օրինակ, ունի շորս ամբիոն՝ 1. Սովետական Միության ժողովուրդների պատմության, 2. Հայ ժողովրդի պատմության, 3. ընդհանուր պատմության, 4. հնագիտության և աղբյուրագիտության: Ֆակուլտետը, որն ունի նաև փիլիսոփայության բաժին, պատրաստում է գիտական աշխատողներ և մանկավարժներ պատմության, հնագիտության, ազգագրության, աղբյուրագիտության և փիլիսոփայության գծով: Բանասիրական ֆակուլտետում գործում են ութ ամբիոններ՝ 1. հայոց լեզվի, 2. հայ գրականության, 3. սովետահայ գրականության, 4. ընդհանուր լեզվաբանության, 5. ռուս գրականության, 6. ռումանո-գերմանական բանասիրության, 7. արասահմանյան գրականության, 8. խոսնալիստիկայի: Ֆակուլտետն ունի նաև ռուսական բաժին: Արևելագիտական ֆակուլտետում կա երեք բաժին՝ 1. արևելյան բանասիրության, 2. Արևելքի պատմության, 3. քրդագիտության:

Համալսարանում սովորում և աշխատում են 16.000 մարդ: Ուսանողների ընդհանուր թիվը կազմում է մոտ 13.000, որից 7.500-ը սովորում են ցերեկային բաժնում, իսկ 5.500-ը՝ երեկոյան և հեռակա բաժիններում: Որպես կանոն ուսանողները տեսական պարսպամունքների հետ մեկտեղ անցնում են ուսումնական, մանկավարժական և արտադրական պրակտիկա հանրապետության և Միության գործարաններում, գիտական և արտադրական խոշոր հիմնարկներում,

րում, դարոցներում, թանգարաններում և այլուր: Վերջին տարիներին հատուկ ուշադրություն է դարձվում այն բանի վրա, որպեսզի ուսումնական պրոցեսում լայնորեն օգտագործվեն տեխնիկական նոր միջոցներ: Համալսարանը մասնագետներ է պատրաստում մոտ 50 մասնագիտությունների գծով: Շրջանավարտների թիվը միջին հաշվով կազմում է տարեկան 1500 մարդ: Իր գոյության 50 տարիների ընթացքում համալսարանը երկրին տվել է այլևի քան 23.000 մասնագետներ՝ մաթեմատիկոսներ, ֆիզիկոսներ, քիմիկոսներ, կենսաբաններ, երկրաբաններ, աշխարհագրագետներ, պատմաբաններ, բանասերներ, արևելագետներ, իրավաբաններ, տնտեսագետներ և այլն: Նրանցից շատերը դարձել են նշանավոր գիտնականներ, անվանի գրողներ, մանկավարժներ, պետական ու հասարակական գործիչներ:

Բազմատարր է ուսանողության կազմը: Բացի հայերից, որոնք բացարձակ մեծամասնություն են կազմում, համալսարանում սովորում են ռուսներ, ուկրաինացիներ, վրացիներ, ադրբեջանցիներ, լատիշներ, լիտվացիներ, էստոնացիներ, մոլդավացիներ, քրդեր, հույներ, միեռնամցիներ: Համալսարանում ուսանում են սփյուռքահայեր, որոնք եկել են Մերձավոր Արևելքի երկրներից, Բուլղարիայից, Ռումինիայից, Ֆրանսիայից, Անգլիայից, ԱՄՆ-ից և այլ երկրներից: Ուշադրության արժանի է հատկապես այն հանգամանքը, որ վերջին երկու տարիներին համալսարանում սովորում են գերմանացի երիտասարդներ՝ Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունից և բուլղարներ՝ Բուլղարական Ժողովրդական Հանրապետությունից:

Ուսանողներն ունեն իրենց կազմակերպությունները: Առանձնապես աշխույժ գործունեություն է ծավալել ուսանողական գիտական ընկերությունը, որը զգալի չափով խթանում է երիտասարդների, սերը դեպի ինքնուրույն գիտական աշխատանքը: Ընկերության գծով պարբերաբար կազմակերպվող գիտական նստաշրջաններում ուսանողները կարգում են զեկուցումներ, որոնցից հաջողները մըշակվում և ներկայացվում են տպագրության: Խրախուսելի գործ է կատարում «Կոունկ» ակումբը, որի խնդիրն է բարեկամական կապեր հաստատել Սովետական Միության և մասնավորապես արտասահմանյան համալսարանների ուսանողների հետ: Հաջողությամբ աշխատում են նաև կինոսիրողների ակումբը, գրական խմբակը, պատմական հուշարձանների պահպանության հանրապետական ընկերության համալսարանական բաժանմունքը և այլն:

Զգալի աշխատանք է տարվում ուսանողության նյութական-կենցաղային վիճակը բարելավելու, նրա հանգիստը կազմակերպելու ուղղությամբ: Ուսանողները բավարարվում են հանրակացարանով, առաջավորները ստանում են թոշակ: Գիլիջանի զեղատեսիլ անկյուններից մեկում և Մարմարիկի հովտում համալսարանը ստեղծել է հատուկ ճամբարներ, ուր ամեն տարի հանգստանում են բազմաթիվ ուսանողներ: Շատերն էլ համապատասխան ուղեգրերով հանգստանում կամ բուժվում են հանրապետության և Միության հանգստյան տներում և սանատորիաներում: Խոշոր աշխատանք է կատարվում ուսանողության ինտերնացիոնալ և հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ:

Համալսարանն ունի իր ասպիրանտուրան, որը պատրաստում է երիտասարդ բարձրորակ կադրեր ժողովրդական տնտեսության, գիտության և կուլտուրայի տարբեր բնագավառներում աշխատելու համար: Ասպիրանտների մի մասը սովորում և աշխատում է տեղում, մյուս մասը՝ Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում և այլ կենտրոնական քաղաքների նշանավոր ուսումնական և գիտական հաստատություններում: Միաժամանակ այդ կենտրոններն են գործուղվում նաև երիտասարդ դասախոսներ՝ իրենց մասնագիտություններում խորանալու համար:

3

Երևանի պետական համալսարանը ոչ միայն խոշոր ուսումնական հաստատություն է, այլև կարևոր գիտական կենտրոն: Այստեղ դեռևս 1920-ական թթ. իրենց գիտահետազոտական աշխատանքները ծավալեցին Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Լեոն, Հ. Մանանդյանը, Գր. Ղափանցյանը, Ստ. Ղամբարյանը, Վ. Արծրունին և շատ ուրիշներ: Ուսումնասիրություններ կատարվում էին ինչպես հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի հարցերի շուրջը, այնպես էլ քիմիայի, կենսաբանության, բժշկության, ֆիզիկայի ու մաթեմատիկայի բնագավառներում: Մինչև Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնումը (1943 թ.) համալսարանը հանրապետության հիմնական գիտական օջախն էր, ուր աշխատում էին երևանում գտնվող գրեթե բոլոր անվանի գիտնականները:

Համալսարանի գոյության առաջին շրջանում՝ 1920—1940 թթ. առանձնապես խոշոր աշխատանք տարվեց հայագիտության գծով: Այդ տարիներին համալսարանի հրատարակությամբ լույս տեսան Հ. Աճառյանի մի շարք կապիտալ աշխատություններ՝ 1927—1935 թթ.

յոթ հատորներից բաղկացած «Հայերեն արմատական բառարան» մոնոգրամի առթիվ, 1940 թ.՝ «Հայոց լեզվի պատմության» առաջին հատորը (երկրորդ հատորը լույս տեսավ 1951 թ.): 1942—1962 թթ. հրատարակվեց հինգ հատորներից բաղկացած «Հայոց անձնանունների բառարանը» և բազմաթիվ այլ ուսումնասիրություններ: 1923 թ. լույս տեսավ Մ. Աբեղյանի «Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության» աշխատությունը, այնուհետև՝ «Գրաբարի քերականություն» ուսումնասիրական ձեռնարկը, 1931 թ.՝ «Հին գուսանական ժողովրդական երգեր» և այլ հետազոտություններ: Հայոց պատմության, գրականության, լեզվի վերաբերյալ լույս տեսան նաև Լեոյի, Հ. Մանանդյանի, Գր. Ղափանցյանի, Ա. Տերտերյանի, Ա. Քալանթարի, Խ. Սամվելյանի և այլոց արժեքավոր աշխատությունները: Կարելի է ասել, որ համալսարանի անվանի պրոֆեսորների ջանքերով հայագիտությունն ապրեց նշանակալից վերելք, ստեղծվեցին նոր կադրեր, գիտական նոր դպրոցներ:

Գիտական ուսումնասիրություններ ծավալվեցին նաև բնական գիտությունների բնագավառում: Նշված տարիներին առանձնապես հետաքրքիր հետազոտություններ կատարեցին քիմիկոսներ Ստեփան Ղամբարյանը, Լեոն Ռոտինյանը, բիոքիմիկոս Հակոբ Հովհաննիսյանը, կենսաբաններ Հովակիմ Բեդեկյանը, Ավետիք ՏերՊողոսյանը, բժիշկներ Վահան Արծրունին, Հարություն Միրզա-Ավագյանը, ֆիզիկոս Անժուրը և ուրիշներ: Նրանց ուսումնասիրությունների արդյունքները մեծ մասամբ հրատարակվեցին համալսարանի անդրանիկ հանդեսում՝ «Գիտական տեղեկագրում», որը սկսեց լույս տեսնել 1925 թ.:

Համալսարանի գիտական և հրատարակչական գործունեությունը ավելի ընդարձակվեց 1950—1960-ական թթ.: Այդ տարիներին հրատարակվեցին աշխատություններ ինչպես հասարակական գիտությունների, այնպես էլ բնական գիտությունների տարբեր հարցերի վերաբերյալ: Միաժամանակ զգալի աշխատանք կատարվեց բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողության համար դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ (ինքնուրույն և թարգմանական) հրատարակելու ուղղությամբ: Վերջին տասը տարիների ընթացքում հրատարակվեցին բազմաթիվ ուսումնասիրություններ, այդ թվում՝ մաթեմատիկոսներ Ա. Շահինյանի, Մ. Զրբաշյանի, Ա. Թալալյանի, ֆիզիկոսներ Գ. Սահակյանի, Մ. ՏերՄիրբայելյանի, քիմիկոսներ Վ. Թառայանի, Հ. Չալթիկյանի, կեն-

սաբան Գ. Բաբայանի, երկրաբաններ Ա. Ասլանյանի, Ա. Գաբրիելյանի, հայոց պատմության, գրականության ու լեզվի մասնագետներ Վ. Ռշտունու, Գ. Սևակի, Մ. Մկրչյանի, Է. Աղայանի, Գ. Զահուկյանի, փիլիսոփա Հ. Գաբրիելյանի և շատ ուրիշների աշխատությունները:

Համալսարանը հրատարակում է չորս հանդես. 1. «Բանբեր Երևանի համալսարանի» (հասարակական գիտություններ), 2. «Գիտական տեղեկագիր» (բնական գիտություններ), 3. «Երիտասարդ գիտական աշխատող», 4. «Երևանի համալսարան» (տեղեկատու):

Գիտահետազոտական աշխատանքներ կատարվում են համալսարանի ամբիոններում և հատկապես այդ նպատակով ստեղծված գիտական լաբորատորիաներում: Վերջիններից առանձնապես հետաքրքիր ուսումնասիրություններ են կատարում ճառագայթային ֆիզիկայի, կիսահաղորդիչ նյութերի ֆիզիկայի, պոլիմերիզացիոն պրոցեսների կինետիկայի, տեխնիկական բիոքիմիայի, պինդ մարմնի ֆիզիկայի, ցիտոլոգիայի և այլ գիտահետազոտական լաբորատորիաները: Պետք է նկատել, որ ֆիզիկայի, մաթեմատիկայի, մեխանիկայի, կենսաբանության, քիմիայի, երկրաբանության գրծով համալսարանում տարվող աշխատանքներին մասնակցում են այլ հաստատություններում աշխատող մի շարք գիտնականներ, որոնց թվում ակադեմիկոսներ Վ. Համբարձումյանը, Մ. Չալախյանը, Հայաստանի ակադեմիայի ակադեմիկոսներ Ն. Հարությունյանը, Մ. Զրբաշյանը, Հ. Մաղաքչյանը, Ա. Նալբանդյանը և ուրիշներ:

Հայագիտական ուսումնասիրությունների ուղղությամբ տարվող աշխատանքները ավելի հաջողությամբ կաղմակերպելու նպատակով 1968 թ. համալսարանում ստեղծվեց հայագիտական կենտրոն (հայագիտական հետազոտությունների լաբորատորիա), որի խնդիրն է՝ համախմբել համալսարանի հայագետ գիտնականների ջանքերը, կոորդինացնել հայագիտական ամբիոնների աշխատանքները՝ հայագիտական կարևորագույն թեմաների մշակման, ծանրակշիռ աշխատությունների ստեղծման համար: Կենտրոնը արդեն հրատարակության է պատրաստել «Հայագիտությունը Մովսեսիան Հայաստանում 50 տարում» աշխատությունը, որը ներկայացնում է հայագիտության տարբեր ճյուղերի (պատմություն, գրականություն, լեզվաբանություն, աղբազրություն, ժողովրդական բանահյուսություն, փիլիսոփայություն, իրավագիտության պատմություն, աղբյուրագիտություն և այլն) զարգացման պատկերը խորհրդային

իշխանության տարիներին: Աշխատանքներ են սկսված «Հայագիտությունը Ռուսաստանում XIX դարում» և «Հայերենագիտությունը Գերմանիայում» թեմաների մշակման ուղղությամբ: Մրազրված է հրատարակել «Հայ գրականության պատմություն» սուսերեն և «Հայ ժողովրդի պատմություն» հայերեն, ռուսերեն ու անգլերեն լեզուներով:

Հայագիտական կենտրոնի աշխատանքների մեջ կարևոր տեղ են գրավում հայագիտական մնայուն արժեք ներկայացնող աշխատությունների վերահրատարակությունները, ինչպես նաև արտասահմանյան անվանի հայագետների կարևոր ուսումնասիրությունների թարգմանությունները: Վերահրատարակվում է և շոտով լույս կտեսնի Հ. Աճառյանի «Արմատական բառարանի» առաջին հատորը (մյուս հատորները լույս կընծայվեն մոտակա տարիներին): Հաջորդաբար կվերահրատարակվեն նաև Հ. Մանանդյանի, Ն. Աղոնցի, Գ. Տեր-Մկրտչյանի մի շարք հետազոտությունները: Հրատարակության է հանձնված ֆրանսիացի ակնավոր լեզվաբան Ա. Մեյերի՝ հայոց լեզվին և հայ բանասիրությանը վերաբերող հետազոտությունների թարգմանությունը: Կենտրոնը զբաղվում է նաև բառարանագրական աշխատանքներով. արդեն պատրաստ է և խմբագրվում է «Հայերենի դարձվածաբանական բառարանը» (հեղինակներ՝ հայոց լեզվի ամբիոնի դոցենտներ Ա. Սուքիասյան և Ս. Գալստյան), համալսարանի և Հայկական ՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի մասնագետների ուժերով կազմվում է «Հայերենի ստուգաբանական բառարան»: Հայագիտության խոշոր ներկայացուցիչներին (սկզբից մինչև մեր օրերը) է նվիրված «Նշանավոր հայագետներ» գիրքը: Այս աշխատությունը պատրաստում են համալսարանի համապատասխան ամբիոնների անդամները և նորաստեղծ կենտրոնի աշխատակիցները: Հայագիտական կենտրոնի աշխատանքներին մասնակցում են համալսարանի հայագիտական ամբիոնների անդամները, անհրաժեշտության դեպքում՝ նաև գիտությունների ակադեմիայի և հանրապետության մյուս բուհերի համապատասխան մասնագետները:

4

Երևանի պետական համալսարանը կապեր է հաստատել Սովետական Միության մի շարք համալսարանների ու գիտական հաստատությունների հետ, այդ թվում՝ Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Տարտուի, Թբիլիսիի, Բաքվի համալսարանների, ՍՍՀՄ գի-

տուժյունների ակադեմիայի Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի հետ: Կազմակերպվում են համատեղ գիտական նստաշրջաններ ու խորհրդակցություններ: 1968 թ., օրինակ, տեղի ունեցավ համալսարանի և համաշխարհային գրականության ինստիտուտի (Մոսկվա) միացյալ գիտական սեսիան՝ նրվիրված Մաքսիմ Գորկու ծննդյան 100-ամյակին: Նստաշրջանին մասնակցում էին գիտնականներ Միուժյան բոլոր հանրապետություններից և հյուրեր՝ արտասահմանից: Համամիութենական բրնույթ կրող այս նստաշրջանի նյութերը հրատարակվեցին «Մ. Գորկին և Սովետական Միության ժողովուրդների գրականությունը» վերնագիրը կրող մեծածավալ հատորում (ռուսերեն), որը լույս տեսավ 1970 թ. Երևանում:

Կատարվում են դասախոսների փոխադարձ այցելություններ: Երևանի համալսարանում հաճախ դասախոսություններ են կարողում Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից, Թբիլիսիից և այլ քաղաքներից հրավիրված անվանի պրոֆեսորներ և ակադեմիկոսները: Մեր դասախոսները հանդես են գալիս Կիևում, Թբիլիսիում, Վիլնյուսում, Տարտուում և այլ քաղաքներում: Հետաքրքիր է նշել, որ Երևանի համալսարանի մի խումբ հայ ուսանողներ սովորում են Կիևի, Թբիլիսիի, Ռիգայի, Վիլնյուսի և Տարտուի համալսարաններում, իսկ համապատասխան թվով ուսանողներ այդ համալսարանից՝ սովորում են մեղ մոտ: Նպատակն այն է, որ ուսանողները տիրապետեն եղբայրական ժողովուրդների լեզուներին և կատարեն թարգմանություններ ազգային գրականություններից: Հաճելի է նկատել, օրինակ, որ արդեն ուսուցման երկրորդ տարում էստոնացի ուսանողները թարգմանություններ են կատարում հայերենից, իսկ հայ ուսանողները՝ էստոներենից:

Գնալով ամրապնդվում են համալսարանի միջազգային կապերը: Միայն այս տարի՝ 1970 թ. Երևանի համալսարանը պայմանագրեր է կնքել Բրատիսլավայի (Չեխոսլովակիա) և Հալեյի (Գերմանական Գեմեկրատական Հանրապետություն) համալսարանների հետ, որոնցով նախատեսվում են համատեղ գիտական ուսումնապիտույթյուններ, խորհրդակցություններ ու սիմպոզիումներ, դասախոսություններ, ուսանողների ու ասպիրանտների փոխացցելություններ և այլն: Ուսումնական և գիտական աշխատանքների գծով կապեր են հաստատված նաև Պրագայի, Կրակովի, Սոֆիայի համալսարանների հետ: Հայագիտության և գիտության մի շարք այլ

հյուղերում խորանալու համար համալսարան են գալիս բազմաթիվ երիտասարդ գիտական աշխատողներ Լեհաստանից, Բուլղարիայից, Չեխոսլովակիայից, Ֆրանսիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից և այլ երկրներից: Այժմ, օրինակ, համալսարանում որպես ստաժոթներ աշխատում են երկրաբաններ՝ Կուբայից, հայագետներ՝ Անգլիայից ու Նորվեգիայից, լեզվաբան՝ Լեհաստանից, պատմաբան՝ Չեխոսլովակիայից և այլն: Մեր դասախոսները և գիտական աշխատողները իրենց հերթին գործուղումների միջոցով այցելում են նշված երկրների ուսումնական և գիտական հաստատությունները: Գրքափոխանակություն է կատարվում համալսարանի գիտական գրադարանի և մոտ 60 արտասահմանյան գրադարանների ու գիտական հետազոտությունների միջև: Գիտական և մշակութային կապեր են հաստատված նաև սփյուռքահայ մի շարք կազմակերպությունների հետ: Նկատենք, որ համալսարանի միջազգային կապերը մոտակայում ավելի կընդարձակվեն:

Ձեռք բերված հաշտությունների համար Երևանի պետական համալսարանը 1967 թ. ստացավ ՀԿԿ Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի և ՀԱՄԽ-ի հրեկյանական հուշադրոշ, իսկ 1970 թ.՝ Լենինյան հրեկյանական պատվոգիր: Սովետական Հայաստանի գոյության 50-ամյակի առթիվ նույն թվականի նոյեմբերին համալսարանն արժանացավ նաև հրեկյանական հուշամեդալի:

1970 թ. դեկտեմբերի 21-ին Սովետական Միության Գերագույն սովետի նախագահությունը «Որակյալ մասնագետների պատրաստման ապարեկում ունեցած վաստակի և գիտական հետազոտությունների զարգացման գործում ձեռք բերած նվաճումների համար» Երևանի պետական համալսարանը պարգևատրեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Կատարված է շատ բան, սակայն զեռ կան ոչ քիչ անելիքներ: Համալսարանի կոլեկտիվը աշխատում է անել ամեն ինչ, որպեսզի հաջողությամբ լուծի իր առջև դրված խնդիրները:

КРУПНЫЙ ЦЕНТР АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ (К 50-летию Ереванского государственного университета)

Резюме

Ереванский государственный университет, пятидесятилетие которого отмечается в декабре 1970 г., является первым очагом культуры и науки Советской Армении. Пройдя большой и славный путь развития, университет стал одним из признанных центров высшего образования Советского Союза. За полвека своего существования он внес крупный вклад в подготовку молодых специалистов, в дело развития народного хозяйства, просвещения, науки и искусства республики. За 50 лет Ереванский университет дал стране более 23 тысяч специалистов.

Сегодня—в 1970 г. в университете насчитывается 15 факультетов, общее число студентов—13 тысяч, среди которых, помимо армян, обучаются русские, украинцы, грузины, азербайджанцы, курды, латыши, литовцы, эстонцы, молдаване, греки, вьетнамцы, болгары, немцы, армяне из зарубежных стран и др.

В университете проводятся исследования по различным областям общественных и естественных наук. Основными центрами научно-исследовательских работ являются кафедры и научные проблемные лаборатории. Университет установил связи с рядом университетов Советского Союза и зарубежных стран. За достигнутые успехи Ереванский государственный университет 21 декабря 1970 г. указом Президиума Верховного Совета СССР награжден орденом Трудового Красного Знамени.

ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ ԱՊՍՏԱՄԲՐՈՒՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

Դավիթ-Բեկի գլխավորած հայ-աղատագրական շարժման վերաբերյալ մեզ հասած աղբյուրներում շկան տեղեկություններ այն մասին, որ Սյունիքում 1722 թ. ծայր առած ժողովրդական ապստամբությունն ունեցել է որևէ արձագանք Վասպուրականում և ընդհանրապես Հայաստանի՝ սուլթանական թուրքիայի տիրապետության տակ դանդաղ շրջաններում: Բնականաբար ոչինչ չի ասվում նաև համապատասխան գրականության մեջ: Նման պարագայում մեծ արժեք է ներկայացնում մի ձեռագիր հիշատակարան, որի վրա և հրավիրում ենք մեր պատմաբանների ուշադրությունը:

1918 թ. Երևանում լույս տեսնող «Աշխատանք» թերթը (տե՛ս № 77, 1918 թ. փետրվարի 10) հրատարակեց հին ավետարաններից մեկի հիշատակարանը, որից կրնում է, որ Դավիթ-Բեկի շարժումն արձագանքներ է գտել Վասպուրականում և նրա հարևան գավառներում: Խիստ արժեքավոր այդ հրատարակումը ժամանակին աննկատելի է անցել, ուստի մենք ավելորդ չենք համարում այստեղ բերել ամբողջությամբ: Ահա այն:

«Ի թուականութեան հայկազեան տումաբիս ՌՃՀԱ (1722) յոյժ դառնակսկիժ և նեղ ժամանակիս, ևս սուտանուն կրօնաւոր միաբան արեղայս սուրբ մենաստանիս, որ ի վերայ ծովապատ կղզոյ, Կիմ Անապատ կոչելոյ, աշաւք իսկ իմովք սեսի, թէ զարնանաբեր կենսանորոգ յեղանակիս, թէ որպիսի հաւաքումն կատարեցաւ ի վերայ սուրբ կղզոյս՝ խորհելոյ և մտածելոյ և ճար-ճարանք գտանելոյ վասն ազատութեան տառապեալ և ողորմելի ազգիս Հայոց: Առաջնորդը և վարդապետը և քահանայք և իշխանք ամրակառոյց քաղաքիս Վանայ, մեծամեծ գաւառաց Վասպուրականի, մելիք յերկրաց Քաջբերունեաց և Բղնունեաց, զիւղապետը համայն գիւղօրէից հաւաքեալ եղեն ի ծովատես (°) սուրբ մենաստանս:

«Ես սուտանուն Մխիթար արեղայս՝ անարժանաբար ի միտս առի զրոյցք զաղտնի և ծածկախորհուրդ: Քաջահամբաւ և արիասիրտ վարդապետ մի՛ յերկրէն Ռշտունեաց տէր Ներսէս անուանեալ, յոյժ յուզեալ և լալագին պատկերացոյց դառնակսկիժ վիճակս հա-

մօրէն ազգիս և յայտնեաց ցնծագին՝ թէ այր մի երկրէն Միւնեաց Դաւիթ բէկ անուանեալ, զօրաշարժութիւն արարեալ իցէ վասն հալածելոյ նեղիչք և կշտամբիչք մեր, միտս ունենալով ազատագրելոյ արիւնածուի զաշխարհն Հայաստան*։ Արդ, ով բարեմիտ և հայրենապաշտ ժողովականք, շրջեսցէք գաւառս և ի կողմանս յերկրին ձերոյ խրախուսեցէք ժողովուրդք ձեր, որ մրտահալ է ի խոր խաւարի և տանջանաց, զի թօթափեսցեն զլուծ անիրաւաց բռնութեանցս, և յորժամ մեր առաքեսցուք զհրաւիր մարտի, բառնան ձայն ապրտամբութեան բնորդէմ մարդակեր և խաչահալած թշնամեաց մերոց։

«Զկնի աւարտման զայս քաղցրալուր ճառասացութեանս՝ ժողովրդրականք յոյժ վշտացեալ արտասուէին լռելեայն։

«Եւ եղեն զրուցանողք բազումք՝ կարծիք բազմազանս, առաջարկս անհամարս։ Յետ այնորիկ՝ իշխանք և պարոնք և մելիքք և տանուուէրք յօժարեսցին վասն պատերազմի հաւաքելոյ զայրս (տղամարդիկ) բազումք քաջակորով և կռուարար, և հայթայթելոյ ուտեստս կռուապաշարոյ, սայլք և նժոյզս բազումս և պէտս բազմադանս, դամուրս (երկաթ) և նաւս և բուրգս և ցորեանս և ոչխարս։

